



ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ



1890 . 2015

ԱԶԴԱԿ
ՕՐԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

• 21-րդ դարու 125-ամեայ կուսակցությունը 2

125-ամեայ ՀՅԴ-ի Պատմական`

հիմնադրումէն մինչեւ օրս

• 1890-1894	3
• 1895-1896	16
• 1897-1898	23
• 1899-1902	27
• 1903 -1907	35
• 1907-1915	48
• 1915-1918	58
• 1920-1926	65
• 1927-1981	74
• 1982-2015	78

Յօդուածներ

• Ապրիլ Դաշնակցությունը <i>Յ. Բագրատունի</i>	113
• Պիտի շարունակենք ու ընդարձակենք Դաշնակցության գործը <i>Յ. Հաւաթեան</i>	114
• ՀՅԴ-ի գործը` 125-ամեակէն անդին <i>ժ. Յ. Յակոբեան</i>	117
• Սուրբ գործի նուիրեալներ <i>Վ. Աւագեան</i>	120
• Մենք մեզ գերազանցելու պարտադրանքը <i>Համբիկ Պիլալեան</i>	123
• Հեքիաթի ու առասպելի շղարշէն անդին... <i>Յ. Պարազեան</i>	127
• Ինչպէ՞ս դիմաւորել պատմութեան ներկան եւ գալիք տասնամեակները` շարունակութիւն ըլլալու կամքով <i>Յ. Պալեան</i>	131
• Դաշնակցութիւնն ու իգական տարրը <i>Գէորգ Յակոբճեան</i>	135
• Երգի մը պատմությունը <i>Աւօ Գաթրճեան</i>	137
• Պատմությունը` ապակիների տակ եւ արկղերում	139

Երիտասարդական

«Երիտասարդութեան կուսակցությունը»` փոփոխութեան գրաւականը 143

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

21-ՐԴ ԴԱՐՈՒ 125-ԱՄԵԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Պատկառելի թիւ ներկայացնող յրեւելեան կլոր թուականը դասական ընկալումով երկար ճանապարհ կ'ենթադրէ եւ միայն դրական երանգներով իբրեւ ժամանակի փորձառութիւն կուտակած, իբրեւ ժամանակի պատերազմին յաղթած, յարատեւած եւ կեանքի պայքարէն պատուաբեր դուրս եկած երեսոյթ:

Պէտք է նկատենք սակայն, որ արդի հասկացողութիւնները երկարատեւութիւնը միշտ չէ, որ կ'ընկալեն աւանդականօրէն: Արագութեան դար է, կ'ըսեն, եւ արագութիւնը կը պայմանաւորեն յարափոփոխութեամբ: Ժամանակակից աշխարհը յարափոփոխելիութեամբ ընդունող օրինաչափութիւնը չի սիրեր երկարատեւութիւնը եւ անդադար, երբեմն սոսկ նախկինը չընդունելու համար կը ձեւափոխէ կամ աւելի ճիշդը հիմնովին կը փոխէ եղածը, գոյութիւն ունեցողը:

Նորարարութիւնը, սակայն, անպայման հինը փոխելուն մէջ չի կայանար: Հինը, պատմականը անպայման փոշոտի իմաստ ու ըմբռնում պէտք չէ ունենայ: Եւ արուեստականօրէն չէ, որ պատմականը կրնայ դիմանալ ժամանակի դէմ պայքարին: Անիկա կը յայտնուի պատմութեան լուսանցքին, եթէ իրօք կորսնցնէ ժամանակի շունչը զգալու իր յատկութիւնը եւ անվերջ նորոգուելու մեքենականութիւնը:

Այս խորհրդածութիւնները անպայման պէտք է լոյսին բերել Դաշնակցութեան 125-ամեակին առիթով, քանի որ խօսքը դարձեալ պատմական ժառանգութեան մը մասին է եւ երկարատեւ կեանքին կը վերաբերի ուղղակիօրէն:

Միայն այն փաստը, որ 19-րդ դարուն հիմնադրուած, եւ 20-էն անցնելով 21-րդ դարուն իր գործունէութեան նոր դաշտեր, նոր հունաւորում եւ նոր մեթոտաբանութիւն ապահոված կազմակերպութիւն է մեր կուսակցութիւնը, կը բաւէ շրջելու այն կարծրատիպը, որով փորձ կը կատարուի Դաշնակցութիւնը ներկայացնելու իբրեւ պատմութեան անցած արժէք:

Այո՛, անշուշտ պատմական արժէք է Դաշնակցութիւնը: Բայց պատմական արժէք դաւանիլը եւ այնտեղ կանգնիլը պարզապէս նսենացնել է Դաշնակցութեան արժէքը: Ըսել կ'ուզուի այդպիսով, որ Դաշնակցութիւնը ստեղծուած է պատմական ճիշդ պահուն,

որ Դաշնակցութիւնը կատարած է իր պատմական առաքելութիւնը, ընդհուպ մինչեւ դարձած է Հանրապետակերտ կուսակցութիւն: Այստեղ կանգ առնելը անուղղակիօրէն հաստատել է, որ Դաշնակցութիւնը աւարտած է իր պատմական առաքելութիւնը:

Դաշնակցութեան միայն պատմութիւնը լուսարձակի տակ բերելը խորքին մէջ պիտի ծառայէ այդ տեսաբանութեան ամրակայումին: Դաշնակցութիւնը 19-րդ դարուն ստեղծուած ըլլալով, յաջողած է պատմական հողվոյթի իրաքանչիւր հանգրուանին, նկատի ունենալ ժամանակի բերած փոփոխութիւնները՝ թէ՛ ծրագրային, թէ՛ կառուցային, եւ թէ գործելաեղանակային իմաստներով, ինչ որ ապահոված է ժամանակակից անհրաժեշտութիւն մնալու իրականութիւնը:

Տանք միայն վերջին օրինակը՝ շրջած ըլլալու համար պատմական արժէքի բացասական կարծրատիպը: Այսօր, ամէնէն այժմեական, ամէնէն հրատապ խնդիրը, որուն շուրջ կեդրոնացած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքական դաշտը, կիսանախագահական համակարգէն խորհրդարանականի անցումի սահմանադրական առաջադրանքն է:

Այս առաջադրանքը խորքին մէջ Հայաստանի վերանկախացման առաջին իսկ ժամանակաշրջանին Դաշնակցութեան կողմէ բարձրաձայնուող եւ կրկնուող պահանջն է՝ իբրեւ յաւելեալ ժողովրդավարացման եւ պետութեան իրաւականացման կարեւորագոյն շրջադարձ: Խորհրդարանական համակարգը ժողովրդավար հասարակարգերու համար անվերջ նորոգուող սահմանադրական կարգն է, յատկապէս առաջադրուած երրօրական կառոյցներու սահմանադրագէտներուն կողմէ:

Քաղաքական նորարարութեան ամենավերջին փաստով կը սահմանափակուինք: Այո՛, Դաշնակցութիւնը պատմական հսկայական արժեհամակարգ կայացուցած է: Բայց նաեւ քաղաքական մշակոյթի ժամանակակից արժէքներ ներմուծողն է Հայաստանի Հանրապետութիւն, որուն քաղաքական դաշտի կայացման մէջ մեծ է դերը 21-րդ դարու քաղաքագիտական յառաջընթացին հետ քայլ պահող Դաշնակցութեան:

125-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ՝ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ, ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ

Յեղափոխական աննահանջ կռիւ, բանւր, աքսոր, հալածանք, բռնապետութեան դէմ անդուլ պայքար, աշխատանք՝ հայ իրականութեան մէջ ընկերային արդարութեան եւ ժողովրդավարութեան գաղափարները տարածելու, ինչպէս նաեւ ու մանաւանդ մնայուն ծիգ ու ջանք՝ երաշխաւորելու հայ ազգի ազատ եւ ինքնիշխան գոյութիւնը իր անկախ պատմական բնօրրանին մէջ: Ասիկա եղաւ ուղին գաղափարական այն մեծ շարժումին, որ 125 տարի առաջ ծամբայ ելաւ՝ սուլթան Ապտիւլ Համիտի արինալի իշխանութեան դէմ հայոց յեղափոխական պայքարը ղեկավարելու առաջադրանքով, շուրջով այդ պայքարը տարածելու համար նաեւ հայութեան կովկասեան հատուածին վրայ՝ Յարական կայրութեան դէմ, այս ձեւով ամրագրելով հայ ժողովուրդի պայքարին միասնութիւնը:

125 տարի առաջ ծամբայ ելած եւ յեղափոխական այլազան կազմակերպութիւններու միացումէն յառաջ եկած Դաշնակցութիւնն է անիկա՝ իր առինքնող, յեղափոխական փայլուն դիմագծութեամբ, իր ծախողութիւններով

եւ յաղթանակներով, իր համեստ ֆերայիներուն ու զինուորներուն՝ հայութեան համար մատուցած իր իւրաքանչիւր զոհողութեամբ: 125 տարուան պատմութիւն ներկայացնելը բաւական դժուար աշխատանք է՝ փոքր հրատարակութեան մը սահմաններուն մէջ: Սակայն հետագայ էջերուն մէջ կը ներկայացնենք ծաղկաքաղ մը՝ դէպքերու, կարեւոր իրադարձութիւններու, դաշնակցական մտքի արգասիք հանդիսացող գրութիւններու եւ ՀՅ Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի մէջ լոյս տեսած անդրադարձներու, որոնք վեր ի վարոյ կ'օգնեն գաղափար կազմելու Դաշնակցութեան 125-ամեայ պատմական ուղիին եւ գաղափարական աշխարհին մասին, առանց երբեք յաւակնութիւնը ունենալու ամբողջական ներկայացում մը կատարած ըլլալու:

Այս է 125-ամեայ երիտասարդը, որուն գաղափարական ուղին կը մնայ միեւնոյնը՝ ծառայել բովանդակ հայ ժողովուրդին՝ պաշտպանելով անոր բոլոր՝ քաղաքական, ընկերային, տնտեսական եւ մշակութային շահերը:

1890 - 1894

1890-ի ամրան, հաւանաբար յուլիսին, նախորդ աշունէն սկսած շփումներու եւ խորհրակցութեանց իբրեւ արդիւնք, կը հիմնուէր Հայ յեղափոխական դաշնակցութիւնը: Անկէ ետք ու մինչեւ 1892-ի աշնանասկիզբի Առաջին Ընդհանուր ժողովը, նորածին Դաշնակցութիւնը կ'ապրի երկարամեայ մասնայատուկ ժամանակաշրջան մը: «Կենտրոն»-ի մը շուրջ կառուցուած կեդրոնացեալ այս դրութեան մաս կազմող բաղադրիչ տարրերէն ոմանք պիտի ցուցաբերեն շեղումի ձգտումներ՝ իբրեւ հետեանք համակարգուած աշխատանքի անվարժութեան, անփորձութեան, առհասարակ յեղափոխական աշխատանքի նորութեան:

Այս տարիները միաժամանակ պիտի դառնան սակայն փորձառութիւններու

ամբարման կենսական շրջան մը, որուն ընթացքին Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը աստիճանաբար պիտի վերածուի Հայ յեղափոխական դաշնակցութեան, այսինքն՝ այլատարր յեղափոխական անհատներու եւ հոսանքներու դաշինքէն՝ միաձոյլ եւ կուռ կազմակերպութեան: Անոր ծոցին մէջ, սակայն, ստեղծագործ ծիգն ու նախաձեռնութիւնները պիտի երաշխաւորուին ապակեդրոնացման սկզբունքով:

Առաջին Ընդհանուր ժողովը՝ հիմնուելով երկու տարուան փորձառութեան վրայ, կը հաստատէր կազմակերպական կառոյցներու աստիճանական բիւլետրացում մը. այսպիսով կուսակցութիւնը կը թեւակոխէ աճման նոր շրջան մը:

Այդ զտումը կարելիութիւն կու



տայ, որ 1892-ին Ա. Ընդհանուր ժողովին մշակուի ծրագիր մը ու անոր ընկերակցող «Կազմակերպութիւն» գլուխին տակ, բանաձեւելու կազմակերպական ապակեդրոնացման հիմնական սկզբունքները:

1882-ին տրուած այս վճռական քայլը իր առաջին արդիւնքները պիտի տայ մինչեւ 1894-ի աւարտ երկարող երկուքուկէս տարիներուն:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ 1890-Ի ԱՄՐԱՆ

Ռուսաստանի բարձրագոյն դպրոցներում 1890-ի սկզբները տեղի էին ունեցել ուսանողական խռովայոյզ ցոյցեր: Բազմաթիւ ուսանողներ ձերբակալուել էւ աքսորուել էին: Համալսարանների մի մասը փակուել էր, եւ ուսանողութիւնը ցրուել տները՝ իրենց հետ տանելով բողոքի եւ ըմբոստութեան տրամադրութիւն ցարական բռնակալութեան դէմ:

1890-ի գարնան Թիֆլիս հաւաքուել էին մեծ թուով հայ ուսանողներ, որոնք ըստ գաղափարի, խառնուածքի եւ հակումների բաժանուել էին երկու հատուածի. մի կողմ՝ ազգասէրները, այսպէս կոչուած՝ «շովինիստները», որոնք կենտրոնացել էին «Սեւերսիէ Նոմերա» պանդոկում, միւս կողմ՝ արմատական յեղափոխական-ընկերվարականները, որոնց հաւաքավայրն էր «Իւժնիէ Նոմերա» հիւրանոցը, ուր միաժամանակ գտնուում էր «Երիտ. Հայաստան»-ի կենտրոնը: Հիւրանոցների անուններով կոչուում էին եւ

երկու հատուածները - «Սեւերսիէ Նոմերա», այսինքն՝ «Հիւսիսային Պանդոկ»-ի եւ «Իւժնիէ Նոմերա»՝ «Հարաւային Պանդոկ»-ի խմբեր: Պարզութեան համար այդպէս էլ անուանենք՝ «Հիւսիսային» եւ «Հարաւային»:

«Հիւսիսային»-ները գոհ չէին «Հարաւային»-ների արմատական-ընկերվարական գաղափարներից: Նրանց առաջնորդ Կոստ. Խատիսեանը՝ հարուստ ընտանիքի եւ բարձրաստիճան պետական պաշտօնեայի զաւակ, թէ՛ իր ընկերային դիրքով, թէ՛ գաղափարներով ու հակումներով, շատ հեռու էր աշխատատրական ապրումներից եւ ընկերվարական դաւանանքից: Միւս կողմից, խառնուածքով իբր եռանդուն, արագ ու կտրուկ գործելակերպի սիրահար՝ գոհ չէր «Երիտասարդ Հայաստան»-ի ղեկավարների դանդաղութիւնից: Եւ զարմանալի չէ, որ «Հիւսիսային»-ները ձեռնարկել էին «Երիտ-Հայաստան»-ի կողքին Նոր «Գաղտնի կոմիտէ»-ի կազմակերպութեան: «Սկզբում, ասում է Քրիստափորը, նա (գաղտնի կոմիտէն) հակում ունէր խմբուելու Արծրունիի շուրջը, բայց վերջինս շուտով հրաժարուեց գործօն աշխատանքից»:

«Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին առհասարակ մեծ հեղինակութիւն էր վայելում ազատամիտ շրջաններում: Նա իրեն համարում էր յառաջդիմական երիտասարդութեան ղեկավար ու հովանաւոր: Քր. Միքայէլեանն ու Ս. Զաւարեանը յարգում էին նրան եւ կարեւոր հարցերում դիմում էին նրա խորհրդին: Մանաւանդ թրքահայկական խնդրում Գր. Արծրունին իր «Մշակ»-ով շատ կարեւոր դեր կատարեց, թէւ նրա հետապնդած

Նպատակը-Թրքահայաստանի կցումը Ռուսաստանին, համակրանք չէր վայելում շատերի մօտ: Մի ժամանակ Արծրունին նոյնիսկ ունէր իր առանձին «խումբը», որ յատկապէս զբաղում էր թրքահայկական հարցով, բայց երբ իմացաւ, որ ռուս կառավարութիւնը համաձայն չէ, որ ռուսահայերը զբաղուեն թրքահայոց խնդրով, վերջ տուեց իր խմբի գոյութեան: Այժմ էլ, երբ հասարակական միտքը գրգռուած էր եւ ամէն կողմից ցանկութիւն էր յայտնուում, որ Արծրունին անցնէ շարժման գլուխը, նա վճռական կերպով մերժեց՝ չկամենալով զոհել «Մշակ»-ը «անորոշ» գործի համար: Եւ ըստ էութեան էլ մշակականութիւնը արդէն լրացրել էր իր առաքելութիւնը. հասարակական նոր գաղափարներ, նոր ապրում ու պահանջներ էին առաջ եկել, նոր սերունդ՝ որին չէր կարող այլեւս գոհացնել Արծրունին իր քաղքենի ազատամտութեամբ: Հարկաւոր էին նոր մարդիկ՝ նոր պահանջների բաւարարութիւն տալու համար:

Բայց ո՞ր էին նոր մարդիկ: Ո՞ր էր հզօր իմացականութիւնը, որ կարողանար ազդել եւ մէկ յայտարարի բերել տարամերժ մտքերը: Ո՞ր էր այն ուժեղ բազուկը, որ սանձէր կենտրոնախոյս ուժերը, զսպէր կրքերն ու նախասիրութիւնները. այն պողպատէ կամքը, որ տիրական ուժով վարէր նոր ստեղծուելիք կազմակերպութիւնը: Տարակարծութիւններն ու վէճերը «հիւսիսային»-ների եւ «հարաւային»-ների եւ ընդհանրապէս զանազան խմբակների միջեւ՝ կարող էին լուծուել եւ համերաշխ ու կենդանի գործի վերածուել միայն հեղինակաւոր եւ կորովի անձի միջամտութեամբ: Այդ մէկը գտնուեց՝ յանձին Քրիստափոր Միքայէլեանի:

Քրիստափորը իր անկեղծ եւ անսահման հաւատով դէպի նոր գործը, հզօր իմացականութեամբ, կուռ տրամաբանութեամբ ու հուժկու կամքով, ծով լայնախոհութեամբ ու մարդոց հոգիները գերելու ուժով, կարողացաւ հաշտեցնել ու միացնել այլազան հոսանքներն ու ձգտումները, եւ հիմքը դնել մի մեծ կազմակերպութեան՝ մեծ գործի համար:

Պատմութիւնը, դժբախտաբար, զրկել է մեզ բոլոր մանրամասնութիւններից, ոչ արձանագրութիւններ են մնացել, ոչ հիմնադիր ժողովների անդամների անուանացանկը, ոչ էլ յուշեր այդ օրերի դէպքերի մասին: Ցայտնի է միայն, որ

բազմաթիւ ժողովներ են գումարուել, որոնց մասնակցել են Հիւսիսային եւ Հարաւային պանդոկների հատուածներից զատ ուրիշ խմբակների ներկայացուցիչներ եւս, անհատ դէմքեր ու երկրից եկած գործիչներ: Վերջին ժողովներին մասնակցել են եւ Տնչակեան ներկայացուցիչները յանձինս Ռ. Խան-Ազատի եւ Հմ. Խուշպուլեանի:

Այդ ժողովներում տեղի են ունեցել երկարատեւ եւ բուռն վէճեր: Հիմնական հարցի՝ Թրքահայաստանի ազատագրութեան շուրջ, ի հարկէ լուրջ տարակարծութիւն չէր կարող լինել. ամէնքը հաւաքուել էին այդ «սուրբ գործի» համար: Տեսակէտների տարբերութիւններ կային ազատ Հայաստանի մասին. ոմանք բաւականանում էին Ներսէս Վարժապետեանի ծրագրով՝ վեց նահանգների ինքնավարութիւն երոպական հակակշռի տակ. ընկերային-տնտեսական հարցերից նրանք խուսափում էին: Ուրիշներ, ինչպէս օրինակ Տնչակեանները, դնում էին Հայաստանի անկախութեան պահանջ՝ ընկերվարական վարչաձեւով:

Ընկերվարութեան հարցը կարելու տեղ էր գրաւում Դաշնակցութեան հիմնադիր ժողովներում, որոնց մէջ կենտրոնական դեր էին կատարում «Հայրենասէրների Միութեան» եւ «Երիտասարդ Հայաստան»-ի ընկերվարական գաղափարներով սոգորուած անդամները: Քրիստափորը ինքը, իբրեւ «Նարոդնայեա Վոլեայ»-ի անդամ, համոզուած ընկերվարական էր: Հաւատացեալ ընկերվարական էր նմանապէս եւ Ս. Զաւարեանը, հիմնադիր ժողովների ամենագործօն անդամներից մէկը: Հասկանալի է, ուրեմն, որ ընկերվարութեան հարցի շուրջ սուր տարակարծութիւններ եւ բուռն վէճեր տեղի պիտի ունենային:

Լուրջ տարակարծութիւններ կային եւ կազմակերպական ձեւի մասին. ինչ հիմքերի վրայ դնել նոր կազմակերպութիւնը: Տնչակեան կուսակցութիւնը որդեգրել էր խիստ կենտրոնացման սկզբունք: Նոյնպիսի կենտրոնացման սկզբունքի վրայ հիմնուած էր եւ մարտական «Նարոդնայեա Վոլեա»-ն, նաեւ ուրիշ օտար յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք օրինակ պիտի հանդիսանային եւ հայ յեղափոխականների համար: Բայց ժողովականներից ոմանք, մասնաւորապէս Ս. Զաւարեանը, առարկում էին կենտրոնացման նպատակայարմարութեան

դէմ հայկական իւրայատուկ պայմաններում: Հայութիւնը ցրուած էր անծայրածիր տարածութիւնների վրայ եւ տարբեր քաղաքական միջավայրերում: Անհնար էր երեւակայել մի կենտրոնացած ղեկավար մարմին, որ ի վիճակի լինէր այդպիսի պայմաններում ձեռնհասօրէն վարել կազմակերպութեան գործերը: Հայկական պայմաններին, ինչպէս հաստատում է անցեալ պատմութիւնն էլ, աւելի յարմար էր ապակենտրոնացման սկզբունքը՝ տեղական լայն նախաձեռնութեան իրաւունքներով:

Կային, անշուշտ, եւ ուրիշ հարցեր, սկզբունքային թէ գործնական, որոնք քննութեան եւ վէճերի առարկայ են եղել: Այսպէս, հէնց ժողովների ընթացքին առաջ եկաւ Կուկունեանի արշաւանքի խնդիրը, որ նոյնպէս չէր կարող չզբաղեցնել ժողովականների ուշադրութիւնը:

Դիւրին չէր նման եւ ուրիշ տարամերժ հարցերը հաշտեցնել եւ մի յայտարարի բերել: Ճիշդ է, ժողովներին մասնակցողները ամէնքը տոգորուած էին փոխադարձ հասկացողութեան եւ համաձայնութեան ոգիով, բայց եթէ չլինէր Քրիստափոր Միքայէլեանը, դժուար պիտի լինէր միաձոյլ եւ կուռ կազմակերպութիւն ստեղծել: Քրիստափորը, անհաշտելին հաշտեցնելու իր բացառիկ կարողութեամբ, իր անձնական հմայքով ու հեղինակութեամբ հարթեց բոլոր խոչընդոտները: Նա էր ժողովների տիրական ոգին եւ մղիչ ուժը: Նա իր կազմակերպական հանձնարով կարողացաւ հաշտեցնել իրար բախտը բոլոր սուր տեսակէտները, համադրել ու ներդաշնակել բոլոր հակամարտ անհատականութիւնները եւ նոյնիսկ Հւչակեան ներկայացուցիչների համաձայնութիւնը ապահովել մտնելու հիմնուելիք նոր կազմակերպութեան մէջ: Այսպիսով ծնունդ առաւ մի նոր կուսակցութիւն, որ իր մէջ համախումբ՝ միաձուլում էր մինչեւ այդ գոյութիւն ունեցող գրեթէ բոլոր յեղափոխական խմբերն ու կազմակերպութիւնները, Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնն անունով:

Ճիշդ ո՞ր ամսին եւ ո՞ր օրը տեղի ունեցաւ ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութիւնը, ստոյգ յայտնի չէ: Քրիստափորի յուշերից դատելով՝ պատմական այդ դէպքը տեղի ունեցած պէտք է լինի 1890-ի օգոստոսին: Ըստ Ռոստոմի՝ ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութիւնը տեղի է ունեցել յուլիս ամսին: Կուկունեանի արշաւանքի

պատմութիւնից երեւում է, որ օգոստոսին ՀՅ Դաշնակցութիւնն արդէն կազմուած էր եւ անցել էր գործունէութեան:

**

Նոր կազմակերպութիւնը՝ ՀՅ Դաշնակցութիւնը, հիմնում էր բոլորի կողմից յօժար կամքով ընդունուած ընդհանուր սկզբունքների վրայ՝ միաձայնութեամբ: Մշակուած ծրագիր եւ կազմակերպական կանոններ դեռ չունէր. այդ պարտականութիւնը դրուեց ապագայում գումարուելիք: Ընդհանուր ժողովի վրայ: Նոր կազմակերպութիւնը որդեգրեց կազմակերպական կենտրոնացման դրութիւնը եւ ընտրեց Կենտրոնական Վարչութիւն, որ հետագային աւելի «Կենտրոն» անունով յայտնի դարձաւ: ՀՅ Դաշնակցութեան առաջին Կենտրոնական Վարչութեան անդամներ ընտրուեցին Քրիստափոր Միքայէլեանը, Սիմոն Զաւարեանը, բժ. Յովհաննէս Լորիս - Մելիքեանը, Աբրահամ Դաստակեանը եւ Լեւոն Սարգսեանցը:

Հիմնադրութիւնից անմիջապէս յետոյ, Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը, հասարակութեան ուղղած Մանիֆեստով՝ յայտարարեց նոր կուսակցութեան ստեղծումը եւ պարզեց նրա որդեգրած նպատակները:

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

ՎԱՂՈՒՅ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐ

Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից է վեր ստրուկ Թիւրքա-Հայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երէկ շլիքը ծռած եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզուելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով ճնշուել է հայ ժողովուրդը թուրք բռնապետների լծի տակ: Դարերի ընթացքում ցանել է, բայց պտուղը երբեք չի վայելել. աւազակ տիրողը յափշտակել է: Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները. բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ. շարունակելով ողողել հայրենիքի հողը իր քրտինքով... Դարերի ընթացքում

հայր կարծեք թե կամեցաւ ապացուցանել մարդկութեանը, թե կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով: Քաղաքակիրթ ելրուպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում: Սակայն անցան տարիներ տարիների յետեւից եւ հայերի դրոյթինը իրանց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ անելի ծանրացաւ եւ այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել: Հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է շարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն էլ ունի իւր սահմանը: Գազաթնակէտին հասցրած հալածանքները վերջապէս սթափեցրին հային. այսօր նա վճռել է կան մեռնել, կան ազատուել: Եւ ահա Էրզրումը եւ ապա Կ. Պոլիսը աներկիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ. հայը այլ եւս չի խնդրում, այլ պահանջում է, եւ պահանջում է զէնքը ձեռքին:

Սուլթանը սարսափահար է. թուրք կառավարութիւնը գլուխը կորցրել է:

Այսօր երուպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ուժը իր մէջ է. երէկուայ ստրուկ, համբերող հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել:

Հայոց հարցի վճռի յետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամէն մի լուրջ հայրենասէրի այդ բոլոր յեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Այդ յեղափոխական գաղափարի դրօշակիրն է «Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը», որ սրանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ:

«Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը» թէեւ նոր է հանդէս գալիս իբրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է. խմբերի, որոնք նոյնիսկ հայ ժողովուրդի ձգտումների ծնունդն են: «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենդանիները: Նպատակ դնելով թիրքաց Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է

այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամէնքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով այսօր երեսը կը դարձնի ժողովրդից եւ չի հետեւիլ նրան, նա այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է...

Ուրեմս, եղբայրներ, միանանք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ:

Եւ դուք, երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ:

Եւ դուք, ակեզարդ ծերունիներ, ոգեւորեցէ՛ք ձեր որդոց եւ օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դուք, հարուստներ, բաց արէ՛ք ձեր քսակները, զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ:

Եւ դու, հայ կին, ոգի՛ ներշնչիր սուրբ գործի մէջ:

Եւ դու, հայ հոգեւորական, օրինիր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուենք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԵՆՔ ՁԵՌՔ ԿԸ ԲԵՐԵՆՔ ՄԵՐ ՈՒԶԱԾՆԵՐԸ, ԵՐԲ ՈՒԺ ԿՊԻՆԵՆԱՆՔ

Մեղկ անդորրութիւն չէ, որ ապահոված է մարդկային ԻՐԱՒՈՒՆՔԸ, այլ՝ ԿՌԻՒՐ՝ անդույ, անվկանդ: «Առանց կռուի չկայ իրաւունք, ինչպէս որ առանց աշխատանքի չկայ սեփականութիւն»: Որքան ճիշդ է ասուած, թէ՛ «երեսիդ քրտինքով պիտի վաստակես քո հացը», նոյնքան ճիշդ է եւ այս, թէ՛ «կռուի մէջ միայն պիտի գտնես քո իրաւունքը»... «Արդարութիւնը մի ձեռքում բռնած ունի ԿՇԻՌ, միւս ձեռքում՝ ՍՈՒՐ: Կշռուով նա կշռում է իրաւունքը, սրով պաշտպանում, հաստատում է նրան: Սուրը առանց կշռի՝ մերկ բռնութիւն է, կշռը առանց սրի՝ իրաւունքի անզօրութիւն». այսպէս է տրամաբանում Գերմանացի Երինգ, երուպական ամենառոշակաւոր իրաւաբաններից մէկը: Թուլամիտ պէտք

է լինել այս խօսքերում պարունակուող ճշմարտությունը չըմբռնելու համար: Սակայն, եթե իրաւունքը իր պաշտպանութեան համար կռիւ է պահանջում, հապա կռիւը իր յաղթանակի համար նեցուկ պիտի ունենայ Ուժով: Ուժն է, որ կառավարում է աշխարհս, եւ մենք ձեռք կը բերենք մեր ուզածները, երբ ուժ կ'ունենանք:

ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՄԻՄԻԱՅՆ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

«Դաշնակցութեան մէջ, անհատներից, խմբերից եւ կոմիտէներից սկսած մինչեւ Բիւրօ եւ Պատասխանատու մարմին, չկայ խնդիր իրաւունքի ու իշխանութեան, այլ միմիայն պատասխանատուութեան ու պարտականութեան, կատարելու կազմակերպութեան որոշումներն ու ընկերների խնդիրները: Պարզ է, քանի անհատը ու այս կամ այն մարմինը աւելի անձնուէր ու արդիւնաւէտ կերպով է կատարել իրա վրայ դրուած պարտականութիւնը, այնքան նա աւելի կը վայելէ ընկերների յարգանքն ու հաւատը, այնքան նա աւելի համապատասխան կը համարուի աւելի լայն շրջանի գործերը տանելու»:

Ս. ԶԱԽԱՐԵԱՆ

ՄԵՆՔ ՈՒՆԻՆՔ ԱԶԳՈՎԻՆ ՎՏԱՆԳՈՒԵԼՈՒ ՀՈԳՍԸ

«Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտաւորութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունինք ազգովին վտանգուելու հոգաը, եւ չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անգամ, որ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալ ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա բուրժուական է, կղերական... Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշտպանէր ազգի շահը, ինչպէս այդ անում են այսօր անգլիացի եւ ֆրանսացի սոցիալիստները»:

ՌՈՍՏՈՍ

ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ՝ ԻԲՐԵՒ ՀԱՐԻՒՐ ԳԼԽԱՆԻ ՎԻՇԱՊ ԿԸ ԳՈՐԾԻ ԱՄԷՆ ՏԵՂ

Ամէնից առաջ պէտք է ի նկատի ունենալ, որ մեր կռիւը՝ ժողովրդի կռիւ է նրա դարաւոր բռնակալների դէմ: Իբրեւ ժողովրդական կռիւ, նա չի կարող կանոնաւոր զօրքերի վարած պատերազմի ձեւ ունենալ. ի հարկէ եթէ մի արտակարգ դէպք չպատահի: Մտախաբութիւն է երեւակայել, թէ Տաճկա-Հայաստանում կամ նրա սահմաններում կարելի է պատրաստել ու կազմակերպել մարտնչող գնդեր, նոյնիսկ ամբողջ զօրք, որ մի օր յառաջ կը խաղայ վճռական ճակատամարտ տալու, եւ այդպիսով կը սկսի եւ կը վերջացնի հայրենիքի ազատութեան գործը:


Ո՛չ, հայ ժողովրդի կռիւը պէտք է պարտիզանական կռիւ լինի, մենք մեր այժմեան դրութեան մէջ ուրիշ կերպ կռուել չենք կարող. կանոնաւոր պատերազմ, իսկական ճակատամարտներ անհնար են մեզ համար:

Այդ է թելադրում մեզ առողջ դատողութիւնը եւ այդ է սովորեցնում մեզ նոյնիսկ ուրիշ ազգերի-պուկարների, իտալացիների, յոյների պատմական օրինակը: Այդպէս պէտք է կռուենք եւ մենք գոնէ մինչեւ այն ժամանակ, երբ պարտիզանական կռուի ջոկ-ջոկ ալիքները միախառնուելով կը կազմեն ժողովրդական ապստամբութեան յորդահոս հեղեղը, որ կը սրբի կը տանի իւր հետ Հայաստանի երեսից ստրկութեան, աղքատութեան, անարդարութեան դարաւոր կնիքը...:

Այդ պարտիզանական պատերազմի նախաձեռնողները կը լինին ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ, որոնք միայն ձեւ են փնտռում արտայայտելու իրանց հրաշալի զգացմունքները, ուժերն ու ընդունակութիւնները:

Այդ ձեւը հրոսակային (հայդուկային, աւազակային) խմբերի կռիւը կը թելադրեն ժողովրդին եւ կը ժողովրդականացնեն՝ յեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչները:

Շատ մեծ դեր են խաղացել հրոսակային խմբերն այս դարում ազատուած մանր ազգութիւնների պատմութեան մէջ. այդպիսի մեծ դեր կարող են եւ պէտք



Է խաղան նրանք նաեւ մեզ համար: Ախոյեան հանդիսանալով ամէն տեսակ բռնաւորների դէմ՝ սկսած սատրապ աստիճանաւորից մինչեւ քիւրտ աազակը մի կողմից եւ արինարբու հարկահանի ու վաշխառուի դէմ միւս կողմից, այդ խմբերը՝ ապագայ պատմութեան կենդանի դրօշակներ կը լինին: Պարտիզանական յարձակումներ գործելով բռնաւորների վրայ, պաշտպանելով ճնշուածներին, նրանք կ'ելեկտրականացնեն ժողովրդի միտքն ու զգացմունքը, կռուի կենդանի օրինակներ կը տան ժողովրդին եւ այդպէս մասամբ գաղափարական կերպով, մասամբ իրականապէս կը ժողվեն իրանց շուրջը եւ կը կազմակերպեն կռուելու փոքրիշատէ ընդունակ բոլոր տարրերը:

Այդ ուժերը կանոնաւոր կերպով կազմակերպելու եւ ամբողջ Հայաստանում այդ խմբերի միջեւ մի ընդհանուր կապ հաստատելու համար օգնութեան կը հասնի ինտելիգենցիան, որ գլխաւորապէս պէտք է գբաղուի հէնց յեղափոխական ուժերի կազմակերպութեամբ:

Ապստամբութեան գաղափարը քարոզելու նա պէտք չի ունենալ: Տաճկաստանի այժմեան կառավարութեան ձեւը ամենալաւ քարոզիչն է այդ գաղափարի: Ինտելիգենցիան միայն պէտք է որոշի յեղափոխական դրական իտէլաները եւ կազմակերպի եղած յեղափոխական ուժերը:

Եւ այդ կազմակերպութիւնը գլուխ գայ, այնուհետեւ կը հեշտանայ ժողովրդին զէնք մատակարարելը եւ ինքնիրան կը վճռուի թէ՛ ընթացիկ կռուի եւ թէ՛ ապստամբական

շրջանի բոլոր միջոցների հարցը:

Իսկ այդպիսի միջոցներ փնտռելու կարեւորութիւն չկայ յեղափոխական տեխնիկայի մէջ այդ հարցը վաղուց վճռուած է: Մենք անյարմար ենք համարում կանգ առնել այդ հարցի վրայ:

Յեղափոխական հարուստ տեխնիկայով՝ զինուած գաղտնի կազմակերպութեան տարածումն ու զարգացումը բնական նաբար առաջ կը բերի աւելի յաճախ կրկնուող խմբային ցոյցեր տաճկական բռնակալութեան դէմ, որոնք մի կողմից կը դաստիարակեն ժողորդի յեղափոխական ոգին, միւս կողմից կը քայքայեն Տաճկաց տէրութեան՝ առանց այն էլ խախտու կազմը:

Եւ երբոր յեղափոխութեան պարտիզանական կռուի ալիքները կ'ողողեն ամբողջ Տաճկական-Հայաստանը, երբոր նրանք անվերանորոգելի ճեղքեր կը բանան Տաճիկ տէրութեան խախտու շինուածքի մէջ, երբոր վերջապէս եւրոպան կը տեսնի, որ Տաճկաստանի խաղաղութիւնն անդառնալի կերպով խռովուած է երկու անհաշտ՝ մինչ արեան վերջին կաթիլը մաքառիլ վճռած թշնամիների կռուով, երբոր նա կը տեսնի, որ Տաճկաստանում իւր գործ դրած դրամագլուխները վնասուած են եւ կորչելու վտանգի են ենթարկուած եւ, որ կայծը բոցավառուելով կարող է եւրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, - այն ժամանակ կը գայ վճռական րոպէն եւ ամբողջ ժողովուրդը իբրեւ մի մարդ, մի հոգի ոտի կը կանգնի եւ զէնքի ուժով ձեռք կը բերի իւր մարդկային իրաւունքները, այն իրաւունքները որ

այսքան դար անխիղճ կերպով ոտնակոխ են արել տաճիկներն ու քրտերը:

Տաճիկ կառավարությունը չի կարողանալ խեղդել յեղափոխությունը ո՛չ նրա առաջին շրջանում, ո՛չ էլ վերջինում: Ապակեդրոնացման (դեցենտրալիզացիա) ու տեղական ինքնուրոյն նախաձեռնության վրայ հիմնուած յեղափոխական կազմակերպությունը՝ իբրեւ հարիւր գլխանի վիշապ կը գործի ամէն տեղ եւ ամէն տեսակ ձեւերով ու հնարքներով: Նա կը մտցնի իւր աւերիչ զէնքը թէ՛ քաղաք եւ թէ՛ գիւղ, թէ՛ կաշառակեր աստիճանաւորների եւ թէ՛ արինարբու վաշխառնների շրջանը, մի խօսքով նա սրով ու հրով կը ջնջի ժողովրդի բոլոր թշնամիներին ու բռնակալներին: Ի հարկէ արինահեղ փորձեր եւս կը լինին յեղափոխական վիշապին սպաննելու, բայց ի զուր մի կտրուած գլխի տեղ կը բուսնեն հարիւրաւոր գլուխներ, մի կալանաւորուած ու ջարդուած խմբի տեղ՝ յարութիւն առած ու ինքնագործունեայ ժողովուրդն առաջ կը բերի հարիւրաւոր նոր խմբեր: Շատ արին կը թափուի, շատ աչքեր կ'արտասուեն, բայց մի՞թէ այժմ արինը արտասուք են ողորում Հայաստանի հովիտները, եւ վերջապէս ինչ արած, որ այժմեան մարդկութիւնն առանց արինային վարձատրութիւն ստանալու ազատութիւն չի տալիս ոչ ոքի: Եւ մեր ժողովուրդը կը վճարի այդ վարձը, այդ պարտքը՝ ոգեւորուած այն մտքով, որ վիճակն արդէն զգուած է եւ յարթութիւնը, իւրն է լինելու, եւ միայն իւրը:

«ԴՐՕՇԱԿ»
Սեպտեմբեր 1891

«ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ»

1892-ը ընդհանրապէս ծանր տարի էր հայ ազգաբնակչութեան համար: Տաճիկ կառավարութիւնը հայկական շարժումը խեղդելու նպատակաւ ամենաձայրայեղ միջոցների պատրաստութիւններ էր սկսում տեսնել: Ամէն մի փոքրիկ յեղափոխական դէպքին նա պատասխանում էր դժոխային խստութիւններով: Հարուածը ոչ միայն յեղափոխական անհատների դէմ էր, այլ շարժման արմատի՝ համայն հայ տարրի դէմ, թէեւ այդ տարրի ընդհանրութիւնը ստրկաբար շարունակում էր կրել ծանր շղթաները: Մասսային ձերբակալութիւնները տարածուած էին Մուշ, Սասուն, Վան, Կարին, Տրապիզոն, Երզնկա, Գարահիսար, Արաբկիր, մինչեւ իսկ Կիլիկիա:

Կառավարութիւնը զուգընթացաբար

գրգռում էր մահմետական ամբոխը հայ ազգաբնակչութեան դէմ՝ հաւատացնելով նրան, թէ հայերը ձգտում են ազգային գերիշխանութեան, մահմետականների ստրկացման: Իսկ նորակազմ համիտիական գնդերը ամենագորեղ զէնքն էին կառավարութեան ձեռքին, բոլորովին ուժասպառ անելու հայ տարրը:

Ասպարէզ մտած ամէն գոյնի, ուղղութեան, դիրքի տէր «գործիչներ», որոնք համախմբուել էին ընդհանուր ոգեւորութեան ժամանակ, բնականաբար, պէտք է ընդհատուէին, երբ այդ ոգեւորութիւնը սկսեց աստիճանաբար իջնել: Բուն յեղափոխական գործը շատ ծանր պայմաններ էր ներկայացնում, իսկ այդ պայմաններին քչերն էին պատրաստ ենթարկուելու, եւ աւելի քչերը՝ ընդունակ մինչեւ վերջը տանելու յեղափոխական կեանքի բոլոր դառնութիւնները: Շատերը, մանաւանդ խոհեմները, լուռ ու մունջ քաշուեցին իրենց տեղերը եւ շարունակեցին վարել նախկին անվրդով, ապահով կեանքը: Ասպարէզի վրայ գտնուածների մէջ սկսեցին երեսան գալ ներքին երկպառակութիւններ: Դաշնակցութիւնից բաժանուեց մի խումբ «ֆրակցիա» միութիւն անունով, որն ունեցաւ իր կեդրոնական վարչութիւնը, իր մասնաձիւղերը եւ որը արդարացնում էր իր գոյութիւնը նրանով, որ Դաշնակցութեան Կենտրոնը հարկաւոր եռանդով չէ գործում: «Ֆրակցիա» միութեան կողքին բուսաւ մի նոր կազմակերպութիւն եւս, «Տաճկահայաստանի Ազատութեան վարչութիւն» անունով: Այս բաժանումները, որ պարզ հետեւանք էին յեղափոխական գործունէութեան իսկական պայմանների պարզուելուն, անժամանակ ոգեւորութեան իջնելուն, համարուեցան պատճառ յեղափոխական գործի դանդաղ ընթանալուն: Հասարակութիւնը, անընդունակ գտնուելով հասկանալու գործի դանդաղութեան իսկական պատճառները եւ ամբողջ չարիքը տեսնելով կուսակցական բաժանումների մէջ, միաբերան «միութիւն» էր պահանջում: Դաշնակցութեան Կենտրոնական վարչութիւնը երկար բանակցութիւններից յետոյ, իր կողմից մեծ զիջումներ անելով, յաջողեցրեց միութիւնը: Բայց այդ, ի հարկէ, գործի ընթացքին շատ քիչ օգնեց, հասարակութիւնը, որպէսզի իր «առատ նուէրները» թափի, ոչ մի կոպէլ աւելի չտուեց: Ռեակցիան աւելի եւ աւելի սկսեց սաստկանալ, մանաւանդ, երբ անցան

գարունը, ամառը, աշունը եւ տաճկահայ ժողովուրդը բնաւ չմտածեց շարժուել:

Ստեղծուեց մի ցաւալի դրութիւն:

Հիմնուած հասարակութեան ոգետրուած տրամադրութեան վրայ, Դաշնակցութեան Կենտրոնը լայն-լայն ծրագիրներ էր կազմում, դաշնակցական գործակալները բուն երկրում մեծ աջակցութիւն էին խոստանում, տեղական գործիչները մեծ-մեծ յոյսերով սնուում, սակայն ոգետրութիւնն իջնելուն պէս հասարակութեան խոստումներն չկատարուեցան, Կենտրոնի լայն ծրագիրները կիսակատար մնացին, իսկ աւելի ցաւալին այն է, որ թէ՛ հարուստ դասը, թէ՛ Կենտրոնը, թէ՛ գործակալները, թէ՛ բուն երկրում գործիչները՝ բոլորն էլ իրենց փոխադարձաբար խաբուած տեսան եւ մէկ մէկու հետ թշնամացան: Ո՞վ էր իսկական յանցաւորը: Ռէակցիան իր գագաթնակէտին էր հասել. «յուսախաբ» ռուսահայ ժողովրդի ականջները խլացել էին. յեղափոխական շարժման այլեւս չէին հաւատում:

Ահա այս հանգամանքներումն էր, որ 1892-ի սկզբին միտք յղացուեց Դաշնակցութեան ընդհանուր ժողով կազմելու, որը եւ իրագործուեց 1892-ի ամառը: Ներկայ էին Դաշնակցութեան Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Տաճկաստանի ներկայացուցիչները: Հրաւեր ուղարկուեց նաեւ միւս կուսակցութիւններին («Արմենիա»-ի եւ «Հւչակ»-ի), բայց անպատասխան մնաց:

Երկամեայ դառը փորձառութեամբ գինուած, անողոք քննադատութեան ենթարկելով անցեալի գործունէութեան ձեւը եւ ուղղութիւնը, ժողովի անդամները կենսական փորձերի հիման վրայ գծեցին այն ճանապարհը, որի վրայ մինչեւ այժմ կանգնած է Դաշնակցութիւնը:

Աւելորդ ենք համարում երկար կանգ առնել ժողովի պարապմունքների վրայ: Դաշնակցութեան Ծրագիրը, որ մշակուած է այդ ժողովում, կարող է ամփոփ գաղափար տալ նրա մասին: Յիշատակենք միայն մի կէտ: Ժողովը ունէր խորհրդակցական բնաւորութիւն, առաւել՝ մտքերի փոխանակութիւն. այդ պատճառով բոլոր այն հարցերը, որ դրում էին, ենթարկուած էին վիճաբանութեան մինչեւ այն ժամանակ, երբ բոլորն էլ համաձայնուած էին հարցի այս կամ այն վերջնական ձեւակերպման վրայ. ո՛չ մի հարց չի ենթարկուել քուէարկութեան. բոլորը ընդունել են միաձայն հաւանութեամբ:

Ժողովականները հասկանում էին,

որ յեղափոխական կազմակերպութեան թուլանալը բնաւ նշան չէ հայ ժողովրդի յեղափոխական ձգտումների թուլանալուն, շարժման կանգ առնելուն, որ ընդհանուր հիասթափութիւնը անխուսափելի էր, քանի որ ռուսահայ հասարակութիւնը շատ մեծ ակնկալութիւններ ունէր, որոնք ոչ մի դէպքում իրագործուել չէին կարող այն ժամանակուայ հանգամանքներում, որ կուսակցութիւնը չէր կարող չթուլանալ, քանի որ գործունէութեան նախկին Ծրագիրը չէր համապատասխանում գլխաւոր կէտերում յեղափոխական կեանքի իսկական պահանջներին: Պարզ էր նոյնպէս, որ յեղափոխութեան յենարանը պէտք էր փնտռել ո՛չ Կովկասում եւ ոչ արտասահմանում, ուր կարող են շատ շուտով ոգետրուել եւ նոյն արագութեամբ էլ սառչել եւ անտարբերութեան մէջ ընկնուել, այլ այնտեղ, հեռո՛ւ, հայ ժողովրդի տանջուող սրտի մէջ, եւ որ յեղափոխութիւնը կանգ չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ, քանի գոյութիւն ունեն կեանքի տանջանքները, - նա միայն կը փոխի իր ձեւը, յարմարուելով նոր պայմաններին, երբեք իր էութիւնը:

Ժողովը ցրուեց շատ աննպաստ պայմաններում: Դաշնակցութիւնը նիւթական միջոցներից բոլորովին զուրկ էր: Ոչ միայն գործիչների համար ճանապարհաճախս չէր գտնուում, այլեւ ժողովին եկած պատգամաւորների շատ համեստ ապրուստը համարեա թէ չէր հայթայթուած: Բայց հասարակութեան վրդովեցուցիչ անտարբերութիւնը, կեանքի դառը պայմանները, փոխանակ յուսահատեցնելու, աւելի եռանդ էին ներշնչում բուն գործիչների սրտերում: Մի շատ նեղ դրամական շրջան [ակ]-ի աջակցութեամբ... [Զեռագրի վերջին մասը կորած է: Պէտք է լինի՝ մի շատ նեղ շրջանի դրամական աջակցութեամբ ժողովականները ցրուած են իրենց տեղերը, եւ Դաշնակցութիւնը ձեռնարկում է գործունէութեան, համաձայն ընդհանուր ժողովի տուած որոշումների]:

ՌՈՍՏՈՄ

ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՈՒՄԸ ԵՒ 3. ԴԱԻԹԵԱՆԸ

Ես չգիտեմ մի այլ յեղափոխական կուսակցութիւն, որ տարածուած լինէր այնքան շատ երկրների մէջ եւ ունենար այնքան երկար կեանք, ինչպիսին է ՀՅ Դաշնակցութիւնը: Չնայելով, որ

Դաշնակցութիւնը իր 35 տարուայ գոյութեան ընթացքում բազմաթիւ յաղթանակների հետ ունեցել է եւ ոչ պակաս պարտութիւններ, այնուամենայնիւ հայ իրականութեան մէջ միշտ էլ նա մնացել է միակ կուսակցութիւնը, որ գիտակցել է հայ ժողովրդի իսկական ձգտումները եւ մարտնչել է դրանց իրականացման համար:


Սա մի զարմանալի պատեհութիւն է, որ այս վերջին 35 տարուայ ընթացքում Դաշնակցութիւնն է եղել միակ կենսունակ կուսակցութիւնը, որ անվիաստ կերպով միշտ մարտնչելով առաջին դիրքերում, խրոխտօրէն կրել է հայ ժողովրդի տենչանքների պատգամները իբրեւ մի սրբազան ասանդ: Այդ դիրքերի վրայ ապահովաբար նա դեռ եւս երկար տարիներ պիտի մնայ, որովհետեւ ոչ ոք չկայ, որ կարող լինի նրա ձեռքից խլել այդ առաջնութեան իրաւունքը, քանի որ ոչ մի այլ կուսակցութիւն չէ ունեցել այն գաղափարական հմայքը եւ անձնագոհութեան տենչը, որով օժտուած է եղել ՀՅ Դաշնակցութիւնը:

Շնորհիւ այն բանին, որ իր կազմակերպութեան հէնց սկզբի շրջանում ՀՅ Դաշնակցութիւնը կոփուել է Քրիստափորի, Սիմոնի եւ Ռոստոմի պէս հազուագիտ անձանց ձեռքերով, որոնք կարողացել են ծրագրի՝ գաղափարական դաւանանքի հետ միացնել եւ կենդանի գործը, նա կարողացել է միշտ գրաւել դէպի ինքը այնպիսի տարրեր, որոնք խիզախօրէն զոհաբերել են իրենց կեանքը՝ Դաշնակցութեան գաղափարների համար: Կարելի է ասել, որ Դաշնակցութեան բոլոր կարեւոր գործիչներին վիճակուել է միմիայն զրկանք եւ զոհաբերութիւն իրենց ամբողջ կեանքի ընթացքում:

Ահա այս է թերեւս ամէնից հիմնական պատճառը Դաշնակցութեան կենսունակութեան, որից զուրկ են մեր իրականութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր միա հոսանքները:

Սակայն, ՀՅ Դաշնակցութեան կենսունակութեան չափազանց նպաստել է եւ «ապակեդրոնացման» սկզբունքը, որը 1892 թուից սկսած կիրառուում է մեր կուսակցական կեանքում եւ այժմ առանց «ապակեդրոնացման» սկզբունքի անկարելի է հասկանալ Դաշնակցութիւնը:

Ո՞վ գիտէ, թէ ինչպիսի՞ զարգացում կ'ունենար ՀՅ Դաշնակցութիւնը, եթէ իր կազմակերպութեան հէնց սկզբի շրջանում



«ապակեդրոնացման» ձեւը չստանար: Շատ հաւանական է, որ ՀՅ Դաշնակցութեան եւս պիտի վիճակուէր այն, ինչ որ վիճակուեց մեր միա կուսակցութիւններին:

1892 թուին մեր ընկերները լաւ կարողացան ըմբռնել այն դերը, որը պիտի կատարէր Դաշնակցութիւնը մեր իրականութեան մէջ եւ գտան այն ձեւակերպութիւնը, այն ֆորմիւլը, որ ամէնից շատ համապատասխանում էր հայ ժողովրդի այն ժամանակուայ դրութեան եւ նրա հոգեկան ձգտումներին:

Շնորհիւ ապակեդրոնացման սկզբունքին՝ լայն ասպարէզ բացուեց տեղական ուժերի առջեւ: Իւրաքանչիւր դաշնակցական մարմին՝ զարգանալով իր համապատասխան միջավայրում ու զգալով իր ամէն մի քայլի ամբողջ ծանրութիւնը, գիտակցօրէն էր մօտենում իր անելիքներին եւ ոչ թէ դառնում էր հլու կամակատարը եւ մեքենայօրէն գործադրողը կուսակցութեան կեդրոնական մարմնի կարգադրութիւնների, ինչպէս այդ տեղի էր ունենում այլ կուսակցութիւնների մէջ:

Շնորհիւ ապակեդրոնացման սկզբունքի լայն կիրառման՝ մեր իրականութեան մէջ երեւան եկան ձեռներէցութեամբ լի բազմաթիւ նոր ուժեր, որոնք այլ պայմաններում պէտք

է կորչէին անհետ կերպով, անկարող լինելով երեւան հասել իրենց մտաւոր եւ հոգեկան կարողութիւնները:

Չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ ապակեդրոնացման սկզբունքի շնորհիւ ՀՅ Դաշնակցութիւնը լայն ծաւալ եւ այնքան հարուստ գործունէութիւն ունեցաւ այս 35 տարուայ ընթացքում: Եւ որքան ժամանակ, որ այդ սկզբունքը Դաշնակցութիւնը հնարաւորութիւն կ'ունենայ կիրառել կեանքի մէջ՝ նա կը մնայ եւ կենսունակ եւ կը կարողանայ արտայայտել հայ ժողովրդի բովանդակ կարիքները:

Այժմ, երբ անցել է 33-35 տարի, երբ մեր աչքի առջեւն է կուսակցութեան ամբողջ գործունէութիւնը, բնականաբար հարց է ծագում, ո՞ւմ ենք մենք պարտական այդ «սկզբունքի» համար:

Անշուշտ, այնպիսի կուսակցութեան մէջ, ինչպիսին ՀՅ Դաշնակցութիւնը, գլխաւոր շարժիչ ուժը ժողովրդական զանգուածն է, իսկ անհատներին վերապահուած է լինել այդ շարժիչ հսկայ մեքենայի մի փոքրիկ մասը միայն: Սակայն, եղել են որոշ վայրկեաններ մեր կուսակցութեան մէջ, երբ անքակտելիօրէն այս կամ այն կարեւոր դէպքը կապուել է մի ուել կուսակցական անհատի անուան հետ:

Այսպէս է եւ «ապակեդրոնացման» սկզբունքի ընդունելու պարագան. ան կապուած է Յովսէան Դաւթեանի անուան հետ:

Այս մասին դժբախտաբար մենք շատ բան չգիտենք. որովհետեւ Դաշնակցութիւնը միշտ գործը վեր դասելով գրչից, ւաւելի գործել է, քան գրել: Շնորհիւ այդ բանին՝ բազմաթիւ գործեր եւ կարեւոր դէմքեր մնացել են անյայտութեան մէջ եւ այժմ անկարելի է վերակենդանացնել այդ ամէնը:

Այժմ ես չեմ ճանաչում մէկը, որ կարողանար ճշգրիտ եւ մանրամասն պատկերը տալ մեզ 1892 թուականի Ընդհանուր ժողովի իրադարձութեանց: Ենթադրում եմ, որ չեն պահուած եւ չկան արձանագրութիւններ այդ ժողովի մասին: Սակայն, այն տեղեկութիւնները, որ ես ունեցել եմ դեռ եւս տարիներ առաջ զանազան ընկերներից, բոլորն էլ ապացուցանում են, որ իրօք Յովսէան Դաւթեանն է եղել այն հոսանքի ղեկավարը եւ տեսաբանը, որը պաշտպանել է «ապակեդրոնացման» սկզբունքը:

Ինչպէս յայտնի է, նորակազմ Դաշնակցութիւնը ղեկավարում

էր «կեդրոնով», եւ այդ ժամանակ «կեդրոնացման» կողմնակիցները չափազանց շատ էին: 1892 թուականի Ընդհանուր ժողովին մանաւանդ շրջաններից եկած պատգամաւորները ունէին միմիայն մի նպատակ, որքան կարելի է ուժեղացնել «կեդրոնը», մտցնելով այնտեղ կուսակցութեան մէջ աչքի ընկնող եւ ձեռներէց ընկերներին:


Սակայն, Յովսէան Դաւթեանին յաջողում է ժողովի տրամադրութիւնը հիմնովին փոխել: Դուրս գալով յատուկ զեկուցումով՝ նա համոզում է «կեդրոնացման» կողմնակից ընկերներին հրաժարուել իրենց տեսակէտից եւ ընդունել «ապակեդրոնացման» սկզբունքը՝ իբրեւ միակ եւ առողջ սկզբունք յեղափոխական գործունէութեան համար: Նրա ջանքերը պսակում են յաջողութեամբ: Եւ անդրանիկ դաշնակցական Ընդհանուր ժողովի որոշումը լինում է յօգուտ «ապակեդրոնացման»:

Այդ օրուանից անցել է արդէն 33 տարի, եւ «ապակեդրոնացումը» այնուհետեւ դարձել է գլխաւոր ուղեցոյցը մեր կուսակցական աշխատանքների մէջ, ձուլուելով կուսակցութեան էութեան հետ, իբրեւ նրա մի անբաժան մասը:

Ա. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տնտեսական անհաւասարութիւնը մեր երկրում, ինչպէս եւ ամէնուրեք, ծագեց այն ժամանակից, երբ աշխատանքի միջոցների կատարելագործման հետ միասին կարելի եղաւ արդիւնաբերել ւաւելի, քան հարկաւոր էր անհատի գոյութիւնը պահպանելու համար: Եւ որովհետեւ այդ միջոցների կատարելագործման հետ միաժամանակ առաջ եկաւ եւ աշխատանքի բաժանումը-որսորդների կողքին երեւացին անամնապահները, երկրագործները, արհեստաւորները, ուստի այդ տարբեր պարապմունքների տէր դասերի եւ անհատների մէջ անխուսափելի կերպով պէտք էր հաստատուել արդիւնքների փոխանակութիւն, ուրիշ խօսքով՝ առեւտուր: Հէնց այս ժամանակ կարելի եղաւ ձեռքից ձեռք անցկացնել, մի տեղից միւս տեղ տեղափոխել արդիւնաբերութեան աւելորդը, կարելի եղաւ անհատներին կամ



համայնքին դիզել իրենց մօտ հարստութիւն, հէնց այդ ժամանակ հասարակութեան մէջ ասպարէզ եկաւ տնտեսական անհաւասարութեան յարատեւ ուժը: Փողը, որ մտցրած էր փոխանակութիւնը դիւրացնելու համար, սկսեց աւելի եւ աւելի մեծ դեր խաղալ հասարակական յարաբերութիւնների մէջ: Փողատէրը նոյնպէս, ինչպէս եւ բռնի ֆիզիքական ուժի տէրը, կարող էր ինքը չաշխատել, չարդիւնագործել, քրտինք չթափել, այլ ապրել փառաւոր կերպով հարիւրաւոր, հազարաւոր աշխատողների հաշուով:

Փողատէրը կամաց կամաց սկսեց հաստատ դիրք բռնել եւ իր ձեռքն առաւ երկրի մի քանի տնտեսական ֆունկցիաները: Բայց նա դեռ չի կարողացել իր ձեռքը գցել երկրի տնտեսական կեանքը. նա դեռ անմիջական մասնակցութիւն չունի արդիւնագործութեան մէջ, ինչպէս այդ տեղի ունի տնտեսապէս աւելի զարգացած երկրներում, ուր դրամատէրերն իրենք վարձկան բանուորների ձեռքով հերկում են իրենց հողերը, բանեցնում են գործարանները եւ այլն: Մեզանում՝ փողատէրը կան կատարում է միջնորդի դեր արդիւնաբերողների եւ սպառողների մէջ, - օգտուելով, ի հարկէ, երկու կողմիցն

էլ, - կան թէ չէ ահագին տոկոսով փող է փոխ տալիս սրան, նրան, գլխաւորապէս արդիւնագործողին. այսինքն նա կան վաճառական է կան վաշխառու: Իսկ բուն արդիւնագործող-դրամատիրութիւնը մեզանում՝ դեռ այնքան չնչին եւ այնքան սաղմային դրութեան մէջ է, որ նրա մասին խօսելն անգամ՝ աւելորդ է:

Փողատէր-վաշխառուական դասն իր ցանցերով պատել է ամբողջ երկիրը եւ յաճախ ձեռք ձեռքի տուած կառավարութեան պաշտօնեանների, ազնուականութեան եւ հոգեւորականութեան հետ, երկաթէ ճանկերով քամում է աշխատաւոր ժողովրդի արիւնը: Շնորհիւ իր ունեցած ուժի, նա կարողացել է իր համար փափուկ դիրք ստեղծել, կարողացել է ձեռք ձգել զանազան առանձնաշնորհումներ եւ հարկերի ամբողջ ծանրութիւնը թափել խեղճ աշխատաւոր ժողովրդի մէջքին:

Փողատէր-վաշխառուն դառել է մի տարր, որի հետ անխուսափելի կերպով ընդհարում են ազգաբնակչութեան բոլոր խաւերը: Նրան է դիմում՝ թէ արդիւնաբերողը եւ թէ սպառողը, թէ աշխատանքի միջոցների կարօտ աշխատաւորը եւ թէ զուարճութիւնների յետեւից ընկած ազնուականը: Նրան է

ԴԵՐԻԿ... ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ ԿՐԱԿԷ ՄԿՐՏԱՐԱՆԸ


դիմում եւ կառավարութիւնն իր ընթացիկ ծախսերը ծածկելու ու իր պարտքերը վճարելու համար: Բացի այդ, անշնորհք տաճիկ կառավարութիւնը իր ապուշ պաշտօնեաներով անընդունակ գտնուելով մինչեւ անգամ իր հարկերն ինքը հաւաքելու, ստիպուած դիմում է փողատէր-վաշխառուների միջնորդութեան: Այսպիսով դրանք դառնում է այն ուժը, որի առաջ գլուխ են խոնարհեցնում՝ թէ՛ ձնշուած աշխատատեղը եւ թէ՛ գոռոզ իշխանատեղը:

Դրանք կոսմոպոլիտ է. նա չի ծանաչում ո՛չ ազգ, ո՛չ կրօն, նա նայում է բոլորի վրայ հաւասար աչքով, նա անխտիր կերպով կեղեքում է թէ՛ հային, թէ՛ տաճիկն, թէ՛ քրտին, թէ՛ եզիտին... նա չի ծանաչում ո՛չ մի սրբութիւն. ո՛չ մի աստիճանաբարութիւն. նա հիմնայատակ է անում վաղեմի տոհմային կազմակերպութիւնը, խռովութիւններ է ձգում՝ նահապետական ընտանիքի մէջ, քայքայում՝ համայնական կեանքը:

Եւ որքան անելի է նա զարգանում, այնքան անելի զօրեղ է դառնում նրա յեղաշրջիչ ուժը, այնքան անելի է աչքի ընկնում՝ տնտեսական անհաւասարութիւնը, այնքան անելի խոր անդունդ է բացում՝ հարուստների եւ աղքատների մէջ, ինչպէս մենք այդ տեսնում ենք տնտեսապէս անելի զարգացած երկրներում: Այնտեղ այդ անհաւասարութիւնը հասնում է՝ իր գագաթնակէտին. ազգաբնակչութիւնը որոշ կերպով բաժանուած է երկու դասակարգին փոքրաթիւ, բայց երկրի հարստութեան տէր բուրժուազիայի եւ բազմաթիւ, օրուայ հացի կարօտ պրոլետարիայի (բանուոր դասակարգի):

Տնտեսական այդ չարիքի, տնտեսապէս կեղեքող դասի դէմ էլ մենք կը կռուենք այժմ: Մենք գործ կը դնենք ամէն միջոց պահպանելու գոյութիւն ունեցող համայնական սկզբունքները, մենք կ'աշխատենք տարածել համայնական սեփականատիրութիւնը, համայնական աշխատանքը, որպէսզի անելի պատրաստ գտնուինք անցնելու այն հասարակական կազմակերպութեանը, որն այսօր-էգուց կը հաստատուի տնտեսապէս անելի զարգացած երկրներում պրոլետարիայի յեղափոխութեամբ:

ՌՈՍՏՈՒ
Սեպտեմբեր 1894
ԴՐՕՇԱԿ



Դերիկ... Նուիրական վայր, որի անուան հետ կապուած են շատ քաղցր, նոյնքան եւ դառն յիշատակներ: Դուշմանի ձորի բերանին, մի բլրի փէշի վրայ հինաւուրց աներակ վանք էր դա՛ տաճկական սահմանին մօտ: Դուշմանի ձորի եւ շրջակայքի տէր ու տիրականը քրտերն էին, եւ ո՞ր հայը կարող էր ոտք կոխել այդ վտանգաւոր ձորերում: Բայց երբ սահմանին այն կողմը սկսուեց են համիտեան հայահալած քաղաքականութիւնը եւ ջարդերը, իտէալիստ Բագրատ վարդապետը, նոյնքան իտէալիստ երկու քաջերի՝ Սաքոյի եւ Վարդանի հետ Դերիկի նորոգութեանն են ձեռնարկում եւ շունչ տալիս այդ վանքին: Վարդանի եւ Սաքոյի անունը ասի ու սարսափ է տարածում եւ զսպում քրտերին, որովհետեւ հէնց առաջին օրը, երբ քրտերը ցանկացան վանքը թալանել, անսպասելի դիմադրութեան հանդիպեցին: Այդ օրուանից՝ Դերիկը դարձաւ հայ փախստականների եւ հայդուկների իջեան: Համիտի սիրելի Պահրի փաշան, Վանի կուսակալը, ամէն միջոցի դիմեց վանքը դատարկելու հայերից, բայց անյաջող: Զայրացած իր անյաջողութիւններից՝ նա որոշեց մի

արշաախումբ ուղարկել՝ հրամայելով քարը քարի վրայ չթողնել Դերիկուն: Արշաախումբը բաղկացած էր մօտ 500 ժպտեալ ասկեարներից եւ քրտերից:

Եկան եւ Դերիկի պաշտպանները, թուով 17 հոգի, եւ մի քանի օրից յետոյ տեղի ունեցաւ յարձակումը:

Մի գեղեցիկ առաւօտ էր այդ, երբ 60-ի չափ ձիաւոր քրտեր երեւացին Դերիկի արեւելեան կողմից եւ բլուրների վրայ դիրքեր բռնելով՝ կրակ բացին: Միաժամանակ կրակ բացին շրջակայ լեռների բարձունքների վրայ դարանամուտ եղած քրտերն ու ժպտեալ ասկեարները: Չսայած դերիկցիների աննպաստ պայմաններին՝ քրտերը մինչեւ երեկոյ տեւող տաք կռուի ընթացքում իրենց դարաններից չկարողացան դուրս գալ: Նիկ. Տէր Յովհաննիսեանը այդ խմբի քաջարի մարտիկներից մէկն էր. նա նետուում էր մէկ դիրքից միւր՝ գնդակների տարափի տակ:

Պահիրի փաշայի հրամանը չէր կատարում, եւ քրտերը չէին յանդգնում մօտենալ Դերիկին: Նրանց ուշադրութիւնը գրաւում է վանքի տաւարը, որ արածում էր մօտակայ ձորակուն: Անյուսալի էր 14 տարեկան պատանի տաւարածի դրութիւնը, որի վրայ քրտերը սկսել էին կրակել: Նկատելով այդ՝ Նիկոլն ու Սաքոն դուրս են գալիս իրենց դիրքերից եւ դիմում դէպի մօտակայ բլուրը՝ օգնութեան հասնելու պատանի տաւարածին: Պատանու մայրը, աղբակցի գեղջկուհին, աղաչում է Նիկոլին եւ Սաքոյին չանել այդ քայլը եւ չվտանգել իրենց կեանքը: «Իմ զաւակս արդէն կորած է», աղերսում է խելացնորութեան հասած մայրը, «իսկ դուք մի՛ արէք այդ քայլը, որով միայն կը վտանգէք ձեզ»:

Սակայն, 10 րոպէ չանցած՝ Նիկոլն ու Սաքոն դիմացի բլրի վրայ դիրքեր բռնած՝ գնդակի կարկուտ թափեցին քրտերի գլխին եւ յետ մղելով՝ նրանց՝ հնարաւորութիւն տուին պատանի տաւարածին անվսաս հասնելու վանքը:

Խելակորոյս մօր ուրախութեանը սահման չկար:

**

Այնուհետեւ սկսում է Նիկոլի փայլուն հայդուկային գործունեութիւնը: Նրա առաջնորդութեամբ շատ անգամ հայդուկային խմբերը անցնում են երկիր եւ կռուի բռնում զօրքերի եւ քրտերի հետ: Դերիկի երկրորդ կռիւը, ուր նա 11

զինուած մարդով բազմաթիւ անզէնների կեանքը փրկեց. Պօղազ-Քեասանի փայլուն կռիւը, ուր նա վաստակեց քրտերից Դուման մականունը. Կոթուրի կռիւը (8). վերջապէս, Խանասորի արշաւանքը:

Քրտերը 10-10-ներ հիւսեցին՝ դրուատելով Դումանի քաջութիւնը եւ այն սարսափը, որ թողնում է նա ամէն տեղ: Ահա մի կտոր քրտական 10-10-ներից.

Պօղազ-Քեասանը առանձին գիւղ է, Նաթանեանի տունն էլ քեաֆրների բունն (9) է.

Թո՛ղ Աստուած պատժի քեաֆր Նիկոլ Դումանին,

Որ կտրեց ձեռքը մեր Շամսիկցիների: Այս երգը կապուած է Պօղազ-Քեասանի կռուի հետ: Դումանը իր խումբով իջեւանում է այդ գիւղում՝ Նաթանեանի տանը: Քրտերը իմանալով այդ՝ շրջապատում են Նիկոլին. ցանկանալով խեղդամահ անել հայդուկներին ծխի ու մխի մէջ՝ դրանք ծածկում են տունը խոտով, փշերով ու կրակ տալիս: Ապա սկսելով հրացանաձգութիւն՝ առաջարկում են Նիկոլին անձնատուր լինել:

Երբ կրակն ու բոցը ծածկում են տան չորս կողմը, Նիկոլը, հրացանը ձեռքին, դուրս է գալիս քրտերի միջից եւ հէնց դրան առաջ հրացանի երկու հարուածով ցած է գլորում Շամսիկցիների ցեղապետներին՝ Շաուշին եւ Ջնդիին: Ապա մեն-մենակ հրացանի է բռնում նրանց ղոլամներին եւ 10 քիւրտ նորից սպաննում: Մնացած քրտերը սարսափահար՝ փախուստի են դիմում:

- Աւա մրով նինա, աւա դիւման ա (սա մարդ չէ, սա դուման-փոթորիկ է), ասում են քրտերը եւ երգեր են հիւսում Դումանի քաջութեան մասին:

ՅՈՎԱԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ

1895-1896

Այս ժամանակաշրջանը կը սկսի Ռայոնական ընդհանուր ժողովով, գումարուած Թիֆլիս, Բիւրոյի հրաւերով. այս ժողովը կը հաստատէ մակընթաց շարժում մը՝ յեղափոխական գործին շուրջ, կը քննէ զարգացող կառոյցները՝ կազմելով ամբողջական պատկեր մը դաշնակցական կազմակերպական շրջաններու, կազմակերպական ապակեդրոնացման առողջ, սակայն անբաւարարօրէն որոշադրեալ նախասկզբունքները աճեցնելով կը վերածէ կանոնագրային առաջին շօշափելի տրամադրութիւններու,

կը սահմանէ շրջաններու եւ կեդրոնի կապին, նաեւ շրջանէ շրջան յարաբերութեանց բանումը՝ իր հիմնական ձեւերուն մէջ: Գործելակերպի եւ այլ միջոցներու մակարդակին՝ Ռայոնական ընդհանուր ժողովը մարտական մարդուծի եւ զինամթերքի երկրին մէջ կեդրոնացման հարցը կ'ուսումնասիրէ:

ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԱԿՈՉ՝ ԱՄԷՆԷՆ ՕՐՀԱՍԱԿԱՆ ՊԱՇԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ

Դարձեալ կոտորած, դարձեալ ջարդ: Սուլթանի կառավարութիւնը այժմ էլ Տրապիզոնն ու շրջակայքն է աւերակ դարձրել, հայ բնակիչները կոտորել, սրի անցկացրել: Տեղի ունեցած սարսափները, կոտորածն ու աւերումը աւելի սուսկալի են եղել, քան ենթադրուել էին. հայերը իրենց դահիճների կատարեալ տրամադրութեան տակ են եղել եւ դահիճը կոտորել-մորթոտել է, այրել, աւերակ է դարձրել:

Մարդկային լեզուն ո՛չ մի ուժ չունի ներկայացնելու տեղի ունեցած այն վայրենի, գազանային սարսափը, այն տերրորը, որին ենթարկուած են եղել Տրապիզոնի եւ շրջակայքի հայերը. տերրոր, որ ունեցել է իւր ամենաազատ ասպարէզը՝ սանձարձակ գործելու, որքան պահանջում էր ներքինիների ու ուլամների սան սուլթանի լէշակեր, արինախում կառավարութիւնը, վրէժխնդիր լինելու, պատժելու ապստամբ հայերին, որ սպառնում են իրեն ոչնչացնելու: Եւ նա կատարեալ յաջողութիւն ունեցաւ:

Տրապիզոնի կոտորածում, նա այդտեղ իւր նպատակին գրեթէ հասաւ.- չկայ մի հայի տուն, որ արինոտուած չլինի, չկայ մի հայ ընտանիք, որ իւր անդամներից կորցրած չլինի, չկայ քաղաքում ու շրջակայ հայաբնակ գիւղերում մի կէտ, որ հայի արինով արինոտուած չլինի... արիւն, ամէն տեղ արիւն... Սարսափ է, որ տարածում է սուլթանի կառավարութիւնը՝ կոտորած անելով - հայ ազգաբնակչութեանը տերրորի ենթարկելով.- կոտորած ներքին նահանգներում, կոտորած Փոքր Ասիայում, կոտորած Պոլսի շրջակայքում. սուր է, որ շողշողում է, գլուխ է, որ ընկնում է, գնդակ է, որ հարուածում է, մարդ է, որ գետինն է փռում: Սա մի աներեւակայելի մարդկային սպանդանոց է, սա մի աներեւակայելի տերրոր է, որ իբրեւ մի համաձարակ, ամբողջ երկիրն է բռնել: Սուլթանի կառավարութեան սուրը աւելի քան իւր դերումն է եւ նա անխնայ, աջ ու ձախ կոտորում, մորթոտում, ջարդ է տալիս հային, մոլեռանդ, կոյր, ռիսակալութեամբ ու ատելութեամբ մնեցրած ու նախապատրաստած տաճիկ ամբոխի միջոցով, նրա թիկունքին նստած: Սուրը գլխատրապէս ամբոխի ձեռքին, բայց նրա ձեռքում սուր դնողը ինքը կառավարութիւնն է, խփողը ամբոխն է, բայց օրինակ տուողը ինքը կառավարութիւնն է. իսկ Տրապիզոնի ջարդում, նա՛ կառավարութիւնը, ավաշկարա հրապարակի վրայ էր եւ, իբրեւ զօրապետ, ղեկավարում էր ջարդը, ամէն բան կառավարութիւնն է, իսկական դահիճը, ոճրագործը, մարդասպանը նա է, սուլթանի պոռնիկ կառավարութիւնը:

ՆԻԿՈՂ ԴՈՒՄԱՆԻ ԿՏԱԿԸ

«... Ով որ կարծում է, թէ ինքնապաշտպանութեան ապահովումը կարելի է ձեռք բերել միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալում է: Պաշտպանողական սահմաններում ապահով մնալու համար հարկատու է, որ յարձակման ենթարկուող կողմն ընդհարման բոլոր կէտերում լինի թուով աւելի, քան հակառակորդը, որակով բարձր եւ ունենայ աւելի շար կարարելագործուած զէնքեր եւ առաջ ուղղամթերք: Բայց որովհետեւ բոլոր կէտերում անկարելի է ունենալ այդ առաւելութիւնները - ուստի անհրաժեշտ է դառնում որոնել կռուի համար ուրիշ նպատակայարմար տակ-տիկա:... Պէտք է [յարձակման] փոխարէնը անպարժառ հարուցանել անյապաղ, որպէսզի նա չխրախուսուի անպարիժ յաղթութիւնից եւ չանի նորանոր քայլեր: Այստեղից պարզ երեւում է, որ երկու դէպքումն էլ հակայարձակումը դառնում է հրամայական»:

«... Բայց ինչ էլ լինի, թէ՛ թշնամուն եւ թէ՛ բարեկամին յարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ուժն է: Եւ մի ազգ, եթէ ուզում է մնալ յարգուած, եթէ չի ուզում կորչել - պէտք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանութեան համար, մանաւանդ քաղաքական ցնցումների վայրկեաններում»:

Տեղի ունեցող ամէնօրեայ կոտորածը, սարսափները հաստատում են՝ սուլթանի կառավարութիւնը անշեղ կերպով ու հաստատուն քայլերով դիմում է իր նպատակակէտին – ոչնչացնելու իրեն վտանգ սպառնացող տարրը, հայ ժողովուրդը:

Այս վաղրուց յայտնի էր եւ մենք նախագգուշացրել ենք հայ ժողովրդին կոտորածի վտանգից, հրաւեր կարդալով՝ չխնայել ոչ մի միջոց զինելու տաճկահայ եղբայրներին, թէ՛ ինքնապաշտպանութեան եւ թէ՛ կռուելու իր ազատութեան համար:

Եւ այսօր տեղի ունեցող սարսափների իսկական հեղինակը ու իրաւական պատասխանատուն թէեւ սուլթանի կառավարութիւնն է, բայց բարոյականը ինքը՝ հայ ժողովուրդն է: Եթէ այսօր տերրորի ենթարկուած տաճկահայ ժողովուրդը զէնք չունի թշնամու դէմ պաշտպանուելու, եթէ նրան ջարդում, մորթում են, բարոյական պատասխանատուն ինքը՝ հայ ժողովուրդն է. հոսող արեան կաթիլներից մի քանիսը կարող են նրա ճակատին ընկնել...

Զէնք, զէնք ենք բղաւել, սպառնացող կոտորածի վտանգը ու արհաւիրքը իր ժամանակին ներկայացրել ու օգնութիւն ենք կանչել, բայց Տաճկահայաստանից դուրս հայ ժողովուրդը աչքերը յառել էր դիպլոմատիային, ամէն բան նրանից էր յուսում, նրա պաշտպանութեան էր դիմում: Ահա՛ եւ նրա պաշտպանութիւնը – կոտորած երզնկա, կոտորած Պոլիս, կոտորած Տրապիզոն եւ շրջակայքը, կոտորած Ագիսար, կոտորած, ինչպէս հաղորդում են հեռագիրները՝ Մուշ, Կարին, Հալէպ եւ նորից երզնկա. վտանգ է սպառնում Վանին եւ բոլոր այն տեղերին, ուր հայ կայ. եւ թող այդ դիպլոմատիան պաշտպանի, ինչո՞ւ նա չի պաշտպանում, ինչո՞ւ է թողել անզէն ժողովուրդը գազանի ձիրաններում, որ յօշոտում, պատահ–պատահ է անում... Ո՞ր է, ո՞ր այսօր այդ դիպլոմատիան, ո՞ր են մարդասէրներն ու հայասէրները:

Զկայ՝ ոչ ոք. հայ ժողովուրդը մենակ է, բոլորովին մենակ է ու անզէն, անպաշտպան: Այո՛, հայ թշուառ ժողովուրդը մենակ է ու անզէն, եւ ո՛վ է մեղաւորը. ինքը՝ Տաճկահայաստանից դուրս ապրող հայ ժողովուրդը, որ անտարբեր գտնուեց յեղափոխականների հրաւերին ու իր խաղաղ ուղեղով յարուեց դիպլոմատիային, որը... այո՛, մարդասէր է եւ այն աստիճանին, որ Տաճկահայաստանը, մարտիրոս

ժողովրդի հայրենիքը, այսօր մի արինոտ դաշտ է ներկայացնում, որի վրայ ազատ ու անպատիժ, սանձարձակ թռիչքներ ու արշաւանքներ է անում հրէշը, անամօթ, գարշելի հեղինակը կոտորածի, հայ ժողովրդի լկտի ու տմարդ թշնամին – սուլթանի պոռնիկ կառավարութիւնը:

Հայ ժողովուրդ, բաւական է վերջապէս, ո՞ր օրուայ համար ես ապրում եւ ինչո՞ւ. շարժուի՛ր, օգնութիւն, ձեռք տուր անպաշտպան եղբօրդ, զէնք տուր, միջոց տուր պաշտպանուելու, կռուելու:

Տմարդ թշնամին պիտի՛ պատժուի, պէտք է վրէժխնդիր լինել կոտորածների, սարսափների իսկական հեղինակից ու նրա հերոսներից: Եւ միթէ կարող է պատահել, որ հայի ընկած, յօշոտուած դիակով զուարճացողը, նրա ընտանիքը բռնաբարողը ու անպատուողը, նրա տունը եւ ինչքը աւերողը, նրա արեան մէջ լողացողը անպատիժ մնայ. ո՛չ, նա պիտի պատժուի, պիտի՛ վրէժխնդիր լինել. իւրաքանչիւրը իր ուժի, իր կարողութեան համեմատ պիտի օգնի, պիտի գործի, այլեւս յապաղելու չէ, տատանման րուպէս վաղրուց պիտի անցած համարել:

Եւ դաւաճան, ոճրագործ է նա՛, որ ձեռները ծալած հանդիսատեսի դերը կը կատարի, իր եղբօր արեան կաթիլները իբրեւ բիծ նրա ճակատին, որը անտարբեր կը լինի, եղբայրասպան է նա՛, որ օգնութեան չի համնիլ:

Կռիւ է, մորթում են, կռուենք:

«ԴՐՕՇԱԿ»

ՀՐԱՅՐ ԴԺՈՒՔ... ՏԱՐՕՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՊԱՀԱՊԱՆԸ ԵՒ ՈԳԻՆ

Հրայրը հայ ազատագրական շարժումին մէջ կը ներկայանայ որպէս մտաւորական գործիչ, գրող, խօսող ու կազմակերպող, միեւնոյն ժամանակ՝ որպէս զինուորական վարիչ եւ անվեհեր կռուող:

Կռիւներու պատմութիւնը, առաւել կամ պակաս մանրամասնութեամբ, զանազան ժամանակներու ընթացքին գրի առնուած է: Բայց Հրայրի մտաւորական գործիչի դէմքը կը մնայ աղօտ: Եւ մինչեւ հիմա անոր թղթակցութիւնները եւ յեղափոխական նամակները հատորի մը մէջ չամփոփուեցան: Անոր



յեղափոխական գրականությունը իր նամակներուն մէջ կարող ենք գտնել: Դաշնակցութեան արխիւը երբ ամբողջովին դասաւորուի, Հրայրէն անշուշտ բաւական նամակներ պիտի գտնուին: Բայց պէտք է խոստովանիլ, որ անոր ամէնէն արժէքաւոր գրուածքները կորած են: Չկան անոր հրահանգներն ու նամակները՝ զանազան շրջաններուն ու գործիչներուն ուղղուած, որոնք ազատագրական շարժման պարզաբանութեան եւ գործելակերպին կը պատկանէին: Այսուհանդերձ փրկուած բեկորներն ալ շատ բան կ'ըսեն անոր մասին:

Իրօք, անոնք ցոյց կու տան, որ Հրայրը ունի կուռ ոճ եւ խարազանող լեզու, ու միեւնոյն ժամանակ՝ խոր ըմբռնում հասարակական շարժումներու մասին:

Հրայրի պատկերացումները վերլուծելով, կը հաստատենք՝ որ

Ա) Ան ազգային ազատագրական շարժման էութիւնը լիովին ըմբռնած է եւ այդ խնդրին շուրջը գործող կուսակցութիւններուն մէջ գաղափարի տարբերութիւն չի տեսներ, չ'ուզեր տեսնել: Քառասուն տարուան փոթորկալի կեանք մը պիտի բոլորէինք, համետլու այն յստակ ըմբռնումին, որ Հրայրը հրապարակ կը դնէր 1895-ին:

Բ) Հրայրի ըմբռնումը, տակաւին այսօր, այժմէական կը մնայ կուսակցական տարբերութիւններու իր բնորոշումով:

Կուսակցական տարբերութիւնը, ըստ Հրայրի, աշխարհահայեացքի հիմնական տարբերութեան վրայ պէտք է հիմնուի, եւ կրնայ միմիայն խաղաղ ժամանակաշրջանի մէջ օգտակար հանդիսանալ: Մինչդէռ ազատագրական կռիւր բռնկած պատերազմ է, պատերազմի ընթացքին բոլորը ճակատի վրայ պիտի գտնուին: Խուսափիլ այս հիմնական պարտականութենէն՝ յանցանք է:

Գ) Հրայրը իրատես է, թշնամու զօրութիւնը կը խոստովանի եւ ուժերու կեդրոնացումը հրամայական կը գտնէ, ինչ որ Դաշնակցութեան գլխաւոր բաղձանքն էր: Ու այդ օրերուն իսկ կը նշմարէ հնչակեաններու ծիծաղելիութիւնը, երբ միայն 8-10 հրացան կրցած էին հասցնել Սասուն: Իսկ Հրայրի կարծիքով հայ ազատագրական շարժման կարիքները «յանհունս» անելի մեծ էին, քան «Ղազարոսի պէս աղքատ» յեղափոխական կուսակցութիւններու հրապարակ բերած միջոցները: Հայ ժողովուրդը իր մեծամասնութեամբ, մինչեւ վերջն ալ չկրցաւ ըմբռնել այդ անհուն կարիքները. «գետ չտուած՝ ծով բամբասեց»:

Դ) Հրայրի երկրի այն գիտակից, բայց համեստ Կոչեցեալը կը ներկայանայ, որ ինքզինքը բարձր կը նկատէ կուսակցական պառակտումներէն, հեռու՝ փոքր փառասիրութիւններէն, թողնելով, որ փառքը երթայ ուրիշներուն, երբ ամէնէն մեծ դերակատարն ինք էր, մտալով միշտ գործի գլուխը, գաղտնի ու անյայտ, թելադրիչ ուժը բոլոր շարժումներուն: Սա արդէն հայ յեղափոխական գաղտնի ու անձնազոհ գործիչի նուիրական տիպն է, որ մինչեւ վերջը մնաց Հրայրը, եւ ստեղծեց իր դպրոցը հայ յեղափոխութեան մէջ:

Երկու խօսք անելցնենք իր մէկ կարճ գրութեան մասին, որ Հրայրի անկողմնակալութեան եւ անաչառ արդարամտութեան փաստը կը բերէ:

1895-ին, «ԴՐՕՇԱԿ»-ի եւ «ՀՆՉԱԿ»-ի ուղղուած խստօրէն քննադատական նամակէ մը ետք, Հրայր անձամբ կը ծանօթանայ Դաշնակցութեան ապակեդրոնացման սիստեմին, ու կը տեսնէ, թէ յեղափոխական շարժման օժանդակած են մեր շատ մը մարմինները. ան անմիջապէս «ԴՐՕՇԱԿ»-ին կը դրկէ կարճ յանդիմանական գրութիւն մը, որպէսզի, իրողութիւններու վրայ հիմնուած, մեղմացնէ իր խիստ դատաւիետումը Դաշնակցութեան վերաբերմամբ: Ստորեւ՝ այդ նամակը. -

«Մայիս ամսու մէջ Հ.ի [Հւչակ] եւ Դ.ի [Դաշնակցութիւն] կուսակցութեանց Մուրատի եւ իմ հայեացքները պարզած են մի յօդուածով, զոր դրկած են երկու թերթերին էլ. այսպէս թէ այնպէս ի մօտոյ գիտակից լինելով ճշմարտութեան, նոյն յօդուածի մէջ գրուած մի քանի կէտերու մասին կ'անեմ հետեւեալ դիտողութիւնները.-

«Ա.- Ծանօթանալով Դաշնակցութեան ծրագրի ապակեդրոնացման, ճշմարտութեան դէմ մեղանչած կը լինեմ մեղադրելով ամբողջ Դաշնակցութիւնը՝ Մուրատին ձեռք չկարկառելուն առթիւ, քանի որ միայն Տ.ի խումբը մերժել է նրան իբրեւ անպայման Հւչակեանի...

«Բ.- Դաշնակցականները՝ կուսակցական լինելով մէկտեղ, նրանք հայիոյում են Հ.ի կեդրոնին, խմբագրութեան, եւ անձնական կրքերից կուրացող պոռոտախօսներին, մինչդեռ կը յարգեն բոլոր անձնուրաց գործիչները՝ խոստովանելով, որ նրանք հերոսներ են:

ԴժՈՒՔ

1895-ի ամրան, արդէն համոզուած, որ երկրի պահանջներուն ընդառաջող միակ կուսակցութիւնը Դաշնակցութիւնն էր, Հրայրը առանց տատանումներու երկրի յեղափոխական գործին ձեռնարկեց ու դարձաւ Դաշնակցութեան տիրական դէմքերէն մէկը:

Բասենի կազմակերպման ընթացքին ձերբակալուեցան Արամ Արամեանցը եւ Հրայրը, ու փոխադրուեցան Էրզրումի բանտը: Բաւական բանտ մտալէ ետք, երբ ընդհանուր ներում շնորհուեցաւ քաղաքական բանտարկեալներուն, Հրայր ազատուեցաւ եւ մեկնեցաւ Տարօն՝ իր Ղըզըլաղաձ գիւղը:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

ՎԱՆԻ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԶԱՐԴԷ

Երեք կուսակցութիւններու յեղափոխական պարագլուխներու հետ, մօտ 500-600 զինեալ եւ 1000-ի չափ անզէն երիտասարդներ դուրս եկած էին Վան քաղաքէն: Անոնք կը կազմէին ազգաբնակչութեան ծաղիկը, անոր մտաւոր եւ ռազմունակ առողջ տարրը: Հետզհետէ կոտորածներէն ճողոպրածները կու գային եւ կը միանային Վարազ հաւաքուածներուն,

որով խումբը աւելի ու աւելի կը մեծնար:

Թէ՛ այդ հաւաքուածներու եւ թէ՛ յեղափոխական ղեկավարներու մէջ տարակարծութիւն կար երկու հարցի շուրջ, երթալ՝ Պարսկաստան, թէ վերադառնալ քաղաք: Եթէ պիտի երթալ Պարսկաստան, ովքեր պէտք է մեկնէին. միայն վտանգուածները եւ զինուորները, թէ Վարազ ժողովուած ամբողջ բազմութիւնը:

Աւետիսեանը, որ կեդրոնական անձնաւորութիւնն էր, յանուն մնացածներու փրկութեան, այն տեսակէտը կը պաշտպանէր, որ պիտի թողնել երկիրը եւ Վասպուրականի ամբողջ երիտասարդութեան հետ անցնիլ Պարսկաստան, այնտեղ պատրաստուելու համար ապագայ գործունէութեան: Ատոր հակառակ տեսակէտի վրայ էր կանգնած Տէրոյեանը, նոյնպէս վանեցի, բայց աւելի աննկուն կամքի տէր եւ անզիջող: Անոր կարծիքն այն էր, որ պէտք չէ թողնել երկիրը եւ պիտի չզրկել զայն յեղափոխական ուժերէ: Ինչ կը վերաբերի Մարտիկին եւ Պետոյին, անոնք կանգնած էին միջին ճանապարհի տեսակէտի վրայ, այսինքն՝ որ պէտք չէ զրկել երկիրը երիտասարդներէ, որ բոլոր ղեկավարները եւ անզէնները պիտի վերադառնան, իսկ արդէն աչքի ընկածները եւ զինուածները պիտի անցնին Պարսկաստան:

Այս երեք տեսակէտները պաշտպանողներու միջեւ, համաձայնութիւն չի կայանար, այդ պատճառով ալ անոնք կը բռնեն, իրենց հետետորդներով, երեք տարբեր ուղղութիւն:

Ամէնէն ազդեցիկը՝ Աւետիսեանը, կը բռնէ Պարսկաստանի ճանապարհը: Անոր հետ կ'երթան նախապէս 600 հոգի, բայց ճանապարհի դժուարութիւնները կը ստիպեն, որ մաս մը անոնցմէ ետ դառնայ դէպի Վան, որմէ յետոյ խումբի թիւը կը նուազի ու կը հասնի 350-ի: Այս



խումբը բաժնուելով յետսապահներու եւ առաջապահներու, Նոր Գիւղի եւ ապա

Հնդկաստանի մօտերը թշնամի կը հանդիպի, բայց թեթեւ կռիւ մը տալէ յետոյ կը բռն գայն ու կը շարունակէ առաջ երթալ: Յոգնած ու կիսաքաղց՝ կը հասնի Չուխ լեռը (Գիւզալդարան), ուր ատկէ առաջ սպաննուեր էին յեղափոխութեան նախակարապետները՝ Ագրիպասեան եւ Գոլոշեան: Այդտեղ եւս տեղի կ'ունենայ ընդհարում քիւրտերու հետ, բայց Աւետիսեանը, զոհ տալով իր յիսնապետներէն Ուզունը, ու քանի մը զինուորներ, կը յաջողի բռնել թշնամին ու ճանապարհ բանալ դէպի Պարսկաստան, ցեխին մէջ ու անձրեւին տակ: Խումբը կ'իջնէ Աղբակի դաշտը եւ Ս. Բարթողիմէոս վանքի շրջակայքը: Այստեղ կը պաշարուի բազմաթիւ քիւրտերէ ու զօրքի կողմէ: Տեղի կ'ունենայ կատաղի կռիւ մը: Խումբը յուսահատ ծիգեր կ'ընէ, բայց բոլորը յոգնած են շարունակական կռիւներէ եւ երկարատեւ ճանապարհէ, եւ չեն յաջողի ձեռքել թշնամին շղթան: Մէկը միւսի ետեւէ կը կոտորուին բոլորը Ս. Բարթողիմէոս Նախավկայի ուղքերուն տակ: Միայն Մուշեղի յառաջապահ խումբն է, որ կը հասնի պարսից հողը, բայց Սալմաստի շէնքին կ'իյնայ նաեւ աննման Մուշեղը, իսկ անոր խումբէն հազիւ 20 հոգի կ'ազատին եւ կը հասնին Սալմաստ:

Մարտիկը, Պետոն եւ Վազգէնը երկար պիտի չկրնային մնալ Վարազ: Հացի պաշարի չգոյութիւնը եւ կառավարութեան հետապնդումը կը ստիպեն, որ անոնք եւս արագ որոշում մը տան: Վազգէնը կ'որոշէ ետ դառնալ դէպի Վան եւ կոչ կ'ընէ անզէն ու զինուած երիտասարդութեան հետեւիլ իրեն, վերադառնալ իրենց օճախները եւ ապրիլ կամ մեռնիլ հայրենի հողին վրայ: Մեծամասնութիւնը կը լսէ այդ կոչը եւ կը վերադառնայ Վազգէնի հետ, իսկ Պետոն եւ Մարտիկը, 83 զինուորներով, ծամբայ կ'իյնան յունիս 18-ին, Սարայի ուղղութեամբ, դէպի Պարսկաստան: Համնելով Գարահիսարի մօտ Բաղի Դաղ դաշտը, կը պաշարուին քիւրտերէ եւ ամբողջ օր մը կռուելէ յետոյ, բոլորն ալ կը սպաննուին: Կ'ազատի միայն ասորի մը, անոնց առաջնորդը:

Այսպէսով Վասպուրականի երեք կուսակցութեանց երեք ղեկավարները, իրենց հետետորդներու հետ, կը նահատակուին ազատութեան


ճանապարհին: Այդ հարուածը ծանր էր ոչ այնքան կուսակցութիւններուն, որքան Վասպուրականի համար: Կ'անհետանար երիտասարդութեան ամենակենսունակ եւ ուժեղ տարրը, նրա մտաւոր դասը: Այդ հարուածէն յետոյ, Հնչակեան կուսակցութիւնը չկրցաւ այլեւս ինքզինքը գտնել եւ գրեթէ դադրեցաւ գոյութիւն ունենալէ Վանի մէջ, իսկ Աւետիսեանի մահուամբ մահամերձ կը դառնար նաեւ արմենականութիւնը, որ կարճ ժամանակ միայն կեանք ունեցաւ եւ ապա ծուլուեցաւ Դաշնակցութեան մէջ:

Պետոյի եւ իր հետետորդներու մահը այնքան ճակատագրական նշանակութիւն չունեցաւ Դաշնակցութեան համար, որովհետեւ կային մարդիկ, որ յաջորդեցին անոնց եւ Նոր ու ամուր հիմքերու վրայ դրին դեռ երիտասարդ այդ կազմակերպութիւնը, որուն վիճակուած էր շարունակել Աւետիսեանի եւ Մարտիկի մահով ընդհատուած գործը:

ՌՈՒԻԲԷՆ

ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆ ԳՐԱԻԱԾ Է ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷՆ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ - ԱՐԻԻՆԱՀԵՂ ԿՈՒԻՒՆԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ (ՍՈՖԻԱՅԻ ՎՐԱՅՈՎ)



19/31 օգոստոս 96 թ.

Ապստամբութիւն է Պոլսում: Դաշնակցականները գրաւել են Օսմանեան պանքը, կոտորելով զինուորներին եւ

պահապաններին: Սպառնացել են օդը բարձրացնել պանքը, եթէ դեսպանները բաւարարութիւն չտան հայերի պահանջներին: Երկար բանակցութիւններից յետոյ ռուսաց դեսպանատունը խոստացել է կատարել կոմիտէի պահանջած կէտերը, ինչպէս եւ պանքի մէջ գտնուողների ապահովութիւնը: Խումբը զինուած դուրս է եկել պանքից եւ զէնքը պահպանելով մտել է անգլիական նաւը:

Քաղաքի զանազան մասերում դաշնակցական միւս խմբերը դիմադրել են զինուորների ու խուժանի յարձակման: Բազմաթիւ տաճիկներ են կոտորուել: Տաճիկները յարձակուել են անպաշտպան թաղերի վրայ եւ սոսկալի կոտորած արել: Դրութիւնը սոսկալի է:

1/20 սեպտեմբեր 96 թ.

Զինուորները եւ խուժանը շարունակում են կոտորածը: Մերոնք դիմադրում են ռումբերով:

Դաշնակցական Կեդրոնական կոմիտէն սպառնացել է թափել իր ամբողջ ուժը, եթէ անզէնների կոտորածը շարունակուի: Դեսպանները խստիւ են միջամտել եւ կառավարութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել: Մանրամասնութիւնները նամակով:

**ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ
Ա. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ**

Մենք անդուլ բողոքեցինք Երրոպային թուրք բռնապետութեան դէմ, բայց մեր բողոքները, որ օրինական էին, սիստեմաբար մերժուեցան:

Սուլթան Համիտ արինահեղ վրէժխնդրութեամբ պատասխանեց մեզ:

Տեսաւ Երրոպան այս

ահռելի ոճիրը եւ լռեց:

Ո՛չ միայն դահիճի ձեռքը

չբռնեց, այլ եւ մեզ լրբաբար

համակերպութեան հարկադրեց:

Մեզ նախատեցին՝ մեր մարդկային իրաւունքը զլանալով մեզ, եւ մեր ազգային պատիւը ցմահ խոցեցին՝ մեր արեան մէջ մեր բողոքի ձայնը խեղդել ջանալով:

Մեր արինտով սրբագործուած մեր պահանջներուն կու գայ հիմա միանալու եւ սրբազան վրէժի սեւեռուն գաղափարը, որ սեւ ուրուականի պէս արձանացած է մեր աչքերուն առջեւ:

«Իրաւունքը զօրաւորինն է», ըսաւ մեզի Երրոպան՝ իր մահառիթ անտարբերութեամբ, եւ մենք, տկարներս, մարդկային իրաւունքներէ զրկուածներս, հարկադրուած ենք գիտութեանը դիմելու՝ որոնելով ամէն միջոց, փշրելու համար սուլթանի գարշելի լուծը. ա՛յլ չենք կրնար հանդուրժել:

Դիւանագիտական խաղերու ժամանակն ա՛յլ անցած է:

Մեր հարիւր հազար նահատակներուն թափած արիւնը մեզի իրաւունք կու տայ ազատութիւն պահանջելու:

Մեր թշնամիներուն տարածած բոլոր նենգամիտ գրոյցներուն հակառակ՝ մենք խնդրած ենք եւ հիմա ալ կը խնդրենք միմիայն անհրաժեշտը, այսինքն՝

1. Նշանակել ծագումով եւ ազգութեամբ Երրոպացի բարձրագոյն կոմիսար մը՝ Հայաստանի համար, ընտրուած վեց մեծ տէրութիւններու կողմէն:
2. Վալիները, միութեսարրըֆները եւ գաիմմեգամները պիտի նշանակէ բարձր կոմիսարը եւ սուլթանը պիտի վաւերացնէ:
3. Երրոպացի սպաներու հրամանատարութեան ներքեւ պիտի կազմակերպուի տեղական ազգերէն միլիցիա, ժանտարմա եւ ոստիկանութիւն:
4. Դատական բարենորոգումներ՝ Երրոպական սիստեմով:
5. Կրօնի, կրթութեան եւ մամուլի կատարեալ ազատութիւն:
6. Երկրի հասոյթներու երեք քառորդ մասը պիտի յատկացուի տեղական պետքերուն:
7. Յետնեալ հարկերը ջնջել:
8. Հինգ տարի հարկէ ազատել, եւ հետեւեալ հինգ տարիներու պետութեան վճարելիք հարկը գործածել վերջին խռովութեանց պատճառած վնասները փոխարինելու:
9. Հայերէն գրաւուած անշարժ կայքերը անմիջապէս վերադարձնել տէրերուն:
10. Բոլոր հայ գաղթականներուն ազատ վերադարձ:
11. Ընդհանուր ներում՝ հայ քաղաքական յանցաւորներուն:
12. Երրոպական տէրութիւններու ներկայացուցիչներէն առժամեայ յանձնաժողով մը կազմել, որ Հայաստանի գլխաւոր քաղաքներէն մէկուն մէջ հաստատուելով պիտի հսկէ վերոյիշեալ յօդուածներու գործածութեան: Կը կրկնենք, ո՛չ մէկ զոհողութեան առջեւ կանգ պիտի առնենք մեր նպատակին հասնելու համար:

Այսուհետև ազատ կը համարինք
ինքզինքնիս ամէն պատասխանատուութենէ:

Կանխաւ կ'ողբանք ամէն անոնց
կորուստը-տեղացի թէ օտարական,
որոնք զոհ պիտի ըլլան ընդհանուր
շփոթութեան: Կը ցաւինք, սակայն
ընդհանուր դժբաղդութեան առջեւ
մասնաւոր սուգը իմաստ չունի:

Մենք կը մեռնինք, գիտենք, բայց
յեղափոխութիւնը, որ հայ ժողովուրդի մինչեւ
ոսկորները թափանցած է, պիտի շարունակէ
սպառնալ սուլթաններու գահին, ցորչափ
մեր մարդկային իրաւունքները ձեռք չբերենք
եւ ցորչափ կենդանի մնայ վերջին հայր:

*(Տարածուած է հայերէն,
ֆրանսերէն եւ թրքերէն):
«ԴՐՕՇԱԿ»*

1897-1898

Այս ժամանակաշրջանը կը բնորոշուի
Հայ յեղափոխական դաշնակցութեան
դիմագիծին ու գործին յաւելեալ
ճառագայթումով: Չորս տարի առաջ՝
Ա. Ընդհանուր ժողովով սկիզբ առած
կառոյցներու եւ գործունէութեան ծաւալումը
1896-ի կէսերուն անցած է ներքին փորձերու
լուրջ փուլերէ. զարմանալի տոկոսնութեամբ
մը անցած է արտաքին փորձութիւններու
շարքէ մը՝ 1895-96-ի ջարդերէն:

1896-98 շրջանին, եւ ընդդէմ
ամէն տեսակ դժուարութեանց եւ
հարուածներու, աւելի եւս կը դարբնուին,
կը բիրեղանան կազմակերպութեան
ռազմավարութիւնն ու մարտավարական
զանազան ընտրանքները, կառոյցները,
գաղափարախօսական աշխարհը: Այս
բոլորին կազմած ամուր եւ ճառագայթուն
գրահանքով, կազմակերպութիւնը ատակ
պիտի դառնայ այնպիսի կարեւորագոյն
նախաձեռնութիւններու, որոնք ծանօթ
են Պանք Օթոմանի գրաւում եւ
Խանասորի արշաւանք անուններով:

**ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՅ
ԽԱՆԱՍՈՐԱՅ ԴԱՇՏՈՒՄԸ**

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԵՐՁԻՆ
ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐՈՒՄ
ԸՆԿԱԾ ՔԱՋԵՐԸ

- 1. Արիստակէս Զօրեան (Կարօ), Գողթնի
Յղնա գիւղից, 26 տարեկան զինագործ:
- 2. Կարապետ Դաւթեան (Խան),

- Ղազախի Թօուզ գիւղից, 26
տարեկան արիեստաւոր:
- 3. Աստուածատուր Միրզայեան,
Ղզլարցի, 26 տարեկան ենթասպայ:
- 4. Արտաշէս Բատիկեան (Եգոր),
Նորբայազիցի, 24 տարեկան:
- 5. Վարդան Տէր Դաւթեան (Բիճա),
տիվրիկցի, 45 տարեկան:
- 6. Գրիգոր Լոռեցեան (Պիղատոս),
ալեքսանդրապոլցի, 24
տար. արիեստաւոր:
- 7. Օհան Լաթոյեան (Լորթօ), Մուշի
Վարդենիս գիւղից, 27 տարեկան:
- 8. Ռուբէն Տէր Կարապետեան,
թիֆլիսցի, 22 տարեկան:
- 9. Կարապետ Փանոսեան (Արշակ), Գողթնի
Յղնա գիւղից 24 տարեկան դերձակ:
- 10. Գրիգոր Աւանեան, վանեցի,
22 տարեկան:
- 11. Ստեփան Նազարէթեան,
(Իան), ախալքալաքցի:
- 12. Մկրտիչ Յակոբեան,
ղազախեցի, 25 տարեկան:
- 13. Արշակ Ոսկանեան. Շուշուայ
գաւառի, Շիրուանայ Ձոր գիւղից,
24 տարեկան զինուոր:
- 14. Սարգիս Եաղանեան,
ախլցխացի, 20 տարեկան:
- 15. Խաչիկ Աբրահամեան, Վանի
Կուռուբաշ գիւղից, 35 տարեկան:
- 16. Ազր Քէօսեան, շատախցի, 35 տարեկան:
- 17. Սաղաթէլ Զոհրաբեան,
համադանցի, 20 տարեկան
- 18. Խաչիկ Խիզանցի, 35 տարեկան:
- 19. Գասպար Վանեցի, 40 տարեկան:

Յարգանք ձեզ, սրտի մարդիկ: Ձեր
անշնչացած դիակների առջեւ խոնարհում
ենք մեր գլուխները... Մի սիրտ ունէիք, այն
էլ զոհ բերիք ժողովրդի ազատութեան Ա.
գործին... Հայ աշխատաւոր դասի մաքուր
զաւակներ, ժողովրդի հեծեծանքը ձեր
սրտում միայն արձագանգ գտաւ. դիմք



գնացիք սրբելու նրա արցունքները եւ ընկաք: Ընկաք, որ ձեր մատաղ արինսով ոռոգուած մայր հայրենիքը ծլի ու ծաղկի, մեռաք, որ մի ամբողջ ժողովուրդ ապրի: Յարգանք ձեզ, տղերք ջան:

**ՖԵՏԱՅԻՆԵՐԻ ԱՐԻՒՆԱՇԵՂ
ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԽԱՆԱՍՈՐԻ
ԼԵՌՆԱԴԱՇՏՈՒՄ**

Դաշնակցութեան ստուար արշաւախումբը, տասնեակների բաժանուած, յուլիս 25/6 օգոստոս յարձակում գործեց Խանասորի լեռնադաշտի վրայ եւ չորս կողմից պաշարեց Մագրիկ կոչուած արինարբու քիւրտ ցեղը:

Ֆետայիների շեշտակի գնդակները գրեթէ բնաջինջ արին այդ թշնամի ցեղը, որի գործն է: Աղբակի բոլոր կոտորածները ու խժոժութիւնները, որ դեռ անցեալ տարի, իր վրաններից ոչ շատ հեռու, Բարթողիմէոսի վանքի շրջակայքում, կոտորեց Աւետիսեանի առաջնորդութեամբ Վանից փախած հայերի հարիւրաւոր խումբը:

Ցեղապետ Շարաֆ բէյ իր ընտանիքով սրախողոյխ եղաւ:

Յաջողութիւնը փառաւոր եւ եզակի էր մեր յեղափոխական տարեգրութեան մէջ, յարձակողական տեսակէտից:

Կռիւր տեւեց լեռնոտ դիրքերում՝ մինչեւ ուշ գիշեր:

Թշնամիների դիակները կոյտեր էին կազմում:

Դաշնակցութեան ֆետայիները ցոյց տուին կատարեալ քաջութիւն եւ անվեհերութիւն:

Ջոհ տուինք միայն 19 քաջեր:

Կեցցեն քաջարի ֆետայիները:

Կեցցէ յեղափոխութիւնը:

ՎՐԷԺ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

(ՄԻ ՖԵՏԱՅՈՒ ՄԱՄՆԱԻՈՐ ՆԱՄԱԿԻՑ)

... Դեռ նոր վերադարձայ արշաւանքից յոգնած եմ, ուստի յետոյ կը գրեմ տպաւորութիւններս: Իմացիր միայն, որ արշաւանքին մասնակցեցի իբր հասարակ գինուոր Արշաւախումբը բաժանուած էր տասնեակների. ես գտնուում էի առաջին տասնեակի մէջ:

Մօտեցել էինք Շարաֆ պէյի վրանին մինչեւ 15 քայլ: Այդպիսի բան տեսնուած չէր. գնդակները կարկտի պէս էին թափուում, գլխաւորապէս կանոնաւոր զօրքի կողմից: Զարմանալի է, ինչպէս

այնքան գնդակներից մէկը ինձ չդիպաւ:

Պատերազմից շատ ասար է բերուած.

ես էլ բերի Շարաֆի սուրը եւ այն սպիտակ ատլասի վրայ ոսկետառ ֆիրմանը, որը Մարդասպանը տուած էր Շարաֆին քիւրտերից համիտիական գունդ կազմելու...

«ԴՐՕՇԱԿ»

13 սեպտեմբեր 1897

**ՄԵՐ ՆԵՐՔԻՆ
ԹՇՆԱՄԻՆԵՐԸ**

Դարաւոր ստրկութիւնից հայր ժառանգել է եւ նպաստաւոր, եւ աննպաստ յատկութիւններ: Հայութեան մի մասը հանդէս է գալիս այսօր իր յառաջխաղաց ոգով եւ ձգտում է կերպարանափոխել այն ստրկական միջավայրը, որի մէջ կաշկանդուած մնացել է դարերով.

Նրա սրտի խորքերում՝ մի թունաւոր ատելութիւն է բուն դրել դէպի իրեն տիրապետողներն ու հարստահարողները, եւ մի փրկարար ձգտում դէպի աւելի բարձր կերպեր մարդկային հասարակական կացութեան: Հայութեան միւս մասը դեռ պահպանողական է իր ամբողջ էութեամբ: Գաղափարական հակումներից զուրկ՝ նա ամէն կերպ, աշխատում է «յարմարուել» իր գոյութեան պայմաններին, կորցնելով ամէն բան, ինչ որ մարդկութեան առաքինութիւնն է կազմում, վաստակելով այն ամէնը, ինչ որ յատուկ է միայն իր անկեալ, ապականուած միջավայրին... Այդ «յարմարուող» տարրերը միմիայն մեր ազգի բնորոշ գիծը չեն, այլ բոլոր ազգութիւնների, որոնք իրենց ուսերի վրայ կրել են երկարատեւ բռնութեան լուծը:

Նման անասնական աշխարհի պարագիտներին (մակաբոյծ), որոնք շրջապատող պայմաններին յարմարուելու եւ իրենց գոյութիւնը յարատեւելու համար, փոխանակ զարգանալու դէպի բարձրագոյն կերպեր՝ նոր-նոր օրկաններ ձեռք բերելով, ոչնչացնում են սեփական օրկանները, շարժուելու ընդունակութիւնը, զգայարանքները-հայութեան այդ տարրերը եւս, առաջադիմութեան եւ մարդկային բարձր պահանջներ չունենալով՝ խեղդում են իրենց մէջ գաղափարական կեանքի եղած սաղմերն էլ եւ իրենց վայելքն են գտնում՝ զօրաւորների առաջ սողալու արհեստի եւ անասնական, հլու հպատակութեան մէջ:

Եւ տասնեակ տարիներից ի վեր նրանք քարոզում են մեզ. «Հնազանդեցէք իշխանատրներին»... Ովքեր են դրանք:

Հայ յեղափոխականը լաւ է ճանաչում՝ իր այդ մահացու թշնամիներին. մեր կղերը, մեր աղաներն ու դրոշապաշտ վաճառականները, մեր ամբոխի ու ինտելիգենցիայի փչացած ու որոճող մասը... Որքան ապականութիւն ու գարշանք է կուտակուած դրանց ստրկական մթնոլորտում. շողոքորթել ու քծնել, ամէն մի ցած պաշտօնեայի ոտքերը լիզել, հնազանդօրէն կրել ամենաձանր անպատուութիւններ, թուք ու նախատինք, առանց կարմրելու – դա նրանց արիեստն է, եւ դա նրանց վայելքն է: Նրանց հոգին ողորկուել, հարթուել է այդ ուղղութեամբ, ինչպէս որ նրանց կաշին ընտելացել է մտրակի հարուածներին: Այդ տարրերից են ծնունդ առնում՝ մեր ամենավտանգաւոր ներքին թշնամիները՝ լրտեսներն ու դաւաճանները: Դրանք հայութեան մրուրն են կազմում, հասարակութեան նողկալի թափթփուկը եւ իբրեւ այդպիսիք՝ նրանք ներկայանում են մեզ, որպէս անխուսափելի ծնունդ պատմական երկարատեւ շրջանի, որի ընթացքում հայութիւնը մասամբ աղճատուել է բարոյապէս, մղելով գոյութեան անդադրում եւ արհաւիրալից կոհներ ընդդէմ նորանոր աշխարհակալողների անհանդուրժելի բարբարոսութիւնների:

Պատմական ծնունդ, միջավայրի ծնունդ ասելով, բնաւ չենք մտածում որոշ կարգի ոճրագէտների նման արդարացնել այդ տարրերը հանդերձ իրենց սխրագործութիւններով: Երեւոյթը լուսաբանում ենք միայն, եթէ արդարացնել ուզէինք, յեղափոխական սուրը չէինք մխիլ դաւաճանների ու ազգային ամէն ցեցերի յանցաւոր կուրծքը: Ո՛չ. հայկական շարժումների սկզբնաւորութեան օրից մենք մահ ենք հրատարակել այդ բոլոր ցեցերին եւ շարունակ ահաբեկել ու դաշունահարել ենք նրանց, իբրեւ սուլթանական բռնակալութեան փաստաբանների: Այսուհետեւ մեր խնդիրը այդ հողի վրայ աւելի եւս բարդանում է, քանի որ մեր ներքին թշնամիների բանակը ստուարանում է նորանոր տարրերով:

Հայկական վերջին տարիների աղէտները եւ մի կարգ յեղափոխական խմբերի շահատակութիւնները առաջ բերեցին մեր ժողովրդի նոյնիսկ համակրելի խաւերի մէջ մի հոսանք, որ բացայայտ կերպով հակայեղափոխական է: Այդ տարրերը մեր ուրիշ ներքին թշնամիների պէս չեն քարոզում «հնազանդութիւն բռնակալին»,

սակայն նրանց ընթացքն էլ էապէս շատ չի տարբերում առաջիններից:

Հայ ժողովրդի մէջ, եւ այն գլխաւորապէս ապահով վայրերում, ուր խօսքի ազատութիւնը իրօք ի չարն է գործ տրուում-շրջում են ուղեղով ու զգացմունքով զառամեալ ֆրագետները եւ հակայեղափոխական պրոպագանդ են մղում: Նրանք անիծում ու անուանարկում են մեր ամենաանձնուէր հերոսներին, որոնք համարձակ սլանում են դէպի արիւնի դաշտը եւ իրենց մատաղ գլուխներն են զոհ բերում Հայրենիքի սեղանի առաջ, այդ՝ այդ անձնուէր գինուորները միայն նգովք ու անէծք են յարուցանում հակայեղափոխականների եւ «չէզոքականների». բանակում... ֆրագայի հերոսները ռմբակոծում են գործի հերոսներին. որպիսի այլանդակութիւն... Տաւ է յիշել, որ միամիտ ամբոխից շատերը երամականութեան բնագոյին հետեւելով՝ մղում են այդ ազգակործան հոսանքի ետեւից:

Եւ այդ մարդիկը, որոնք տրամաբանող էակներ չեն, այլ որոճողներ, իրենց բթամտութեամբ անկարող են լինում հասկանալ, թէ որպիսի անհուն ծառայութիւն են մատուցանում սուլթանական կառավարութեան: Ֆրագամոլութեան եւ քննադատամոլութեան ախտով վարակուած՝ նրանք չեն ըմբռնում, որ ներկայ տխուր վայրկեանին իրենց անվերջ կոկոռցներով ու երեմիականներով աւելի ուժեղ հարուած կարող են հասցնել հայ յեղափոխական գործին, քան սուլթանի բոլոր հաւատարիմ ծառաները՝ ոստիկանները, լրտեսներն ու դաւաճանները:

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ
«ԴՐՕՇԱԿ»
30 ապրիլ 1898

**ՊԱՐՍԿԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՀԵՏ ԱՐԻԻՆԱԼԻ
ԹԻԻՐԻՄԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ,
ՈՐ ԱՌԱՋԻՆԸ ԵՒ ՎԵՐՋԻՆԸ
ՊԻՏԻ ԸԼԼԱՅ**

Շատ բան էր կատարուած, շատ բան էր տեսնուած Պարսկաստանում, բայց այն դէպքի նմանը, որը պիտի նկարագրեմ, չլսուած երեւոյթ է մեզ մօտ: Մի երկիր, ուր կաշառքը միակ օրէնքն



Է, մի երկիր, ուր իշխողների ու դրանց ստորագրեալների տրամադրությունը միշտ փոխարինել է որ եւ է կարգ ու կանոն, բնականաբար, չէր կարող զարմացնել ոչ ոքի իր ամէնօրեայ վայրենություններով, բայց ներկայ դէպքը, կրկնում են, նոյնիսկ Պարսկաստանում անզուգական է:

Հոկտեմբերի 10-ին Տաճկաստանից անցնում են Սալմաստ 10 հոգի տաճկահայ կտրիճներ, որոնք որոշ պատճառներով ստիպուած են լինում բաժանուել վասպուրականում գործող դաշնակցական մի զինակիր խմբից: Կամենալով ապաստանուել Մահլամ գիւղում, նոքա մտնում են մի տեղացու տուն: Գիւղացիները, իմանալով այդ մասին եւ երկիւղ կրելով գիւղատէր եւ դատաւորի օգնական Հաջի - խանից, պահանջում են եկուոր հիւրերից անմիջապէս թողնել գիւղը: Վտանգաւոր եւ դժուար ճանապարհներով անցած խմբակը՝ քաղցած, յոգնած եւ տկար՝ խնդրում է գիւղացիներից մի-երկու օր ժամանակ տալ իրենց, միայն փոքր ինչ հանգստանալու, կազդուրուելու համար, եւ հեռանում է գիւղից դէպի այգիները, պատսպարուելու մի հնձանում: Գիւղական մի քանի ցեցեր, սակայն, դրանով էլ չեն բաւականանում եւ դրանցից մէկի, այն է աղա Ջաքոյի առաջնորդութեամբ դիմում են Խոյի եւ Սալմաստի դատաւոր Ջարդամ Իվ Միւլքին, խնդրելով ձերբակալել հայ «ղաչաղներին» եւ խստիւ պատժել նրանց: Ջարդամ իվ Միւլքը գիւղական մատնիչների եւ Հաճի - խանի առաջնորդութեամբ իսկոյն ուղարկում է հայերի վրայ մի վաշտ զօրք երկու թնդանօթներով եւ 300 հոգի էլ հարեան Սոմայի քիւրտ զինուորներից: Խիստ հրամաններ ստացած այս խումբանը շրջապատում է հայերի գտնուած այգին եւ անմիջապէս սկսում է հրաձգութիւն հրացաններից եւ թնդանօթներից: Դէպքը տեղի է ունենում հոկտեմբերի 13-25-

ին, երեքշաբթի լուսաղէմին: Դժբախտ զինակիրները, միանգամայն չկամենալով որեւէ համարձակ քայլով վնասել տեղական հայ ժողովրդի շահերին. այսինքն՝ երկիւղ կրելով, որ մի գուցէ գիւղը տուժի, եթէ իրենք դիմադրութիւն ցոյց տան կառավարութեան՝ դուրս են գալիս զօրքի առաջ եւ յայտարարում, որ իրենք երբեք պարսկական կառավարութեան դէմ՝ ոչինչ չեն ունեցել, որ հետները ունեցած զէնքը միայն աւագակների դէմ ինքնապաշտպանութեան համար կարող է ծառայել, եւ որ զէնք կրելում՝ նրանք յանցանք չէին կարող տեսնել, քանի որ Պարսկաստանում սովորաբար արգիւտած չէ այդ, բայց եթէ, այնուամենայնիւ, կառավարութեան կողմից կայ իրենց վերաբերմամբ որեւէ կասկածներ, ապա նրանք կը յանձնեն իրենց մօտ եղած հրացանները եւ իրենք էլ անձնատուր կը լինեն:

Ահա այն սոսկալի րոպէն, երբ զուգադիպում են արեւելեան բարբարոսութիւնը մի կողմից եւ ժողովրդասէր զինակիրների անձնագոհութիւնը միւս կողմից... Թէւ մինչ օրս Պարսկաստանում հայերի եւ առհասարակ քրիստոնեաների վերաբերմամբ յայտնի չեն սպանման կամ գլխատման պատիժի դէպքեր, բայց այս անգամ, իբր պատասխան ինը հերոսների մեծահոգութեան՝ զօրքը նրանց սրի ճարակ է դարձնում, իսկ Հաջի - խանը ընկածների գլուխները անմիջապէս կտրել տալով՝ ուղարկում է Ջարդամին...

Դէպքի տպաւորութիւնը... բայց չէ, թող այդ մասին վկայեն այն զարշէլիները, որոնք ծնկաչոք աղաչում էին Ջարդամին եւ Հաջի - խանին ազատել իրենց հայ «ղաչաղների»: Այդ յուղաներն իսկ այսօր դիւստարուել, ապշել, բարոյապէս սպաննուել են իրենց մատնութիւնների հետեանքները տեսնելով... Խեղդ անց կը կացնեն արդեօք նրանք էլ իրենց վիզը, հետեւելով իրենց նախահօր՝ Յուդային, թէ պիտի խեղդուին ուրիշներից...

Առ այժմ աղա Ջաքոյի մասին միայն յայտնի է, որ նա իր կնոջ եւ աղջկայ հետ իր բարեմիտ հպատակութեան համար վարձատրուել է մահով...

Չենք կանգ առնիլ երկար նաեւ դէպքին հետեւող իրողութիւնների վրայ: Ինչքան եւ դրանք մէկը միաից ճնշող, մէկը միաից զագրելի, յուզիչ ու ծանր լինեն՝ այնուամենայնիւ

Նսեմանում են իրենց խոհեմությանը զոհ գացած ինը երիտասարդների եղերական վախճանի առջեւ...

Երբ Սալմաստի փոխանորդ Խաչիկ վարդապետը պահանջում է Զարդամից Նահատակուածների գլուխները, նա պատասխանում է, որ յանձնել է տաճիկ կառավարության, մինչդեռ դէմքերի լուսանկարները առնելով, նա թաղել է տալիս գլուխները Քեօհնա-Շահար գիւղի փողոցներից մէկում: Այդպիսով Խաչիկ վարդապետին յաջողում է ստանալ միայն սպանուածների դիակները եւ թաղել Մահլամի գերեզմանատանը:

Այս բոլոր եղելութիւնները զանազան առիթներով եւ զանազան տեղերում, ի հարկէ, բողոքներ եւ միջամտութիւն յարուցին. Խաչիկ վարդապետ Դատեանը, Ատրպատականի առաջնորդ Այվատեան եպիսկոպոսը, անգլիական եւ ռուսաց հիւպատոմները Ամիր-Նիզամին եւ Սադրազամին դիմեցին: Խաչիկ վարդապետին թոյլ տուին իր պաշտօնատեղին վերադառնալ, Հաճի Խանը պաշտօնանկ եղաւ: Ուրիշ ոչ մի առանձին հետեւանք: Զարդամը իբր Սալմաստի եւ Խոյի դատաւոր՝ առ այժմ Խոյ քաջուեց...

Աւելացնենք արդեօք, որ անգլիական ընդհանուր հիւպատոս Վուտի միջամտութեամբ պարսից եւ քիւրտ զինուորների ձեռքով սպաննուած 9 Նահատակների գլուխները յետ տուին հայերին եւ հոկտեմբերի 30-ին կատարուեց նրանց կրկնակի թաղման տխուր հանդէսը...

Վերջացնելով ներկայ թղթակցութիւնը կ'աշխատենք հետեւեալ անգամ տալ Նահատակ մեր ընկերների պատկերները եւ նրանց վերաբերեալ կենսագրական տեղեկութիւններ: Թող վառ մնան մեր սրտերում նրանց յիշատակը եւ բազմապատկի մեր արիութիւնն ու եռանդը մեզ սպասող Նորանոր դժուարութիւնների հանդէպ...

«ԴՐՕՇԱԿ»
30 նոյեմբեր 1898

1899-1902

Հայ ժողովուրդի ֆիզիքական պաշտպանութեան եւ անոր իրաւունքներու ծանաչման համար Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կազմակերպեց համաժողովրդական ծառացում թէ՛ սուլթանական, թէ՛ ցարական

բռնակալութեանց դէմ: Ստեղծուեցաւ ֆիտայական շարժումը՝ որպէս հիմնական խարխիս ունենալով Վասպուրականն ու Տարօնը: Հայութիւնը կը ցնցուի Սերոբ Աղբիւրի Նահատակութեամբ:

Ժամանակաշրջանը կը բնորոշուի նաեւ առկալութեամբ եւ գործունէութեամբ Բ. Ընդհանուր ժողովով նուիրագործուած, լրացուած կազմակերպական կառոյցի մը, նաեւ այդ կազմակերպական կառոյցի յարաճուն ծաւալումովը՝ թէ՛ աշխարհագրական-տարածական, եւ թէ՛ քանակական իմաստով: Այդ հանգրուանը կը յատկանշուի Երկրին մէջ մարտական գործունէութեամբ, Եւրոպայի մէջ, յատկապէս Քրիստափորի շունչով, քարոզչական-յարաբերական գործի կազմակերպումով, Ռոստոմի ձեռքով Պալքաններու «դուռ»-ին կազմակերպումով, կուսակցութեան հիմնահարցերէն նիւթական ջլատիչ տագնապի լուծման միտող «Փոթորիկ»-ի գործի կազմակերպումով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ ՍԵՐՈԲ ԱՂԲԻՒՐ



Տարօնի առիւծը Նահատակուեր է: Չենք կրնար չողբալ իր անսպասելի մահը եւ չհիանալ միանգամայն ժողովրդի այդ սրտոտ, աննկուն եւ հարազատ զաւկին վրայ:

Անոնցմէ էր Սերոբ, որոնց մայրերը բացառիկ աստղերու տակ կը ծնին, եւ որոնց հոգուն մէջ անցեալէն մոռցուած դիւցազնական վեհութիւն ու շնորհք մը կան:

Գրեթէ եօթը տարի, արկածալից եւ փոթորկալից տարիներ-դիմագրաւ եւ աննուաճ ապստամբ մը եղաւ օսմանեան աշխարհաւեր եւ թաթարական վարչութեան դէմ: Ափ մը ընկերներով ոչ միայն ահ ու սարսափ ազդեց իր բարբարոս թշնամիին, այլեւ պատկառանք: Ամբողջ վաշտերու դէմ, ինքը լեռ մըն էր, Սիփանայ սարին պէս:

Սերոբ Աղբիւր իր մայրենի կենսառոյգ՝ այլ տարաբախտ հողին վրայ ուռճացած, անոր հայդուժ եւ վրէժխնդիր արձագանգներով կորովցած ու դաստիարակուած, հայրենի ճշմարիտ հերոս մըն էր. պատմաւանդական քաջերու սրտապնդող տաքարին հմայքովը ու կտրիճ ափնովը հսկայացած: Պարզ էր իտէալը, իրենց լեռներու ստինքներէն վազած աղբիւրներուն պէս զովալ եւ առողջ, կուռ ու վեհուժ: Իր գործին մեծութեան ու նուիրականութեան վրայ մարտիրոսին հզօր ու ապառաժէ հաւատքը ունէր, որ կու տար իրեն այն գերմարդկային արիութիւնը եւ քաջագործութիւնը, որ բացառիկ էակներու մենաշնորհն է:

Այն դժնդակ ու աննպաստ հանգամանքներուն մէջ, որոնցմով շրջապատուած էր անմոռանալի հերոսը, եւ որոնց դէմ արեկ հասակովը կ'ըմբշամարտէր իր Սօսիին հետ, այնքան ինքնավստահ շարժումով մը եւ ռազմութիւնով մը, ոչ մէկ հասարակ մահկանացու չէր կարող երկար ապրիլ: Դեւ մըն էր, երբ շանթահարող յանդգնութիւնով քրտական լէշկերներու ու կանոնաւոր զօրքերու դէմ կռուիլ հարկ ըլլար: Անպարտելի մնաց մինչեւ վերջի շունչը, մինչեւ որ սեւ հոգի դաւաճանութիւնը զայն թակարդը ձգեց:

Իր թշնամիները «Սերոբ փաշա» կը կանչէին անոր. անկեղծ էր այդ գովասանքը. բայց հայ ժողովուրդը անելի համեստ, անելի սրտաբուխ, սիրուն եւ խորհրդանշող անուն մը տուած է «ժողովրդական հերոս»-ը կոչելով զայն,- հին աշուղի մը բամբիռին արժանի - իբր մոնչոզ մարմնացումը ազգային շղթայակիր զգացումին եւ սրբազան ուխտին:

Ցեղին ուժեղ, պատերազմիկ, ապրիլ ուզող եւ լոյս աղաղակող ոգին էր Սերոբը, զինքը ծնող հողէն անբաժան, լօշտակի մը պէս խրած էր անոր մէջ, զոր կորզել

յանդգնողը պէտք էր մահը աչքը առնէր:

Մեր մէջ սրտեր շատ կան, որոնց իւրաքանչիւրին մէջ մէյմէկ առիւծ է քնած. ո՛վ պիտի զգայ իր մէջ, խորունկ ցնցումը, ներշնչումը, հիանալի հերոսին տեղը բռնելու եւ անոր ձեռնարկած վեհ ու ազնիւ գործը, նոյն ջերմեռանդութիւնով եւ նոյն հայրենասիրական աճուն հաւատքով մը առաջ վարելու համար: Կ'արժէ, որ խիզախ եւ անվեհեր հոգիները, այդ հոյակապ կերպարանքին առջեւ, հպարտ եւ փղծկուն խոյանքով մը, ինչպէս Կեսար Աղեքսանդրի արձանին առջեւ, աղաղակեն. «Ես կ'ուզէի Սերոբ մը ըլլալ»:

Չքնաղ հերոս-գործիչի մահով գրեթէ ամբողջ արիական ընտանիք մը կ'աներեւութանայ. իրեն հետ կը մեռնին իր 12 տարեկան կորիւնը, իր երկու եղբայրները,- դժբախտ ու սեւ ճակատագրին զոհ սրտաշարժ եւ դիւցազնական *groupe* մը - իսկ Սօսին, որ կենսական ուժն ու զօրավիզն էր իր ամուսնուն եւ անոր բացակայութեանը յաճախ կը հրամանատարէր քաջամարտիկ խմբին, վիրաւոր գերի ինկած է: Այժմ բանտին մէջ, հայ Ամազունը կու լայ, իր առիւծն ու կորիւնը... Ազգային սրտարցունքով շրջապատենք զայն:

Սերոբը, այդ դիւցազն, համակրելի տիպարը, մեր ազգային գոյութեան կռուի ու փառքի էջերուն էն հարազատ, էն սրտի մօտիկ մեծագոյն դէմքերէն եւ պարծանքներէն մէկը պիտի մնայ: Իր մահը սակայն ծաղկի մը մահն է, բեղուն ապագայով:

Ճակատագրի փորձանքներուն առջեւ խրոխտ մնալ եւ վեր պրկուիլ անհրաժեշտ է ազգի մը համար, եթէ չ'ուզեր իր աստղը կորսնցնել: Դժբախտութիւններու առջեւ է, որ ազգերու թերութիւնները ու մեծութիւնները կը ճանչցուին: Դէն չպարտելով մեր յոռետես, սկեպտիկ եւ բացասական տժգոյն կողմերը, գօտեպնդուինք առնական եւ կորովալիր զգացումներու համերգութիւնով մը:

Սերոբը, աղբիւր-իտէալը թող ըլլայ, ստրկութեան մէջ լացած ու դիւցազնացած, եւ ազատութեան համար ծարաւի ժողովրդի երազուն հոգիին. իսկ Սօսին՝ Տարօսի հերոսուհին, «ոսկիամայր» տիպար կինը բոլոր այն լալկան, սրտակակիժ եւ արիասիրտ մայրերուն ու հայուհիներուն, որոնք իրենց ծոցին վրայ կ'ապրեցնեն ցեղին կեանքը եւ իրենց սրտատրոփ կոյրծքին տակ, ինչպէս տաճարի մէջ,

սրբազան Նախանձայուզութիւնով մը կը պահպանեն ցեղին դարաւոր ծայնը, ազատութեան հառաջանքը, կայծուկրակը...

«ԴՐՕՇԱԿ»
Դեկտեմբեր 1899

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԼՈՒԾԷ ՍԵՐՈՒՔ ԱՂԲԻՒՐԻ ՎՐԷԺԸ

Սոյն հատուածը առնուած է 3 յունուար 1901-ին Մուշէն գրուած եւ «Դրօշակ»-ի մայիս 1901-ի թիւին մէջ լոյս տեսած նամակէ մը: Հատուածին մէջ կը նկարագրուի Աղբիւր Սերոբը սպաննած քիւրդ Պշարէ Խալիլէն վրէժ առնելու արարքը: Աղբիւր Սերոբի վրէժը լուծեցին Գէորգ Չաւուշ, Մակար եւ Անդրանիկ:

Սերոբի սպանութեան պատճառ եղող գիւղաշէնցիք, շէնքցիք եւ Խալիլ աղա կոչուող շունը տղաքներէն սպաննուած են:

Արինարբու Խալիլ աղան թրքաց հեծեալ ոստիկաններով եւ իր սպառազինուած քաջընտիր թիկնապահներով պատելու էր ելեր յեղափոխականներու ահէն: Այդ հրէշը պատահօրէն յեղափոխական հայդուկներուն կը հանդիպի, որոնք առանց առիթը փախցնելու կը յարձակին Խալիլի վրայ: «Իկիտ» ոստիկանները կծիկը կը դնեն առանց ետենին նայելու, իսկ Խալիլ իր երկու թիկնապահներով Մեհմետի գիրկը կ'երթար: Հայդուկները ի վրէժ Սերոբի կը կտրեն Խալիլ աղայի գլուխը՝ անբաժան իր երկու ձեռքերէն:

«ՓՐՕ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Մոխրակոյտի վրայ բազմած, արտասուքը աչքերին, մի ձեռքը կրծքի լայնաբերան վերքին, միւսը խորշումած ճակատին, սգաւոր հայր, ինչպէս անմխիթար մեռելատէր, խաբուած զօրեղներից, մոռացուած երէկուայ վիճակակիցներից, շնչասպառ ականջ է դնում, որտեղից որ է, մի ցաւակցական խօսք, մի մխիթարիչ ձայն...

Եւ ահա այդ ձայներից մէկը՝

«Փրօ Արմենիա»:

Հայաստանի համար...

Ինչ է Հայաստան:- Աշխարհագրական անո՞ն, պատմական ասանդավա՞յր. չէ, այլ

անլուր, առասպելական տանջանքների վայր, նահատակութիւնների մի վիթխարի մարմնացումն, որ 95-ից դարձել է եւ ընդ միշտ պիտի մնայ պատմութեան մէջ սինոնիմ, համանիշ այն բոլորի, ինչ հնարել է չարագործ ուղեղը՝ մարդը մարդու ձեռքով տանջելու, մարդը մարդու ձեռքով մարտիրոսացնելու համար...

Հայի հայրենիքը չէ՛ նա,

այլ հայի տանջարան...

Իսկ ի՞նչ է ինքը, հայր: Ստրո՞ւկ:

Ոչ, նա կռուեց: Ազատ:

Ոչ.- նա շղթայակապ է: Անբախտ: Ոչ.-

նա հիացմունք զարթեցրեց: Բախտաւոր:

Ոչ.- նա յուսախաբուեց: Ի՞նչ է ուրեմն նա,

ի՞նչ եւ նրա վիճակի անունը:- Հայ: Ուրիշ

ածական գոյութիւն չունի բառարանների

մէջ: Կամ պիտի ստեղծել, կամ երբ

հարկաւոր է ցոյց տալ մի ազգ, մի

մարդ, մի անհատ, որ ստրուկ է՝ թէեւ

արժանի ազատութեան, տանջուած՝

բայց արժանի երջանկութեան, խաբուած՝

բայց արժանի անկեղծ աջակցութեան,

շղթայակապ՝ թէեւ պատմութիւնից

կոչուած շղթաները փշրելու,- այն

ժամանակ գործ ածեցէք մի բառ միայն՝-

Հայ: Ուրիշ բառ չկայ: Հայ,-

տանջուող մարդն է դա:

Տանջուող մարդ...

Դա է ժամանակակից մտածողի

նշանակէտը, նրա յոյզերի եւ հոգեկան

փոթորիկների նպատակը, սիրած եւ

անսահման սիրոյ մէջ՝ ատած առարկան:

Մարդասիրութեան տանջանքն է դա:

Հին սպարտացու իտէալն էր- կռուել

հայրենիքի համար: Նախկին քրիստոնէայի

իտէալը - խաչի համար: Ժամանակից

մարդու իտէալը - տանջուողի համար...

Տանջուող՝ հայրենիքի մէջ, տանջուող

հայրենիքից դուրս. տանջուող խաչի համար,

տանջուող խաչից հեռու: Այլեւս ո՞չ մի

սահմանագիծ, ո՞չ մի շրջանակ, ո՞չ կրօնի,

ո՞չ հայրենիքի: Մարդու համար տրոփող

սիրտը այսօր այլեւս սահման չէ ճանաչում.

նա բողոքում է ամէն տեղ, ուր բռնութիւն

կայ. հնչում է իր ձայնը ամէն տեղ, ուր կարիք

կայ, ցասման աղաղակ է բարձրացնում՝

ամէն անգամ, երբ օգնութիւն աղերսող կայ,

մի օր Յունաստան, միւս օր Լեհաստան,

մի օր Քուպա, միւս օր Թրանսիլաւ, մի

օր Մակեդոնիա, միւս օրը Հայաստան:

Այս ներքին մեծութեան խթանն էր, որ

մղեց մեծ Պայրոնին Յունաստան, մեծ

կալիպալտիին Ամերիկա, Լաֆայէթին

Միացեալ Նահանգները. այդ ոգին էր, որ մի խումբ քաջեր մղեց Թեսալիա՝ Զիփրիանիի ձեռքի տակ, մի այլ խումբ ազատասէրներ Թրանսպալ՝ Վիլլպուա-Մարիոլի ձեռքի տակ... Դրա մէջն է ժամանակակից մտածողի, գործողի, գրողի գաղափարական մեծութիւնը, նրա ուժը, նրա հրապոյրը, ինչպէս եւ, ամառը նրա հոգեկան կրկնակի տանջանքը...

Ահա գրողը սեղանի առաջ.- ամբողջ գէնքը՝ մի կտոր թուղթ, մի փոքրիկ գրիչ: Շրջապատող պարզութեան մէջ նրա կուրծքը ներքին փոթորիկի մի շտեմարան է ներկայացնում. նա յուզուած է, ենթակայ աննկարագրելի վշտերի: Լուրերը գուժաբեր են, ծանր, յուզող:

Դիտում է նա, ինչպէս արծիւը ծերպի վրայից, տանջուող, հալածական, թշուառ մարդուն ամէն տեղ, բոլոր անկիւններում. եւ այն ձորերում, ուր կատարուեց կոտորածների կլասիք ողբերգութիւնը, եւ այն լեռների տակ, ուր հեյլեն դիցաբանութիւնը շղթայեց Պրոմէթէոսը. այն վեհանուն վայրերում, ուր պերիկլեսների եւ դեմոսթենեսների հայրենի ստեղծագործութիւնը զոհ տրուեց փաշաների տիրապետութեան. կղզիների շուրջը, ուր «վայրենի» Ազվենալոօ ազատութեան երգեր հիւսեց իր ժողովրդի վշտերից. սրբազան Գանգէսի ափին, ուր դեռ սաւառնում է Պրահմայի վարդապետութեան դարեւոր ոգին. ափրիկեան դաշտերում, որտեղ նորագոյն հերոսները նորագոյն թերմոպլ ստեղծեցին, եկեղեցու մէջ, ուր անօգուտ Աստծու անունով ազատ միտքը շարունակում է կրել շղթաներ, հիստուած «սուրբ հայրերի» փափուկ մատներով. գահերի շուրջը, ուր «հայրախնամ» քողի տակ նոր լուծեր են դնում՝ ազգերի շլիւքին, կոփուած գայիսունակիր ձեռքերով...

Տարիներ առաջ, հատ հատ, բացառիկ էին «օտար» տանջողների պաշտպանները. բայց երէկուան բաժան ուժերը այսօր միմեանց մօտենում, խմբում են, ամբողջ կազմակերպութիւններ, կուսակցութիւններ են դառնում՝ ընդունակ ղեկավարելու, նոյնիսկ սպառնալու նրանց, որոնց փեշակը դարերի ընթացքում՝ միմիայն սպառնալիքն է եղել: Մարդկային տանջանքը, թոյլերի վիշտը, խողխողողների երկրից հնչող աղեխարշ գոչերը միացրին միմեանց անձանօթ, տարբեր ազգերի, տարբեր կրօնների պատկանող հոգիները:

Բողոքը այժմ՝ անհատական չէ, այլ խմբական: Դա թշուառների սփոփանքն է. սպառնալիք բռնութեան...

Եւ դրա մի նոր ապացոյցն է այս օրկանը՝ «Փրօ Արմենիա», որ լոյս տեսաւ Փարիզ, նուիրուած հայերի պաշտպանութեան-գարդարուած այնպիսի գրաւիչ անուններով՝ ինչպէս Քլեմանսօ, Անաթոլ Ֆրանս, Ժորես, Փրեսանսէ, Տը Ռուպերթի, Ֆերրի, Վանտերվելտ, Քիառ, որոնց անշուշտ կը գան ձայնակցելու շատ հայասէրներ Լամանշի եւ Հռենոսի միւս ափերից, եւ գուցէ այնպիսի երկիրներից, ուր նահատակ ժողովուրդների աղերսը դեռ ցասման աղաղակներ չէ կորզել անտարբեր բերաններից...:

«ԴՐՕՇԱԿ»
Նոյեմբեր 1900

ՀԱՅ-ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ

Ադրիանուպոլսում, դեկտեմբերի 9-ին, հրապարակաւ կախաղան հանուեցին մեր երկու թանկագին ընկերները՝ Պետրոս Աբրէմեան եւ Օննիկ Թորոսեան: Նրանց հետ միաժամանակ կախաղան բարձրացան իրենց զինակից երկու պուկար ընկերները՝ Սիւստոպալ Մերձանոֆ եւ Հաճի Խրիսթօ Իլիե:

Կախաղանով սկսեց Սայիտ փաշան... Պէտք էր միանգամ ընդմիշտ ահաբեկել անհանգիստ «կոմիտաջիներին», որոնք Մակեդոնիայի սահմաններում շարունակ դաւեր էին նիւթում՝ օսմանեան իշխանութեան դէմ: Վագրը իր անզուսպ, արինաձարաւ բնագղումներով արթնացաւ այդ գառամեալ տաճկի մէջ, որը քանիցս ըմբոստացել էր տիրոջ կամքի դէմ...

Եւ կախաղանները ցցուեցին Ադրիանուպոլսի չորս կէտերում... Վաղուց չտեսնուած փաստ: Սարսափն ընդհանրացնելու համար կախաղանը գործեց հրապարակաւ: Մի քանի հազար հոգի ականատես եղան, թէ ինչպէս մահուան սինների վրայ ձօճեցին չորս երիտասարդ դիակներ... Վագրը կշտացաւ: Գերագոյն մի հաճոյք զգաց նա, լսելով իր գոհերի վերջին հռնդիւնները, եւ արինոտուած կախաղանների շուրջը սկսուեցին դիւային խրախճանքներ...

Իսկ նոյն միջոցին հայ ու պուկար

հայրենիքներում՝ աղեկտուր հառաչանքներ լսուեցին, սգաւոր մայրերի, անմխիթաբ բարեկամների ցաւագին հեծկլտոցները մինչեւ երկինք հասան:

Բայց ողջ ու հառաչանք չէր միայն լսուում... Նոյն այն միջոցին, երբ մեծ վիզիրը գոհունակութեամբ շփում էր իր ձեռքերը եւ զեկուցանում էր արինոտ փաստը Երլտրզի ճիւղին,- նոյն այդ վայրկեանին Մարիցայի ափերում՝ ողբի հետ միասին՝ լսուում էին ցասման ահեղ որոտումներ. վրէժ էին աղաղակում՝ հայ ու պուկկար սրտերը եւ ամուր կռում՝ հայ-մակեդոնական համերաշխութիւնը:

Երկու հայ ու երկու պուկկար՝ չորսն էլ եղբայրացած ընդհանուր խարազանի դէմ, հպարտ եւ անվեհեր գնացին դէպի կախաղան եւ բարձրագոյ վկայութիւնը տուին այդ համերաշխութեան:

Չորսն էլ՝ երիտասարդ, կենսուրախ, լի խանդ ու ափնով... Նայեցէք Պետրոսին, Խանասորի մեր սիրելի պուկկարացուն: Դիտեցէք նրան հայդուկի եւ պուկկարական սպայի համազգեստում: Որպիսի քնթրասթ...

Միմիայն, կարծէք, կեանքի ու վայելչութեան համար ստեղծուած՝ այդ ազնիւ դէմքը եռում, փոթորկում էր շարունակ գաղափարի համար եւ վայրկեանը հասնելուն պէս՝ միշտ օրինակելի անձնուիրութեամբ նետուում էր կռուի դաշտ... Թերեւս կախաղանի անակնկալ դատավճիռը լսելով, նա կսկիծ զգաց, որ իրեն չվիճակուեց մեռնել հայրենեաց հողի վրայ, մի մեծ ու ահեղ ճակատամարտում: Բայց նա մեռաւ իրեն արժանի մահով: Նա գնաց իր ընկեր-հայրենակցի հետ միանալու այն պաշտելի նահատակներին, որոնք զարդն են հայկական պանթէոնի, որոնց անունները ոսկէ տառերով պիտի արձանագրէ հայ յեղափոխութեան գալոց պատմութիւնը:

«ԴՐՕՇԱԿ»
Դեկտեմբեր 1901

**ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ
ԲՈՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԴԷՄ ՀԱՄԱՕՍՄԱՆԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ**

Օսմանցի ազատականների համաժողովը, որ կազմակերպած էին Տամատ-Մահմուտ փաշայի երկու

որդիներ իշխան Սապահետին եւ իշխան Լուֆֆուլլահ, իր նիստերն սկսեց Փարիզում, փետրուար 4-ին:

Կազմակերպողները հրաւեր էին ուղղել Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան, Հայ յեղափոխական դաշնակցութեան օրկան՝ «Դրօշակ»-ի խմբագրութեան եւ «Հնչակ» թերթի խմբագրութեան: Այս վերջինը չէր պատասխանել, իսկ «Դրօշակ»-ի խմբագրութիւնը եւ Վերակազմեալ հնչակեան յեղափոխական կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը իւրաքանչիւրն երեքական պատգամաւոր էին ուղարկել համաժողովին մասնակցելու համար:

Ֆրանսական կառավարութիւնը նախ արգելեց համաժողովի գումարումը, բայց մի խումբ ազդեցիկ երեսփոխանների եւ քաղաքական անձնաւորութեանց դիմումների վրայ, թոյլ տուեց, որ այն տեղի ունենայ մասնաւոր անհատի տան մէջ եւ պայմանով՝ որ նրա արձանագրութիւնը հրատարակուելուց առաջ ֆրանսական կառավարութեան հաղորդուի:

Դրօշակեան եւ հնչակեան պատգամաւորները անհրաժեշտ համարեցին մասնակցելուց առաջ իրար հետ համաձայնել իրենց բնելիք ուղղութեան մասին եւ ունեցան նախնական խորհրդակցութիւններ, ուր որոշեցին համաժողովի ամբողջ ընթացքին մէջ համախոհաբար գործել: Դրօշակեան եւ հնչակեան պատգամաւորները այդ որոշման հաւատարիմ մնացին համաժողովի սկզբից մինչեւ վերջը եւ այսպիսով ազատական օսմանցիները տեսան ոչ թէ երկու կուսակցութեանց ներկայացուցիչներ՝ այլ վեց հայեր՝ ներկայացուցիչ հայկական Դատի:

Համաժողովին մասնակցելուց առաջ դրօշակեան եւ հնչակեան պատգամաւորները նախապատրաստական տեսակցութիւններ ունեցան նաեւ երկու իշխանների եւ Իսմայիլ Քեմալ պէյի հետ եւ այն ժամանակ միայն իրենց վերջնական համաձայնութիւնը տուին համաժողովին պաշտօնապէս մասնակցելու, երբ տեսան, որ համաժողովի կազմակերպիչները ամբողջութեամբ ընդունում են հայոց ծրագիրը՝ այսինքն 61-րդ յօդուածի, ինչպէս եւ 1895 մայիս 1-ի Մեմորանտումի՝ անգլիական յաւելուածով հանդերձ՝ գործադրութիւնը:

Համաժողովին մասնակցելու հրաւիրուած էին նաեւ մի քանի փարիզաբնակ հայեր,

որոնցից պպ. Չերազ եւ Բասմաջեան. միայն պատասխանել էին այդ հրաւերին: Յիշեալ երկու պարոնները համաժողովում յայտարարելով հանդերձ, որ իրենք չեն պատկանում ռեւէ յեղափոխական կուսակցութեան, յայտնեցին՝ թէ իրենք յարում են այն յայտարարութեան, որ դրօշակեան եւ հնչակեան պատգամաւորները ներկայացրին համաժողովին:

Ազատական օսմանցիներից ներկայ էին երեսունի չափ անձեր, որոնց մէջ պէտք է յիշել «Մեշվերեթ»-ի խմբագիր Ահմետ Ռիզա պէյը իր Հալէլ Քանեմ եւ Ալպեր Ֆիւա աշխատակիցներով, Հոչա Քատրին «Օսմանլի» թերթի խմբագիր Կսիտոռ Ալպեր, Ֆահրի պէյը, Միտհադ փաշայի որդի Ալի Հայտար պէյը, Պ. Պ. Սաթաս, Միւզիւրիս Գիկիս եւ Ժորժ Տորիս յոյները, «Ալպանիա» թերթի խմբագրապետ պ. Տերվիշ Հիման ալպանացին, «Քիւրտիստան» թերթի խմբագիր Ապտիլրահման պէյ Պետերիսան քիւրտը եւ այլն:

Համաժողովն ունեցաւ վեց նիստ, որոնցից առաջին երկուսը գումարուեցան պ. Լըֆէր Պոնտալիսի բնակարանում եւ վերջին չորսը Սապահետին եւ Լիւթֆուլահ իշխանների տանը:

Համաժողովն իրեն նախագահ ընտրեց Սապահետին իշխանը, փոխնախագահ հայ պատգամաւոր Պ. Սիսեանը եւ յոյն պատգամաւոր պ. Սատարը, քարտուղար՝ դոկտոր Ալպերը, եւ նրա հրաժարուելուց յետոյ՝ պ. Ժորժ Տորիսը:

Իմանալով, որ որոշուած էր համաժողովի լեզուն թիւրքերէնն ընդունել, հնչակեան եւ դրօշակեան պատգամաւորները առաջուց պահանջել էին կազմակերպիչներից, որ ֆրանսերէնը գործածուի իբրեւ համաժողովի պաշտօնական լեզու, բայց նկատելով, որ օսմանցի անդամներէն շատերը ֆրանսերէնին անտեղեակ են, համաձայնեցին, որ երկու լեզուները գործածուին հաւասարապէս, այսինքն թէ իւրաքանչիւր ֆրանսերէն ատենաբանութիւն թիւրքերէն թարգմանուի եւ փոխադարձաբար:

Համաժողովի սկսուելուց առաջ դրօշակեան եւ հնչակեան պատգամաւորները զարմանք եւ ցաւ էին յայտնել, որ մակեդոնական երկու կոմիտէներին հրաւեր ուղարկուած չէ եւ պահանջել էին այդ հրաւերն ուղղել նրանց:

Կազմակերպիչները առարկութիւն արին մակեդոնական ուրոյն հարցի գոյութեան դէմ, բայց հայ պատգամաւորների պահանջի վրայ համաձայնեցին այդ հրաւերն ուղարկել «Դրօշակ»-ի խմբագրութեան միջոցով «Եւրոպական Թիւրքիայի պուլկարներին»:

Իրենց հրաւերը անպատասխան մնաց: Համաժողովի սկսուելուց անմիջապէս յետոյ հայ պատգամաւորները հրապարակաւ բողոքեցին մակեդոնական խնդրի հանդէպ օսմանցի ազատականների բռնած դիրքի դէմ եւ ցաւ յայտնեցին, որ մակեդոնական կոմիտէների ներկայացուցիչներ չեն գտնուում համաժողովում եւ այդ յայտարարութիւնը իրենց պահանջով ատենագրութեան մէջ արձանագրուեց:

Սապահետին իշխանը հանուած մի շարք որոշումներ կարդաց եւ առաջարկեց համաժողովի անդամների քուէարկութեանը...

Հայ պատգամաւորները յայտարարեցին, որ պիտի չքուէարկեն այդ որոշումները, որոնց ինչ-ինչ կէտերին համաձայն չեն եւ ծանուցին, թէ իրենք զուգընթաց մի յայտարարութիւն պիտի ներկայացնեն համաժողովին: Դիտել տուին մասնաւորապէս, թէ հայերը կը ցանկանային Տաճկաստանը դէպի դաշնակցային մի ռեժիմ առաջնորդուած տեսնել, մինչդեռ ազատական օսմանցիների որոշումները կետրոնացման, ձուլման նոյնացման մի ռեժիմի հաստատման են ձգտում: Բողոքեցին մանաւանդ 4-րդ յօդուածի դէմ, որ ասում է թէ «Պերլինի դաշնագրի տրամադրութիւնները, Թիւրքիոյ ներքին կարգաւորութեան վերաբերեալ, պէտք է տարածուին կայսրութեան բոլոր նահանգների վրայ»: պարզեցին՝ թէ 61-րդ յօդուածը չի կարող տարածուել կայսրութեան ուրիշ նահանգների վրայ, քանի որ այն խմբագրուած է միմիայն հայկական նահանգների տեղական, ցեղային մասնաւոր պէտքերն աչքի առաջ ունենալով. ասացին, թէ ազատական օսմանցիներն իրաւունք եւ նոյնիսկ պարտք ունին ուրիշ նահանգների մէջ տեղական պէտքերին համապատասխանող բարենորոգումներ մտցնել, բայց իրաւունք չունին պետութեան բոլոր նահանգների վրայ տարածումը պահանջել այնպիսի բարենորոգումների, որոնց Եւրոպան պաշտօնապէս միմիայն հայկական նահանգների համար է անհրաժեշտ գտած:

Հայ պատգամաւորները նկատեցին

վերջապէս, թէ իրենք չեն կարող ընդունել, որ 1876-ի սահմանադրութիւնը համարուէր «ամէնից ապահով եւ ամենաթանկագին գրաւականը օսմանեան ժողովուրդների քաղաքական ազատութեանց եւ իրաւանց ընդդէմ կամայականութեան», քանի որ հայերը իրերի բնական ուժով եւ պատմական դէպքերի դառն փորձերով՝ ստիպուած են իրենց պահանջած եւ երոպայից պաշտօնապէս ճանաչուած մասնաւոր բարենորոգմանց միակ ապահովութիւնը միջազգային դաշնադրութեանց մէջ տեսնել:

Որոշումների «Եզրակացութիւնը», որի մէջ դրական մտքով էր ներկայացուած երոպական միջամտութեան խնդիրը, բուն վէճ առաջ բերեց ազատական օսմանցիների մէջ: Այդ որոշումը, որ Իսմայիլ Քեմալ պէյի եւ երկու իշխանների ուղղութիւնն է ցոյց տալիս եւ Տաճկաստանի մէջ բարենորոգմանց գործադրութեան համար երոպայի գործակցութիւնը անհրաժեշտ է նկատում, սաստիկ բողոք բարձրացրեց Ահմետ Ռիզայի եւ իր կուսակիցների կողմից, որոնք հակառակեցին երոպայի գործօն միջամտութեան հրաւեր կարգալու գաղափարին եւ յայտարարեցին, որ օսմանցիները իրենց երկրի բարենորոգումը իրենց ձեռքով պէտք է կատարեն եւ ի հարկին երոպայից միմիայն բարոյական աջակցութիւն պիտի խնդրեն:

Հայ պատգամաւորները ջերմօրէն պաշտպանեցին «Եզրակացութեան» այդ կէտը՝ նկատելով, որ երոպական միջամտութեան անհրաժեշտութիւնն ընդունելը մի փրկարար նորութիւն է ազատական օսմանցիների գործունէութեան մէջ, որ այդ միջամտութիւնից նրանք խուսափել էլ չեն կարող, նկատի ունենալով միջազգային այն պայմանները, որոնց ենթարկուած է Թիւրքիան: Այդ որոշումը ընդունուեցաւ քուէների մեծամասնութեամբ:

Յետոյ համաժողովը ունկնդրեց հայ պատգամաւորների յայտարարութեանը, որ հետեւեալն է.

«Հնչակեան եւ դրօշակեան հայ կոմիտէների պատգամաւորները յայտարարում են.

«1- Թէ հայ կոմիտէները պատրաստ են օսմանցի ազատականների հետ գործակցիլ արդի ռեժիմը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան:

«2- Թէ այդ ընդհանուր գործունէութիւնից

դուրս, հայ կոմիտէները կը շարունակեն իրենց մասնաւոր անկախ գործունէութիւնը, քանի որ, ինչպէս յայտնի է, այն ուղղուած է արդի ռեժիմի դէմ եւ ո՛չ թէ Թիւրքիայի միութեան եւ օրկանական գոյութեան դէմ:

«3- Թէ իրենց մասնաւոր գործունէութիւնն ուրիշ նպատակ չունի արդէն, բայց եթէ անմիջական գործադրութիւնն առաջ բերել Պերլիսի դաշնագրի 61-րդ յօդուածի, 1895 թ. մայիս 11 Մեմորանտումի եւ նրա յաւելուածի, ինչպէս եւ այն բարենորոգմանց ծրագրի, որ յանուն հայ կոմիտէների դիւանագիտական միջոցով ֆրանսական կառավարութեան յանձնուած յիշատակագրի մէջ յիշուած է»:

«ՓՈԹՈՐԻԿ»-Ի ԳՈՐԾԸ

Հայ ժողովուրդը - հարուստ՝ գաղափարով ու անձնագոհութեամբ, հայ բուրժուազիան-աղքատ՝ հոգիով գծուծ ու նիւթապաշտ: Մէկը իր կեանքը կու տար՝ յանձին իր մարտնչող վաշտերուն, միւսը իր գանձին անձին վրայ կը դողար եւ անարգօրէն կը փախչէր ազատագրական շարժման կրողներէն... Դժուար է գտնել նման պատկեր մը ուրիշ ազգերու տարեգրութեան մէջ:

«Քրիստափոր՝ որ հրաշքի պէս բան մը նիւթեց, ստեղծելով ազատութեան պատկառելի բանակ մը ցիրուցան, անմիաբան, կեդրոնախոյս ազգի մը մէջ, անգոր եղաւ այդ ցեղային արատին դէմ եւ իր «Ամբոխային տրամաբանութեան» մէջ կը բացագանչէր յուսահատ.-

«Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկա, Աֆրիկա, ջհաննամ են գնում ո՛վ գիտէ ինչ դժոխային միջոցներով իրենց ունեցածը աւելացնելու համար. բայց ոչ մէկը չգտնուեց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժուէր՝ հասարակօգուտ որեւէ ձեռնարկի համար - եւ այս ոչ միայն հին սերունդի ներկայացուցիչների մէջ, այլ եւ երիտասարդ դրամատէրերի շրջանում, որոնք ունին եւ ուսում եւ զարգացում ու երբ սկսում են խօսել հասարակական գործունէութեան եւ ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրայ, Կլատսթոններ ու Լասսալներ պէտք է գերեզմաններից կանչուեն նրանց հետ մրցելու համար...»:

Միմիայն յեղափոխականները չեն, որ

Նշաակեր ու մտրակեր են այդ հնաւանդ արատը: Յիշեցէք այն մոլեգին շանթերը, որ կը նետէր Միքայէլ Նալբանդեան հայ ունետոր դասակարգին, դեռ «Հիւսիսափայլ»-ի էջերէն: Յիշեցէք Գամառ Քաթիպայի ցասկոտ աղաղակները՝ արձակով ու ոտանաւորով...

«Մեր ազգը կ'ազատէր, եթէ մեր հարուստները ընդունակ լինէին մի չնչին զոհաբերութեան» - կը գրէր «Հիմի է՛լ լռենք»-ի հեղինակը 1878 փոթորկայոյց թուականին, երբ Պերլինեան Վեհաժողովի որոշումը պաղ ջուր էր մաղեր հայ գիտակից տարրերու «ինքնավարութեան» երազներուն վրայ: Եւ խորունկ վրդովմունքով կը շարունակէ.

«Ինչ իրաւունք ունինք մենք գանգատելու Պիքոնսֆիլտէն, Սոլսպիւրիէն... որ նոքա հայերուս ինքնավարութիւն չտուին, մինչ մենք ո՛չ միայն արեան զոհէն խուսափեցանք... այլ եւ մի քանի կոպէկ հասարակաց գանձարան չձգեցինք... Մեր հարուստները ձեռքէն բաց թողին այն բարեյաջող դիպուածը, որ հազար տարին մի անգամ է պատահում»...

Հայ շարժման ղեկավարները արհնով սրտով կը յիշէին յոյն բախտակից ժողովուրդի ազատագրական պատերազմը, երբ Աւերոֆ մը իր գրեթէ ամբողջ կարողութիւնը ի սպաս դրաւ հայրենիքի փրկութեան գործին... Երկար անոնք քարոզեցին զոհաբերութեան գաղափարը ազգի կուշտ դասակարգին, երկար ատեն աշխատեցան խաղաղ ծամբով յուզելու անոր կարծրացած սիրտը... Ապարդիւն: Ու մնաց վերջին, յուսահատական միջոցը բռնի հանգանակութիւն: Կազմակերպութիւնը հարկադրուեցաւ անոր ալ դիմելու: Մահացու տագնապ կ'ապրէր հայութեան մեծ զանգուածը եւ այդ տագնապի հանդէպ զարմանալի չէին, անշուշտ, հիւանդագին ծայրայեղութիւնները...

Եւ սակայն, բռնի հանգանակութեան գաղափարը մէկէն ի մէկ չընդունուեցաւ շարքերէն: Նա անցաւ երկար ծամբայ, հասունցաւ քայլ առ քայլ, ժողովէ-ժողով:

Ինչպէ՛ս կ'ապրէր կազմակերպութիւնը, ինչ միջոցներով կը տարուէր շարժումը.- կամաւոր տուրքերով, անդամավճարներով, վիճակախաղի, երեկոյթներու, այլ եւ այլ հանդէսներու հասոյթներով, երբեմն ալ լայն ժողովրդական հանգանակութեամբ (Ռուսաստանի ու Թուրքիոյ մէջ՝ բնականաբար գաղտնի): Բայց համեստ էին այդ ծամբով ստացուած գումարները,

չափազանց խղճուկ՝ հսկայական պահանջի հանդէպ: Այդ պահանջի մասին գէթ մօտաւոր գաղափար տալու համար՝ բաւ է յիշատակել Արեւելեան Բիւրոյի շրջանային ժողովի կողմէ 1899 թ. յունուարին սահմանուած պիւտճէն: Ժողովի արձանագրութեան մէջ կը կարդանք.

«Բարձրաւանդակի կեդրոնացման համար ներմուծել առնուազն 1500 հրացան... Կեդրոնացման վայրում ամէն մի հրացանի արժէքը մօտաւորապէս 70 ռուբլի ենթադրելով, 1500x70=105,000 ռուբլի:

«Նոյն քանակութեամբ հրացանների համար գոնէ մէկ միլիոն փամփուշտ... 100,000 ռուբլի:

«... Անհրաժեշտ ռազմամթերքների եւ ծախքերի համար 25,000 ռուբլի:

«Զինակիրների եւ մարդախմբերի պաշարի համար -75,000 ռուբլի:

«Ընդամէնը Բարձրաւանդակի կեդրոնացման համար - 305,000 ռուբլի»:

Եւ նոյն հաշուով նախագծուած էր նոյն գումարը Լեռնապարի կեդրոնացման համար:

Այդպիսով, երկու գլխաւոր վայրերուն կազմակերպութիւնը յատկացուցեր էր աւելի քան 700,000 ռուբլի պիւտճէ մը:

Եւ այդ՝ միայն Արեւելեան Բիւրոյի շրջանին համար...

Երբ առաջին անգամ բռնի հանգանակութեան խնդիրը դրուեցաւ Երկրորդ Ընդհանուր ժողովի առջեւ (Թիֆլիս, 1898), տեղի ունեցաւ երկարատեւ վիճաբանութիւն: Թեթեւ սրտով չէր, որ ընկերները կը մօտենային այդ ծանր, պատասխանատու խնդրին: Որքան ալ հայ շահամոլ Արպագուններու դասակարգը յանցապարտ էր ցեղի գերագոյն պայքարի ստիպողական պահանջներուն հանդէպ՝ այնուամենայնիւ, այդ պայքարի ղեկավարները դժուարութեամբ կը մարսէին նոր, ահաւոր թելադրանքը- դրամ հայթայթել բռնութեամբ, ի հարկին նոյնիսկ՝ արինահեղութեամբ...

Ահա թէ ինչո՛ւ 2-րդ Ընդհանուր ժողովը՝ ընդունելով հանդերձ բռնի հանգանակութեան սկզբունքը, յանձնարարեց մարմիններուն՝ տերրորի դիմել միայն ամենածայրայեղ, յուսահատական պարագաներում:

Եւ երբ այդ որոշումէն 5-6 ամիս յետոյ, խնդիրը աւելի սուր կերպով դրուեցաւ - Կարսի կոմիտէի կողմէն, Արեւելեան Բիւրոյի շրջանային ժողովի մէջ (1899 թ.

յունուար), դարձեալ ձայները բաժնուեցան, եւ մեծամասնութեամբ որոշուեցաւ՝ նորէն յետաձգել տերրորի գործադրութիւնը, նորէն դիմել խաղաղ քարոզչութեան՝ անհրաժեշտ դրամը հայթայթելու համար: Ատենագրութեան մէջ կը կարդանք բառացի.

«... Որովհետեւ մեծամասնութիւնը չէր կարողանում խղճի հանդարտութեամբ հաստատել, թէ բոլոր հնարաւոր խաղաղ միջոցները իրագործուել եւ անյաջող սպառուել են,

«Որովհետեւ սուր միջոցի, այսինքն տերրորի գործադրութիւնը վերապահուել է Ընդհանուր ժողովի կողմից ամենաձայրայեղ եւ յուսահատական դէպքում,

«Որոշուեց չորսից մինչեւ վեց ամիս անպայման աշխատել ծանուցեալ խաղաղ միջոցների իրագործումին: Եւ նոյն ժամանակամիջոցում, եթէ Դաշնակցութեան նիւթական միջոցները ցանկացուած ծաւալն ու յաջողութիւնը չեն ստացել, այն ատեն միայն Բիւրոյի շրջանական երկրորդ ժողովը գումարելով, կատարել գործունէութեան հաշուետուութիւնը եւ արդիւնքի համաձայն վճռել յանձնարարել կոմիտէներին Ընդհանուր ժողովի արտօնած ձայրայեղ միջոցը իրագործելու, ուր որ անհրաժեշտ է համարում»...

Եւ այդ որոշումն ալ անցաւ դարձեալ ոչ միաձայն, այլ 5 ձայնով ընդդէմ 2-ի: Խորհրդակցութեանը կը մասնակցէին ի միջի այլոց՝ Նիթրա (Յ. Շահրիկեանի ծածկանունը)՝ որպէս Պաքուի մարմիններու ներկայացուցիչ, Մելիք (Եռսուֆեան) եւ Սմբատ Օհանեան (Ս. Զաւարեան). վերջինը յամառօրէն կը մերժէր տերրորը:

«Խաղաղ միջոցները» սպառուեցան: Ապարդիւն՝ բոլոր քարոզներն ու յորդորները: Հայ բուրժուազիան պիտի չչարժէր՝ մինչեւ որ «չփոթորկուէր» իր հանգիստը: Եւ շատ չանցած, «Փոթորիկ»-ը հասաւ...

1901-ին «Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմինը» նիստ ունեցաւ Ֆիլիպէի մէջ, Քրիստափորի մասնակցութեամբ. վերստին քննեց բռնի հանգանակութեան խնդիրը, որոշեց գործադրել զայն եւ այդ նպատակով ընտրեց յատուկ մարմին մը - «Փոթորիկ» կոմիտէն: Նորընտիր մարմնի ղեկավարութիւնը ստանձնեց նոյնինքը Քրիստափորը, որ եւ նոյն տարուայ աշնան ձգեց Երուսալան ու վերադարձաւ Կովկաս:

Նախքան մեկնիլը, իր ձեռքով իսկ «Դրօշակ»-ի տպարանին մէջ,

գիշերանց - երբ չկային գրաշար ու այլ անբաղձալի հիւրեր- պատրաստեց «Փոթորիկ» կոմիտէի ձերմակ կտաւէ պաստառները, դրոշմեց անոնց վրայ Դաշնակցութեան խորհրդանշանն ու ազդարարագիրը, որով յանուն Կ. Պոլսոյ Պատասխանատու կեդրոնական կոմիտէի, մահուան սպառնալիքով, հայրենիքի ազատութեան տուրք կը պահանջուէր հայ հարուստներէն: Առաւ անոնցմէ բազմաթիւ օրինակներ, խնամքով ամրացուց իր ձամբորդական պարագաներուն մէջ, ուղեւորուեցաւ Պերլինի վրայով - ուր տեսակցութիւն մըն ալ ունեցաւ Պեպելի հետ - եւ անցաւ ռուսական սահմանը:

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆ ԴԵԱՆ

1903-1907

1903-ը մէկէ աւելի իմաստներով շրջադարձային տարի է Դաշնակցութեան եւ հայ յեղափոխական շարժման, նաեւ հայ յեղափոխական մտքի պատմութեան համար:

Արդարեւ, եկեղեցական կալուածներու գրաման ցարական անարդար որոշումին դէմ Կովկասի մէջ կազմակերպուեցաւ համահայկական լուրջ ընդդիմութիւն: Միլուեցան ռազմական մեծ տարողութեամբ շարժումներ՝ ինչպէս Սասնոյ ապստամբութիւնը եւ 1905-ի հայ-թաթարական կռիւները: Այդ ժամանակներուն նակաշիճէն տիրացաւ իր արդար պատիժին՝ Դրոյի ձեռամբ:

ՊԱՅՔԱՐ՝ ԸՆԴԴԷՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԲՈՆԱԳՐԱԽՄԱՆ

Հեռագիրը, երեւի ձեզ արդէն հաղորդեց քաղաքական երկու սպանութիւնները, որոնք ցնցեցին ամբողջ Կովկասը: Գեներալ Անտրէէ Գանձակում եւ գնդապետ Պոկուլայաքի Իգդիր,- մէկը՝ փոխնահանգապետ, միւսը՝ գաւառապետ,- գլորուեցին տեռորիստի հարուածից, հրապարակի վրայ, բազմութեան աչքի առջեւ:

Այս անգամ սարսափողը ժողովուրդը չէ, որ փոքր առ փոքր վարժուած է քաղաքական վրէժխնդրութեան ստիպողական գաղափարին, այլ «ամենազօր» կառավարութիւնը, որը

ապշած է եւ չէ կարող հաշիւ տալ իրեն, թէ ինչպէ՛ս երբեմնի խոնարհ, հեզ, գլուխ ծռող ժողովուրդը այսքան կարճ միջոցում դարձաւ ըմբոստ, յանդուգն եւ աներկիւղ:

Եւ այդ «խելօք» կառավարիչներին եմ թողնում պարզելու այդ քաղաքական այլակերպութեան հոգեբանական պատճառները եւ կը բաւականանամ միմիայն մի քանի խօսք ասելու այն զոհերի մասին, որոնց արիւնով ներկուեց նոյն հողը, որը տարիներ շարունակ իր մէջ ծծեց շատ անմեղների անմեղ արիւնը:

Գեներալ Անտրէէ, երեք տարուց ի վեր փոխ նահանգապետ Գանձակում՝ վերջերս մանաւանդ յայտնի էր դարձել իր հակահայկական տրամադրութիւններով: Այդ կարճամիտ աստիճանաւորը, ինչպէս երեւում է, հայկական խնդիրը, կամ անելի ճիշդն ասած՝ հայկական դիակները պատուանդան էր ուզում դարձնել՝ բարձրանալու, իշխան Գոլիցինից շքանշաններ եւ գանձարանից լաւ գումար ստանալու համար: Գանձակ ոտք դրած օրից՝ նա համարեա երկու ամիսը մի անգամ շինծու եւ ստայօղ զեկուցագրեր է տալիս կովկասեան կառավարչապետին՝ «հայկական դաւադրութիւնների» մասին: Զեկուցագրերը յաջորդում էին մէկը միւսին, բայց դաւադրութիւնը չէր երեւում: Եւ ահա անցեալ 1903 թուի սեպտեմբերին, Անտրէէ րուպէն եկած համարեց մի մեծ գործ ստեղծելու: Հայոց եկեղեցու գոյքը յափշտակելու տխուր օրերն էին, ժողովուրդը սգաւոր, վշտահար՝ ողբում էր ստացած հարուածը: Գանձակում, ինչպէս եւ ուրիշ քաղաքներում, հայերը վճռեցին կազմել բողոքի խաղաղ ցոյց: Եւ երբ ցոյցը վերջացած՝ ամբոխը ցրում էր, վրայ հասաւ Անտրէէ՝ աչքերը կարմրած, փրփրած, կատաղութիւնը դէմքին: Հասաւ եւ բերեց կոզակներ, ոստիկանութիւն: Եւ ոգետրուած իր ուժով, նա հրամայեց հլու կոզակներին՝ կտրել ամբոխի առաջը, կանգնեցնել նրան եւ կրակել: Եւ ինքը, այդ խելագար քաղաքագետը, առաջին օրինակը տուեց, ատրճանակի հարուածով գետին տապալելով մի հայ երիտասարդ: Նրա օրինակին հետեւեցին բիրտ կոզակները եւ միմեանց ետեւից գետին փռեցին բազմաթիւ դիակներ... Կատարուեց մի հրէշաւոր բռնութիւն եւ ամբողջ քաղաքը ընկաւ սուգի մէջ:

Թափուած արիւնը, սակայն, նրան չխրատեց. անելի սիրտ տուեց: Իր

ատելութիւնը դէպի հայերը նա սկսեց արտայայտել աջ եւ ձախ: Սկսեց կռուեցնել հայերին թիրաքների հետ, ձեռնարկեց խուզարկութիւնների, շատերին քշել տուեց եւ կարճ միջոցում երբեմնի խաղաղ, հանգիստ քաղաքը դարձրեց յուզմունքների եւ իրարանցման կենտրոն: Անպատիժ պահել նրան կը նշանակէր անելի սիրտ տալ այդ անխիղճ թշուառականին: Եւ պատիժը տրուեց...

Անտրէէից անելի անտանելի էր գաւառապետ Պոկուսլաւքի՝ Սուրմալուի ցարը, թէւ նրանից անելի ցածր պաշտօնով: Տասն տարուց ի վեր, ինչ նա նշանակուած էր Սուրմալուի գաւառապետ, այն ապաբախտ գաւառը հանգիստ օր չէր տեսել: Եւ հասկանալի է: Նրան նշանակեցին յիշած գաւառում այն պատճառով միայն, որ դեռ Կարս եւ Զաքաթալա եղած ժամանակ՝ յայտնի էր դարձել իբրեւ խստասիրտ, անգութ պաշտօնեայ, իբրեւ անսնման կաշառակեր եւ իբրեւ եզակի հայատեսցերեք յատկութիւն, որոնցով միշտ կարելի է առաջադիմել միապետութեան այս դժբախտ անկիւնում: Նրա սուրը կտրուկ էր եւ աջ ու ձախ կրակ էր թափում, երբ երեւանի նահանգապետի պաշտօնը վարում էր գեներալ Ֆրեզէ, որը շնորհիւ տիկին Պոկուսլաւքու «ազդեցութեան»... ուժգնօրէն հովանաւորում էր գեղեցիկ կնոջ գաւառապետ-ամուսնուն: Ֆրեզէ հեռացաւ երեւանից, բայց Պոկուսլաւքին շարունակեց մնալ իր պաշտօնում, որովհետեւ Ֆրեզէի նոր, անելի բարձր պաշտօնը կատարելապէս յարմար էր էլ անելի ուժգնօրէն հովանաւորելու այդ ոճրագործին, մանաւանդ որ իշխան Գոլիցինին հէնց Պոկուսլաւքու նման ռուսացնողներ էին հարկաւոր, հաւատարիմ՝ ինչպէս կճան շուն, եւ ամբարտաւան՝ ինչպէս չինովսիկ:

Հայերին հալածելու համար, նա հնարում էր դժոխային, չլսուած միջոցներ: Հազարից մէկը.- Մի օր, ամբողջ Իգդիրը քսից վեր կենալով սարսափով իմացաւ, որ գիշերը, անյայտ մարդիկ քանդել են ուղղափառ ռուս եկեղեցու պատը եւ քարերը թափել: Կատարուած էր անօրինակ սրբապղծութիւն: Գիտէ՞ք, թէ ինչ է նշանակում Կովկասում դիպչել ռուսաց եկեղեցու պատին - դա հայիոյանք է եւ Աստծուն, եւ ցարին:

Պոկուսլաւքին անմիջապէս զեկուցագրեց երեւան, թէ ռուսաց եկեղեցու պատը քանդողները հայերն են, որոնք չեն ուզում, որ Իգդիր ուղղափառ եկեղեցի

շինուի: Եւ իբրեւ հետեւանք այդ զեկուցագրի՝ սկսուեցին ձերբակալութիւններ, խուզարկութիւն, արքոր: Յետոյ... յետոյ, երբ անցել էր չորս-հինգ տարի, բոլորովին անսպասելի կերպով բացուեց, որ այդ ամբողջ պատմութիւնը սարքել էր ինքը գաւառապետը իր գործակալների միջոցով, հայեր արքորելու եւ զեկուցագրեր պատրաստելու նպատակով:

Այդ բոլորը բացուեց, բայց Պոքուսլաւքին էլի մնաց գաւառապետ, որպէսզի շարունակէ քանդել, հալածել, տանջել: Յուսահատ ժողովուրդը մի քանի անգամ գանգատ տուեց իշխան Գոլիցինին: Եւ մի անգամ, երբ ինքը Գոլիցին անձամբ եկել էր Սուրմալու, տեղնուտեղը տեսնելու «իրեն յանձնուած երկիրը», գիւղական բնակիչների մի պատգամաւորութիւն ներկայացաւ իշխանին եւ աղերսագին խնդրեց ազատել գաւառը իր այժմեան մեծից: Միամիտ մարդիկ - նրանք վճռել էին այնքան վտանգաւոր մի պատգամաւորութիւն կազմել՝ յոյս դնելով կովկասեան գլխաւոր կառավարչի արդարութեան վրայ: Բայց ո՞վ է տեսել, որ միապետութեան մէջ՝ մեծաւորի դէմ բողոքողը անպատիժ մնայ: Չէ որ դա յեղափոխութեան նախանշանն է: Եւ իշխան Գոլիցին, կատաղութեան մէջ խելքը կորցրած, յարձակուեց պատգամաւորներից մէկի վրայ, մի պատկառելի ծերունի, բռնեց նրա միրուքից, թափահարեց եւ գռռաց. «Եթէ էլի մի անգամ համարձակուէք գանգատ տալ, բոլորիդ Սիպիր կը քշեմ...»

Ասաց եւ դարձաւ Թիֆլիս: Իսկ ժողովուրդը մնաց յուսահատ, անօգնական, ձեռքերը ծալած... Եւ ահա յուլիսի 25-ին, մի աներեւոյթ ձեռք ստանձնեց հանուր ցասման արտայայտիչի դերը եւ ժողովրդական վրէժի հանգոյցը լուծեց հրացանի մի գնդակով... Ուրիշ ելք չկար: Վերջինն է արդեօք այս:

Տարաբախտաբար՝ ոչ, ինչպէս ցոյց են տալիս լուրերն ու փաստերը: Իգդիրի դէպքից մի քանի օր յետոյ, մի ուրիշ խուլ անկինում, Հին Նախիջեւան քաղաքում, որ այնքան մեկուսացած է քաղաքական հոսանքներից, դարձեալ «աներեւոյթ» մի ձեռք, քաղաքային այգու մէջ, ահագին բազմութեան առջեւ, ատրճանակի մի հարուածով սպանեց կառավարչական մի գործակալ, յայտնի իր մատնութիւններով եւ այլ շատ բաներով: Գետին տապալելով իր զոհը, սպանողը առաջ անցաւ խրոխտ եւ ատրճանակի հարուածներով՝

ձեղքեց ամբոխն ու անայտացաւ...

Անայտացած մի քաղաքում, դրանք՝ յեղափոխական գաղտնի կոմիտէների այդ անվեհեր գործակալները երեւան կը գան այլ տեղեր, ուրիշ քաղաքներում՝ շարունակելու արհմտութիւն վրէժի գործը, որի համար նրանք ցոյց են տալիս այդքան անվեհերութիւն: Նիւթը, տարաբախտաբար, անպակաս կը լինի, որովհետեւ Պլեւէի ռեժիմը՝ աջակցութեամբ Գոլիցինի, լեցրել է կովկասեան երկիրը պստիկ պլեւէներով եւ գոլիցիններով, որոնք դժբախտ ազգաբնակչութեան կեանքը դարձրել են թոյն ու արտասուք, ախ ու շիւան...

Տեռորիստական ոգու այդ անպատում բռնկումից սարսափած, իշխան Գոլիցին, որ արդէն սարսափի մէջ իր հոկտեմբեր 14-ի փորձից ի վեր, կծիկը կապեց, փախաւ Փեթերսպուրկ, խնդրելու իր ուսուցչի՝ ամենագոր Պլեւէի հովանին, բայց հովանու տեղ՝ գտաւ նրա դիակի փշրանքները, թափուած փողոցի կեղտ ու փոշու մէջ...

Է. ԱՎՆՈՒՆԻ
«Կովկասեան Խաբրիկներ»
«Դրօշակ»

ՍԱՄՆՈՅ Բ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Հայերը հասկցած էին, թէ ուրկէ՞ իրեն պիտի հասնի գլխաւոր հարուածը, ուստի, ըստ այն ալ, դասաւորեցին իրենց ուժերը:

Կը նախատեսուէր, որ թշնամին պիտի գայ Շատախներու կողմէն եւ գրաւելով Շատախներու գիւղերը՝ մինչեւ Շուշնամերիկ, բարձրանայ Չայր եւ մտնէ Կելիենկիւզան: Անդրանիկը կը ստանձնէ շարժումը կասեցնելու գործը: Կեդրոն ունենալով Տափըկը, կը սպասէ դէպքերու զարգացման: Երկրորդ ամենակարեւոր վտանգը



կը սպառնար Շէնիկի կողմէն: Թշնամին պիտի առնէր Շէնիկը, յետոյ Սեմալը, եւ բարձրանալով Չայը, մէկ կողմէն պիտի կտրէր Անդրանիկը եւ շատախցիները՝ Կելիեկիզանէն, միւս կողմէն պիտի մտնէր Կելիեկիզան, բարձրանալով Ալիանքի եւ Բարբառի հովտով: Այս ճակատի պաշտպանողական գործը յանձնուեցաւ Հրայրին:

- Հրայր երեք մասի բաժնեց իր ճակատը.
- ա.** Չայի շրջան, զոր յանձնեց Սպաղանաց Մակարին. այստեղ կը գործէին Նաեւ Մուրատ՝ իր ֆետայիներով եւ Կոտոյի Հաճին՝ իր կամաւորներով:
- բ.** Կեդրոնը, որ կը գտնուէր ալիանցիներուն ձեռքը՝ մինչեւ Բարբառի հովիտը:
- գ.** Բարբառի հովիտը: Այս վերջին կէտերից պիտի պաշտպանէին՝ Սեպուհը իր ֆետայիներով, շէնիկցոց տասնեակները՝ Ղազարի եւ Մանուկի ղեկավարութեամբ, Լաճկանցի Արթինը, Սեմալցի Քեաթիպ Մանուկը եւ Կրպոն՝ Սեմալի գլխաւոր ուժերով, Իսոն՝ գոմսեցի կամաւորներով եւ ալիանցիներով, Մերկերցի Յովսէփը եւ քանի մը ուրիշներ՝ իրենց տասնեակներով: Տեսնենք՝ թշնամին ինչպէս դասաւորուած էր իր ուժերը:

Սալիի փաշան եօթը թապուր կանոնաւոր զօրք ունէր այդ ճակատին վրայ: Հոն էր Նաեւ Կինճի միութեսարեֆը: Յարձակող զօրքերու զօրամասերու հրամանատարն էր՝ ռուս-տաճկական պատերազմի հերոս չերքեզ Քէօսէ Պինպաշին: Ամէն ինչ պատրաստ էր յարձակման համար:

Կառավարութիւնը, ձեւականութիւնը կատարած ըլլալու համար, ապրիլ 12-ի կ'ընտրէ Առաքել վարդապետը իբրեւ պատգամաւոր, եւ անոր կը յանձնէ առաջնորդներու եւ պատրիարքարանի կողմէ գրուած թուղթերը, ու, թրքական առաջարկներու հետ միասին, կը դրկէ հայերուն մօտ: Կառավարութեան առաջարկն էր որ, եթէ դրսեցիք, այսինքն ֆետայիները, անձնատուր ըլլան, անվասա ու ապահով դուրս պիտի քշուին երկրի սահմաններէն. իսկ տեղացի հայերը, եթէ յանձնեն իրենց զէնքերը եւ խոստում տան թէ այլեւս պիտի չաջակցին խռովարարներու, ներում պիտի ստանան:

Ղրկելով Առաքել վարդապետը, Ֆերիք փաշա անոր միայն վեց ժամ միջոց տուաւ՝ դրական կամ բացասական պատասխան մը բերելու համար: Թէեւ հայ առաջնորդները

դիտել տուած էին իրեն, թէ վեց ժամը քիչ է, քանի որ ֆետայիներու տեղը յայտնի չէ եւ հայկական անենամօտիկ կէտը հասնելու համար անգամ հազիւ կը բաւէ վեց ժամը, Ֆերիք փաշա անդրդուելի կը մնայ: Առաքել վրդ. իր նամակներով ու յանձնարարականներով անմիջապէս կ'երթայ Շէնիկ. հոն ո՛չ ոք գտնելով, կ'անցնի Սեմալ, ուր կը հանդիպի ֆետայիներուն եւ Հրայրին, երեկոյեան ժամը 6:00-ին:

Հրայր իսկոյն մարդ կը դրկէ Անդրանիկի ու Վահանի ետեւէն, որ զան խորհրդակցութեան: Վահանը, սակայն, Կելիեկիզան ըլլալով, հետեւեալ օրը կէսօրին միայն կը հասնի Գեղաշէն, երբ արդէն կոհիւր սկսած էր: Իսկ Անդրանիկը գիշերն իսկ կը վերադառնայ ճակատ, մտածելով, թէ հրաւերը թակարդ է, կամ սոսկ ձեւականութիւն: Հրայր, առաւօտեան, նկատելով թուրք զօրքերու շարժումը, ճամբու կը դնէ Առաքել վարդապետը, թէ՛ «Ի՞նչ բանակցութիւն, երբ քո ետեւից զօրքն է ահա գալիս մեր վրայ»:

Հաւանական է որ կառավարութիւնը, բանակցութեան միջոցով, միտք ունէր Նաեւ ի մի հաւաքել հայ ֆետայիներու գլխաւորները եւ զանոնք մէկ վայրի մէջ հարուածել:

Սեմալի եւ ալիանցոց կոհիւները.- Բացուեցաւ ապրիլ 3-ի առաւօտը: Օրհասական օր մըն է Հրայրի համար, որ Սեմալի տանիքներէն հեռադիտակով կը դիտէ զօրքերու յառաջխաղացքը Շէնիկ: Անմիջապէս Հրայր հրաման կու տայ դիմադրութեան:

Թուրք զօրքը, Շէնիկ մտնելէ ետք, երկու մասի կը բաժնուի. մէկը կ'ուղղուի դէպի Սեմալ, միւսը՝ դէպի Ալիանք: Սեմալցիք կը դատարկեն իրենց գիւղը. իրենց ձեռքերով կ'այրեն իրենց տուները, թշնամիին չձգելու համար, եւ կը քաշուին դէպի Կելիեկիզան: Անոնց նահանջը պաշտպանելու համար, ետ կը մնան Հրայրը, Գրգոն եւ Սեմալցի Մանուկը՝ քանի մը տասնեակ զինուորներով: Անոնք կռուելով կը բարձրանան Կելուի լեռները: Շուտով Սեպուհ ծանր կը վիրաւորուի, եւ թշնամիին ձեռքը անցնելու վտանգի տակ կ'իյնայ: Ինքզինքը խենչալով սպաննելու փորձ կ'ընէ, իր կուրծքին մէկ-երկու հարուածներ ալ կու տայ, բայց ընկերները կը նկատեն ասիկա ու զէնքերը կը խլեն իրմէ: Հրայր, ժողովուրդն ու վիրաւորները առջեւը ձգած, ետ կը նահանջէ, բայց թշնամին արագօրէն

կը մօտենայ եւ համազարկի տակ կ'առնէ նահանջողները: Եւ ահա, գնդակ մը կը դաչի Հրայրին եւ անշնչացած գետին կը ձգէ զայն: Կը սպաննուին նաեւ Գրպոն ու Սեմալի գլխատրներէն մէկ քանի ուրիշներ: Սակայն, նահանջող ժողովուրդն ու վիրատրները անցած էին արդէն վտանգի շրջանը:

Երբ այս դէպքերը տեղի կ'ունենային, թշնամին միաժամանակ յարձակում կը գործէր ալիանցոց վրայ, Չայի երկայնքով: Հրայր սպաննուած էր, Սեպուհ վիրատրուած, Անդրանիկը Տափըկ կը գտնուէր, Գէորգը՝ Իշխնձոր ու Վահանը՝ Կելին. այդ ամէնէն կարելոր ճակատը մնացած էր առանց ընդհանուր ղեկավարի. սակայն, ալիանցիք եւ անոնց հետ եղած ֆետայիները բնաւ չեն ընկճուիր եւ իրենց հերոսութեամբ այդ ծանր օրը յաղթութեամբ կը պսակեն:

Թրքական զօրքը, որ դէպի Չայ կ'ուղղուի, կը հանդիպի Մուրատի ու իր կռուողներուն: Անոնք խիստ դիմադրութիւն ցոյց կու տան, բայց թշնամու գերագանց ուժերու ճնշման տակ, կը հարկադրուին քաշուիլ դէպի Չայի բարձունքը: Մուրատի խումբի նահանջը՝ վերէն կը պաշտպանէ Սպաղանաց Մակարը, որ Կոտոյի Հաճիի խումբին հետ միասին կը հարուածէ թշնամին եւ կը կանգնեցնէ անոր արշաւը: Յոգնած թուրքերը, ձիներու մէջէն, անկարող կ'ըլլան այլեւս հետապնդելու Մուրատը, որ կանգ կ'առնէ: Հայ ֆետայիները կ'ոգետրուին, կը համախմբեն իրենց ուժերը, վերէն գրոհ կու տան թշնամու վրայ ու կը գլորեն յարձակող զօրքերը դէպի Չայի ափերը:

Աւելի խիստ է կռիւը Ալիանքի շուրջ. թշնամին հոս կը յառաջանայ աւելի մեծ ուժով. հայերը անդադար կը կրակեն, բայց թշնամին, իր արիւնով ներկելով սպիտակ ձիւնը. միշտ կ'առաջանայ: Հող է ինքը՝ Քէօտ Պինպաշին, որ կը խանդավառէ իր զօրքերը, եւ անոնց յառաջխաղացքը կը պաշտպանէ թնդանօթային կրակով: Կարծես թէ ամէն ինչ կորած է արդէն հայերու համար. թուրքերը ետ կը շարտեն հայկական ուժերը, կը գրաւեն Ալիանքը, կը մտնեն Բարբառի հովիտը ու կը պատրաստուին գրաւել Կելիեկիզանը, բայց սասունցիները չեն յուսահատիր. նոյնիսկ հայ կիները կը մասնակցին կռուին: Ֆետայիները հրաշք կը գործեն: Ընդհանուր ղեկավարը կը դառնայ Գոմսայ Իսոն, որուն հերոսաբար կը գործակցին Աւետիսն ու Մուրատը: Իրենց ետեւ ձգած քաջ շէնիկցիներն ու ալիանցիները, անոնք

կը մտնեն թշնամի զօրքի սիրտը: Չուրն ու Ղազարը, Մանուկն ու Կիրակոսը, Մրգէն ու Յովսէփը եւ ուրիշները կը գերագանցեն զիրար, իրենց խիզախութեամբ: Երբ երկար ժամեր սոված ու յոգնած թշնամին կը տեսնէ հայ ֆետայիներու ռազմական այս նոր թափը, վայրկեան մը կանգ կ'առնէ եւ չդիմանալով հայկական գրոհի հարուածներուն, որոնք կու գային հովիտի երկու կողմերէն, ետ կը դարձնէ իր գլուխը ու կը սկսի փախչիլ: Քէօտ Պինպաշին այլեւս անկարող կ'ըլլայ կանգնեցնելու թշնամի զօրքերը, երեկոյեան դէմ զանոնք կը հասցնեն մինչեւ Շէնիկ, զոր անոնք նոյնպէս կը պատրաստուէին լքել, երբ ֆետայիները, յոգնած ու պահեստի ուժ ալ չունենալով, կը դադարեցնեն իրենց հետապնդումը:

Ապրիլ 13-ի կռիւը վերջացաւ հայկական յաղթանակով եւ 160 թուրք ու քիւրտ կորուստներով. բայց Տարօնի աշխարհը կորսնցուց իր մեծ հերոսը՝ Հրայրը, որուն դիակը տարաւ Կելին եւ թաղեց Սերոբի անգլուխ դիակի կողքին:

Մերկերի կռիւը՝ ապրիլ 14-15-ին.- Անդրանիկ, որ ինչպէս ըսինք, Շատխու ճակատի հրամանատարն էր, 12 լոյս 13-ի գիշերը կը հաւաքէ Շատխու բոլոր գիւղացիները, կ'այրէ գիւղերը եւ ժողովուրդի հետ միասին, կը նահանջէ դէպի Կելին, ուր կը հասնի 13-ի երեկոյեան: Եթէ Չայը առնուէր թշնամու կողմէ, իր թիկունքը պիտի կտրուէր. մինչ իր ներկայութիւնը եւ բերած ուժերը կոչուած էին աւելի եւս ամրացնելու Կելիի դիրքերը:

Ապրիլ 14-ը կ'անցնի ընդհանրապէս խաղաղ, բացի Մերկերի կողմէն, ուր թշնամին փորձ մը կ'ընէ յառաջանալու եւ ամրանալու. բայց ալիանցիք եւ Մուրատը իր տասնեակով, ղեկավարութեամբ այս վերջինին, ետ կը մղեն թշնամին:

Վահան, զգալով Հրայրի պակասը եւ Գէորգի անհրաժեշտութիւնը հիւսիսային ճակատի վրայ, կը հրահանգէ Գէորգին շտապել իր ուժերով Կելին, իր տեղ թողնելով ուրիշ մը, որ եթէ չկարենայ դիմանալ, պէտք է նահանջէ տալլորիկցիներու հետ միասին դէպի Կելին: Գէորգ իր տեղը կը թողու Սմբատը. իր հետ կ'առնէ քանի մը տասնեակ զինուորներ՝ որոնց մէջ Խասգիւղի Տէր Քերոբը, եւ Ապրիլ 14 լոյս 15-ի գիշերը կը հասնի Կելին, իսկ 15-ի առաւօտուն կը ստանձնէ Բարբառի հովիտի ամենավտանգատր կէտին՝ Մերկերի

պաշտպանութեան ղեկավարութիւնը: Նոյն օրն իսկ կռիւ մը կ'ունենայ թուրք զօրքերուն հետ, որոնք նորէն փորձ կ'ընեն գրաւելու Բարբառի հովիտի բարձունքները: Բայց կռուի բռնուելով Գէորգին հետ, կը թողուն դիակներ ու կը նահանջեն:

Հիսիսային ճակատները կը հանգստանան. բայց Կելիի մէջ տենդոտ աշխատանք կը կատարուի: Տեղի կ'ունենան ուժերու նոր դասաւորումները. կը շինուին զէնքեր, կը պատրաստուի փամփուշտ:

Վահան կը յաջողի նամակներ դրկել Մուշ՝ Տատրակին (Գեղամ Տէր Կարապետեան). Վահանի սուրհանդակները թուրք զօրքի միջով աննկատելի կերպով կ'անցնին եւ կը հասցնեն նամակներն ու պատուէրները: Վահան կը խնդրէր դիմում կատարել հիւպատոմներուն եւ ուրիշ ուր որ հարկ էր, առաջքն առնելու համար արհմտակցութիւններուն: Կը խնդրէր նաեւ, որ ժողովուրդը փրկելու համար հիւպատոմները շտապէն Սասուն բարձրանալ:

Տատրակ կը յաջողի, անգլիական հիւպատոս Շիպլի միջոցով, հեռագիրներ դրկել ամէն կողմէ: Անգլիացիք յիրաւի ցանկութիւն կը յայտնեն, որ հիւպատոմները Սասուն երթան ու, իրենց անձնական միջամտութեամբ, վերջ տան կռիւներուն: Բայց ռուսերը արգելք կ'ըլլան, յայտնելով, թէ քանի զինուորական գործողութիւնները արդէն սկսած են Սասունի մէջ, անյարմար է հոն բարձրանալ: Եւ այսպէս ի դերեւ կ'ելլեն Վահանի յոյսերը:

Իշխանձորի կռիւները՝ ապրիլ 16-ին.- Տիարպէքիրէն եկած զօրքերն ու քիւրտերը անելի գործօն են հարաւային ճակատին վրայ: Անոնք կ'օգտուին այն հանգամանքէն, որ Տալուրիկի ուժերու մէկ խոշոր մասը անցած է, Գէորգի եւ Մակարի հետ, Կելիեկիզանի կողմերը: Թշնամին, տէր դառնալով Սպիտակ Սարին, փորձ կ'ընէ ստնելու Իշխանձորի ետեւը եւ կտրելու զայն Տալուրիկէն: Իշխանձորցիներու դրութիւնը ծանր է: Բայց առաջնորդութեամբ Տէրտէրի որդիներուն՝ Արթինի եւ Կարապետի, յուսահատօրէն կը դիմադրեն իրենցմէ անհամեմատ անելի ուժեղ թշնամիին: Մուշեղը, Ախլաթցի Ապրոն, Լեւոնը եւ Մուկուչը հրաշալի կերպով կը դիմանան իրենց դիրքերուն մէջ: Օգնութիւն կը պահանջուի Տալուրիկէն եւ կը կանգնեցուի թշնամու յառաջխաղացքը, բանալով Իշխանձորի ճանապարհը:

Մինչեւ այժմ կ'իշխէր Հրայրի տեսակէտը, թէ Սասունը զոհելու գնով իսկ շարժումը պէտք չէ ընդարձակել եւ տարածել Մշոյ Դաշտի վրայ եւ: Սակայն Սասունի վիճակը դարձած էր անտանելի: Տասնեակ հազարաւոր զօրքեր ու քիւրտեր հաւաքուած էին այդ փոքրիկ գաւառը, որուն մէկ մասը Սասունէն հեռացնելու համար, սասունցիք կ'որոշեն Մշոյ դաշտի մէջ եւ շարժում մը սկսիլ: Այդ նպատակով Ապրիլ 17-ին դէպի Դաշտ կ'ուղարկեն Կռուածադիկի շրջաններուն լաւ ծանօթ Սէյտօ Պօղոսը, Առաքելը եւ ուրիշ չորս ընկերներ, ոտքի հանելու համար Դաշտի ժողովուրդը: Թէեւ այս քայլը ուշացած էր, բայց ան առիթ պիտի տար կռիւներու նոր շարքի մը...

Կելիեկիզանի մեծ կռիւը՝ ապրիլ 20-22-ին.- Վճռական օր մըն էր այդ. թշնամին, բաւ համարելով մասնակի կռիւները, կ'անցնի ընդհանուր ճակատամարտի: Ետ դրկելէ ետք իր մօտ պահուած հայ երեւելիները, ապրիլ 19-ի լոյս 20 գիշերը շարժման մէջ կը դնէ բոլոր ուժերը եւ կը մօտենայ սասունցիներու դիրքերուն: Հայերը լաւ գիտէին, որ այդ օրը կենաց ու մահու կռիւ պիտի մղէին:

Աղբեցիներու եւ գեալուցիներու մէկ մասը եւ շատախցիները բռնած են գետէն՝ Հարսնկամերի մօտէն, մինչեւ Տալուրիկի աներակ վանքը: Անոնց առաջնորդներն են՝ Աղբեցի Խեչոն, Գելեցի Չաթոն եւ Շատախցի Առաքելն ու Սրապիոնը:

Կամաւորներու խումբ մը, սպաղանցիք եւ տալուրիկցիներու ու գեալցիներու մէկ մասը կանգնած են՝ աներակ վանքէն մինչեւ Մխիթարայ խոռը: Անոնց ղեկավարներն են՝ Սպաղանաց Մակարը, Մօրուք Կարապետը (Կելեցի) եւ Մուշեղ եղոն:

Խումբ մը ֆետայիներ, կամաւորներ եւ կելեցիներ բռնած են Մխիթարայ Խոռէն մինչեւ Մճելնու գլուխը: Անոնց հրամանատարներն են Կոտոյի Հաճին, զինուոր Գրիգորը, Աւէն եւ Քեաթիպ Կիրակոսը:

Շէնիկցիներու եւ կելեցիներու խումբեր բռնած են Կարմիր Քարերը: Անոնց ղեկավարներն են թարփաթող Սարգիս եւ Շէնիկցի Ղազար:

Շէնիկցիներու եւ սեմալցիներու մասեր ու խումբ մը ֆետայիներ բռնած են Դալազարայ գլուխը: Անոնց առաջնորդներն են Քեաթիպ Մանուկը, Շէնիկցի Չոլոն եւ Մոկացի Գրիգորը:

Շէնիկցիներու եւ ալիանցիներու այլ

խումբեր կը պաշտպանեն Բողնոցները՝ Ջոզեֆինայի եւ Մխիթարի գլխավորութեամբ:

Գեաքը Ծերիֆխան կեդրոնն է հայկական դիրքերու: Հոն կը գտնուին Գեորգն ու Անդրանիկը եւ կը ղեկավարեն ճակատամարտը: Անոնցմէ ձախ գտնուած դիրքերը՝ Աղլէզի Քարեր, Բարբառի Հովիտ, Օհանի Գոմ եւ Ռաջալներ կը պաշտպանուին՝ կելեցիներու, ալիանցիներու, գեպեգանմանցիներու եւ քանի մը տասնեակ ֆետայիներու ուժերով՝ Մուրատի, Արամի, Աւետիսի, Կուրաւի Բեռու, Գելէ Յովսէփի եւ ուրիշներու առաջնորդութեամբ:

Այդ բոլոր դիրքերը կոր գիծ կը կազմէին լեռներու կատարով: Մէկ ծայրը յենած էր Սասնոյ գետի եւ միւսն ալ Անտոքի վրայ: Ամբողջ գիծը երկուքուկէս ժամէ աւելի տարածութիւն էր. մէջտեղը ցցուած էր Գրեգուլը, որ կ'իշխէր բոլոր դիրքերուն վրայ: Դիրքերը իրարու հետ կը յարաբերէին նշաններով կամ սուրհանդակներով: «Քոզըք»-ներուն մէջ տեղաւորուած էին չախմախը գործածողները: Ասոնցմէ քիչ մը հեռու՝ մոսին կամ բերդան ունեցողները:

Այս գիծին ետեւն էր Կելեցիկանը՝ իր թաղերով: Հոն էր Վահանի կայանը, որ կապ կը պահէր հիւսիսի եւ հարաւի ճակատներուն հետ: Անոր մօտն էր Քեռին՝ Քաֆթառ Արշակը որ ընդհանուր մատակարար էր:

Ապրիլ 20-ի լուսաբացին, սասունցիները իրենց դիրքերէն կը տեսնեն, որ Մերկեմոզանէն մինչեւ Ըէնիկ, Սեմալ, Շուշամերիկ եւ Գեղաշէն տարածուող բլուրներն ու հովիտները բռնուած են սեւով, որ երբեմն խոշոր ու երբեմն փոքր մասերու կը բաժնուի եւ կը յառաջանայ դէպի հայկական ճակատները: Երբ արեւը արդէն կը սկսի տաքցնել ձիւներու մէջ թառած սասունցիները, թրքական 12 թնդանօթներ կը սկսին ռմբակոծել հայկական դիրքերը: Դեռ հրացանի ձայներ շատ քիչ կը լսուին: Հայերը իրենց կողմէն երբեմն միայն քանի մը հրացաններ կը պարպեն, աւելի ցոյց տալու համար թէ իրենք կան եւ իրարու հասկցնելու, թէ պէտք է պատրաստ գտնուի:

Թնդանօթաձգութիւնը ժամեր կը տեւէ. անոր պաշտպանութեան տակ, թրքական կանոնաւոր զօրքերը միշտ առաջ կը շարժին, ու երբ կը հասնին 1000-1200 քայլ հեռաւորութեան մը վրայ, հայկական դիրքերէն կը սկսի տեղատարաւի կրակ մը: Լեռները ամբողջ՝ ծուխ ու բոցի կը մատնուին: Տասնեակ ու հարիւրաւոր

մարդիկ կը վիրաւորուին եւ կը սպաննուին: Կռիւր կը տեւէ մինչեւ երեկոյ, եւ վերջապա թշնամին կը տեսնէ, որ հազիւ է խլած սասունցիներէն մէկ-երկու քաջեր: Երբ կը մթնէ, քիչ մը ետք կը քաշուի ու կը սպասէ միւս օրուան բացուելուն:

Ապրիլ 21-ը մառախլապատ օր մըն է. երբեմն անձրեւ կը մաղէ կռուողներուն վրայ: Թշնամին վճռած է գրաւել այն հայկական դիրքերը, որոնք կ'իշխեն Կելեցիկանի վրայ. բայց սասունցիները կատաղօրէն կը պաշտպանեն իրենց դիակներով՝ իրենց լեռներու ամէն մէկ քարը: Հայ կիներն ալ գործի վրայ են: Անոնք շալակով գէնք ու հաց կը փոխադրեն իրենց տղամարդոց: Իրենց ձերմակ սաւանները օդի մէջ պտտցնելով, անոնք կը գոռան շարունակ. «Հալլա հալլա, դէհ խըպըտէք, դէհ խըպըտէք», ու սիրտ կու տան կռուողներուն: Բնութիւնը, սակայն, այդ օրը թշնամի է սասունցիներուն. անձրեւը կը թրջէ չախմախը հրացանաւորներու պատրոյգը, եւ անոնք անկարող են կրակել: Թուրքերն ու քիւրտերը կը կեդրոնացնեն իրենց ուժերը, գլխաւորապէս Մճէլներու եւ Մխիթարի Խոռի կողմերը: Կռուի ծանրութիւնը կ'իյնայ Կոտոյի Հաճիի ու Սպաղանաց Մակարի դիրքերուն վրայ: Թշնամին կը յաջողի գրաւել Կոտոյի Հաճիի դիրքերը եւ սուիներով դուրս քշել հայ մարտիկները իրենց «քոզըք»-ներէն: Բոլորը ինքզինքնին վար կը նետեն եւ ոմանք հազիւ կ'ազատին՝ կիսամեռ վիճակի մէջ: Սակայն, թշնամին անկարող կ'ըլլայ նուաճել Սպաղանաց Մակարի դիրքերը, որոնք կ'իշխեն բոլորին վրայ: Ան յամառ է ու անընկճելի, ինչպէս են նա իր տասնապետերը, մասնաւորապէս Մօրուք Կարապետ եւ Սպաղանաց Գալէն: Թշնամու թնդանօթի ռումբերը ամբողջ ակօսներ փորած են անոնց շուրջը, եւ ձիւնի, քարի, հողի ու արիւնի շաղախներ առաջ բերած: Այդ շաղախներուն մէջ է, որ հայ մարտիկները անվրդով կը շարունակեն իրենց հերոսական դիմադրութիւնը: Թշնամու յարձակումները արդիւնք չեն տար եւ Գրեգուլի ու շրջակայքի դիրքերը կը մնան հայոց ձեռքը: Ասով անորոշութեան մէջ կը մնայ ապրիլ 21-ի արիւնտ կռիւր:

Ապրիլ 22-ին կը վերսկսի կռիւր եւ կ'ըլլայ վերջին օրը այդ մեծ ճակատամարտի: Թուրք զօրքը քանի մը նոր յարձակումներ կը կատարէ հայերու ձեռք մնացած դիրքերուն վրայ. բայց անյաջող: Թնդանօթները տեղաւորուած են բարձունքներու վրայ

Եւ անօգուտ կերպով կը ռմբակոծեն անդունդները, ուր հաւաքուած են հայերը:

Կէսօրը անց է. թշնամին ոչ մէկ յառաջխաղացք ունեցած է. իսկ սասունցիները, ամփոփուած Կելիեկիզանի թաղերուն մէջ, կը պաշտպանեն իրենց օձախները կատաղօրէն: Բայց կը սպառփ հայերու ռազմամթերքը եւ Քեռին, ընդհանուր մատակարարը, այդ մասին լուր կու տայ Գրեգորի դիրքերուն: Հայերը կը հարկադրուին ինքնաբերաբար թողուլ այդ անառիկ բարձունքները եւ իջնել Կենիեկիզան: Թշնամին կը հետեւի նահանջողներուն, բայց կը տատանի նոյն օրն իսկ մտնել գիւղը:

Այսպէս վերջացաւ այդ մեծ ճակատամարտը, որուն շուտով պիտի հետեւէր փարթիզանական կռիւներու ամբողջ շրջան մը, այնքան հարուստ՝ հերոսական դրուագներով եւ զարհուրելի նախճիրներով:

Ալուջակի համախմբումը.- Ապրիլ 22-ի գիշերը Կելիեկիզանի առաջին դիրքերը ամբողջապէս բռնուած էին թրքական զօրքերով. սասունցիներու նախորդ օրուան «քոզըք»-ներուն մէջ ասկերաններն էին նստած եւ նոյնիսկ Գրեգորի գագաթին վրայ անոնց խարոյկները կը վառուէին: Իսկ հոն, Կելիեկիզանի մէջ հաւաքուած սասունցիները, իրենք զիրենք պարտուած զգալով, այլեւս անհնար կը գտնեն պաշտպանել իրենց տունները եւ կը նահանջեն դէպի Ալուջակ: Ընդհանուր իրարանցում է, լաց ու կոծ. ամէն ոք կ'աշխատի ժամ առաջ շալկել ինչ որ կարելի է ու բարձրանալ լեռն ի վեր՝ ռոմի ասկերից հեռու փախչելու համար:

Նոյն գիշերը ժողովուրդն ու ֆետայիները կը համախմբուին Ալուջակի մէջ Վահանի, Անդրանիկի, Գէորգի եւ միւս խմբապետներու գլխաւորութեամբ: Ոմանք կ'առաջարկեն ամրանալ լեռներու մէջ եւ շարունակել կռիւը, մանաւանդ որ ձիւները արդէն հալած են եւ կարելի է դիրքեր բռնել Անտոք-Կեփիկի վրայ. իսկ ոմանք ալ, մասնաւորապէս Դաշտի ու դուրսէն եկած ֆետայիները, կ'ըսեն թէ անհնար է կռիւը շարունակել լեռներու մէջ, քանի որ ո՛չ պաշար կայ, ո՛չ ալ մանաւանդ ռազմամթերք: Այս վէճին վերջ կու տայ Վահան, որ կը հրամայէ ժողովուրդին անցնիլ Մշոյ Դաշտ, ուր հաց կայ եւ ուր կարելի է ազատիլ անխուսափելի կոտորածէ: Ճամբայ բանալու պաշտօնը Վահան կու տայ զինուորներու

խումբի մը, 115 հոգիէ բաղկացած, որոնք ժողովուրդը մինչեւ Մշոյ Դաշտ տանելէ ետք, պարտականութիւն ունէին նստի ռազմամթերք գտնել, երթալով, եթէ պէտք է մինչեւ Վասպուրական: Այդ ռազմամթերքով է, որ Վահան կ'ուզէր շարունակել կռիւը:

Այս դժուարին գործը կը յանձնուի Մուրատին, որ կամուրջ կը ձգէ, մեծ դժուարութեամբ, Սասնոյ կատաղի գետի վրայով եւ գիշեր ժամանակ կ'անցընէ ժողովուրդը, վիրաւոր զինուորները եւ իր զօրախումբը դէպի Ծովասար, անվտանգ կտրելով թրքական զօրքի շղթան:

Մինչ Մուրատ այսպէս կը հեռանար Սասունի լեռներէն, Վահան, Անդրանիկ, Գէորգ, Գոմսայ Իսօ (Կորին), Սասնոյ հին ֆետայիները եւ ժողովուրդի մէկ փոքրիկ մասը կը մնային Սասնոյ լեռներուն մէջ:

ԴՈՒԲԷՆ

ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԲՈՒՆԱԳՐԱԻՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԴԷՄ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԱԻԱՐՏԸ

Հայ ժողովուրդ
Հեռագիրը հաղորդեց, որ բարձրագոյն հրամանով վերադարձում են Հայ եկեղեցուց յափշտակուած կալուածները. նոյն բարձրագոյն հրամանով վերաբացուած են եւ հայ ծխական ուսումնարանները, 1874 թուին հաստատուած ծրագրով:

Ինչ պատահեց: Թագաւոր-կայսրը բարեհաճեց զիջանել հայոց կաթողիկոսի աղերսանքներին եւ կովկասեան փոխարքայի միջնորդութեանը, - տեղեկացնում է մեզ հեռագիրը: Տարիներ առաջ թագաւոր կայսրը բարեհաճեց փակել հայոց ուսումնարանները. եւ որովհետեւ շատ ուսումնարաններում երեխաները, խմբուած դասատների մէջ, չէին ցանկանում դուրս գալ:

Թագաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել իր կողակներին պոկ տալ երեխաներին նստարաններից, նազայկաներով վնոդել ուսումնարաններից: Երկու տարի առաջ թագաւոր-կայսրը բարեհաճեց գրաւել հայ եկեղեցու դարաւոր սեփականութիւնը, եւ որովհետեւ հայերը փակեցին կայսերական պաշտօնեաների առաջ եկեղեցու դռները, թագաւոր-կայսրը բարեհաճեց իր կողակներին հրամայել գնդակահարել

այդ մարդկանց: Այսօր նոյն թագաւոր-կայսրը բարեհաճում է վերադարձնել եկեղեցական սեփականութիւնը:

Սա ինչ տարօրինակ, ապշեցնող բարեհաճումներ են: «Հայոց կաթողիկոսը աղերսեց, կոմսՎորոնցով – Դաշկովը միջնորդեց եւ ահա թագաւոր կայսրը բարեհաճեց», բացատրում են մեզ:

Բայց մի՞թէ հայոց կաթողիկոսը չէր աղերսում սրանից տասն եւ հինգ տարի առաջ, երբ հազարաւոր երեխաներ թագաւոր կայսեր «բարեհաճութեամբ» ուսումնարաններից փողոց շարտուեցին, եւ ինչո՞ւ այն ժամանակ կովկասեան կառավարչապետը միջնորդ չհանդիսացաւ կաթողիկոսի աղերսանքների եւ կայսերական բարեհաճութեան միջեւ, կամ ինչո՞ւ թագաւոր-կայսեր այն օրուայ եւ բարեհաճումը այնքան անբերահաճ եղաւ: Հրա՛ջք կատարուեց արդեօք: Արդեօք թագաւոր-կայսեր բարձրագոյն սիրտը յանկարծ գթով եւ սիրով վառուեց հայ ազգի համար, կամ կաթողիկոսի աղերսանքները այսօր մի դիպական ո՞ւժ ստացան, որ առաջ չունէին. թէ կայսերական ծառայութեան մէջ ծերացած կոմսՎորոնցով – Դաշկովը յանկարծ իրաւունքի եւ արդարութեան ասպետի՞ վերափոխուեց:

Ո՛չ, կատարուեց մի այլ բան,– ժողովուրդը բողոքեց: Բողո՛ք– այդ մի բառի մէջ պէտք է որոնել գաղտնիքը:

Հայ ժողովուրդը ցոյց տուեց, որ նա ընդունակ է գիտակցել – ո՛չ միայն գիտակցել, այլ եւ ցանկանալ,– ո՛չ միայն ցանկանալ, այլ եւ պահանջել: Եւ հրաշքը ինքնըստինքեան կատարուեց. կաթողիկոսի աղերսանքները յանկարծ մի անսովոր ուժ ստացան, պաշտօնական միջամտութիւն անհրաժեշտ դարձաւ, իսկ բարձրագոյն «բարեհաճումը» վայրկենապէս փոխեց իր կերպարանքը:

Երբ տարիներ առաջ թագաւոր-կայսրը «բարեհաճեց» դնել իր խնամակալ թաթը մեր ուսումնարանների վրայ, նա գտաւ այնտեղ միմիայն երեխաներ-տղայք եւ աղջիկներ, որոնց միակ զէնքը արտասուքն էր: Բայց տարիներ անցան, երեխաները մեծացան, տղամարդիկ դարձան: Ուսումնարանների բակերում սերմանած երեխաների մաքուր արտասուքները եկեղեցիների գափթներում արժի՛ճ-գնդակներ դարձան, մանկական աղիողորմ լացուկոծը այրական զայրոյթի փոխուեց:

- Խնայեցէ՛ք մեզ, աղերսում էին այն

ժամանակ երեխաները, ուսումնարաններում իրենց նստարանները գրկած:– Մի՞ք յանդգնիլ մօտենալ, սպառնացին այժմ տղամարդիկ, եկեղեցիների շէմքերը բռնած:– Մի՛ էլէք, լալիս էին այն ժամանակ երեխաները:– Չենք տայ, գոչեցին, այժմ տղամարդիկ, եւ այդ սուրբ «Չենք տայ»-ն իրենց արինով դրոշմեցին:

Սա՛ է պարզ իրողութիւնը: Եւ այսօր մենք տօնում ենք մեր առաջին յաղթանակը: Ո՞ւմ ենք պարտական մենք, ո՞ւմ պիտի բերենք մեր շնորհաւորումները, ո՞ւմ պիտի ուղղենք մեր երախտագիտութեան զգացումները:

Քե՛զ, հայ՛ ժողովուրդ, եւ միայն քեզ: Դո՛ւ էիր, որ պաշտպան կանգնեցիր քո նուիրական իրաւունքներին, դու քաջութիւն ունեցար չհնազանդուել դահիճ կայսեր բարձրագոյն բարեհաճման, դու քո արինով բողոքեցիր բռնութեան դէմ եւ տարար յաղթութիւնը:

ՀՅԴ 4-ՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ
Կովկաս
«Դրօշակ»

ՆԱԿԱՇԻՁԷԻ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄԸ՝ ԴՐՈՅԻ ՁԵՌ-ՔՈՎ

Ոչ միայն հայերը, Պաքուի ռուս ու եւրոպացի բնակչութիւնն էլ ցնցուած էր փետրուարեան սարսափներից: Ո՞վ էր պատասխանատուն: Ամէ՛նքի համար պարզ էր, թէ ով էր վայրագութիւնների բուն հեղինակը՝ նահանգապետ Նակաշիճէն: Պաքուի նախկին քաղաքագլուխ ռուս Նովիքովը ցասումով ամբաստանեց Նակաշիճէին իբրեւ փետրուար 6-9-ի սարսափների հեղինակ՝ անուանելով նրան «Յուդա եւ Յուդայից էլ վատ»: Հասարակական խիղճը վրդովուած՝ պահանջում էր պատժել չարագործին: ՀՅԴ Ոսկանապատի Կենտրոնական կոմիտէն որոշեց նրան ահաբեկել, բայց նոյն որոշումը տուել էր եւ ռուս Սոց.-յեղափոխական կուսակցութիւնը, որի դիմումի վրայ Դաշնակցութիւնը նրան զիջեց ահաբեկումի պատիւը: Բաւական ուշացումից յետոյ Սոց.-յեղափոխականների մահափորձը անցաւ անյաջող: Դրոն որոշեց ինքը գործադրել մահաւճիռը:

Դրոն այդ օրերին զինուոր էր Ախուլցինսկի գնդում, Հիւսիսային Կովկասի Պիատիգորով քաղաքում: Պաքուի դէպքերի



լուրը առնելուն պես նա թողել էր զօրամասը, փախել անցել էր Պաքու, միանալու համար դաշնակցական մարտիկներին: Առաջին մահափորձի անյաջողութիւնից յետոյ, Դրոն խնդրում է, որ իրեն յանձնուի Նակաշիճէի ահաբեկումը: Դեռ հազիւ 21 տարեկան անփորձ երիտասարդ էր, թէեւ նրա անվախութիւնը ու յանդգնութիւնը արդէն ծանօթ էին: Նակաշիճէի մահապատիժը շատ անելի պատասխանատու եւ վտանգաւոր գործ էր՝ քան նրա արդէն կատարածները, եւ հասկնալի է, որ Կենտրոնական կոմիտէի անդամները վարանում էին: Խնդիրը վճռում է Նիկոլ Դումանը, լսելով Դրոյի թախանձագին աղաչանքը, որ իրեն վստահուի այդ գործը, Նիկոլ Դումանը բացագանչում է. «Շատ լաւ, Տէրը քեզ հետ, գնա՛, կը վերադառնաս կան վահանը ձեռքիդ, կան վահանի վրայ»: Եւ համոզում է Կենտրոնական կոմիտէի միւս անդամներին էլ, որ գործը յանձնուի Դրոյին:

Ցաւում եմ, որ դէպքի մանրամասն պատմութիւնը արձանագրուած չէ: Միայն յիշողութեամբ վերականգնում եմ Դրոյի պատմածը՝ իր իսկ խօսքերով:

«Ոսկանապատի Կենտրոնական կոմիտէն դժուարութեամբ, Նիկոլ Դումանի պնդումին վրայ, համաձայնուեց ինձ վստահել գործը՝ ընդհանուր հսկողութեամբ Աբրահամի (Գիւլխանդանեան): Որոշուեց ռումբ գործածել, թէեւ ես պիտի նախընտրէի տասնոցը: Ռումբի թողած տպաւորութիւնը անելի ցնցող կը լինէր: Ինձ օգնական

Նշանակուեց Գանձակեցի Կռոն:

«Նշանակուած հսկողութիւնը պարզեց, թէ Նակաշիճէն ամէն օր որոշ ժամերին, զինուած պահակներով շրջապատուած, կառքով գնում էր պաշտօնատեղին՝ անցնելով Պարապետ կենդրոնական հրապարակից, ուր փետրուարին շատ հայեր էին ջարդուել Նակաշիճէի մեղսակցութեամբ: Դրա համապատասխան էլ կազմեցինք ծրագիրը: Պէտք է ռումբը թողնէինք ընկերներից մէկի խանութում՝ Պարապետի մօտ: Որոշուած ժամին Կռոյի հետ պիտի մտնէինք ընկերոջ խանութը, ռումբի վրայ կապսիւլ դնելու համար: Ապա Կռոն պիտի երթար պահակ կանգնէր հրապարակ տանող փողոցի անկիւնը՝ սպասելով կառքին, իսկ ես ռումբը պիտի դնէի կեռասի տոպրակի մէջ, իբրեւ թէ քէֆի համար ուտելով ման գայի մայթի վրայ, եւ աչքի տակով նայէի Կռոյի ազդանշանին: Կառքը, որ մօտենար հրապարակին, պէտք է նետէի ռումբը:

«Սակայն, տան հաշիւը շուկայի հաշուին ջարմարուեց: Որոշուած ժամին մտայ ընկերոջ խանութը, բայց Կռոն չկար: Սպասեցի, չէկա: Աւելի երկար սպասելու ժամանակ չկար: Կապսիւլը դրի ռումբի վրայ, ռումբը տեղաւորեցի թղթէ տոպրակի մէջ եւ դուրս եկայ: Փողոցի անկիւնն էլ Կռոն չկար: Մի պահ երեւաց Աբրահամը եւ անհետացաւ: Կարող ես երեւակայել վիճակս: Մանաւանդ որ մի քանի օրէ տառապում էի սաստիկ տիզանթերիայից: Վախենում էի, որ փորի ցաւս կը բռնէ: Դանդաղ շարժուեցի առաջ կաղնիկաղ, իբրեւ թէ մէկ ոտքս ցաւում է եւ դժուարութեամբ եմ կոխում: Քիչ այն կողմ, Պարապետի մուտքի մօտ, մի թուրքի խանութի պէս բան կար, պտուղ էր ծախում: Ահագին զամբիւղով կեռաս էր դրուած մայթի վրայ: Մօտեցայ: Խոշոր, հիւթեղ կեռասներ էին: Համը նայեցի եւ պատուիրեցի թուրքին ինձ համար կեռաս կշռել: Թուրքը սարքում էր կշիռքը, ես էլ, զամբիւղի կողքին կկգած, ընտիր կեռասներ էի ջոկում, մէկ-մէկ էլ բերանս էի գցում՝ աչքի տակից նայելով, թէ արդեօք Կռոն եկա՞ւ. բայց անիրաւր չէր երեւում...

«Մէկ էլ, լայն պողոտայի վերից, լսուեց զիլ սուլոց եւ շառաչով երեւաց ձիաւոր պահակներով շրջապատուած կառքը, որ արագ սլանում էր Պարապետի ուղղութեամբ: Նակաշիճէն էր: Սիրտս սկսեց ուժեղ տրոփել-Կառքը մօտեցաւ-

«Եւմ Փոյթիկի Սուրբ Գէորգ» կանչեցի, թռայ տեղիցս եւ ռումբը ուժով նետեցի կառքի վրայ... Լսուեց մի սարսափելի պայթիւն: Բարձրացաւ փոշի ու ծուխ: Հառաչանք ու ձիչ: Մարդիկ սարսափից փախչում էին ամէն ուղղութեամբ: Օգտուելով խուճապից՝ ես էլ խառնուեցի ժխորի մէջ, եւ ապահով անհետացայ: Մի պահ ուզեցի մօտենալ ջարդուած կառքին, համոզուելու համար, որ հրէջը սպաննում էր, բայց միտքս փոխեցի: Չիմացայ, ինչ էր պատահել...»:

Իսկ պատահել էր ինչ որ պէտք էր որ պատահէր: Նակաշիճէի կառքը կտոր-կտոր էր եղել, չարագործի արհմնլուայ դիակը փռուել էր հրապարակի վրայ, ցեխի մէջ: Թուրք կառապանը ծանր վէրք էր ստացել եւ շուտով մեռել, սպաննուել էին նաեւ Նակաշիճէի սպասաւորը եւ Դրոյին կեռաս ծախող թուրք պտղավաճառը...:

Հայ եկեղեցական կալուածների գրաման եւ հայ-թաթարական կռիւների շրջանում, 1904-1906 թուականներին, Կովկասում շատ ահաբեկումներ տեղի ունեցան, դաշնակցական ահաբեկիչի վրիժառու գնդակից շանսատակ եղաւ Օլթիի ջարդարար Գնդ. Բըկովը, սպաննուեցին Գանձակի փոխնահանգապետ Անտրէէր, գաւառապետներ Պոկուսլաւքին, Շմերլինկին, Փալովը, ոստիկանապետ Սախարովը եւ շատ ուրիշներ, բայց ո՛չ մէկը այնպիսի ցնցող տպաւորութիւն, չգործեց, որքան Նակաշիճէի օրը-ցերեկով կենտրոնական բանուկ հրապարակի վրայ կատարուած ահաբեկումը:

Այդ նոյն օրն իսկ ՀՅԴ Ոսկանապատի Կենտրոնական կոմիտէն հայ ժողովուրդին ուղղեց հետեւեալ կոչը.

«Ռումբը խօսեց:

«Գազազաճ հայ ժողովուրդի վրէժի որոտաճայն խօսքն էր այն:

«Հրէջը, որ քամեց մեր սրտի արինը, ողորմելի դիակ է հիմա:

«Փետրուարի 6-9-ին նահատակուած մեր սիրելիների հոգիները թող հանգիստ առնեն այժմ:

«Ռումբը դատեր շատ ունի դեռ: Վայ նրանց, որոնք կը կամենան այսուհետեւ յօշոտել հայ ժողովուրդը:

«Կորչի՛ բռնակալութիւնը:

«Կեցցէ՛ կովկասեան

ժողովուրդների եղբայրութիւնը:

«Կեցցէ՛ ազատ Դաշնակցութեան կառավարութիւնը»:

11 մայիս 1905

Միաժամանակ, ՀՅ Դաշնակցութեան կովկասեան պատասխանատու մարմինը հասարակութեան եւ Կովկասի պաշտօնէութեան ուղղեց հետեւեալ հրաման-ազդարարութիւնը.

«ՀՐԱՄԱՆ

«Ռուս կառավարութեան կովկասեան վարչութեան

«Հայ յեղափոխական դաշնակցութիւնը սրանով յայտնում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետներին, գաւառապետներին, ժանդարմներին եւ խուզարկու ոստիկանութեան անդամներին, որ այսուհետեւ նրանցից իւրաքանչիւրը անխնայ կերպով կ'ոչնչացուի, եթէ համարձակուի հայերի ձեռքից զէնք խլել, խուզարկութիւններ կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թո՛ղ նրանցից իւրաքանչիւրը, նախքան այդ տեսակ գործ սկսելը, յիշէ Պաքուի նահանգապետ Նակաշիճէին, Գանձակի փոխ նահանգապետ Անտրէէին, գաւառապետներ Պոկուսլաւքուն, Շմերլինկին, Փալովին, ոստիկանապետ Սահակովին, պրիստաներ Նաշչանքուն, Ջաւախովին, Շումակելիչին, Տէր Սահակովին, ոստիկան Սերգոյին, դռնապան Շէկոյին եւ ուրիշ շատերին, որոնք ՀՅ Դաշնակցութեան վճռով մահուան պատժին են արժանացել: Փոխարքայի կողմից 25 ռուբլի ընծայ կամ յեղափոխականի գնդակը-ահա թէ ինչ բան պէտք է ընտրել: Փոխարքան խոստանում է այդ ձեռով վնասուածների ընտանիքներին ապահովել. այդ թեթեւացնում է մեր գործը, որովհետեւ միայն անմեղ ընտանիքների անօգնական դրութիւնը կարող էր դողացնել յեղափոխականի ձեռքը. այժմ վերացած է այդ արգելքն էլ»:

ՀՅ Դաշնակցութեան Կովկասի Պատասխանատու Կենտրոնական Կոմիտէ ՄԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

ՆԱԿԱՇԻՃԷԻ ԱՀԱԲԵԿՄԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ «ԴՐՕՇԱԿ»-Ի ՄԷՋ

ՀՅ Դաշնակցութեան Կովկասեան Բ. Կ. կոմիտէի որոշմամբ՝ Պաքուի նահանգապետ իշխան Նակաշիճէ, փետրուարեան եղեռնի գլխատր հեղինակը, մայիսի 11-24-ին ենթարկուեց տեռորի՝ ռումբի միջոցով:

Նահանգապետը սպաննուեց տեղնուտեղը:
Տեռորիստը ազատ է:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Մահը խլեց մեր շարքերից մեր սիրելի վեթերանին, մեր անզուգական գործիչ-ընկերոջ: Քրիստափոր Միքայելեանը՝ անխոնջ քարոզիչն ու մարտնչողը, զոհ գնաց մի դժբախտ, անողորմ պատահարի...

Ծանր, սասանեցուցիչ աղէտի դիմաց՝ գրիչը հրաժարում է երկար աշխատելուց.- մենք միայն յետոյ մանրամասն կը գծենք մեր մեծ նահատակի ամբողջական դէմքը, յետոյ միայն կը պատմենք հանգամանօրէն այդ հարուստ ու արգասաւոր կեանքը, կ'ասենք, թէ ի՞նչ էր նա Դաշնակցութեան համար, հայ յեղափոխութեան համար, հայ ժողովրդի համար:

Նա Դաշնակցութեան անձնաւորումն էր, նրա մէջ, կարելի է ասել, կենտրոնանում էր մեր կազմակերպութեան ամբողջ պատմութիւնը իր բոլոր յուզիչ մանրամասներով:

Նա հանդէս է գալիս կազմակերպութեան արշալոյսին, տասնուհինգ տարի սրանից առաջ, մասնակցում է նրա հիմնադրութեանը եւ վարպետ ձեռքով կռում է նրա ձակատագիրը: Եւ նա կուսակցութեան առաջնորդն էր տասնուհինգ տարուց ի վեր. նա կուսակցութեան ուղեկիցն է, նրա զարգացման բոլոր շրջաններում, անընդհատ փորձութիւնների բովում, աջողութիւնների ու տագնապի օրերում...

Ամէն անգամ, երբ ազատութեան գործը կաղում էր, երբ ռէակցիան լաց ու վիատութիւն էր տարածում ամէն տեղ հայրենի երկրում, երիտասարդութիւնը նրան էր միշտ դարձնում իր վշտոտ հայեացքը, նրանից սպասում էր նոր խրախուսանք, նոր մարտահրաւեր: Եւ նա իր կարող ու ազդու խօսքով, տոկոն, յարատեւ քարոզներով սեղմում էր ցրուող շարքերը, մղում էր ուժերը դէպի կռիւ ու զոհողութիւն:

Ոչ մէկը հայ յեղափոխական դէմքերից չէ ունեցել այնպիսի տիրական ազդեցութիւն երիտասարդութեան վրայ, ոչ մէկը չէ վաստակել այնքան ընդարձակ եւ այնքան խոր ժողովրդականութիւն Ռուսահայաստանում: Եւ ինտելիգենցիայի, եւ ամբոխի մէջ, եւ ուսանող երիտասարդութեան մէջ, եւ նոյնիսկ բուրժուա հասարակութեան մէջ - բոլոր շրջաններում Քրիստափորը ունէր պատկառոտ ունկնդիրներ,

որոնց առջեւ նա արձարծում էր իր նուիրական պաշտամունքի նիւթը՝ թիրքահայոց ազատութեան դատը:

Նա մարմնացած զգայնութիւն էր այդ րոպէներին, եւ չէր կարելի լսել նրան առանց յափշտակութեան: Պարզ, անպաճոյճ էր նրա պերճախօսութիւնը, առանց կեղծ պաթօսի ու արհեստական շեշտերի. բայց նա միշտ եռում էր մի սուրբ կատաղութեամբ, նրա ձայնը դողում, նրա տանջուած, առաքեալի դէմքը ցնցում էր խօսելու միջոցին, նա ինքն ապրում էր հայկական ճգնաժամը...

Հրապուրիչ էր նա այդ վայրկեաններին... Հակառակորդութիւնը, ցած կրքերը ի սպառ լքում էին, դահլիճը ելեկտրականանում էր եւ բոլորն էլ, համախոհ ու հակառակորդ, պատկառանքով խոնարհուում էին հռետորի գերող անձնաւորութեան առջեւ:

Ի՞նչ էր այդ թովիչ ազդեցութեան գաղտնիքը.

- Հերոսի բարոյական բարձրութիւնը: Նրա լայն զարգացումն ու դրութեան խորունկ ծանօթութիւնը դարձնում էին նրա խօսքը հեղինակաւոր ու համոզիչ, բայց նրա բարոյական հմայքն էր, որ այնպէս շղթայում էր ունկնդիրներին, որ տիրանում էր բազմամարդ լսարաններին, որ զինաթափ էր անում՝ ամենասանզուսպ հակառակորդին անգամ...

Ահա թէ ի՞նչ էր մեր Քրիստափորը. ահա թէ ում կորցրեց ՀՅ Դաշնակցութիւնը: Ազնւութեան ու այլասիրութեան մի տիպար, անխախտ, երկաթէ համոզմունք, անվախ, յանդուգն մաքառող,- ամէն տեղ, ուր նա երեւում էր, ոգեւորութիւն ու հաւատ էր տարածում, ամէն տեղ, նոյնիսկ խոպան ու անապատացած միջավայրերում՝ նա ծաւալում էր մի ճոխ ու բեղմնաւոր գործունէութիւն:

Անզուգական իր կազմակերպչական տաղանդով՝ նա վարպետութեամբ կարողանում էր շահագործել իրեն հանդիպած բոլոր ուժերն ու գործօնները, կարողանում էր ուղղել նրանց դէպի իտէալը-հայկական ազատութեան գործը:

Անհաշտ ու անողոք ներքին ու արտաքին թշնամիների դիմաց՝ նա մի հաշտարար ոգի էր իրայինների շրջանում: Քանի ընդհարումներ է նա խաղաղացրել, քանի՞ գժտութիւններ է հարթել ընկերների մէջ՝ իր բարոյական հեղինակութեամբ...

Ամբողջապէս գաղափար դարձած մի առաքեալ էր նա, մի «տերվիչ», ինչպէս ոմանք անուանում էին նրան



Նիւթական կարօտութիւնն ու գրկանքները ոչինչ էին Նրա համար, եւ այդ միշտ երիտասարդ, միշտ թարմ, կենսալի քարոզիչը մէկ հոգս միայն ունէր՝ կազմակերպութեան բարգաւաճումը, որի համար կրեց երկարատեւ հալածանք ռուս կառավարութեան կողմից, բանտ ու աքսոր:

Դաշնակցութիւնը հպարտ էր իր Քրիստափորով: Չկայ մի դրուագ կուսակցութեան պատմութեան մէջ, չկայ մի բանավէճ ծրագրային կամ մարտավարական խնդիրների մասին, չկայ մի ձեռնարկ, գաղափարական մի կռիւ, ուր մասնակցած չլինի մեր վեթերանը, ուր Նա թողած չլինի իր բնորոշ կնիքը, ուր Նա հարթած չլինի ծանապարհները:

Սակայն Նա միայն կուսակցութեան մարդ չէր: Նա մարդ էր բառիս բովանդակ նշանակութեամբ: Նա խոր յարգանք էր վայելում Կովկասի եւ ռուս, եւ վրացի յեղափոխականների շրջաններում. իսկ երէկ Նրա դամբարանի մօտ ողբում էին Նրան՝ մակեդոնական շարժման ամենահռչակաւոր պարագլուխները: Ո՛չ: Քրիստափորը չէր պատկանում միմիայն հայութեան...

Նա սոցիալիստ էր իր աշխարհայեցութեամբ, իր զգացումներով ու տենպերամենտով, իր ամբողջ կեանքով բայց Նա եւ հայրենասէր էր բառիս ամենավեհ նշանակութեամբ: Նրա հեռաւոր իտէալն էր՝ սոցիալիստական կազմակերպութիւնը համայնական սկզբունքների, ազգերի եղբայրութեան

խարիսխի վրայ. Նա մինչեւ անգամ ընդունարում էր ապագայի մառախուղի մէջ մի այնպիսի դրութիւն, ուր ի սպառ ջնջուած կը լինին ազգայնական առանձնայատկութիւններն ու խտրութիւնները, բայց Նա եւ գիտէր միաժամանակ, որ իւրաքանչիւր մարդ-քաղաքացի պիտի աշխատէ իր հարազատ միջավայրում, պիտի ձգտէ իր սեփական ազգը բարձրացնելու...

Նրա սիրտը արիւնոտում էր ի տես մահաշունչ իրականութեան, ուր հայ ժողովուրդը ստիպուած է կռուել - եւ որպիսի անբաւ զոհողութիւններով - ոչ թէ քաղաքական ու սոցիալական ռեֆորմների համար, այլ ամենատարրական մարդկային իրաւունքները ձեռք բերելու համար եւ ամենասուրբը բոլոր իրաւունքներից - ապրելու իրաւունքը...

Նա գիտակցում էր պատմութեան չարաշուք տնօրինութիւնը, Նա անխռով դիմաւորում էր հայութեան բաժին՝ սեւ, անօրինակ իրականութեան եւ շարունակ կոչ էր անում հայ ինտելիգենցիային, յորդորում էր Նրան դաւաճանութեան սպառնալիքներով՝ կանգնած մնալ քաղաքացիական պարտքի բարձրութեան վրայ, ըմբռնել պահանջներից ամենահրամայականը, խնամել վերքերից ամենացաւոտը, չձգել մի ամբողջ արիւնլուայ ժողովուրդ ի սաստ ձակատագրի:

Նա ինքը գնաց արեան ու զոհողութեան ծանապարհով, Նա ինքը գահավէժ սլացաւ դէպի կեանքի յորձանուտ հոսանքը, ուսկից դարձ չկայ... եւ ընկաւ կէս ծանապարհին, շանթահարուած անարգ պատահարից...

Ընկաւ մեր հին առաջամարտիկը պարտաճանաչ զինուորի մահով, գործի, կռուի հնոցում, գլուխը հպարտ բարձրացրած, որպէս մի դարաւոր կաղնի, անակնկալ կայծակից խորտակուած... եւ այժմ Նա հանգչում է այնտեղ, ուր միայն կարող է հանգչել անխոնջ, մոլեռանդ աշխատաւորը...

Մնաս բարեաւ, անմոռանալի ընկեր եւ առաջնորդ կանգնած սգաւոր գերեզմանիդ առաջ՝ քո զինակիցները կարող են կոչել քեզ.

«Դու զուր չաշխատեցիր, զուր չկռուեցիր»:

Կազմակերպութիւնը, որին քո լաւագոյն ուժերը տուիր, այսօր արդէն ամուր է, անսասան, նուիրուած ժողովրդի ազատագրութեան գործին, տոգորուած

այն անշեջ, սրբազան կրակով, որով դու
ինքդ էիր բոցավառուած: Այն հարիւրաւոր
ու հազարաւոր երիտասարդները, որոնց
ուսուցիչն ու ներշնչողն էիր դու, յաւէտ կը
պահեն քո մեծ յիշատակը իրենց սրտերում
եւ ի կատար կ'ածեն այն նուիրական գործը,
որ քո պաշտամունքն էր եւ քո կտակն էր:

Մնաս բարեան, տարաբախտ ընկեր,
բռնակալութեան ճանկերում սեղմուած՝ քեզ
սիրող ու գուրգուրող երիտասարդութիւնը
խուլ հեկեկանքներով միայն արձագանգ
տուեց քո մահուան բօթին: Հանգչիր
խաղաղութեամբ օտար երկնքի տակ,
մինչեւ որ հայրենի խեղդուկ մթնոլորտը
փոքր ինչ թարմանալով՝ երախտապարտ
սերունդը տանէ, ամփոփէ քո նշխարները
իրենց արժանի սրբավայրում - հայկական
վերածնութեան ռահվիրաների շարքում:
Պատիւ յիշատակիդ, բազմատանջ
ընկեր: Թող քո վեհ դէմքը գերեզմանից
էլ շարունակէ ազդել ու ոգեւորել հայ
մարտիկներին եւ թող բռնակալութիւնը,
որի դէմ դու կռուեցիր ընկերներիդ,
հետ ստոյիկեան անսասանութեամբ,
եւ որը միշտ ձգտում է խեղդել քո
Գործը արեան հեղեղների, մարդկային
սպանդանոցների մէջ,- թող նա գիտակցէ
միանգամ ընդմիշտ, որ քրիստափորներ
ծնող ժողովուրդը երբեք չի մեռնի...

«ԴՐՕՇԱԿ»
Ապրիլ 1905

1907-1915

1907 թուականը կը յատկանշուի ՀՅԴ
Դ. Ընդհանուր ժողովին վերամշակուած
ծրագիրով, այդ ժողովին պիտի
ճշդուէր մեր կազմակերպութեան
պատկերացումները ազգամիջեան
մերձեցման մասին, օսմանեան եւ ռուսական
զոյգ պետութեանց ծիրին մէջ՝ հայութեան
պահանջը հայկական հայրենիքի մը
իրականացման: Նաեւ մարտական գործի
ու մարտավարութեան, ռազմավարութեան
եւ գաղափարախօսութեան
մակարդակներու վրայ յաւելեալ
ամրապնդումով ու ընդարձակումով:
Յատկանշական է նաեւ ստեղծումը
Ինքնապաշտպանական մարմինին, որ
վերազնման գործին պիտի լծուի: Այդ
տարիներուն է, որ պիտի կազմաւորուին
հայկական ազգային բանակին կորիզը
կազմող կամաւորական գունդերը:

«ՏՕՆ Է ԲԱԶՄԱՇԻԱՏ ՄԱՀՈՒԱՆ ԳԷՈՐԳԻՆ...»

Կռուի ընթացքին ամենածանր
վայրկեանը առանց հրացան պայթեցնելու
սպասելն է: Կը դիտենք մեր վրայ յարձակող
անտառը, որ խիտ շարքերով կը շարժի.
արեւի լոյսը կը փայլեցնէ սպաներու թուրերը
եւ զօրքերու սուրիները: Մեզ կը պատէ
տարօրինակ զգացում մը, որ ո՛չ վախ է,
ո՛չ սարսափ. այլ զգացում մը՝ խառնուրդ
անհամբերութեան, սպասումի, վախի
ու խիզախութեան: Մեր զինուորներէն
քիչերը միայն, Գալէի, Սէյտօ Պօղոսի
նման, անտարբեր կրնան մնալ:

Կը տեսնեմ՝ Ղազար ու Տիգրան
հրացանները գլուխներուն պտտցնելով
կռիւ կը կարդան, իսկ Մուքօ ու Մխիկ ինծի
կը յորդորեն. «Յորի՞ ենք նստել, հիւջիւմ
պիտ անել»: «Նստենք հանգիստ. հիւջիւմ
պիտ անենք», կը յարէ Սէյտօ Պօղոսը՝
ծիծաղը դէմքին: Բայց զօրքերը կու գան ու
կու գան, անոնց մէկ վաշտի ծայրը արդէն
հասած է մեր դիրքէն 50 քայլ հեռու. մենք
կը տեսնենք զինուորի ու սպայի քիթն ու
ռէխը, անոնց ոտքերու ձայնը կ'արձագանգէ
մեր ականջներուն մէջ: Սէյտոն մատովը
ցոյց կու տայ հեռուն, որտեղէն ձիաւորները
սրարշաւ կ'ուղղուին դէպի Ս. Գէորգի
կողմը (Սուլուխի ձախին), ու Գէորգի
դիրքին դիմացի գերեզմանոցը: Արդէն
պարզ է, որ ճամբորդ զօրք չէ այս, այլ
խորամանկօրէն զօրասինով մօտեցած է
գիւղին՝ կռիւը կարճատեւ դարձնելու մտքով:

Տասնոցները լեցուցած կը սպասենք:
Կը պայթի Գէորգի տասնոցը, որ նշան է
համազարկի: Կարծես լեռ մըն է կը գլտորի
կուրծքիդ վրայէն. կրակը բացուած է.
բոլորս համազարկ կը բանանք զօրքի
խիտ շարքերուն վրայ: Ինչպէս գերանդին
հասկերը կը հնձէ, այդպէս ալ թուրք
զօրասիներու շարքերէն ոմանք կը փռուին,
ոմանք ճամբէն կ'ելլեն, ոմանք շուարած
ինչ ընելին չեն գիտեր, իսկ մեծ մասը ետ-
ետ կը քաշուի: Մենք արինխում ենք ու
գիտովի նման կը գոռանք, կը հայիոյնք ու
անընդհատ կը կրակենք. կը ջանանք հնձել
մեր դիմացի մարդկային անտառը: Քանի
մը ըրալէ շուարումը կը շարունակուի, յետոյ
փողերը կը հնչեն ու զօրքը ետ քաշուելով
1000 քայլի վրայ կը փռուի դաշտի մէջ: Մեր
աւերակի դիրքին առջեւ գտնուող երեք-չորս
տասնեակը չի կրնար ըստ փողի նահանջել,
ուստի կը մնայ պառկած: Պէտք է հատ-հատ



Նշան բռնել ու խփել այդ մարդիկը: Դժուարը այն է, որ անոնք շատ մօտ են, եւ ուստի անհրաժեշտ է դիրքէն դուրս ելլել ու նշան բռնել. ասկէ զատ՝ ողջը մեռածէն դժուար է զանազանել. ոմանք մեռած ձեւանալով՝ յանկարծ ոտքի կը կանգնին ու կը կրակեն մեր վրայ: Ասոնցմէ ոմանք կը սողոսկեն ու կը մտնեն պատերու տակ, իսկ մեծ մասը կը մնայ պառկած: Կէս ժամի չափ կը տեւէ այս կռիւը, մեզմէ ոչ ոք վնասուած չէ. իսկ թշնամին թողուցած է 90-100 դիակներ: Այժմ ան փորձ կ'ընէ 1000 քայլ հեռուէն ինքզինքը կարգի բերել ու նորէն յարձակիլ:

Որքան որ ճնշիչ է կռուի նախերգանքը, այնքան ալ թեթեւ ու բերկրալի է կռուի արդիւնքը տեսնելը. զինուորը ցնծութենէն կը թռչկոտի. չի ծիծաղիր, այլ վագրի նման աւելի արինուռուշտ կը դառնայ: Ահա այս ցնծութիւնն է որ կը վայելենք մեր դիրքերու տակ թաւալող դիակները դիտելով: Ժամը 11:00 է. ամէն բան լուռ է, ահարկու լռութիւն: Կը տեսնենք՝ թշնամին կը բաժնուի երեք մասերու. մէկ մասը կը յառաջանայ խճուղիի երկու կողմերու փոսերուն միջով, մէկ մասը կ'ուղղուի աջ եւ բաց դաշտին մէջ շղթայ կը կազմէ. երրորդ

մասը այս երկուքի մէջտեղ աւելի խիտ շարքերով ու դանդաղ կը յառաջանայ:

Փողերը կը հնչեն. բոլորն ալ կը սկսին կրակել մեր վրայ. Սողոմ-Գոմոր. ոմանք կը վազեն, ոմանք կը քալեն, ոմանք կը պառկին ու նորէն կ'ելլեն եւ կրակելով առաջ կը վազեն: Տարօրինակ ծայներ կը լսենք, բոցավառ օձախի վրայ աղի ճարճատումներ կամ սուլոցի նման վնկոցներ: Հաճելի չեն այս ծայները, բայց մարդ կը վարժուի՝ երբ նեղն իյնայ:

Մենք ալ հանգիստ չունինք. նորէն Սէյտոն մեքենայ է դարձած, եւ բոլորս արագ-արագ հրացանները կը պարպենք դէպի թշնամին: Հատ-հատ նշան կը բռնենք ու կը խփենք. մին կը պոռայ՝ գլխարկին զարկ, միւսը՝ աջ կողմը, եւ այլն. մին կը հայհոյէ, միւսը սիրտ կու տայ. եւ այս բարեյունական խառնակութեան մէջ՝ ամէն մէկ ճիշ, ամէն մէկ խօսք յստակ կ'ըմբռնուի: Գիտակցութիւնը, սրատեսութիւնը, լսողութիւնը եւ նոյնիսկ հոտառութիւնը գերագոյն աստիճանի կը հասնին:

Հակառակ մեր լարուածութեան ու տենդագին ջանքերուն՝ կարծես թէ անկարող դարձած ենք. թշնամին կու գայ ու կու գայ. ահա լեցուցած է գերեզմանոցը. ահա միւս կողմէն հասած է մեր դիրքերուն առջեւ: Կը տեսնենք, որ գերեզմանոցէն, Գէորգի դիրքէն հազիւ 100 քայլ հեռու, դուրս կ'ելլեն ու կը վազեն դէպի գիւղը, բայց այդ կողմ նայելու հնար չունինք: Մեզմէ 50 քայլ հեռու լեցուած է զօրքը եւ կը լսենք անոնց ծայները՝ «Հա՛ պապամ, հա՛ պապամ, տէ՛ վուրըն, տէ՛ վուրըն»: Ահա փոսերէն դուրս կը ցատկեն ու կը վազեն դէպի մեր կողմը: Հրացանները մէկ կողմ դրած ենք ու կը գործեն տասնոցները. յարձակողները նորէն ետ կ'ընկրկին. մէկ մասը սակայն մեր աջ թեւը կը մտնէ ու գիւղի մարագներն ու տանիքները դիրք կը բռնէ. ասոնք կ'իյնան մեր եւ եկեղեցոյ դիրքին միջեւ, ուրկէ Շէնիկի Ղազարը նեղը կը դնէ զանոնք ու մեր թիկունքը կ'ապահովէ:

Կարծես մեր դէմը եւ աջ կողմը անվտանգ է դարձած. կը նայինք դէպի ձախ ու դէպի ետեւ, այնտեղէն է, որ հրացանները մեր վրայ կ'ուղղուին. կը կանչենք Գէորգը օգնութեան. պատասխանի փոխարէն կը լսենք՝ «Թեալիմ, թեալիմ»: Գերեզմանոցէն արշաւողները բռնած են Գէորգի դիրքը: Կորսուած ենք կարծես, շրջապատուած աներակին մէջ. բայց յոյս ունինք, թէ Գէորգը դիրքը փոխած է եւ շուտով կու գայ մեր

թիկունքը մաքրելու: Այս յոյսով շրջան կը կազմենք ու կատաղաբար կը կռուինք: «Էյօ, կ'ըսես Տրօսքի էլոյին, մենք պիտի յաղթենք, թէ որ Գէորգի դիրքը ետ առնուի. Գէորգին ասա թող հիւզիւմ անի. թէ որ Գէորգ մեռած է՝ դու հիւզիւմ արա եւ մեր թիկունքը մաքրէ թշնամուց»: «Հա, վալլահ», կ'ըսէ այդ առիծը: Հրացան ու տասնոց կը դարձնենք դէպի էլոյի երթալիք ճամբան: Էյօ կատուի թռիչքով ինքզինք կը ձգէ թշնամիին ոտքերուն տակ, պատերու ներքեւէն. թշնամիին համար դժուար է վերէն վար խփել: Բայց հրաշք պիտի ըլլար, եթէ էլոն կարողանար ողջ հասնիլ գիւղին մէջտեղ, ուր հաւաքուած էին մեր ընկերները եւ գիւղացիները: «Էլոն գնաց», սորմոքաց Մուրոն. բայց ան կը սխալէր, էլոն ազդրէն թերթե վերք մը առնելով հասած էր գիւղամէջ:

Մեր վրայ կը կրակեն չորս կողմէ, ոչ թէ հեռուէն, այլ մի քանի քայլի վրայ: «Զարկէք, շուտ զարկէք, սո դիրքը մտան», կ'ըսէ սառնարին Սէյտոն, եւ իրօք քիչ կը մնայ պատի կողքէն թշնամի ձեռք մը բռնէ Միսիկի հրացանի փողը. իսկ պատի վրայէն քանի մը պաշլըղաւոր գլուխներ հրացանները կը կախեն մեր վրայ. տասնոցներ կ'ուղղենք վեր, եւ չաւուշ մը ճակտէն վիրաւոր կ'իյնայ մեր մէջ. անոր դիակը գրաւած է մեր դիրքը: Ողջ մնացողները չեն յանդգնիր իջնել դիրքին մէջ: Պատի միւս կողմէն կը հայհոյեն, «թեսլիմ» կը պոռան, մենք ալ կը փոխադարձենք: Մեր վերջն է կարծես:

Բայց ահա հրաշք է կը կատարուի. կը լսուի էլոյի ձայնը. Գրբրոն ու Տիգրանը մեզ կը կանչեն. թշնամիին մէջ իրարանցում է, մեր պատի տակի ասկեարներու ձայնը լռած է. բան մը կը կատարուի անպատճառ: Այո, եղածը էլոյի հիւճիւմն է. յարձակում կայ ետ առնելու Քիւչիքի տունը (Գէորգի դիրքը). մենք ալ մեր դիրքէն կ'ուժեղացնենք կրակը: Թշնամի կը քաշուի արտերու խոտերուն մէջէն սողոսկելով ու հասնելով գերեզմանոց: «Վալլահ փորձանքից ազատուանք, բայց Գէորգ մեռած է», շշնչաց Սէյտո Պօղոս: Ան փորձառու էր. գիտէր, որ Գէորգ առանց մեռնելու չէր յանձնէր Քիւչիքի տան դիրքը:

Երբ գերեզմանոցէն զօրքը կը յառաջանայ, Գէորգի կողքին երկու աչքերէն վիրաւոր կ'իյնայ Գալէն, կը կուրանայ ու մահատերձ կը դառնայ. Գէորգ կը պատուիրէ Գալէն իջեցնել տանիքէն վար տան մէջ ու ինք կը շարունակէ դիմադրութիւնը. բայց երբ, արագ հրացանաձգութեան

պատճառով, հրացանի սուրման կ'ամրանայ եւ Գէորգ կը ջանայ ուղղել՝ կը վիրաւորուի ձախ ծունկի տակէն, գնդակը անցնելով աջ թիկունքի տակը: Գէորգ կ'ըսէ մնացողներուն. «Ես կ'իջնեմ Գալէի մօտ, դուք դիրքը ամուր պահեցէք»: Փորսող տալով կ'իջնէ տանիքէն, կը մտնէ տուն եւ կիսամեռ Գալէի կողքին կը նստի: Բայց շուտով յուսախար կ'ըլլայ. կէս ժամէն տանիքը կը գրաւեն զօրքերը, մեր կռուողները կը նահանջեն փողոց եւ դիմացի տանիքները դիրք կը բռնեն: Այժմ Գէորգի գլխուն վրայ զօրքն է. ան կը քաշուի գոմի մութ անկիւնը, կը նստի ջրհորի կողքին, երեւի մէջը նետուելու համար, երբ զօրքը ներս մտնէ: Այդպէս կը մնայ, մինչեւ որ էլոն կը հասնի, սիրտ կու տայ տղաներուն եւ հիւզիւմ տալով նորէն կը գրաւէ Քիւչիքի դիրքը:

Քիւչիքի տանիքի տակն էր վիրաւոր Գէորգ Չաւուշը. երեւի կ'ուրախանար, որ մերոնք գրաւած են դիրքը, բայց ուժ չունէր դուրս գալու, ոչ ալ էլոն ու ընկերները ժամանակ ունէին իջնել տեսնելու իր հալը: Կռուի տաք ժամանակը աստուածներ մոռնալը ներելի է գուցէ...

Ինչ որ ալ ըլլար, դրուօթիւնը փրկուած էր. մեր դիրքերը մեր ձեռքն էին, թշնամու երկրորդ թափը կոտրած էր: Բայց այս վիճակը երկար չէր կրնար տեւել: Կէսօրի մօտ նորէն փողերը կը հնչեն, կը սկսի հրացանաձգութիւն. ալ փոշի ու փոթորիկ է, աղմուկ ու ժխոր. գնդակներէն շունչ իսկ առնել հնարաւոր չէ: Սէյտոն ձեռքէն վիրաւորուած է, Միսիկն ալ. ես կատաղած կը պահանջեմ շուտ-շուտ կրակել՝ քանի չեն մեռած. ինծի ալ կը հասնի գնդակէն իմ բաժինս. կ'իյնամ գետին՝ կարծելով թէ մեռած եմ, բայց կը շարժիմ արիւնստած, ու կը շարունակենք կռիւը. եթէ ոչ գերի պիտի իյնանք: Ա՛լ վախ գոյութիւն չունի. կը կանգնինք գնդակներու տարափին տակ ու կը կռուինք, եւ զարմանալի է որ այդ տարափէն ոչ մէկը չի հանդիպիր: Քիւչիքի տունը դարձեալ կը գրաւուի թշնամիին կողմէ եւ մենք կը մնանք պաշարուած:

Արդէն երկու ժամ անցած է կէսօրէն. մեր դիրքը կը նեղնայ, կ'ուզեն ողջ կամ մեռած բռնել մեզ. կը մտածենք թողուլ դիրքը եւ միանալ մնացած խումբին: Մէկ անգամէն անհնար է դիրք փոխելը. կը վճռենք մէկիկ-մէկիկ անցնիլ մազէ կամուրջը: Նախ կը փորձէ Սէյտոն, բայց գնդակներու տարափը կը թափի գլխուն: «Ձեր տիւնը...»,

կ'ըսէ Սէյտո ու կը ցատկէ փողոց. անոր կը հետեւին մէկ-մէկ մեր դիրքի կռուողները. միայն մէկն անշարժ կը մնայ դիրքէն քիչ հեռու: Երեք հոգի ենք մնացած այժմ, ես պիտի անցնիմ. երկար ճամբայ չէ, միայն 20 քայլ, բայց այդ 20 քայլը դժոխք է: Հրացանը մէջքիս ու տասնոցը ձեռքիս՝ «Եւա՛ Ս. Կարապետ» կ'ըսեմ ու կը նետուիմ. տանիքի լանջի աթարներուն կ'ընդհարիմ ու կը գլորիմ. «Կեպերտի» (սատկաւ), կը լսեմ ասկեարներու բերնէն, բայց դեռ սատկած չեմ, կը թռնիմ ուժով ու կ'իյնամ փողոց՝ մինչեւ Սէյտոյի ու ընկերներու մօտ: Կը սկսինք կրակել, որ մնացեալ երկու ընկերներն ալ հասնին մեզի: Անոնք ալ եկան. ազատած ենք մեր մահաբոյր դիրքէն:

*
**

Փոքրիկ Սուլուխի մէկ երրորդը կը գտնուէր թշնամիին ձեռքը. մեզմէ խլած էին մեր դիրքերը, եւ մենք սեղմուած էինք գիւղի ու եփրատի միջեւ: Բայց զօրքը, տարօրինակ կերպով, չի փորձեր մեզ գետը թափել, կարծես ձեւի համար կը կրակէ ու չի փորձեր յառաջանալ. զօրքի եռանդը կտորած է հինգ ժամուան կռիւ վերջ. կէսօրէ ետք ժամը 3:00 է: Դիրքերու նոր բաժանում կը կատարենք եւ վտանգաւորը կը յանձնենք իրարմէ անբաժան էլոյին, Մխիկին ու Խուշոյին. անոնց վրայ կը դնենք Ղազարն ու Տիգրանը՝ տասնեակով մը: Կը մօտենամ գիւղացիներուն՝ գետի եզերքի տուներու մէջ խռնուած. ջուր կ'ուզեմ. կը բերեն կուժով, կը լեցնեն գլխուս, որ կը սրբէ կը տանի ցեխը, արիւնը, քրտինքն ու յոգնութիւնը: Թան կը խմեմ. յոգնածութեան մէջ թանէն ու ծխախոտէն երջանկացնող բան չկայ:

Մինչեւ ժամը 5:00-ը՝ հանգիստ կռիւ է. չեմ կրնար հասկնալ թշնամիին վարամտութեան եւ ջարձակելուն պատճառը. նոր եռանդով կը լեցուինք ու կը մոռնանք պահ մը Գեորգի ու Գալէի կորուստը: Կը շրջիմ դիրքերը, լաւ է ամէն ինչ. չեմ երթար կամուրջի դիրքը. այնտեղ տղերքը կը կռուին եւ թոյլ չեն տար, որ զօրքերը իրարու հետ կապուին: Տարօրինակ բան մըն ալ կը նկատենք. գետի միւս ափը եղած զօրքը իրար կը խփէ, թէ՛ մեզ օգնութեան են եկած Աւրանի կողմէն:

Ժամը կ'անցնի. մեր դիրքերուն մէջ եռանդ կայ: Ս. Գեորգի կողմի 2-300 ձիաւորները կը նստին ձիերը եւ սրարշաւ կը քալեն մեր վրայ. հետեակը չի միանար անոնց: Գնդակները կ'ուղղենք

հեծելագօրքին. սիրուն է՝ երբ ձիերը կը գլորին. 15 վայրկեան չի տեսեր այդ արշաւը. գիւղի տակը չհասած՝ ետ կը դառնան: Արեւը մարը մտնելու վրայ է. հանգիստ կռիւ է: Հեռու խոտերու տակ կ'երեւան սեւ շարաններ, թնդանօթներն են, որ կ'ուղղուին մեր կողմը: Հարց կու տան ինծի. «Ինչ ինչ նոր պալա կու գայ մեր վրայ»: Սիրտ տալու համար կը պատասխանեմ. «Ինչ էլ որ լինի, ուշ են մնացել. մի ժամ որ կռուենք՝ մուրթ կը կոխէ ու դուրս կը թռնինք»: «Թուփի կռիւ կ'ուզենք», կը կանչեն տղերք: Վերջալոյսի հետ կը գոռան թնդանօթները. «Հա պապամ, հա օղլում», կը լսուին ծայրեր: Մենք չենք դիմանար. միայն գետի ափի փողոցը մեր ձեռքը կը մնայ. զինուոր եւ ժողովուրդ տասնեակ մը տուներու մէջ ապաւինած ենք: Ելք չկայ կարծես. բայց ելքը մութն է. թնդանօթները կը լռեն. որո՞ւ վրայ կրակեն, մենք ու զօրքը դրկից ենք դարձած: Սուլուխցիները Ալիջանի Տիգրանի եւ մշեցի Ռուբէնի առաջնորդութեամբ ծուռ ու մուռ փողոցով կը սողոսկին զօրքի կռնակը, կը կրակեն, ու երկու փողոց կը դատարկեն. քիչ մը շունչ կ'առնենք ու կը մտածենք դուրս ելլելու միջոցներու մասին:

Նախքան դուրս ելլելու փորձ ընելը, մեր առաջ դրուած է ծանրակշիռ հարց մը, Գեորգի ու Գալէի մարմիններու ազատումը, մանաւանդ որ մեզմէ ոչ ոք գիտէ՝ անոնք մեռած են, թէ՛ ոչ: Անոնք Քիւչիքի տան մէջ են, որու տանիքներն եւ փողոցները զօրքով են բռնուած: Մեզմէ ոմանք անհնար կը գտնեն յարձակիլ Քիւչիքի տան վրայ եւ ազատել մերիները. բայց ինչ հաշիւ կարող է ըլլալ, երբ Տարօնի առիւծները ինկած են հոն վիրաւոր կամ մահացած: Ֆետայիներ եւ գիւղացիներ քոմ ենք եղած նեղ փողոցի մէջ: Երկու խօսքով կ'ըսեմ. «Մենք պիտի փրկենք Գեորգի եւ Գալէի մարմինները, եւ կամ ատելանք անոնց վրայ, հակառակ դէպքում օլուղ-չոլուղով զըմէնդ էլ գետ պիտի թափուիք»: Ամէնքը միաբերան հիւզիւմ կը կանչեն. առջեւէն գացողն է Շէնիկի Ղազար, հարայ-հրոցով. եւ ամէնքս միակամ, կ'իյնանք զօրքին վրայ՝ տանիքէն, փողոցէն, ամէն կողմէ: Մթութեան մէջ շփոթ կ'իյնայ զօրքին մէջ: Կը գրաւուի քանի մը փողոց եւ Քիւչիքի տունը, որտեղէն Գեորգն ու Գալէն շալկելով կը փոխադրենք գետափի փողոց: Թշնամին, կարծելով՝ որ մենք այդ փողոցով դէպի գերեզմանոց պիտի փախչինք, փողերը հնչեցուց եւ զօրքը սկսաւ կեդրոնացնել գերեզմանոցի

շուրջ: Պէտք է օգտուիլ այս սխալ հաշիւէն:

Այս նպատակով՝ բոլոր գիւղացիները մեծով-փոքրով կը հաւաքենք տուներուն մէջ. բոլոր դիրքերը դատարկուած են կռուողներէ, բացի կամուրջի գլխի եւ Քիւչիւքի դիրքերէն: Կը կանչեմ Ալիջանի Տիգրանը եւ կ'ըսեմ. «Դու պիտի փրկես բոլորը, կամ պիտի զոհուիս բոլորիս համար. մենք պիտի գնանք գետի ափով, դու պիտի մնաս հինգ հոգիով Քիւչիւքի տանիք ժամի մը չափ. անկէ յետոյ ինչ ճամբով կ'ուզես հոգիդ ազատէ»: «Լսում եմ», կը պատասխանէ Տիգրանը անայլայլ: Կը համբուրուինք. ան կ'երթայ իր գործին գլուխ. մեզի կը մնայ գիւղէն դուրս ելլել:

Գէորգի եւ Գալէի մէջտեղ նստած է Շէնիկի Ղազարը, սգաւոր. Սէյտո Պօղոս յենած է պատին: Երբ կը մօտենամ անոր. Սէյտոն կ'ըսէ. «Գալէն պրծել է, Գէորգը դեռ ողջ է»: «Ելէք, պիտի երթանք», կը հրամայեմ բոլորին: Բոլորը կը կանգնին բացի Գալէն եւ Գէորգէն: «Գէորգը կապէք ձիու մէջքի վրան, իսկ Գալէին եփրատը նետէք»: Ծանր էր այս պատգամը, բայց անհրաժեշտ էր շտապել: Ղազար բռնեց իր ամենահին ընկերոջ ձեռքերը, լաւ մը համբուրեց արիւնտ երեսը. չլացաւ. Գրբրոն ալ բռնեց Գալէի ոտքերը եւ ծանր սրտով նետեցին եփրատի մէջ:

Գէորգը կապեցին ձիուն վրայ. իր ցաւերէն նուաղած՝ ան ձայներ կը հանէ, ինչ որ բան կ'ուզէ ըսել, բայց չի հասկցուիր. ժամանակ չկայ, շտապելու է: Յառաջապահ կը դառնայ Շէնիկի Ղազար 10 հոգիով. անոր կը հետեւիմ ես՝ 20 հոգիով. իմ ետեւն է Սէյտո Պօղոսը՝ վիրաւոր Գէորգի հետ. կ'ընկերանան անոր մշեցի Ռուբէն եւ Տիգրան. իսկ ասոնց ետեւէն գիւղի ամբողջ ազգաբնակչութիւնը, ամբողջ գիւղը մօտ 120 տնուոր, բացի 8-10 պառաւ կիներէ եւ 1-2 հիւանդներէ: Ժողովուրդին ետեւէն զինուած կու գան Միսիկ, Էլօ, Մոսիկ եւ ընկերները՝ մօտ 40 հոգի: Պատուէր է տրուած՝ «Հրացաններէն փամփուշտները հանել. հրացանները լեցնել միայն երբ հրաման տրուի: Ով որ առանց հրամանի կրակէ, պիտի մահանայ. թշնամին որքան ալ խփի, պիտի չպատասխանել. ինկողը պիտի իյնայ. ողջ մնացողը պիտի հետեւի առանց իրարմէ կտրուելու, պարանի նման: Ոչ մէկ աղմուկ ու ձայն»:

*
**

Թշնամիի շղթան կտրած-անցած ենք.

գօրքը եւ Սուլուխը մօտ մէկ քիլոմետր հեռու են մեզմէ: Կը կանգնինք բոլորս. տեսնենք ո՞վ է ողջ մնացած եւ ինչ պէտք է ընել: Սուլուխի մէջ տակաւին սաստիկ կռիւ է, կը նշանակէ՝ թշնամին մեզ այնտեղ կը կարծէ:

Կը մօտենամ Գէորգի վիճակը հասկնալու, մշեցի Ռուբէն կը հասկցնէ ինձի, որ դեռ ողջ է եւ կը հասկնայ ամէն բան: Սիրտ տալու համար՝ ըսի Ռուբէնին. «Վերքը թեթեւ է. մէկ շաբաթէն կը լաւանայ»: Դարձայ Գէորգին. «Գիտե՞ս դու, Գէորգ, ազատուած ենք»: Անընդհատ կը համբուրէի զինք: Ան գլխի ինկաւ, նուաղած ձայնով կըրցաւ ըսել. «Դ՞ո՞ւ ես. լմնցած է. ջանդկի մը համար խումբ մի՛ վտանգէ, անցէ՛ք գնացէ՛ք: Էղսոն եւ Վարդգէս՝ քեզի ամանաթ...»: Ժամանակը թանգ էր, պէտք էր շտապել: Գէորգին կամքին հակառակ՝ շալկեցինք զինք եւ առաջ շարժեցանք:

Կը մտածենք մեր ընելիքի մասին, բայց կրակէն ազատած՝ ծովն ենք ինկած: Հոս Մեղրագետը կը միանայ եփրատին՝ կազմելով եռանկիւն մը: Մէկ կողմը Սուլուխն է, միւս կողմերը՝ այդ երկու յորդած գետերը: Ղաշղալթախ գիւղը կը գտնենք միայն վեց տիկ՝ մէկ քալակ կազմելու չափ: Յուսահատ՝ կը փոխենք մեր ծրագիրը. կը պատուիրենք Ղաշղալթախի Գէորգին՝ վերցնել Գէորգ Չաւուշն ու անոր պահապանները, եւ քալակով գետն անցնիլ: Իսկ մենք կը բաժնուինք երկու խումբի. մէկը Սէյտոն կը վերցնէ եւ ետ կը դառնայ դէպի թշնամիին գիծը, միւսը՝ ես կը վերցնեմ...

Կ'ուզէինք լոյսը չբացուած համսիլ Ղզըլաղաճի լեռները. բայց ահա լուսաբաց է, եւ մենք դեռ Մաճնուտ փոքր գիւղի գերեզմանոցն ենք, ուր կը բարձրանայ հինաւոր մատուռ մը: Կը նստինք մատուռի դրանը, գիւղէն հարիւր քայլ հեռու: Տղերքը կերպ մը կը բանան մատուռի դուռը. ներս կը մտնենք...

Վերջալոյսին մատուռը կը թողունք եւ Մաճնուտի Աւագի տունը ընթրելու կ'երթանք: Սուգ ու շիւան, ամբողջ գիւղը մեր շուրջ է հաւաքուած, կիներ կու լան, տղամարդիկ տխուր չիպուխ կը քաշեն: Գէորգը չկայ. Մշոյ աշխարհի հերոսը, անոր դիւցազնը, պահապան հրեշտակը չկայ: Որք ենք բոլորս...

Սուլուխի կռիւը պատահեցաւ 1907 մայիս 27-ին, ու տեւեց մինչեւ մայիս 28 առաւօտեան: Խորհրդաւոր է այդ օրը. անկէ ուղիղ 11 տարի ետք պիտի ծնէր, Գէորգներու արեան շնորհիւ,

Հայաստանի անկախությունը...

ՌՈՒԲԷՆ

Սփորել փրուած գրությունը ՀՅ Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմի տեղեկագիր - նամակներէն մէկն է՝ պարսիկ սահմանադրականներուն հետ Դաշնակցութեան անունով իր վարած բանակցութիւններուն մասին:

**ՊԱՐՍԿԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ԿՈՂՔԻՆ**

Սիրելիք,
Բանակցութիւնները վերջացան, տեւելով 6 օր: Ուղարկում եմ ձեզ արձանագրութեան պատճէնը. աւելացնում ենք նրան մեզ հետ բանակցողների ներկայացուցիչների նամակը, ուր նրանք բացատրում են, թէ ինչ պատճառով արձանագրութեան տակը չեն ստորագրում:

Համառօտ կերպով առաջ բերեմ բանակցութիւնների պատմութիւնը:

Պաքու էի հասել, երբ տեղի ունեցաւ Շահի եւ Մեծլիսի միջեւ կռիւր: Ենթադրելով, որ դա պիտի խանգարի անպատճառ մեր բանակցութիւններին, հեռագրով հարցրի տեղի ընկերներին՝ հարկաւոր չէ՞ արդեօք յետաձգել իմ ուղեւորութիւնս, աչքի առաջ ունենալով դրութեան անկայունութիւնը. եւ երբ Թեհրան հասայ, սահմանադրականների գլուխը շատ խառն գտայ. թէեւ Շահի կառավարութիւնը պարտութիւն էր կրել, բայց նրա կողմնակիցները դեռ շարունակում էին գաղտնի դաւեր լարել սահմանադրութեան դէմ: Կազմուել էին սեւ-հարիւրեակներ, որոնք տեռորի միջոցով ձգտում էին ընկճել սահմանադրականներին:

Իմ գալուս երրորդ օրը տեռորի ենթարկուեց, իր տան մէջ, սահմանադրական շարժման աջակից յայտնի հարուստ Արպապ Ֆրէյտունը. ինչպէս քիչ յետոյ հաստատուեց, հէնց Շահի մտերիմ սենեկապետի ձեռքով: Մի օր անց հրացանաձգութեան ենթարկուեց արտաքին գործոց նախարարը, նոյնպէս իր տան մէջ: Սա եւս յայտնի է իբրեւ ջերմ սահմանադրական: Մեծլիսի անդամները մշտական վախի մէջ էին, շատերը տանը չէին քնում, իրենց կողմից միջոցներ

էին խորհում թէ՛ իրենց անձը եւ թէ՛ սահմանադրութիւնը ապահովելու համար:

Ահա թէ ինչո՞ւ իմ գալուց մի շաբաթ անց միայն, դեկտեմբերի 30-ին, տեղի ունեցաւ առաջին նիստը. հետեւեալ նիստերն էին՝ 31-ին դեկտեմբերի, 2-3-4-ին յունուարի (1908 թ.): Մեզ հետ բանակցող խմբի մէջ մտնում էին՝ 1) Վոսուղ-օտ-Տովլէն, մեծլիսի փոխ նախագահը. խօսում է ֆրանսերէն. եթէ երոպայում չի կրթութիւն ստացել, այնտեղ անպատճառ եղել է: 2) Մոսթեշար-էտ-Տովլէն, պատգամաւոր Թարիզի. նոյնպէս խօսում է ֆրանսերէն: 3) Հաճի Ամին-օլ-Ջարպ, պատգամաւոր ամենահարուստն է նկատուած: 4) Հաճի Մուին-օթ-Թոճար, նոյնպէս շատ հարուստ. Հաճի Ամին -օթ Ջարպի հետ միասին նկատում է սահմանադրականների ֆինանսական ուժը: Գլխաւորապէս սրանք են հոգում շարժման ծախքերը: 5) Հաճի Միրզա Իպրահիմ աղա, պատգամաւոր Թարիզի, յեղափոխական անձոնմանների պարագլուխ: 6) Աղա Սէյիտ Հասան Թաղի Ջատէ, երիտասարդ պատգամաւոր Թարիզի, մեծլիսի ամենաազդեցիկ եւ կարող անդամը: Սա է բանակցութեան նախաձեռնողը. սա եւս յենում է յեղափոխական անձոնմանների ուժի վրայ:

Այս խումբը՝ կազմուած մեծլիսի զանազան խաւերից՝ ներկայացնում է իբրեւ մի կորիզ, որը իր հեղինակութեամբ կարողանում է ուզած ուղղութիւնը տալ գործերի ընթացքին: Նրա հետ են Թեհրանի ամենահեղինակաւոր հոգեւոր պետերը՝ աղա Սէյիտ Ապտուլլան եւ աղա Սէյիտ Մոհամետ Մուճտէյիտները, որոնք համարում են սահմանադրութեան հիմնաքարերը եւ վայելում են Նաճաֆի հոգեւոր ծայրագոյն պետերի վստահութիւնը:

Ինձ հետ միասին ժողովին մասնակցում էր մի հին ընկեր՝ Յովսէփ Միրզայեանը: Եւ ամէն մի ժողովից յետոյ ունենում էինք խորհրդակցութիւն ուրիշ երեք ընկերների հետ, որոնք մինչեւ իմ գալը, անկախ տեղական կոմիտէի կազմից, վարել էին Յովսէփի միջոցով բանակցութիւնները: Դրանք են՝ 1) ձեզ ծանօթ բժիշկ Տէր Ստեփանեանը, 2) Թումանեանների տան ներկայացուցիչ Ալեքսան Թունանը, 3) Ալեք Ջալալեանը - բոլորն էլ լաւ ծանօթ տեղական պայմաններին եւ պարսիկների հոգեբանութեան:

Ժողովներին դրուած էին հետեւեալ հարցերը.

- 1.- Որքանով ապահովուած է սահմանադրութեան նորմալ ընթացքը Շահի հետագայ դաւերի դէմ:
- 2.- Ինչ միջոցներ են ձեռք առնուում անգլօ-ռուսական համաձայնութեան դէմ, որ ժամանակին կարող է սպառնալ Պարսկաստանի քաղաքական անկախութեանը:
- 3.- Ինչ են սպասում սահմանագլխի յանձնաժողովից. ինչ յոյսեր ունեն՝ տաճիկ զօրքը պարսիկ տերիտորիայից հեռացնելու:
- 4.- Ինչ ուժ կարող են Տաճկաստանի դէմ հանել:
- 5.- Ինչո՞ւմ պիտի կայանայ մեր աջակցութիւնը:
- 6.- Իրենք՝ պարսիկները՝ ինչ օգնութիւն կամ դիւրութիւն կարող են մեզ տալ:

Առաջին հարցին պատասխան եղաւ, որ սահմանադրութիւնը հաստատուն հիմքերի վրայ է դրուած եւ որ Շահի ընդդիմութիւնը կարող է միայն խանգարել, դանդաղեցնել կանոնաւոր աշխատանքը, բայց ո՛չ վերացնել սահմանադրութիւնը: Աւելացրին նաեւ, որ արդէն արուած են որոշ քայլեր՝ վերջ տալու համար խառնակութիւններին. հակառակ պարագային իրենց ձեռքի տակ ունեն միջոցներ, որոնցով բռնի կը հարկադրեն Շահին՝ յարգելու սահմանադրութիւնը:

Իսկապէս, հետեւեալ օրը, երկուշաբթի, յայտարարուեց մեզ, որ Շահը վերջնականապէս զիջել է, կրկնելով մի անգամ եւս հաւատարմութեան երդումը կրօնապետների եւ մեճլիսի պատուիրակների ներկայութեամբ:

Երրորդ հարցի վերաբերեալ որոշ բան չասուեց: Չէր երեւում, որ մի բան ծածկելու լինէին. պարզ էր, որ ասելու բան չունէին: Մեր կողմից շեշտուեց անհրաժեշտութիւնը՝ ձեռք բերել աջակցութիւնը որեւէ ուրիշ պետութեան, որը անմիջական կերպով աչք չունենար Պարսկաստանի վրայ. իբրեւ այդպիսին մատնացոյց արուեց Ֆրանսիան: Այդ առաջարկը հաւանութիւն գտաւ եւ հետեւեալ օրը մեզ յայտնեցին, որ այդ ուղղութեամբ աշխատանք է թափում եւ որ եթէ Դաշակցութեան կողմից թէթեւ աջակցութիւն լինի, նրա կապերի շնորհիւ Ֆրանսիան կարելի կը լինի մօտեցնել պարսկական դատին: Դրամական փոխառութիւն կնքելու մասին (սա ամէնից ցաւոտ տեղն է պարսից սահմանադրութեան) խօսք

չեղաւ բոլորովին, սակայն կասկած չկայ, որ Ֆրանսիան հրաժարուում է դրամ տալ Պարսկաստանին՝ առանց Ռուսաստանի երաշխաւորութեան:

Այստեղ հարց դրինք մի քանի անձանց մասին. Մելքոն խանից նրանք վշտացած են երեւում. քանիցս դիմել են նրան նամակներով, բայց պատասխան չեն ստացել, կամ էլ շատ ուշ եւ սաստ: Նրա վրայ ոչ մի յոյս չունեն: Երբ մենք հարց դրինք, թէ ինչպէս կը վերաբերուին, եթէ Մելքոն խանը ինքը պատրաստակամութիւն յայտնի իր կապերով, իր անունով այս կամ այն խնդրում օգնութիւն ցոյց տալ սահմանադրականներին, նրանք պատասխանեցին, թէ ի հարկէ ուրախ կը լինեն: Այս բանը, ուրեմն, ի նկատի ունեցէք: Արշակ խան Գորդեանին բոլորովին բացասաբար են վերաբերում, իսկ Յովհաննէս Խան Մասեհեանին՝ շատ լաւ:

Ֆրանսիայի նման մի չէզոք պետութեան միջամտութիւնը անհրաժեշտ դատուեցաւ նաեւ սահմանագլխի խնդրի տեսակէտից, իբրեւ հակակշիռ Անգլիային եւ Ռուսաստանին. եթէ տաճիկ կառավարութիւնը յամառի, ռուս կառավարութիւնը ինքը կարող է ներս խուժել Ատրպատականի տաճիկ զօրքերը քշելու նպատակով կամ պատրուակով: Երկու դէպքում էլ ձեռք չի քաշիլ այդ նահանգից: Անգլիան «հաւասարակշռութիւնը պահպանելու» համար իր կողմից որոշ շրջան կ'առնի իր հովանաւորութեան տակ:

Երրորդ հարցի վերաբերեալ՝ նրանց կողմից արուեց երեք ենթադրութիւն. 1) Թուրք զօրքերը կը հեռանան գրաւուած վայրերից խնդիրը պարզուելուց եւ վիճելի տերիտորիան Պարսկաստանի սեփականութիւնը ժանաչուելուց յետոյ: Պատերազմի խնդիրը դրանով ուրեմն կը փակուի: 2) Այլեւայլ պատրուակներով գործը կը ձգձգուի եւ պատերազմը կը յետաձգուի, եւ 3) Թուրք կառավարութիւնը բացէ ի բաց կը մերժի հեռացնել զօրքերը. այդ դէպքում պատերազմը անխուսափելի կը լինի:

Երբ կարգը եկաւ այն հարցին (4-րդ), թէ ինչ ուժ կարող են հանել պատերազմի դէպքում Թուրքիայի դէմ, - նրանց առաջին խօսքը եղաւ որ, չվստահելով իրենց բանակի ուժին, գրեթէ ամբողջ յոյսը դրել են անկանոն զօրքերի, Շահսովան, Ղարատաղի, Լոռիստանի եւ այլ ձիաւորների վրայ: Տոյս ունէին նաեւ

ապստամբեցնել շիա ցեղերին, որոնք բնակում են Տաճկաստանում, Պաղտատի մօտերը: Իսկ բանակը կանոնաւորելու մասին չէին խօսում, ապագայի վերաբերմամբ էլ մեծ յոյս չունենալով:

Մենք ստիպուած եղանք նրանց յայտնել, որ անհնարին է թուրք կանոնաւոր բանակի դէմ որեւէ յաջողութիւն յուսալ՝ միայն անկանոն զօրքերին ապաւինած: Աւելացրինք նաեւ, որ ռուս զինուորական իշխանութիւնը ինքը ակնաւծում է թուրք բանակից, որ լաւ զինուած է, մարզուած եւ ունի հմուտ ղեկավարներ: Մեր ապագայի աջակցութիւնն էլ, ինչպէս խօսուել է եւ Մաճիտ-Սալթանէին, կարող է արտայայտուել պարտիզանական կռիւներով, երբ մեր պարտիզանական խմբերի աջակցելու լինեն կանոնաւոր բանակի գործողութիւններին: Այնպէս որ, նոյնիսկ քաղաքական նպաստաւոր հանգամանքներում, Թուրքիոյ յեղափոխական շարժման առաջ բերելիք ներքին դժուարութիւնների պարագային էլ Պարսկաստանը անհրաժեշտ պէտք պիտի ունենայ իր բանակի կանոնաւորման եւ զինման:

Իսկ գալով այն կէտին, թէ ինչ աջակցութիւն կարող է ցոյց տալ Դաշնակցութիւնը Պարսկաստանի եւ Պարսկաստանը՝ Դաշնակցութեան անելորդ ենք համարում կանգ առնել դրանց առթիւ եղած խօսակցութիւնների մանրամասնութիւնների վրայ: Դրանք ամփոփուած են արձանագրութեան մէջ, որ ուղարկուած է նամակիս հետ միասին: Կ'ասենք միայն հետեւեալը.

Կէտերը բաժնուած են երկու մասի.

- 1.- Կէտեր, որոնք վերաբերում են նախապատրաստական շրջանին եւ պարտաւորեցուցիչ պիտի լինէին երկու կողմերի համար էլ հէնց հիմնկուանից.
- 2.- Կէտեր, որոնք կապ ունեն անմիջապէս պատերազմական գործողութիւնների հետ: Դրանց մասին միայն խօսուել է. այդ կէտերը միայն աչքի առաջ պիտի ունենանք. պարտաւորիչ պիտի լինէին մի նոր ժողովից յետոյ, ուր կարող էին դրուել եւ ուրիշ հարցեր, ուր համաձայնութիւն կը կայանար անելի կոնկրետ կէտերի շուրջը:

Այստեղ մնում է իբրեւ միջնորդ Յովսէփ Միրզոյեանը, որ յարաբերութիւն կը պահպանի պարսիկ խնամիների հետ, խորհրդակցելով միւս երկու կամ երեք ընկերների հետ: Տեղական մարմինը

չգիտէ մեր բանակցութիւնների մասին, այդ առթիւ պարտք են համարում նախազգուշացնել ձեզ, որ սխալ թոյլ չտաք ձեզ: Գրէք նախկին հասցէով (բժիշկ Տէր Ստեփանեանին, յանձնել Արբակին):

Մի քանի խօսք ենք ուզում անելացնել, պարզելով մեր տեսակէտը: Մեր կարծիքով, եթէ Թուրքիայի դիրքը միշտ սպառնական մնայ, պարսիկներն անպայման կը ձգտեն մեզ հետ իրականապէս կապուելու: Եթէ Թուրքիան թուլացնի իր ուժերը, նահանջի նշաններ ցոյց տայ, յոյս չունենք, որ նրանց կողմից ակտիւ մերձեցման քայլեր արուեն: Մենք յամենայն դէպս պիտի աշխատենք պարզել ապագայի վտանգի անխուսափելիութիւնը նրանց համար եւ անհրաժեշտութիւնը նպաստել օսմանեան յեղափոխական շարժման՝ հէնց իրենց շահերի տեսակէտից: Մենք մեր կողմից անհրաժեշտ ենք համարում իրագործել մեր հետեւեալ խոստումները, նոյնիսկ անկախ այն բանից, թէ փոխադարձաբար պարսիկները մի շօշափելի աջակցութիւն ցոյց կը տան մեզ, թէ ոչ: Մի կողմ են թողնում 4-րդ եւ 5-րդ կէտերը, որոնք առանց այն էլ կատարուած են:

- 1. Պրոպագանդը եւրոպայում յօգուտ սահմանադրական Պարսկաստանի պէտք է տանել մեր սովորական եղանակով եւ ցոյց տալով, որ տանում ենք: Ձեզ կ'ուղարկուեն տեղեկութիւններ, նիւթեր եւրոպական մամուլին մատակարարելու համար: Դուք էլ կարեւոր կտրօններ (թերթերից)՝ կ'ուղարկէք պարբերաբար այստեղ:
- 2.- Ֆրանսիայի հարցում չենք կարծում, որ առանձին յաջողութիւն կ'ունենանք, քանի որ Ֆրանսիան կապուած է բարեկամաբար թէ՛ Անգլիայի եւ թէ՛ Ռուսաստանի հետ. մի հանգամանք, որ անելի աննպաստ է Պարսկաստանի համար, քան նպաստաւոր: Բայց եւ այնպէս անհրաժեշտ կը լինի հարցապնդումների, տեսակցութիւնների միջոցով ազդել եւ հետեւանքը տեղեկացնել այստեղ: Գուցէ այս խնդրում հարկաւոր լինի Մելքոն խանի միջամտութիւնը, կամ՝ լոկ անունը: Ձեր հեռագրի representant iranien-ը եթէ սա է, անելի լաւ: Պիտի խնդրէինք, որ այ կէտի վրայ առանձնապէս ուշադրութիւն դարձնէք, որովհետեւ սա է ամէնից շատ ազդելու մեր պարսիկ բարեկամների հոգեբանութեան վրայ.

մանաւանդ որ հրապարակի վրայ փոխառութեան խնդիր էլ կայ:

Պարսիկ բարեկամների խոստումներից կարելի էր մեզ համար եւ գործնական՝ ներկայ պարագային հետեւեալները.

- 1.- Մեր ուժերի փոխադրութիւնը Պարսկաստանի ներսում, որ գրեթէ ապահովուած է:
- 2.- Պիտի առանձնապէս աշխատենք, որ իրագործուի խոստումների երկրորդ կէտը՝ արտասահմանից զէնք եւ ռազմամթերք փոխադրելը: Եթէ ուրիշ բան չլինի, միայն այս բանը հերիք է մեզ...

Համրոյրներով՝

Ձեր Ռոստոմ

10 Յունուար 1908, Թեհրան



Պահեստի գունդը տեղաւորուած էր ընդարձակ զօրանոցում, Ղանթարի հրապարակից ոչ հեռու: Ջանազան կողմերից եկող կամաւորներ այստեղ մարզուում էին կառավարութեան նշանակած հայ սպաների ղեկավարութեան տակ: Այստեղ էին հաւաքուում եւ ճակատից հիւանդութեան պատճառով կամ արձակուրդով եկող կամաւորները:

Վերջը Քանաքեռում էլ տրամադրուեցին զօրանոցներ, ուր մարզուեց հինգերորդ գունդը՝ իշխան Յովսէփ Արղուբեանի հրամանատարութեան ներքեւ: Քանաքեռում տեղաւորուեց եւ սպայական դպրոցը, ուր պատրաստուում էին ենթասպաներ կամաւորական գունդերի համար:

**

ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԴԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՌԱՋԻԱՂԱՅՔԸ

Երբ ես հասայ Ալեքսանդրապոլ, արդէն Վարդանը իր կամաւորներով փոխադրուել էր Երեւան: Ալեքսանդրապոլում ինձ համար անելիք չէր մնացել. ես էլ անցայ Երեւան, ուր արդէն գտնուում էր Կարգադրիչ մարմնի անդամ Աբրահամ Գիւլխանդանեանը: Քիչ վերջը եկաւ եւ Նիկոլ Աղբալեանը, ու կամաւորաան խումբերի գործը կենտրոնացաւ Երեւանում:

Երեւանում մենք ունէինք շտաբ՝ 10-12 հոգի պաշտօնեաներով. գրագիր, տնտես, հաշուապահ, սուրհանդակ եւ այլն: Նիկոլի ձեռքը ամփոփուած էր բոլոր խումբերի ընդհանուր հաշուապահութիւնն ու հաշուեքննութիւնը: Գիւլխանդանեանը վարում էր յարաբերութիւնները եւ արտաքին գործերը: Ես ընդհանուր քարտուղար - գործավար էի, իսկ Գիւլխանդանեանի շուտով հեռանալուց յետոյ՝ նրա գործն էլ անցաւ ինձ: Ես շարունակուում էի նաեւ կապը Ազգային բիւրոյի եւ Կարգադրիչ մարմնի միջեւ: Պարբերաբար տեղի էին ունենում լիազումար ժողովներ՝ եւ Կարգադրիչ մարմնի միւս անդամների հետ:

Երբ Արարատեան ջոկատը Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ մեկնեց ռազմաճակատ, պահեստի գունդի հրամանատարութիւնն էլ անցաւ շտաբին. Աղբալեանը դարձաւ պահեստի գունդի հրամանատար, ես նրա օգնականը:

Երեւանում հայ բնակչութեան վերաբերումը դէպի կամաւորները հիանալի էր. ամէն ոք աշխատում էր որեւէ բանով օգտակար եւ հաճելի լինել մեզ: Տեղական թուրքերը խորթ աչքով էին նայում կամաւորներին: Կառավարական հիմնարկութիւններն ու ռուս պաշտօնէութիւնը ընդհանրապէս բարեացակամ էին: Երեւանի զինուորական պետը, լեհական ծագումով բարի ծերունի զօրավար Կրիժեւիչ - մի «պապա» մարդ - հոր պէս սիրում էր մեզ եւ ամէն կերպ աջակցում մեր գործին: Յաճախ Նիկոլին եւ ինձ հրաւիրում էր իր մօտ թէյի եւ արցունքը աչքերին՝ խօսում էր հայերի կրած չարչարանքների մասին. նա որոշ չափով ծանօթ էր լեհահայերի ճակատագրին: Իմ ճեմարանի աւարտական շարադրութեան մի մասը նուիրուած էր Լեհաստան գաղթած իմ հայրենակիցների պատմութեան, եւ նա հետաքրքրութեամբ ականջ էր դնում իմ տուած պատմական տեղեկութիւններին. բայց արեւի էր

լսում Նիկոլի սրամիտ քննական նկատողությունները լեհ հայրենասեր մեծ բանաստեղծ Ադամ Միցկևիչի մասին:

Նոյնիսկ նահանգապետ Տիգենհաուզենի վերաբերումը դէպի հայերը քաղցրացել էր: Ցարի հաւատարիմ այս գերմանացին պատճառ չունէր սիրելու մեզ: Երեւանի նահանգապետարանի դռները անելի բաց էին մահմետականների առջեւ: Բայց որովհետեւ հովը այժմ ուրիշ կողմից էր փչում, Տիգենհաուզենը դարձել էր «հայերի բարեկամ»: Հետզհետեւ բանտից արձակուեցին զանազան առիթներով ձերբակալուած հայերը, եւ նոր խստութիւններ տեղի չէին ունենում հայերի վերաբերմամբ:

Ի նշան երախտագիտութեան երեւանի հայութիւնը առաջնորդարանում մեծ ճաշկերոյթ տուեց ի պատիւ նահանգապետի: Ներկայ էր մեծ բազմութիւն, երեւանի գնդերի պետերը, մեր իսկական բարեկամ զօր. Կրիժեւիչը, հանրային կազմակերպութիւնների վարիչ անդամները՝ առաջնորդ Խորէն սրբազան Մուրադբեգեանի նախագահութեամբ:

Շրջապատուած նահանգապետութեան բարձրաստիճան գործակիցներով, պաշտօնական համազգեստ հագին, կուրծքը զարդարուած ամէն կարգի շքանշաններով՝ Տիգենհաուզեն մուտք գործեց՝ կարծես ռազմադաշտից վերադարձող յաղթական զօրավար լինէր: Ամէնքը ոտքի վրայ՝ ողջունեցին բուռն ծափահարութիւններով եւ ուռաներով: Այս այն մարդն էր, որ դեռ երէկ անխնայ հալածում էր «հայ աւազակներին», որոնցից շատերը այժմ ներկայ էին սրահում:

Նոյն երեւանցիք հասարակական ճաշ տուին ի պատիւ կամաւորների՝ Արարատեան ջոկատի մեկնումի առթիւ: Բազմաթիւ սփռոցներ էին փռած շարքով գետնի վրայ՝ Քանաքեռի դաշտում, բայց երկնքի տակ: Սփռոցների վրայ՝ առատ լաւաշ, պանիր, խորոված, կանաչեղէն, գինի, պտուղ: Հազարաւոր բազմութիւն էր հաւաքուած. հրախրեալները ծալապատիկ նստած էին սփռոցների շուրջը, միւսները դիտում էին եւ մամնակցում ծափահարութեան:

Օրուան հերոսը Դրոն էր: Երեւանի օրիորդները այդ օրը դրօշակ պիտի նուիրէին երկրորդ գունդին:

Ճաշից յետոյ երկրորդ գունդը վաշտ-վաշտ շարուեց դաշտում, վաշտապետների գլխատրութեամբ: Դրոն իր նժոյգի վրայ՝

գնդի առջեւը: Օրիորդաց միութեան կողմից յուզուած ճառ խօսեց Գիմնազիայի տեսչուի օրդ. Եւզենիա Նիկիտիչնա Տէր Սարգսեանը եւ գունդին ընծայեց ասեղնագործուած դրօշակ: Հազարաւոր բերաններ երգեցին.

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Գնա՛, եղբայր, Աստուած քեզ հետ,
Ազգի յոյսը քաջալեր.
Գնա՛, թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Դրոն դարձրեց անհանգիստ նժոյգի գլուխը դէպի կամաւորները եւ մի կարծ, բայց կրակոտ ճառ արտասանեց, որ վերջացրեց դրոյական խօսքերով.

«Տղերք ջան, ձեր դ...ը ուտեմ, մեր եղբայրները մեզ են սպասում, յառա՛ջ»:

Եւ գունդը, յամր քայլերով, յառաջացաւ բազմահազար բազմութեան որոտընդոստ ծափահարութեան, կեցցէների եւ օրհնութեան մէջ: Շատերը լալիս էին ուրախութիւնից:

Եւ սկսուեց Արարատեան ջոկատի պատմական արշաւը դէպի Վասպուրական:

Ես Դրոյին ընկերացայ մինչեւ Իգդիր: Նա մի անգամ էլ փորձեց հրապուրել ինձ, որ միանամ իր գունդին, բայց այդ անհնար էր. ոչ միայն այն պատճառով, որ ես չէի կարող ձգել պարտականութիւններս Կարգադրիչ մարմնի մէջ, այլեւ, զգում էի - որովհետեւ վախենում էի փորձութեան ենթարկել մեր ընկերութիւնը. Դրոյի գործակիցները անանձնական, բացարձակ կերպով պէտք է ենթարկուէին նրա կամքին: Եւ, ճիշդն ասած, ես այնտեղ անելիք էլ չունէի. խումբը այնքան լաւ կազմակերպուած, այնքան նուիրուած հրամանատարական կազմ ունէր, որ նոր մարդու կարիք չկար:

Իգդիր եկաւ եւ Նիկոլ Աղբալեանը, եթէ չեմ սխալում՝ Քեռու գնդի հետ:

Համազասպի գունդը, իր կարգին, էջմիածնում ներկայացել եւ ստացել էր Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե-ի օրհնութիւնը:

Իգդիրում, խմբապետները եւ Կարգադրիչ մարմնի ներկայացուցիչներս մի վերջին անգամ քննեցինք դէպի Վասպուրական արշաւանքի ծրագիրը: Ցայտնի էր արդէն, որ Վանը եւ գաւառները ապստամբ վիճակի մէջ՝ օրհասական կռիւ էին



մղում ճեւտեթի հորդաների դէմ:

Ռազմական գաղաչան (խնդիրը) այսպէս էր ծրագրուած.

Ռուս բանակը պիտի շարժուէր դէպի Վան՝ երկու ուղղութեամբ՝ Չինկիլ-Ապաղա-Բերկրի ճանապարհով եւ Պարսկաստանից՝ Սալմաստ-Վան գծով:

Ինչպէս յիշեցի, մեր սկզբնական ծրագիրն էր միացնել կամաւորական բոլոր գունդերը մէկ ջոկատի մէջ, իբրեւ ռուս բանակի յառաջախաղ մի բռունցք, բայց Անդրանիկը չհամաձայնուեց մտնել Արարատեան ջոկատի կազմի մէջ եւ նախընտրեց մնալ առանձին, Սալմաստի ճակատի վրայ:

Արարատեան ջոկատը հետեւեալ ձեւով կազմակերպուեց.

Երկրորդ գունդ, Դրոյի հրամանատարութեան տակ, շուրջ 400 հոգինոց բաղկացած: Դրոն օգնական չունէր, բայց ունէր հմուտ եւ փորձառու հրամանատարական կազմ՝ նախկին հայդուկներից եւ խմբապետներից:

Երրորդ գունդը, նոյնպէս շուրջ 400 հոգի, Համազասպի հրամանատարութեան տակ (շտաբի պետ կամ օգնական՝ Վ. Վալադեան), իր կազմի մէջ ունէր քաջ մարտիկներ:

Չորրորդ գունդը դարձեալ շուրջ 400 հոգի, հրամանատար՝ հին եւ փորձուած յեղափոխական մարտիկ Քեռին, շտաբի պետ՝ Միշա Արզումանեան:

Բոլոր խումբերի ձիաւոր մասերից կազմուած էր հեծելազօրի մի ջոկատ, Դաշնակցական Խեչոյի հրամանատարութեան ներքեւ:

Բոլոր այս զօրամասերը, միացած Արարատեան ջոկատի մէջ, դրուած էին Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ՝ կազմելով ռուսական

«Վանտքի Օթրեաթ»-ի յառաջապահ մասը:

Առաջին գունդը, շուրջ 1100 հոգի, Անդրանիկի հրամանատարութեամբ, պարսկական ճակատում, անկախ էր Արարատեան ջոկատից, իր մէջ ունէր զինուորական եւ յեղափոխական հմուտ մարտիկներ, ինչպէս Սեպուհը, սպայ Գրիգոր Ամիրեանը, եւ այլն: Անդրանիկը յոյս ունէր՝ առաջինը, իբրեւ յաղթական, մտնել Վան: Այդ յոյսը հետագային չիրականացաւ եւ մեծ դառնութիւն պատճառեց նրան:

Ցաւալի է արձանագրել, բայց պէտք է ասել, որ այնուետեւ Անդրանիկը միշտ զգում էր վերապահ եւ նոյնիսկ ընդդիմադիր դիրքի մէջ հանդէպ կամաւորական շարժման ղեկավար «վարժապետների» - ինչպէս ինքն էր յորջորջում: Նա միշտ իր սրտում պահեց Արարատեան ջոկատի կազմութեան ժամանակ անտեսուած լինելու դառնութիւնը:

Ռուս բանակի յառաջխաղացումը սկսուեց ապրիլի երկրորդ կէսին: Ամբողջ հայութիւնը, լարուած ուշադրութեամբ, սրտատրոփ հետեւում էր դէպքերին: Մենք օրը-օրին հաղորդագրութիւններ էինք ստանում կամաւորական խումբերի գործունէութիւնների մասին՝ թէ՛ մեր թղթակիցներից եւ թէ՛ գլխաւոր շտաբից, որոնք շատ նպաստաւոր էին. մեր կամաւորները իսկապէս օրինակելի քաջութիւն էին ցոյց տալիս:

Մայիս 5-ին, մեր ձիաւորները՝ Դաշնակցական Խեչոյի գլխաւորութեամբ՝ հասան Վան եւ ցնծութեամբ ընդունուեցին մէկ ամիս շարունակ ճեւտեթի դէմ հերոսական դիմադրութիւն ցոյց տուող հայ բնակչութեան կողմից: Վասպուրականի հայութիւնը փրկուած էր:

Վանի գրաման լուրը կայծակի արագութեամբ տարածուեց եւ աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց հայութեան բոլոր խաւերում, ամէն տեղ:

ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

1915-1918

Դաշնակցությունը կրկին նոր մարտահրավերներու դէմ յանդիման էր, անոր ղեկավարութեամբ հայութիւնը մէկ մարդու պէս ծառացաւ եւ համաժողովրդական հերոսական ընդդիմութեամբ մը Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատներուն վրայ թշնամի յառաջխաղացքը կասեցուց: Ու Դաշնակցութիւնն էր նորէն, որ 1918-ի մայիսեան օրերու քաղաքական, զինուորական եւ տնտեսական աննպաստ պայմաններուն մէջ քաջութիւնը ունեցաւ թրքական գրաւումէն զերծ մնացած հայկական հողամասերը անկախ յայտարարելու:

**ՊԱԹՈՒՄԻ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ**

Թուրքերը աշխատել էին հանդիսաւոր քնոյթ տալ խորհրդաժողովին: Խալիլ փաշան մի կարծ ճառով բաց արաւ հաշտութեան խորհրդաժողովը «ինքնորոշուած» Կովկասի հետ, որի ներկայացուցիչներուն ուղղեց «ողջոյնի խօսք»:

Չխենկելին պատասխանեց նոյն իմաստով՝ ակնարկելով, որ այս շարունակութիւնն է Տրապիզոնի խորհրդաժողովին: Խալիլը ուղղեց, թէ Տրապիզոնից յետոյ պատերազմը շարունակուել է, նոր արին է թափուել, թէ այս նոր խորհրդաժողովը նոր պայմաններ ունի: Լաւ հոտ չէր գալիս թուրք պատուիրակութեան նախագահի այս խօսքերից:

Այնուհետեւ Խալիլը, մի քանի ներածական խօսքերով, Սէյմի պատուիրակութեան նախագահ Չխենկելուն յանձնեց մի գոց ծրար, որի մէջ գտնուում էին հաշտութեան պայմանները:

«Գնացե՛ք, քննեցե՛ք եւ շուտափոյթ պատասխան տուե՛ք», ասաց նա եւ փակեց ժողովը:

Շտապեցինք հեռանալ սրահից: Հաւաքուեցինք մեր պանդոկի սրահում: Չխենկելին բացեց ծրարը եւ կարդալ տուեց ֆրանսերէն լեզուով գրուած պայմանագիրը: Մահմետական պատգամաւորները ցնծութեան մէջ էին. նրանց բաժին էր

ընկնում ամբողջ արեւելեան Անդրկովկասը: Վրացիներն էլ շատ տխրելու պատճառ չունէին: Հայերին մտում էին երեւանը, Նոր Պայազէտը եւ Էջմիածինը, ընդամենը 11,000 քառ. քմ: Սեւանայ լիճը, իբրեւ շնորհ, մեզ էր թողնուում: «Ծովային պետութիւն», հեզնում էին մեր դրացիները... Չեով՝ հաշտութեան բանակցութիւնների առաջարկ էր, ըստ էութեան՝ վերջնագիր. նոյնիսկ եթէ պատասխանի ժամկէտ չկար:

Պատգամաւորները լսեցին պայմանները եւ անմիջապէս ցրուեցին՝ «ազգային ֆրակցիաներում, քննելու համար: Մենք էլ խորհրդակցութեան նստանք: Սակայն, ինչ խորհրդակցութիւն... Միայն Խատիսեանը, որ զգացումի մարդ չէր, մի ելք էր փնտռում կացութիւնից: Մեզ մտում էր հետեւել դէպքերի զարգացումին: Թիֆլիսից կամ ռազմաճակատից կտրուած էինք. որեւէ տեղից լուր չէինք ստանում:

Օրերը անցնում էին դանդաղ, անորոշութեան մէջ: Մեր հարեւանները, գիտէինք, ժողովներ էին անում, ինչ որ բանի վրայ էին, մեզանից թաքուն: Թուրքերը սիրալիր էին, բայց անմատչելի: Եռուզեռը հարեւանների մէջ աւելի նկատելի դարձաւ, երբ Պաթում հասաւ մահմետական մի մեծ պատուիրակութիւն, որի մէջ կային Մուսաւաթի պարագլուխներ եւ մի քանի տասնեակ զանազան հոսանքների պատկանող անուանի գործիչներ: Նրանք եկել էին խնդրելու թուրքերից վճռական լինել Կովկասի վերաբերող հարցերում: Պահանջում էին որ թուրքերը գրաւեն ամբողջ Կովկասը:

Թուրքերը առանձին ածապարանք ցոյց չէին տալիս. Պաթումից դուրս՝ նրանք անգործ չէին նստած: Լուր առինք, որ արդէն գրաւել էին Ալեքսանդրապոլը՝ պատրուակելով, որ երկաթուղագիծը դէպի Ջուլֆա՝ իրենց անհրաժեշտ է զօրք ու պարէն փոխադրելու համար: Այլեւս կարելի չէր սպասել: Մեր պատուիրակութիւնը որոշեց, որ ես մեկնեմ Թիֆլիս, տեղեկագիր ներկայացնելու Ազգային խորհուրդին Պաթումի գործերի մասին եւ տեղեկութիւններ ու հրահանգներ բերելու:

Թիֆլիսում պարզուեց, որ թուրքերը իբր թէ հաշտութեան բանակցութիւններ էին վարում, բայց իրօք շարունակում էին պատերազմը: Ռազմաճակատում մնացել էին միայն հայերը, որոնք յամառ կերպով դիմադրում էին: Ազգային խորհուրդը ճիգ չէր խնայում օժանդակելու ռազմաճակատի պաշտպանութեան:

Մթնոլորտը Թիֆլիսում շատ ծանր էր:

Իմ զեկուցումը լսելուց յետոյ, Ազգային խորհուրդը որոշեց պատուիրակութիւն ուղարկել Գերմանիա՝ բժ. Հ. Օհանջանեանին՝ եւ սոցիալ դեմոկրատ Արշակ Զօհրաբեանին՝ գերման կառավարութեան օգնութիւնը խնդրելու համար: Պատուիրակութիւնը, Պաթումի վրայով, գերմանական պատուիրակութեան աջակցութեամբ, պիտի գնար Պերլին: Երեւում էր՝ ծանրակշիռ մի որոշում ունէին եւ վրացիները, որովհետեւ Նոյ ժորտանիան էլ պիտի մեկնէր Պաթում: Ի վերջոյ, ժորտանիային յատկացուած յատուկ գնացքով, Օհանջանեանի եւ Զօհրաբեանի հետ, ես էլ վերադարձայ Պաթում: Քաջազունին եւ Խատիսեանը անհամբեր սպասում էին ինձ:

Ճանապարհին ես առիթ ունեցայ խօսելու ժորտանիայի հետ: Իմ հարցին՝ թէ ինչո՞ւ է գնում Պաթում, անորոշ պատասխան տուեց. բայց յայտնի էր, որ մեր հարեանները ինչ որ բան էին ծրագրում. շուտով յայտնի պիտի ըլլար, որ նրանք գաղտնաբար պատրաստում էին յայտարարել Վրաստանի անկախութիւնը, իբր ծրագրի գլխաւոր գործադրող ունենալով նոյնիսկ ժորտանիան... Յաւ յայտնեցի, որ կարծես յարաբերութիւնները վրացիների եւ հայերի միջեւ գնալով վատանում էին: Ժորտանիան չէր կարող չհամաձայնուել ինձ հետ, բայց բացատրում էր «առարկայական» ձեւով. «Հայերի նաւը ջրասոյգ լինելու վրայ է վրացիները չեն ուզում խեղդուել հայերի հետ...: Դուք պէտք է հասկանաք այս բանը...:

Պաթումում, փաստօրէն ընդհանուր պատուիրակութիւն չէր մնացել: Վերջը պարզուեց, որ մահմետականները աշխատում էին հանդելու թուրքերին, որ մնացող հայկական գաւառներն էլ բաժանուեն իրենց եւ վրացիների միջեւ: «Հայաստան՝ քափութ», ինչպէս ասել էր «Պաթում» թերթի խմբագիրը:

Քաջազունին եւ Խատիսեանը, ամէն յոյս կտրած թուրքերից եւ հարեաններից, իրենց կարգին աշխատում էին գերմանացիների միջոցով փրկել հայերի նաւը: Պաթումից Օհանջանեանը եւ Զօհրաբեանը, գերմանական պատուիրակութեան օգնութեամբ, անմիջապէս մեկնեցին Գերմանիա:

Ես երկար չմնացի Պաթումում: Զեկուցում տուի Թիֆլիսի գործերի մասին, տեղեկացայ Պաթումի վերջին օրերի անցուդարձերին եւ վերադարձայ Թիֆլիս:

Հայկական Թիֆլիսը, կարծես, փոխուեր էր մի քանի օրերի ընթացքին: Անորոշ լուրեր էին հասնում, որ Հայաստանում բռուն կռիւներ էին տեղի ունենում հայերի եւ թուրքերի միջեւ: Ազգային խորհուրդը անվերջ ժողովներ էր ունենում՝ յուսահատ վիճակից ելք գտնելու համար: Պաթումից էլ յոյս չէր մնացել:

Մայիս 26-ին, Սէյմի սրահում, պատրուակելով, որ Կովկասը կորցրել էր իր միանականութիւնը, վրացիները անսպասելի կերպով յայտարարեցին Վրաստանի անկախութիւնը: Յաջորդ օր, Գանձակում, յայտարարուեց Ազրպէյճանի անկախութիւնը:

Հայոց Ազգային խորհուրդի շէնքում շփոթ էր: Ռուսաստանը հեռու, ակեկո՞ծ՝ ներքին քաղաքացիական կռիւներից. Դաշնակիցները՝ անելի եւս: Դրկիցները՝ դաւաճան: Եւ հարաւից թուրք հորդաները, որ սպառնում էին բնաջնջել հայութիւնը:

Յաւէտ անմոռանալի այդ սարսափելի օրերին, հայութեան մէջ արթնացաւ հայկեան ոգին: Արարատեան դաշտում, Արամի, Սիլիկեանի, Դրոյի ղեկավարութեամբ, տրեխաւոր հայ ժողովուրդը, պողպատեայ կամքով, ծառացաւ Վեհիպ փաշայի վոհմակների դէմ: Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի եւ Սարդարապատի հերոսամարտերին, բազմահազար զոհեր տալով, թուրքը նահանջեց:

Միեւնոյն ժամանակ, Թիֆլիսում տեղի էին ունենում ժողովրդական եւ երիտասարդական ժողովներ, ուր բանաձեւեր էին հանում Հայաստանն էլ անկախ հռչակելու մասին: Մասնաւորապէս այդ ուղղութեամբ բռուն եռանդ էին ցոյց տալիս «Աշխատաւոր» թերթի շուրջ խմբուած երիտասարդները: Սրանց մի ժողովում, Կորին Ղազազեանի նախագահութեամբ, ես զեկուցում տուի Պաթումի դէպքերի եւ Ազգային խորհրդում տիրող տրամադրութիւնների մասին: Պաթումից յոյս չէր մնացել. Ազգային խորհուրդը միաձայն չէր. ոմանք ուզում էին անմիջապէս յայտարարել անկախութիւն, ոմանք հակառակ էին Ռուսաստանից բաժանուելու. ոմանք վարանում էին:

«Աշխատաւոր»-ի շրջանակի ժողովը, բռուն ելոյթներից յետոյ, միաձայն քուէարկեց մի բանաձեւ. պահանջում էր անմիջապէս Հայաստանը յայտարարել անկախ, եւ Ազգային խորհուրդն ու կազմուելիք կառավարութիւնը փոխադրել Երեւան:

Յաջորդ երեկոյեան, Ազգային խորհրդի նիստում, մի գեղեցիկ, ներշնչուած ճառով այս միտքը պաշտպանեց Նիկոլ Աղբալեանը: Ժամանակը հասել է, որ հայութիւնը վերադառնայ տուն: Այնտեղ, Մայր Արաքսի ափերին, Արարատի ստուերի տակ, պիտի վերածնի հայոց վեհապետութիւնը:

Ազգային խորհուրդի նիստը տեւեց երկար եւ եղաւ շատ խռովայոյզ: Հայութիւնը դժուարութեամբ էր մարսում Ռուսաստանից անջատուելու միտքը: Ի վերջոյ որոշուեց Հայաստանն էլ հռչակել անկախ: Աղբալեանին յանձնուեց կազմել բանաձեւը: Նա քաշուեց կողքի սենեակը, ու քիչ վերջ դուրս գալով խոր լռութեան մէջ կարդաց հետեւեալ «ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ»-ը.

«Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի եւ Ազրպէյճանի անկախութեան հռչակումով սրբեղծուած նոր դրութեան հանդէպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն ու միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերը՝ կազմել Հայոց ազգային կառավարութիւն, Ազգային խորհուրդը ժամանակատրամաբան ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:

*ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
1918. թ. մայիս 30, Թիֆլիս*

Պահը իրապէս պատմական էր: Բայց ոչինչ կար հանդիսաւոր Ազգային խորհուրդի տրամադրութեան եւ այս յայտարարութեան մէջ: Վերջը միայն, երբ ոտքի վրայ կանգնեց եւ ամրացաւ հանրապետութիւնը, իր գիտակցութեան մէջ պայծառացաւ եւ ըստ արժանւոյն գնահատուեցաւ Հայաստանի անկախութեան յայտարարութեան պատմական այդ քայլը:

Յունիսին, Ազգային խորհուրդը կազմեց Հանրապետութեան անդրանիկ կառավարութիւնը Յ. Քաջազնունու վարչապետութեամբ եւ սկսեց պատրաստուել «դառնալու տուն»: Հայութեան առջեւ բացուեց էր պատմական մի նոր շրջան:

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

ՀՅԴ ԻՆՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1919 թ. աշնան, երեւանում գումարուեց ՀՅ Դաշնակցութեան 9-րդ Ընդհանուր ժողովը: Հինգ տարի էր անցել Կարինի Ընդհանուր ժողովից, եւ հայ ժողովուրդը հիմն ի վեր փոխուել էր: Նոր, կնճռոտ հարցեր էին ծագել: Թրքահայութիւնը բնաջնջուել կամ հողմացրիւ էր եղել: Հայաստանը դարձել էր անկախ պետութիւն: Բազմաթիւ բարդ հարցեր կային լուծուելիք: Ընդհանուր ժողովի գումարումը դարձել էր ստիպողական:

ՀՅԴ Բիւրոն, բազմաթիւ խորհրդակցութիւններից յետոյ, գոյութիւն ունեցող մարմինների եւ պատասխանատու ընկերների հետ մշակեց եւ 1919 թ. մարտ 1-ին ուղարկեց կուսակցական մարմիններին հետեւեալ օրակարգը.

Ա.- ԶԵԿՈՒՑՈՒՄ ԵՒ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

1. Արեւելեան Բիւրոյի, 2. Հայաստանի Բիւրոյի, 3 Կենտրոնական կոմիտէների, 4. Մեկուսի կոմիտէների, 5. խորհրդարանական ֆրակցիայի 6. Կառավարութեան դաշնակցական ներկայացուցիչների, 7. Արտասահմանեան ղեկեացիաների:

Բ.- ՍՈՑԻԱԼ - ԲԱՂԱՔԱԿԱՆ

1. Սահմանադիր ժողով եւ հիմնական օրէնքներ: 2. Արտաքին քաղաքականութիւն, արտաքին գործերու նախարարութիւն: 3. Ներքին վարչութիւն-ներքին գործերու նախարարութիւն: 4. Զօրք-զինուորական նախարարութիւն: 5. Արդարադատութիւն-արդարութեան նախարարութիւն: 6. Հանրային կրթութիւն-ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւն: 7. Հաղորդակցութիւն-ճանապարհների, փոստի եւ հեռագրական վարչութեան



Նախարարություն: 8. Ֆինանսներ եւ ֆինանսական նախարարություն: 9. Հասարակական խնամատարություն - խնամատարութեան եւ աշխատանքի նախարարություն: 10. Պարէնաւորում - պարէնաւորման նախարարություն: 11. Ներգաղթ եւ վերաշինություն: 12. Տնտեսական քաղաքականություն. ա.- Հողային հարց, բ.- Կապիտալ եւ արդիւնաբերություն, գ.- Աշխատանքի պաշտպանություն:

Գ.- ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

1. Նուազագոյն ծրագրի փոփոխություն, 2. Կազմակերպական կանոնագրութեան փոփոխություն: 3. Ազգային թէ միջազգային կազմակերպություն: 4. Կուսակցութեան ֆինանսների կազմակերպություն: 5. Գաղութային կազմակերպությունների քաղաքականությունը եւ նրանց կապը երկրի կազմակերպութեան հետ:

Դ. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔ

1. Դաշնակցութեան արխիւների կարգաւորում: 2. Կուսակցական թանգարան: 3. Կուսակցական հրատարակչական ֆոնտ: 4. Կուսակցականների փոխադարձ ապահովութեան դրամարկղ: 5. Կուսակցական պրոպագանդիստների դպրոց 6. Դաշնակցութեան պանթէոնը: 7. Դաշնակցութեան պատմությունը գրելու խնդիր: 8. Դաշնակցութեան երեսնամեակի խնդիր:

Ե. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾՆԹ. ա.- Բոլոր զեկուցմները պէտք է անպայման լինեն մանրամասն, գրաւոր եւ վաւերացուած կուսակցութեան համապատասխան մարմնի բոլոր անդամների ստորագրութեամբ: Իրաքանչիւր զեկուցման վերջում պէտք է լինի համապատասխան դրամական հաշիւը:

ԾՆԹ. բ.- Լրացուցիչ հարցեր օրակարգի մէջ մտցնելու համար կարելի է ուղարկել մինչեւ օգ. 1, երեւան ՀՅԴ Բիւրոյին:

Ընդհանուր ժողովը բացուելու է 1919 թ. օգ. 15-ին երեւանում: Հրաւիրում են մասնակցելու հետեւեալ մարմինները.-

Ռուսաստան՝ Ղրիմ, Ռոստով, Հիւս. Կովկաս՝ 2 պատգամաւոր, Պաքու՝ 4, Գանձակ՝ 2, Շուշի՝ 2. Զանգեզուր՝ 2, Թիֆլիս՝ 4, Ծովափ՝ Պաթում, Սոխում եւ Սոչիի շրջան՝ 2, Ալեքսանդրապոլ՝ 2,

Երեւան՝ 4, Ղարս՝ 2, Թեհրան՝ 2, Թաւրիզ՝ 2, Վան՝ 4, Էրզրում՝ 2, Մուշ՝ 2, Ալաշկերտ՝ 2, Խարբերդ՝ 2, Սվազ՝ 2, Տրապիզոն՝ 2, Տիգրանակերտ՝ 2, Կիլիկիա՝ 2, Պոլիս՝ 4, Եգիպտոս՝ 2, Պալքաններ՝ 2, Ամերիկա՝ 6, Եւրոպա՝ 1, Խորհրդարանական ֆրակցիա՝ 1, Հայաստանի Բիւրո՝ 1, Արեւելեան Բիւրո՝ 1:

Այն շրջանները, որոնց մարմինները պատերազմի եւ տեղահանութեան պատճառով քայքայուել են, Ընդհանուր ժողովին մասնակցելու համար պէտք է փութան վերակազմուել: Այդպիսի մարմիններից Ընդհանուր ժողովի համար կանոնագրական ցենզ չի պահանջուում:

Եթէ մի որեւէ շրջանում որեւէ պատճառով կարելի չի լինում վերակազմել մարմին, 1914 յուլիսի գոյություն ունեցած կոմիտէների եւ Կենտրոնական կոմիտէների ողջ մնացած անդամները կարող են հաւաքաբար ուղարկել պատգամաւոր:

Ընդհանուր ժողովին եկած պատգամաւորների ծախքերը հոգում են ուղարկող մարմինները:

Խնդրում ենք ներկայ հրաւերը ստանալու մասին անմիջապէս տեղեկացնել մեզ:

Ի դիմաց ՀՅԴ Արեւելեան եւ Հայաստանի Բիւրոների 1919 մարտ 1, Երեւան

*
**

Ամբողջ ամառ, Հայաստանում թէ դուրսը, կուսակցությունը հեւ ի հեւ պատրաստուում էր Ընդհանուր ժողովի: Չենք ուզում այս գլուխը ծանրաբեռնել մանրամասնություններով: Այնքանը ասենք, որ նախապատրաստական աշխատանքները լրացան գրեթէ ժամանակին: Գումարուեցան Ռայոնական եւ Շրջանային ժողովներ՝ քննելու համար օրակարգի հարցերը եւ պատգամաւորներ՝ ընտրելու: Պատրաստուեցին մանրամասն զեկուցումներ եւ հաշուեկշիռներ: Մասնաւորապէս լուրջ աշխատանք կատարուեց ներդաշնակելու եւ միացնելու արեւելահայ եւ արեւմտահայ հատուածներին: Ինձ էր յանձնարարուած զեկուցում ներկայացնել Բիւրոյի հնգամեայ գործունէութեան մասին:

Ժողովը տեղի ունեցաւ երեւանում:

Հետաքրքիր կը լինէր ներկայացնել բոլոր պատգամաւորների ցանկը, ինչ որ հնարաւոր չէ, դժբախտաբար: Ասեմ, որ բացակայ էին այնպիսի կարեւոր ուժեր, ինչպէս Արմէն Գարոն, որ դեսպան էր Ուաշինկթընի, Ա. Ահարոնեանը՝ Փարիզի պատուիրակութեան

Նախագահ, Մ. Վարանդեանը՝
Հռոմի դեսպան, Յ. Քաջազնունին՝
պատուիրակ Ամերիկայում եւ այլն:

Ինձ յանձնուած էր Նաեւ Հայաստանի եւ
արեւելեան Բիւրոների կողմից ընդհանուր
զեկուցում ներկայացնել ՀՅԴ 1914-1919
տարիների գործունէութեան մասին:
Դժբախտաբար, այս պահուս, ձեռքի
տակ չունեմ զեկուցման բնագիրը: Ես
մանրամասնօրէն ներկայացրի վերջին
հինգ տարիների ընթացքին պատահած
դէպքերը եւ կուսակցութեան կատարած
գործեր-Համաշխարհային պատերազմ,
կամաւորական շարժում, Հայաստանի
Հանրապետութեան ստեղծում, եւ այլն:

Ժողովին մէջ երկու հոսանք էր նկատուած
Հայաստանի Հանրապետութեան եւ
կուսակցութեան կազմակերպական ձեւի
մասին, եւ բուն վէճեր տեղի ունեցան
այդ հոսանքների ներկայացուցիչների
միջեւ: Մէկը ուզում էր, կազմակերպական
տեսակետով կենտրոնացնել պետութիւնն
ու կուսակցութիւնը՝ վերջ տալով
ապակենտրոնացման: Այս գաղափարի
մոլեռանդ պաշտպանն էր Ռ. Տէր
Մինասեանը. միւրը՝ ջատագովում էր
ապակենտրոնացման դրութիւնը, որ
եղել էր հայոց պետութեան եւ եկեղեցու
կազմակերպութեան հիմքը դարերի
ընթացքին: Այս տեսակետը պաշտպանում
էի ես: Բուն վէճեր տեղի ունեցան Ռուբէնի
եւ իմ միջեւ: Ճշմտի մեծամասնութիւնը
անցուց մի բանաձեւ, որ հաշտեցնում
էր երկու հակամարտ կողմերը - ո՛չ
կենտրոնացում, ո՛չ ապակենտրոնացում:
Ապակենտրոն Բիւրոների փոխարէն,
կուսակցութիւնը պիտի ունենար միակ
ՀՅԴ Բիւրօ՝ Գործադիրի իրաւունքներով:
Այս իմաստով վերափոխուեց եւ
կուսակցութեան կանոնագիրը:

ՀՅԴ Ծրագրի նուազագոյն բաժնից
հանուեց Ռուսաստանին եւ Թուրքիային
վերաբերող մասը եւ տեղը դրուեց
յօդուած՝ Հայաստանի Հանրապետութեան
մասին: Հանրապետութիւնը ճանաչում
էր տը ժիրէ՝ ողջ հայութեան անունից:

Ընդհանուր ժողովը երկարօրէն
զբաղուեցաւ եւ Հայաստանի ներքին եւ
արտաքին քաղաքական հարցերով, ինչպէս
եւ համակովկասեան բնոյթի խնդիրներով եւ
մանաւանդ Ազրպէյճանի յարձակողական
դիտաւորութիւններով՝ Հայաստանի
դէմ, այլեւ յարաբերութիւններով
Ազգային պատուիրակութեան հետ:

Տեղի ունեցաւ ղեկավար մարմնի
ընտրութիւնը: Ընտրուեց Բիւրօ՝ հետեւեալ
կազմով.- Բժ. Համօ Օհանջանեան, Աքր.
Գիւլխանդանեան, Արշ. Զամալեան, Ռուբէն
Տէր Մինասեան, Գէորգ Ղազարեան,
Սարգիս Արարատեան, Սիմոն Վրացեան:

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

ՀՅԴ-Ի ՊԵՏԱԿԱՆ- ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՃԻԳԸ

Հայաստանի Հանրապետութեան
կեանքում 1919 թ. աշունը առանձնապէս
կարեւոր շրջան եղաւ: Պետութիւնը
այլեւս հաստատուած, ամրապնդուած
էր համարուած: Թուրքիան հեռացել
էր Կովկասից՝ վերականգնելով
Նախապատերազմական սահմանագիծը.
Կարս եւ Սարըղամիշ Հայաստանի ներսում
էին արդէն: Բարելաւուել էին որոշ չափով եւ
յարաբերութիւնները դրացի պետութիւնների
հետ: Գաղթականութիւնը հնարաւորութիւն
էր ստացել վերատեղաւորուել: Երկրի
վարչական մեքենան օրէցօր կանոնաւորում
էր: Տեղի էր ունենում շինարարական
եռուն աշխատանք: Միջազգային
յարաբերութիւններն էլ լաւատեսութիւն
էին ներշնչում: Նախագահ Ուիլսոնը
տրամադիր էր ընդունելու Հայաստանի
հոգատարութիւնը: Եւ ՀՅ Դաշնակցութեան
9-րդ Ընդհանուր ժողովը, աշնան,
տեղի ունեցաւ յոյզերի եւ յոյսերի բարձր
մթնոլորտում՝ որոշելով հայկական
պետութեան ապագայ ձեւը եւ ուղիները:

Դրոն երեւանի զինեալ ուժերի
հրամանատար չէր այլեւս. Հայաստանը
վերաբաժանուել էր նոր վարչական
մասերի, եւ երեւանը, իբրեւ
մայրաքաղաք, դարձել էր առանձին
միաւոր: Դրոն առանձին զօրամասի
հրամանատար էր եւ խորհրդարանի
անդամ: Նա կենդանի կերպով ապրում
էր այն հարցերով, որոնք քննութեան
առնուեցին Ընդհանուր ժողովում:

Քննարկումները եւ ընկերացող
վիճարանութիւնները, յաճախ բուն,
բնականաբար արձագանգ էին գտնում
հասարակութեան այլազան խաւերում:
Իմ պաշտպանած տեսակետին յարեց
երիտասարդութիւնը, մասնաւորապէս
Թիֆլիսի «Աշխատանք»-ի շուրջ հաւաքուած
ընկերները: Այստեղից՝ առասպելը իմ
«ձախ դաշնակցական»-ութեան մասին:

Այստեղից նոյն առասպելը եւ Դրոյի
«ձախ»-ութեան մասին, որովհետեւ նա



էլ, ըստ ամենայնի համաձայն էր իմ ներկայացրած տեսակէտին եւ ամէն գնով պայքարում էր «իթթիհատական քոմիտաճիութեան» դէմ, որով Կորին Ղազազեանը որակել էր Ռուբէնի ջատագոված կենտրոնացման տեսութիւնը: Ասել, թէ Դրոն լրիւ մարսել էր տեսական այդ հարցը, ի հարկէ, ճիշդ չի լինի, բայց, իբր գործի մարդ, շատ լաւ էր ըմբռնել հայկական միջավայրի պահանջները, քաջ ծանօթ էր հայ ժողովուրդը հոգեբանութեան թելադրութիւններին եւ յետոյ, իբրեւ ուղեցոյց-աստղ, նրա առջեւ կանգնած էր միշտ Ռուստոմը: Նա իրաւամբ համոզուած էր, որ եթէ Ռուստոմը ողջ լինէր, պիտի պաշտպանէր ապակենտրոնացումը:

Դրոյին հետ «աշխատատրականներին» միացնում էր եւ ռուսական հարցը: Դրոն ռուսասէր էր բառի լայն, լաւ իմաստով: Գուցէ պատճառը այն էր, որ նա Եւրոպայի հետ գործ չէր ունեցել: Եւրոպական դիւանագիտութեան նա չէր հաւատում, ոչ էլ անկեղծութիւն էր տեսնում հարեւանների մէջ, նա համոզուած էր՝ Հայաստանի եւ հայ ժողովուրդի շահը պահանջում է բարեկամ մնալ Ռուսաստանին՝ կարմիր թէ՛ ճերմակ:

Այդ օրերին շատեր համոզուած էին դրան. այդ պատճառով ալ՝ ցաւագին եղաւ անջատումը...: Ռուսաստանը ինքը նպաստեց, որ ռուսասիրութիւնը հայերի մէջ շուտով ցնդի:

ՃՅ Դաշնակցութեան 9-րդ Ընդհանուր ժողովից յետոյ, հերթի դրուեց Ղարաբաղի հարցը. Դրոյին վիճակուեց կարելոր դեր: Կառավարութեան որոշումով նա իր առանձին զօրամասով անցաւ Զանգեզուր ու Ղարաբաղ, ուր Ազրպէյճանի կառավարութիւնը նահանգապետ էր նշանակել յայտնի դոկտ. Սուլթանովին եւ իր ամբողջ բանակը շարժման մէջ էր դրել կոտորելու համար հայերի յամառութիւնը: Ղարաբաղը, ապստամբուած Սուլթանովի բռնութիւնների դէմ, պատերազմի մէջ էր ազրպէյճանական բանակի հետ, որը հրամանատար զօր. Շիխլինսքիի գլխաւորութեամբ, գրաւուեց Ղարաբաղի կռիւներով: Առիթից օգտուելով՝ պոլշեփկները հիւսիսից, թուրքերի օգնութեամբ մտան Պաքու. տեղի ունեցաւ Ազրպէյճանի խորհրդայնացումը՝ 1920 թուի ապրիլի վերջը: Կարմիր Ազրպէյճանն էլ շարունակեց մուսաւաթականների քաղաքականութիւնը Ղարաբաղի վերաբերմամբ: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարութեան վերջնագրի վրայ Ղարաբաղի հայերը ստիպուեցին անձնատուր լինել:

Դրոն իր ուժերով հեռացաւ Ղարաբաղից: Դեռ նա Զանգեզուրում էր, երբ Կարմիր բանակի աջակցութեամբ, Գորիսի վրայով, Թուրքիա անցաւ Խալիլ Փաշան Ռուսաստանում մարզուած կարմիր

ասկեարներով եւ ռուսական ոսկիով ու ռազմամթերքով բեռնաւորուած ինքնաշարժերով՝ հրաշքով միայն ազատուելով Դրոյի զօրամասի ձեռքից:

Դրոն դեռ Ղարաբաղում էր, երբ Ազրայէժանի խորհրդայնացման յաջորդեց Մայիսեան պոլշեիկեան ապստամբութիւնը Հաաստանում: Դրոն միայն մասնակի կռիւներ ունեցաւ պոլշեիկներին հետ Զանգեզուրում ու Դարալագեազում: Երբ երեւան հասաւ, ապստամբութիւնը գրեթէ հաշուեյարդարի էր ենթարկուած արդէն: Պոլշեիզմի ճնշման պատիւը պատկանում է առաւելապէս Սեպուհին եւ ընկերներին:

Մայիսեան ապստամբութեան հաշուեյարդարին յաջորդեց Զանգիբասարի մաքրագործումը: Զանգիբասարի շուրջ 20 մահմետական գիւղեր, գործիք դարձած թուրք գործակալների ձեռքին, մերժում էին ճանաչել Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը: Պոլշեիկներին ծաշելուց յետոյ, Բիւրօ կառավարութիւնը որոշեց զսպել եւ զանգիբասարցիներին՝ կանոնաւոր զօրամասերի միջոցով: Դրոն բուն կերպով բողոքեց վերջին որոշման դէմ: Զանգիբասարի նուաճման նա, ի հարկէ, հակառակ չէր, եւ համոզուած էր, որ պոլշեիկներին սանձահարելուց յետոյ աւելի դիւրին կը լինի Զանգիբասարի մաքրագործումը. բայց անընդունելի, մլասակար էր համարում կանոնաւոր զօրքի մասնակցութիւնը Զանգիբասարի գրաման: Նա անվիճելի փաստերով եւ իրատեսութեամբ աշխատում էր համոզել, որ բանակի մասնակցութիւնը քաղաքացիական կռիւներում՝ անխուսափելի կերպով կը խախտէ զինուորութեան կարգապահական ոգին, կը բարոյալքէ ու կը տկարացնէ մարտունակութիւնը:

Այդպէս էլ պատահեց: Զանգիբասարը նուաճուեց, բայց թրքական գիւղերի մաքրագործման մասնակցող զօրամասերն էլ բարոյալքուեցին ու գրեթէ կազմալուծուեցին: Մաքրագործումը անխուսափելի կերպով կապուած էր թալանի եւ հարստահարութիւնների հետ...

Դրոն գիտէր այս եւ թոյլ չտուեց, որ իրեն ենթակայ զօրամասերը մասնակցէին Զանգիբասարի գործողութեան: Եւ հետագայ դէպքերը ցոյց տուին, թէ որքան իրաւացի էր Դրոն, երբ միայն Սուրմալուի ճակատի վրայ, ուր գործում էին Դրոյի զօրամասերը, հայ բանակը ընդունակ եղաւ վճռական հակահարուած հասցնելու թշնամուն:

Մայիսեան ապստամբութիւնը եւ «Զանգիբասար օպերացիա»-ն ներսից եւ Կարմիր բանակի ճնշումները հիւսիսից ու ռուս-թրքական գործակցութիւնը Հայաստանի դէմ, նախապատրաստեցին հայ-թրքական պատերազմն ու Հայաստանի խորհրդայնացումը, դէպքեր, որոնց մէջ Դրոյին վիճակուեց առաջնակարգ դերակատարութիւն ունենալ:

Պէտք չէ մոռնալ, թէ ինչ ժամանակաշրջան էր 1920 թուականի ամառը: Հայաստան արդէն կազմակերպուած եւ միջազգային ճանաչում ստացած պետութիւն էր: Օգոստոս 10-ին, Սեւրում, մեծ պետութիւնների շարքին, Հայաստանի պատուիրակն էլ ստորագրեց Խաղաղութեան դաշնագիրը Թուրքիայի հետ, որով Հայաստանի Հանրապետութիւնը ամբողջացած՝ դառնում էր անկախ ազգերի համակեցութեան իրաւատէր անդամ: Թուում էր, թէ հայ ժողովրդի դարաւոր իղձերը իրականանում էին:

Միաժամանակ, սակայն, նիւթում էր մեծ դաւը Հայաստանի եւ հայ ժողովրդի դէմ: Քրեմլի իշխանաւորները մի կողմից յոյսերով էին օրօրում հայերին՝ ճանաչելով անկախութիւնը, միւս կողմից Թուրքիայի հետ կնքում էին գաղտնի դաշինք, որի մէկ սլաքը ուղղուած էր Հայաստանի դէմ:

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

1920-1926

Ինկած «թրքական սալին եւ պոլշեիկեան մուրժին» միջեւ՝ Հայաստանի վերջին կառավարութիւնը հակադրուեցաւ, 3 դեկտեմբեր 1920-ին իշխանութիւնը յանձնել հայ համայնավարներուն: Յեղկոմի առաջին ամիսներու դաժան վերաբերումը, անոր կողմէ խախտումը Հայաստանի կառավարութեան տրուած պաշտօնական խոստումներուն, առիթ տուին 1921 փետրուարի համաժողովրդական պոռթկումին: Ու Դաշնակցութիւնը քաշուեցաւ հայ պետական կեանքէն: Ան, որպէս կազմակերպութիւն, ֆիզիքապէս հեռացաւ Հայաստանէն՝ մնալով որպէս մտայնութիւն եւ գաղափարաբանութիւն:

1921-էն կը սկսի Դաշնակցութեան սփիւռքահայ գործունէութեան շրջանը՝ հիմնական նպատակ ունենալով սփիւռքահայ զանգուածներու հայապահպանումը եւ հասնող սերունդներու հայեցի դաստիարակութիւնը,

Դաշնակցութիւնը հայ գաղութներուն մէջ զարկ տուաւ դպրոցական եւ մշակութային գործին, մամուլին, պատանեկան եւ երիտասարդական շարժումներու ստեղծման: Ան դրական կերպով սատարեց գաղութներու ներքին կազմակերպման եւ ազգային մարմիններու կազմութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Դէպքերը արագօրէն զարգանում էին: Նոյեմբերի 30-ին, կէսօրից յետոյ, կառավարութիւնը մի կարճ նիստում քննեց Լեգրանի դրած հարցը եւ եկաւ եզրակացութեան, որ Հայաստանի խորհրդայնացումը անխուսափելի է, եւ երկրի ու ժողովրդի կենսական շահերը պահանջում են այդ կատարել առանց ցնցումի եւ արինահեղութեան: Բայց վերջնական որոշում տալուց առաջ վճռուեց հարցը քննել նաեւ կուսակցութիւնների եւ խորհրդարանական խմբակների ժողովներում:

Նոյեմբեր 30-ի գիշերը, արտաքին գործոց նախարարութեան առանձնասենեակում, տեղի ունեցաւ ՀՅԴ Բիւրոյի, Հայաստանի Կենտրոնական կոմիտէի, խորհրդարանական հատուածի, կառավարութեան անդամների եւ մի շարք պատասխանատու ընկերների համագումար նիստը:

Սկզբում ընդհանուր տրամադրութիւնը անհաշտ էր: Իրար յետեւից խօսեցին ընկերներ Հ. Օհանջանեանը, Ս. Արարատեանը, Ա. Չիլինգարեանը, Վ. Նաւասարդեանը եւ այլք. բոլորն էլ անհանդուրժելի էին համարում Լեգրանի պահանջը եւ առաջարկում էին անմիջապէս զէնքի դիմել՝ երկիրը պոլշեիկեան նուաճումից պաշտպանելու համար: Նրանք հերքում էին այն կարծիքը, թէ հայ զինուորը չի կռուի ռուսի դէմ. Հայաստանի անկախութեան հմայքը այնքան զօրաւոր է, որ հայ զինուորը կը կռուի բոլոր թշնամիների դէմ: Քաղաքացիական կռիւր անխուսափելի է, վաղ թէ ուշ տեղի պիտի ունենայ. աւելի լաւ է հիմա ընդունել: Թրքական վտանգ. թուրքերը չեն խփի մեր թիկունքին. նրանց համար էլ օգտակար է հակապոլշեիկ Հայաստանի գոյութիւնը: Ոմանք համոզուած էին, որ յաղթող դուրս կը գանք. ուրիշները հնարաւոր էին համարում մեր պարտութիւնը, բայց

գերադասում էին դիմադրել եւ տեղի տալ միայն բռնի ուժի ճնշման տակ: Ժողովականներից ոմանք, ինչպէս Յ. Քաջագուննի, Դրօ, Ռուբէն Տէր Մինասեան եւ այլն. հակառակն էին պնդում եւ կռիւր պոլշեիկների դէմ համարում էին աղէտաւոր, որովհետեւ շատ հաւանական էր, որ կռուի դէպքում կը ստեղծուէր երկու ճակատ, իսկ Հայաստանը անկարող էր



միաժամանակ կռուել եւ պոլշեիկների, եւ թուրքերի դէմ: Երկիրը կարօտ էր հանգստի. եթէ պոլշեիկները կարող են տալ այդ հանգիստը, թո՛ղ տան:

Բացի այդ, նախորդ զինուորական նախարար Ռուբէն Տէր Մինասեանը յայտնում էր, որ հայ զօրքը ի վիճակի չէ որեւէ պատերազմ վարելու, իսկ ներկայ զինուորական նախարար Դրոն աւելացնում էր, որ առհասարակ, որ հայ զօրքը չի կռուի ռուս զօրքի դէմ:

Ես էլ էի համոզուած, որ մենք խոհեմութիւնը պիտի ունենայինք խուսափելու նոր պատերազմից, այն էլ Ռուսաստանի դէմ: Քանի մեր հաշիւները պոլշեիկների հետ ընդհանուր լեզու գտնելու մասին սխալ էին դուրս եկել, պէտք էր հրաժարուէինք իշխանութիւնից յօգուտ պոլշեիկների՝ գէթ ձեւականօրէն ապահովելով Հայաստանի անկախութեան գաղափարը:

Վիճաբանութիւնները չափազանց բուռն էին ու երկարատեւ: Կէս գիշեր էր արդէն, երբ ինձ կանչեցին ուղիղ հեռագրաթելի մօտ: Ալեքսանդրապոլից մեր հաշտարար պատուիրակութեան նախագահ Ա. Խատիսեանը հաղորդեց, որ թուրքերը ներկայացրել են հաշտութեան պայմանները եւ տուել են վերջնագիր՝ 48 ժամում ընդունելու կամ մերժելու: Ներկայացուած պայմանները չափից աւելի ծանր էին: Խատիսեանը խնդրում

էր առանց ուշացնելու տալ հրահանգներ, որովհետեւ թուրքերը շատ էին շտապեցնում: Երեւանի դէպքերը, որոնց մասին նրանք զարմանալի կերպով լաւ էին տեղեակ, ջղայնացնում էին նրանց: Թուրքերը, ըստ երեւոյթին, վախենում էին իրենց դաշնակից պոլշեփկների խաղերից, ու շտապում էին օր առաջ ստորագրել հաշտութիւնը:

Երբ ես վերադարձայ հեռագրատնից ու կարդացի Քեազիմ Քարապետի վերջնագիրը եւ հաշտութեան պայմանները, սենեակում մի պահ տիրեց խորին լռութիւն. այդքան ծանր պայման ոչ ոք չէր սպասում: Առանձնապէս սաստիկ վրդովում առաջ բերեց Սուրմալուի պահանջը: Այդ նշանակում էր, որ տաճիկները չէին հաշտուում անկախ Հայաստանի գոյութեան հետ: Այդ նշանակում էր նոյնպէս, որ քաղաքացիական կռիւր կարող էր նրանց առիթ ծառայել ներխուժելու Հայաստան...

Որքան բուռն լինէին հետագայ վիճաբանութիւնները, թուրքերի վերջնագիրը փաստօրէն վճռեց խնդիրը. ճշող մեծամասնութիւնը յանգեց եզրակացութեան՝ որ Լեզրանի վերջնագիրը պէտք էր ընդունուէր, բայց պէտք էր ընդունուէր նաեւ Քարապետի վերջնագիրը. այլապէս, մինչեւ պոլշեփկների հասնելը՝ երեւանը կը գրաւուէր թուրք ասկերանների կողմից:

Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրելով՝ մենք փրկեցինք ժողովուրդը նոր փորձութիւններից, նոյնիսկ եթէ դրանով հարուած հասցրինք մեր վարկին:

Միւս օրը, դեկտեմբեր 1-ին, մօտս եկաւ խորհրդային միսիայի պաշտօնեայ Աշոտ Յովհաննիսեանը, որ Լեզրանի յանձնարարութեամբ առաջարկեց արձակել Հայաստանի բանտերում պահուող համայնավարների: Ես նման պայման դրի Ազրպէյճանի եւ Ռուսաստանի բանտերում գտնուող դաշնակցականների համար: Երկուստեք ընդունուեց, գրաւոր ձեւակերպուեց ու ստորագրուեց, որ դեկտեմբեր 2-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Հայաստանի, Ազրպէյճանի ու Ռուսաստանի բանտերից պիտի ազատ արձակուէին բանտարկուած բոլոր համայնավարներն ու դաշնակցականները: Արդարադատութեան նախարարի օգնական Գրիգոր Չուբարին յանձնարարուեց Ա. Յովհաննիսեանի հետ գործադրել այդ որոշումը: Մենք կատարեցինք մեր խոստումը, բայց պոլշեփկները,

ըստ սովորութեան, խաբեցին...

Դեկտեմբեր 1-ի երեկոյեան, խորհրդարանի շէնքում տեղի ունեցաւ դաշնակցական ֆրակցիայի վերջին նիստը, մոմի լոյսի տակ (ելեկտրականութիւնը մարած էր), պատգամաւորների եւ կուսակցական պատասխանատու գործիչների մասնակցութեամբ: Կառավարութեան եւ Բիւրոյի ներկայացուցիչների զեկուցումներից յետոյ գրեթէ նոյնութեամբ կրկնուեցին նախորդ օրուայ վիճաբանութիւնները, բայց այս անգամ աւելի թոյլ էին հնչում կռուի կողմնակիցների յորդորները: Քուէարկութեան արդիւնքը եղաւ 7 քուէ Լեզրանի առաջարկի դէմ, 22՝ թեր...

Մինչ տեղի էին ունենում այս վիճաբանութիւններն ու խորհրդակցութիւնները, Դրոն ու Հ. Տէրտէրեանը բանակցում էին Լեզրանի հետ, եւ դեկտեմբեր 2-ի կէսօրին համաձայնագրի նախագիծն արդէն պատրաստ էր: Կառավարութիւնը քննեց այն եւ որոշ փոփոխութիւններով հաստատեց: Կառավարութեան մէջ եւս առանձին վէճի առարկայ եղաւ այն կէտը, որ խորհրդային իշխանութեանը պարտաւորում էր երաշխաւորել Մայիսեան պոլշեփկեան ապստամբութեան դէմ գործած անձանց կեանքը:

Մենք այնպէս էինք, որ ոչ միայն սրանց կեանքը պէտք է ապահովուէր, այլ, առհասարակ, մինչեւ դեկտեմբեր 2-ը պոլշեփկների դէմ պայքարած ոչ մի քաղաքացի կամ զինուորական՝ պէտք չէր պատժի եւթարկուէր: Ապա, Լեզրանը համաձայնուում էր երաշխաւորել միայն դաշնակցականների անձեռնմխելիութիւնը, իսկ մենք պահանջում էինք պատժից ազատ համարել բոլոր կուսակցութիւնների անդամներին: Վերջին կէտում Լեզրանը զիջեց եւ ընդունեց, որ, պայմանը վերաբերուի բոլոր ընկերվարական կուսակցութիւններին:

Ի վերջոյ, դեկտեմբեր 2-ի կէսօրից յետոյ, ստորագրուեց համաձայնագիրը: Պայմանաւորուեցինք, որ կառավարութիւնը դեկտեմբեր 2-ի գիշերուայ ժամը 12:00-ին իշխանութիւնը կը յանձնի Դրոյին, իբրեւ բանակի վերին հրամանատարի եւ սա՝ իրեն խորհրդական ունենալով Լեզրանի ներկայացուցիչ Լ. Սիլինին՝ կը կառավարէ երկիրը մինչեւ Յեղկոմի երեւան հասնելը:

Դրանից մի օր առաջ, դեկտեմբեր 1-ին,

Պաքում Հայաստանի խորհրդայնացման առթիւ Սովետի հանդիսաւոր նիստում, Ագրայէճանական «Սովետական Ռեսպուբլիկայի Ժողովուրդային Նախագահ» Ն. Նարիմանովը, «յանուն Ագրայէճանի կառավարութեան» յայտարարութիւն է անում, որ Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը «յանձնուում են եղբայրական Հայաստանին»: Այդ առթիւ մեծ ճառ է խօսում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Օրջոնիկիձէն, որ փառաբանում է Նարիմանովին՝ «պատմական մեծ ակտ»-ի համար:

Մինչ տեղի էին ունենում այս դէպքերը, քաղաքից արդէն սկսել էին հեռանալ իրենց վտանգուած համարող գործիչները: Այդ հանգամանքը ստեղծեց ջղային տրամադրութիւն, որի հետեանքով երեւանից հեռացան նաեւ այնպիսի մարդիկ, որոնք բնաւ պատճառ չունէին պոլշեիկներից վախենալու:

Մենք ցրուեցինք մեր տները: Քաղաքը լուռ էր ու խաղաղ:

Այս էր ահա, որ հետագային պոլշեիկները յայտարարեցին իբրեւ «բանտորագիւղացիական արինտոտ յեղաշրջում»...

*
**

Երեկոյեան մօտս եկան Հայր Աբրահամը եւ Պապաշան՝ անսովոր կերպով տխուր: Անխօս նստեցին: Լուռ էի եւ ես՝ իմ աշխատանքի սեղանի մօտ:

Յանկարծ, դրսից ներս խուժեցին «Ինտերնացիոնալ»-ի հնչիւնները: Մեր զինուորական նուագախումբն էր, որ դեռ առաւօտեան «Մեր Հայրենիք» էր նուագում: Նուագի հետ, մեր ականջին հասնում էին ամբոխի աղաղակները: Յստակ կերպով լսում էր.

«Սա՛ է վերջին եւ վճռական կռիւը մեր...»:

Բանտից նոր արձակուած պոլշեիկներն էին, որոնց պիտի հիւրասիրէին խորհրդարանի սրահում:

- «Վերջին եւ վճռական կռիւը», - մտախոտ արտասանեց Հայր Աբրահամը եւ գինու բաժակը մօտեցրեց շրթունքներին:

- Ո՛չ վերջին, ո՛չ վճռական կռիւ եղաւ մեր կռիւը, Հայր Աբրահամ, պատասխանեցի ես: Մենք կռուել ենք, կռուեցինք եւ պիտի կռուենք: Պէ՛տք է կռուենք, դժբախտաբար: Ո՛չ Եւրոպա, ո՛չ Ամերիկա եւ վախենում եմ՝ նաեւ ո՛չ Ռուսաստան: Յիշեցէք իմ հայրենակից Քամառ

Քաթիպայի խօսքերը. «Ի՛նչ էք փնտռում հիւսիսում, այ խելացնոր, գիժ հայեր»:

Շատ չէր մեր փնտռածը. այն՝ որ ամէն ազգ, մեծ թէ փոքր, ունէր: Եւրոպա եւ Ամերիկա խոստացան եւ չտուին: Պիտի տային «ամբոխները խելագարուած...»:

ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Մենք մինչեւ լոյս չընեցինք:

Դեռ մութ էր, երբ Քանաքեռի բարձունքների վրայ որոտացին հրացանի համազարկերն ու գնդացիները, որոնց քիչ յետոյ միացան եւ թնդանօթները: Սկսուեց... Որոտը մերթ մօտենում էր, մերթ հեռանում: Եւ, յանկարծ, հրացանները թնդացին եւ քաղաքում: Բոլոր կողմերից տկտկում էին գնդացիները, հատ-հատ եւ համազարկերով դղրդում հրացանները: Կոնդը դարձաւ կռուի վայր: Ու մի պահ՝ ողջ երեւանը վերածուեց ռազմադաշտի...

Արդէն լուսանում էր: Յանկարծ սաստիկ հրացանաձգութիւն լսուեց մեր տան կողքին: Ձորին կողմից եկող ապստամբները յարձակուել էին հարեան տան մէջ դիրք բռնած պոլշեիկների վրայ եւ կարծ կռուից յետոյ զինաթափ արել: Սպանուել էր մի ռուս զինուոր, բոլոր հայերը անձնատուր էին եղել, իսկ հրամանատարներն ու թուրքերը փախել էին:

Կոնդը ազատ էր: Ամբողջ քաղաքը դեռ շարունակում էր թնդալ: Հրացաններն ու գնդացիները գործում էին անընդհատ: Ո՛ւր էին պոլշեիկները, ո՛ր ապստամբները - յայտնի չէր: Արդէն լուսացել էր, եւ ժողովուրդը խռնուած դռների առջեւ, պարիսպների տակ՝ սպասում էր կռուի վախճանին:

Ընկերոջս հետ դուրս եկանք փողոց:

Պայծառ, հրաշալի առաւօտ էր: Երկինքը՝ անամպ, օդը՝ վճիտ. կտուր ու փողոց ծածկուած՝ ձեան ճերմակ սաւանով: Կոնդի բարձունքից երեւում էր անծիր Արարատեան դաշտը՝ մխացող գիւղերով, իսկ հեռում՝ վեհափառ Մասիսը...

Մի խումբ ընկերներով իջնում ենք քաղաք: Արամեան փողոցի հէ՛նց գլխից բացում է մի սրտաշարժ տեսարան: Փողոցում խռնուած բազմութիւնը ցնծում

է: Տներն արդէն զարդարուած են եռագոյն դրօշակներով: Հրացանաձգութիւնը դեռ չէ վերջացել, բայց արդէն անզօր է խեղդելու կեցցէների որոտն ու «Մեր հայրենիք»-ի հնչիւնները: Զինուորական նուագախումբը, որ դեռ երէկ «Ինտերնացիոնալ»-ն էր հնչեցնում, այսօր, ժողովրդի խանդավառ ոգեւորութեան մէջ, ազգային հիմնն է նուագում:

Փողոցում, ամէն քայլափոխին, ծանօթ-անծանօթ ջերմօրէն ողջունում է, սեղմում մեր ձեռքը, համբուրում.

- Անցած լինի... Անցած լինի...

Շնորհաւոր Զատիկ...

Եւ իսկապէս՝ Զատիկ է, ազգային յարութեան օր:

Արամեան եւ Հայկական փողոցի անկիւնը խոնուած են հարիւրաւոր մարդիկ եւ ինչ որ ուշադրութեամբ դիտում են: Բազմութիւնը բացում է մեր առջեւ: Փողոցի մէջտեղը, անգլիացի սպայ Պոլտոփը, ուրախ ու զուարթ, խարոյկի վրայ հանդիսաւոր կերպով այրում է Թրոցքիի պատկերը: Նա ձեռքի շարժումներով ինչ որ ասում է ամբոխին: Վերջինս քրքջում է ու որոտընդոստ ծափահարում է:

- Կեցցէ... Կեցցէ... Կեցցէ...

Մի քանի քայլ է անցնում ենք առաջ, եւ ահա մեր դէմ են դուրս գալիս մի խումբ զինուած քաղաքացիներ, երեանի քաղաքային խորհրդի ծերունի անդամ Թադիանոս Թադիանոսեանի առաջնորդութեամբ: Նրա որդին պոլշեփիկ է եւ նրանց մէջ, իսկ ինքը՝ հակառակ բանակում: Կարմրած երեսով ու պսպղուն աչքերով՝ մօտենում է ինձ ու ամուր համբուրում եւ հանդիսաւոր կերպով յայտարարում.

- Ա՛լ ազատ ենք, հիմա գնա՛ ու կառավարութիւն կազմիր:

Խեղճ ծերունի, տաս օր յետոյ նա այլեւս չկար: Պոլշեփիկների մի ուժեղ հակահարուածի ժամանակ, առաջաւոր դիրքերում, ծանր վերք ստացաւ ու մեռաւ՝ մահուան րոպէին հառաչելով, թէ անկարող եղաւ սեփական ձեռքով պատժելու իր դաւաճան զաւակին...

Մի քանի քայլ անցել էինք, երբ լուր բերին, թէ ինչ որ անծանօթ մարդիկ մտել են Յեղկոմի քարտուղար Աշոտ Յովհաննիսեանի բնակարանը եւ զանազան իրեր են վերցնում: Ընկերներս վախ են յայտնում, որ Յովհաննիսեանի մօտ գտնուող

արժէքաւոր վաւերագրերը, գրքերն ու իր պատմական աշխատութիւնները կարող են կորչել: Անմիջապէս շտապեցինք այնտեղ:

Յովհաննիսեանը Լեզրանի միսիայի անդամներից մէկն էր եւ դեկտեմբեր 2-ից յետոյ փողոց էր նետել զինուորական նախարար Ռուբէն Տէր Մինասեանի ընտանիքը՝ տիրանալով նրա բնակարանին ու գոյքերին: Պատմում էին, որ կոմիսար դառնալուց յետոյ՝ նա իր համար բռնագրաւել էր «հոտած բուրժուաններից» կահ-կարասիք, սպիտակեղէն, գորգեր եւ ուրիշ տան իրեր: Աւելացնում էին նաեւ, որ Յովհաննիսեանը, միւսների հետ համեմատած, շատ քիչ բան է առել եւ ապրում էր համեմատաբար համեստ...

Եւ, իրօք, Յովհաննիսեանի բնակարանում առանձնապէս աչքի զարնող հարստութիւններ չէին երեւում. բայց, ի հարկէ, ոչ մի համեմատութիւն չէր կարող լինել «Ռուբէն փաշայի» աղքատիկ կարգ ու սարքի հետ: Բոլոր սենեակներում շարուած էին ամէն կարգի աթոռներ ու բազկաթոռներ, գրակալներ ու պահարաններ: Եւ ամէն կողմ թափօփուած գրքեր ու թղթեր: Առ հասարակ, հին կահ-կարասիքի խանութի տպաւորութիւն էր ստացում: Պարզ երեւում էր, հաւաքուած էր մաս - մաս, եւ տարբեր աղբիւրներից...

Իրօք, բնակարանում գտանք նաեւ ինչ որ անծանօթ շինելաւոր մարդկանց, որոնք յետեւի դռնից ներս էին մտել «Իրենցից թալանուած իրերը առնելու համար»: Բաւական եղաւ մի խօսք, որպէսզի նրանք անմիջապէս թողնէին ու հեռանային: Կարգադրեցինք փակել դռները եւ սենեակների միջի ստացուածքի պահպանումը յանձնեցինք մի ծանօթի, որին թողնուեց նաեւ գրքերի ու ձեռագրերի ապահովութիւնը:

Նոր էինք դուրս եկել փողոց, երբ Արամեան ու Րաֆֆու փողոցների անկիւնում մեզ շրջապատեց աղմկայոյզ բազմութիւն: Քաղաքի յեղաշրջման հերոսներն էին՝ հրացաններով զինուած՝ ամէն դիրքի ու հասակի մարդիկ: Մէջտեղը, կառքում, նստած էր Մշեցի Սմբատը՝ վիրաւոր ձեռքը կրծքին: Շուրջը՝ ամէնքը ծանօթ եւ հարազատ դէմքեր - եւ ծիծաղում էին, եւ արտասուում: Անզուսպ ուրախութեան արտասուք էր այդ: Ուրախութեան եւ յաղթանակի:

- Ուռռա՛... Կեցցէ՛..., - թնդում

էր ամէն կողմից:

Եւ անվերջ գրկախառնութիւն
ու համբոյր...

- Քաջազնունն՛ւ մօտ, Քաջազնունն՛ւ
մօտ,- որոտաց բազմութիւնը,
որ աճում էր արագօրէն:

Եւ մարդկային փրփրացող հոսանքը
ուղղուեց դէպի Զաւարեան փողոցը՝
Հայաստանի Հանրապետութեան
առաջին նախարարապետի մօտ,
որը այդ ժամին գտնուում էր իր եղբօր
բնակարանում: Նա նոր էր դուրս եկել
Չեկայից, միայն հրաշքով ազատուած
մահից: Լուացւում էր, եւ դէմքը ծածկուած
էր օձառի փրփուրով: Հէնց այդ վիճակում
էլ յարձակուեցինք վրան: Ընդհանուր
ցնծութիւն: Համբոյրներ... Տեսարանը
անհունօրէն յուզիչ էր, անմոռանալի...

Այստեղից թափօրը շարժուեց դէպի
խորհրդարան: Մէջտեղից գնում էր կառքը,
որի մէջ նստած էինք մի քանի հոգի: Շուրջը
- ծով բազմութիւն: Զինուած ու անզէն
մարդիկ վազում էին եւ անդադար կանչում:
- Ուռռաւ... Կեցցէ...

Մերթ ընդ մերթ թնդում էր «Մեր
հայրենիք»-ը: Ծովաձաւալ բազմութիւնը
լեցուել էր փողոցը եւ վարարած գետի
պէս առաջ էր շարժում: Կտուրները,
պատուհանները, պատերը, ծառերը -
ամէն ինչ բռնուած էր մարդկանցով:
Կին, տղամարդ, ծեր, մանուկ

դուրս էին թափուել: Եւ ամէն կողմ
անհաշիւ եռագոյն դրօշակներ...

Իմ կողքին, հօր հրացանը ուսին,
կարմրած ու փայլուն աչքերով
վազում էր Դրոյի տղան՝ 12-ամեայ
Լիւթիկը եւ առանց յոգնելու՝ ծչում.

- Կեցցէ... Ուռռաւ...

Աբովեան փողոցի մօտ կառքը կանգ
առաւ. այլեւս անկարելի էր առաջանալ:
Պէտք էր իջնել: Մէկ էլ... բազմաթիւ ձեռքեր
նետեցին ինձ օդի մէջ ու ծափերով, «կեցցէ»-
ներով ու աղմուկով շարժուեցին առաջ:
Յորդոր, աղաչանք, սպառնալիք - լսող
չկար: Ազատուելու ամէն ճիգ անցնում էր
ապարդիւն: Անշունչ առարկայի պէս քարշ
էին տալիս, ձգում ու տրորում, բարձրացնում
ու ձեռքից ձեռք նետում, գրկում ու
համբուրում: Ինչ որ բան էին ասում, ինչ որ
աղաղակում էին... եւ ամբողջ տարածութեան
վրայ, Աբովեան փողոցից մինչեւ
խորհրդարան, հազար ու հազար բերաններ
էին հնչեցնում «Մեր հայրենիք»-ը...

Այս անօրինակ ժխորի մէջից երկու դէմք
մնացել են յիշողութեանս մէջ առանձնապէս
վառ ու անջինջ եւ, երեւի, երբեք էլ չպիտի
մոռացուեն: Երկու համբոյր - Է՛ւ ուժեղ,
Է՛ւ արտասովոր քնքշութեամբ լի - այդ
օրուայ ամէնից յուզիչ համբոյրներն էին...
Շահնազարեանի դեղարանի առջեւ,
մայթի վրայ կանգնած էր Արտաշէս



Չիլինգարեանը (Ռ. Դարբինեանը):
Կանգնած էր անշարժ, հմայուածի պէս:
Եւ թախիժ կար նրա թաց աչքերում, եւ
երկիւղ, եւ անսահման երջանկութիւն:
Իսկ քիչ հեռու լի լուսնակի պէս փայլում էր
Բաշխի իշխանեանի դէմքը... Երկուսն էլ
հրաշքով ազատուել էին մահից: Իսկական
Զատիկը նրանց համար էր այսօր...

Անասելի դժուարութեամբ՝ բարձրացանք
խորհրդարանի վերին յարկը. բոլոր
սենեակների պատշգամբները բռնուած էին
ցնծացող մարդկանցով: Նոր էի բարձրացել
աստիճաններից, երբ մի համայնապարփակ
գիրկ ուժգին թափով սեղմեց ինձ, եւ
ականջիս հնչեց ծանօթ մի ձայն:

- Պարոն Վրացեան, այս օրը մեզ
միացրեց յաւիտեան: Այլեւս ո՛չ ոք, ո՛չ ոք
չի կարող մեզ բաժանել իրարից...

Ժողովրդական կուսակցութեան
ծանօթ պարագլուխ Գիւլնազարեանն էր՝
Դաշնակցութեան վաղեմի մի հակառակորդ:

Ինքնամոռացութեան ու հրժուանքի
մէջ էին եւ միւս կուսակցութիւնների
անդամները: Այստեղ էին, խորհրդարանում,
բոլոր կուսակցութիւնների գործիչները - եւ
հայ - ժողովրդական, եւ ռամկավար, եւ
սոցիալիստ - յեղափոխական, եւ սոցիալ-
դեմոկրատ, եւ հնչակեան - ամէնքը: Դժուար
էր երեւակայել անելի անկեղծ, անելի բուռն ու
սրտագին ուրախութիւն, քան այս մարդկանց
ուրախութիւնը: Մի մոգական ձեռք
միացրել էր սրանց միեւնոյն զգացմունքի ու
միեւնոյն գաղափարի շուրջը: Զգացմունքը՝
անսահման ու անվերապահ ատելութիւն
դէպի պոլշեիկները, եւ գաղափարը՝
Հայաստանի անկախութիւնը: Հազիւ
թէ հայ հաւաքական կեանքում կարելի
լինի ցոյց տալ ուրիշ անելի կատարեալ ու
անելի սերտ համերաշխութիւն, քան այն,
որ այդ օր տիրում էր Հայաստանում...

Խորհրդարանի պատշգամբից արդէն
սկսուել էին ճառերը: Քիչ առաջ այստեղ
էին եկել բանտից ազատուած ընկերները,
եւ բազմութիւնը բուռն ոգետրութեամբ
ծափահարել էր հայ յեղափոխութեան
ամենագաղափարական գործիչներից մէկի՝
Համօ Օհանջանեանի յուզումնալի ճառը:

Մի քանի խօսքով ես էլ ողջունեցի
ժողովրդի յաղթանակը եւ յիշեցրի, որ
ուրախանալու ժամանակը չէ: Գլխատր
գործը դեռ առջեւն է: Թշնամին
վերջնականապէս չէ ջախջախուած.
պէտք է շտապել նրան մահացու
հարուածը հասցնելու: Ռոպէն փափուկ

ու պատասխանատու է եւ պահանջում է
լինել պաղարին, զուսպ ու կարգապահ:
Անհրաժեշտ է միացնել բոլոր կամքերն
ու բոլոր ճիգերը այնքան թանկ
գնով ձեռք բերուած ազատութիւնը
պաշտպանելու համար: Հայաստանի
բովանդակ իշխանութիւնը գտնուում է
Հայրենիքի փրկութեան կոմիտէի ձեռքը,
որը ժամանակաւոր յեղափոխական
կառավարութիւնն է լինելու. պէտք է նեցուկ
լինել նրան ու համախմբուել նրա շուրջը...

Պատասխանը եղաւ «Մեր հայրենիք»-
ը...: Խորհրդարանի առջեւի փողոցը,
քաղաքային այգին եւ հարեան փողոցները
լցուած ծով հասարակութիւնը, գլխաբաց ու
խոհուն դէմքերով, երգում էր Հայաստանի
անկախութեան խորհրդանիշը դարձած
ազգային երգը, իսկ հեռուից դեռ լսում էին
հրացանի հատուկտոր պայթիւնները...:

Ճառերը շարունակուեցին, իսկ մենք
անցանք կառավարութեան տունը: Նոր
էինք ներս մտել, երբ իրար յետեւից
սկսեցին գալ շնորհատրելու օտար
պետութիւնների ներկայացուցիչները
եւ քաղաքական կուսակցութիւնների
պատգամատրութիւնները: Մասնատրապէս
բուռն էր արտայայտում Անգորայի
ներկայացուցիչ Պեհաէտին պէյը, որը
շտապել էր առաջինը շնորհատրելու եւ
շատ վշտացած էր երեւում, որ իրենց
առաջ արդէն պարսից ներկայացուցիչն
ու ամերիկացիները շնորհատրել էին...

Չեմ յիշում՝ ո՞վ յայտարարեց, որ ես
նշանակուած եմ հայրենիքի փրկութեան
կոմիտէի նախագահ: Ո՞վ էր նշանակել,
ե՞րբ, կարո՞ղ էի ես այդ սարսափելի բեռի
տակից պատուով դուրս գալ: Տատանուելու
ժամանակ չկար: Թշնամին դեռ քաղաքի
մօտ էր: Ոչ ոք իրաւունք չունէր խուսափելու
գործից: Ընդհանուր ցանկութիւնն էր
նախկին կառավարութիւնը տեսնել
վերականգնած: Եւ ես համակերպուեցի
իմ դառն ճակատագրին: Սկսուեց
կազմակերպական աշխատանքը եւ
յուսահատ ու կատաղի պայքարը:

Քիչ յետոյ Քանաքեռից երեան հասան
փետրուար 18-ի իսկական հեղինակները -
Կոտայքի ապստամբութեան ղեկավարներն
ու հայրենիքի փրկութեան կոմիտէի
անդամները: Ժողովուրդը նրանց ընդունեց
խանդավառ ցոյցերով ու պաշտամունքով:
Գնդ. Կուռօ Թարխանեանը, իբրեւ
սպարապետ իր գործակիցների հետ
անցաւ սպայակոյտի, շէնքը՝ պոլշեիկներին

հետապնդելու մասին անմիջական կարգադրություններ անելու: Հայրենիքի փրկության կոմիտեն անցաւ գործի...

Կէսօրից յետոյ, շատ ուշ, մի քանի վայրկեանի համար ցրուեցինք մեր տները: Քաղաքը դեռ արբած էր յաղթութեանից: Փողոցները լիքն էին մարդկանցով: Երկու եւ կէս ամիս շարունակ փակ մնացած բերանները բացուել էին: Երգ, ծափ, անծայր թափօրներ ու երաժշտութիւն: Եւ ազգային դրօշակներ, դրօշակներ...

ՀՈՅՊՈՒՆ - ՀՅԴ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Դաշնադիր կողմերը, Մէկ կողմէ՝ Վահան Փափազեան, լիազօր պատգամաւոր Դաշնակցութեան միա կողմէ՝ Շեյխ Ալի Ռըզա, Տք. Շուքրի Սաքայան, Մուսթաֆա Շահին՝ ցեղապետ Պարազանիներու, Հաճօ Աղա՝ ցեղապետ Հաուիրքաններու, Էմին Աղա՝ ցեղապետ Ռամսաններու, Սուլէյմանիի Քերիմ Ռուսթեմ Պէյ, Վանի Մենտուի Սելիմ Պէյ, եւ Ճելաւտէթ Ալի Պէյ Պետրիսան - բոլորը՝ անդամներ քիւրտ ազգային «Հոյպուն» լիկայի.

Նկատելով երկու ժողովուրդներու իրար հանդէպ տաճած եղբայրական ջերմ զգացումները. համոզուած հնդերոպական զոյգ ցեղերու գործակցութեան հրամայականին՝ առ ի ապահովում իրաքանչիւրի գոյութեան. նաեւ հաշուի առած ազգային ներշնչումները եւ քաղաքական անկախութեան ձգտումները զոյգ ազգերուն մէջ.

Կնքեցին ներկայ քաղաքական ու զինուորական դաշինքը, համաձայնութեան գալով հետեւեալ տրամադրութեանց շուրջ.

- 1.- Երկու կողմերը փոխադարձաբար կը ճանչնան իրենց իրաւունքները՝ Քիւրտիստանի եւ Միացեալ Հայաստանի անկախութեան, եւ յանձնառու կ'ըլլան երկկողմանիօրէն իրարու օգնելու՝ բոլոր միջոցներով այդ իրաւունքներու պաշտպանութեան համար:
- 2.- Երկու կողմերը, առանց զանազանումի հայկական թէ քրտական հողամասերու միջեւ, պիտի շարունակեն պայքարը հասարակաց թշնամիի դէմ՝ զոյգ երկիրներու ազատագրման թիրախով: Երկու ազգութեանց միջեւ սահմանաճշդումը պիտի կատարուի համաձայն հետեւեալ սկզբունքներուն.
- ա.- սահմանագծման հիմ պիտի

- ծառայէ քիւրտ թէ հայ բնիկ ազգաբնակչութեանց նախապատերազմեան թիւը:
- բ.- նկատի ունենալով հանդերձ Սեւրի դաշնագրի ընդունած ազգացեղային ու իրաւական սկզբունքները, կողմերը անվաւեր կը յայտարարեն Վանի, Պիթիսի, ու Էրզրումի վիլայէթները Հայաստանին ձգող 89-րդ յօդուածը. այսուհանդերձ, երկու կողմերը կը ճանչնան իրենց փոխադարձ իրաւունքները յիշեալ վիլայէթներուն վրայ:
- գ.- սահմանագծումին համար՝ կողմերը նկատի ունին նաեւ փոխադարձ քաղաքա-տնտեսական եւ բնական պաշտպանութեան շահերը:

- 3.- Ներկայ դաշնագիրը ըլլալով յարձակողական թէ՛ պաշտպանողական դաշինք հասարակաց թշնամիին՝ թուրք-թուրանեան տարրին դէմ, կողմերը յանձնառու կ'ըլլան, մէկ կամ միւս երկրին դէմ ուղղուած միացեալ թէ անջատ յարձակումի մը պարագային, իրարու օժանդակելու՝ զայն ետ վանելու համար: Երկու կողմերը միասնաբար կը պայքարին թուրք կառավարութենէն եկող ամէն նախաձեռնութեան դէմ, որ նպատակ ունի պարպել իրենց հասարակաց հողերը՝ օտար տարրերու բնակեցումով:
- 4.- Կողմերը յանձնառու կ'ըլլան վարելու բերանացի-գրաւոր ներգործօն քարոզչութիւն՝ տարածելու հայ-քրտական գործակցութեան գաղափարը, զայն արմատաւորելու՝ երկու ժողովուրդներուն մէջ:
- 5.- ՀՅԴ-ն յանձն կ'առնէ իր համապատասխան օրկաններով քրտական դատի քարոզչութիւն կատարել՝ Երոպայի ու Ամերիկայի քաղաքական շրջանակներուն եւ հանրային կարծիքին մօտ, պայքարելով հանդերձ թրքո-թուրանեան քարոզչութեան ու գրգռութեանց դէմ:
- 6.- ՀՅԴ-ն յանձն կ'առնէ նիւթական նպաստ հասցնել Հոյպունին եւ օգնել բարոյապէս ու արհեստագիտականօրէն, մասնագէտ անձնակազմ տրամադրելով կազմակերպական թէ այլ մարզերու:
- 7.- ՀՅԴ-ն իր օգնութիւնը պիտի տրամադրէ Հոյպունին՝ Երոպական-ամերիկեան պետութեանց եւ այլ շահագրգիռ երկիրներու եւ ժողովուրդներու մօտ՝

նպաստ ապահովելու քրտական դատին:

- 8.- Հոյպունի կեդրոնական կոմիտեի մօտ ՀՅԴ-ն կ'ունենայ մնայուն ընդհանուր ներկայացուցիչ, պահելու երկու կազմակերպությանց կապը, ի հարկին մասնակցելով անոր քննարկում-որոշումներուն՝ անոր աշխատանքներուն օգնելու, սերտ գործակցութիւն ապահովելու համար:
- 9.- ՀՅԴ-ն եւ Հոյպունը, նկատելով Հայաստանի եւ Քիւրտիստանի իրաւունքներու եւ իրենց անկախութեան իրաւունքի անտեսումը՝ իրենց հասարակաց հողերուն վրայ, իրենք զիրենք կը նկատեն պատերազմական վիճակի մէջ՝ Թուրքիոյ հանդէպ: Հետեւաբար, անոնք յանձն կ'առնեն յարաբերութեան չմտնել թրքական կառավարութեան, ու ոչ ալ որեւէ երրորդ կողմի հետ՝ առանց երկուստեք նախապէս կայացած համաձայնութեան:
- 10.- ՀՅԴ-ն երկու կողմերու միացեալ ցուցմունքին վրայ, իր զինուորական ուժերը կը միացնէ քիւրտ զօրագունդերուն ձգտելով հայթայթել անոնց գործողութեանց անհրաժեշտ զէնքն ու զինամթերքը: Ան կը նշանակէ իր զինուորական կցորդը՝ արհեստագէտ-մասնագէտներով հանդերձ՝ Հոյպունի կեդրոնական կոմիտեին կամ քիւրտ կեդրոնական սպայակոյտին մօտ: Զինուորական կցորդը եւ իր արհեստագէտները պիտի մասնակցին քննարկում-որոշումներուն ու գործողութեանց՝ ընկերական գործակցութեան ոգիով:
- 11.- Ընդհանուր քաղաքականութեան գետնի վրայ, համաձայնաբար տրուած որոշումներու գործադրութիւնը պիտի յանձնուի խառն յանձնաժողովի մը, կազմուած՝ երկու կողմերու ներկայացուցիչներէն, եւ ի հարկին՝ նոյնիսկ կողմերէն մէկուն ներկայացուցիչներէն:
- 12.- ՀՅԴ-ն յանձն կ'առնէ նիւթապէս-բարոյապէս օժանդակել դասընթացքներու, որոնք պիտի հաստատուին քիւրտ կազմակերպիչներ, քարոզիչներ, արհեստագէտներ պատրաստելու համար:
- 13.- Դաշնագիր երկու կողմերը կը ստանձնեն, այս դաշնագրի հիմամբ եւ յառաջիկայ մէկ տարուան ընթացքին, կնքել համաձայնութիւններ՝ տարանցման, նաւահանգիստի, փոքրամասնական իրաւունքներու, ազգաբնակչութեանց փոխանակման եւ այս դաշնագրէն դուրս մնացած այլ հարցերու մասին: Հայ-քիւրտ համադաշնակցութեան մը ստեղծման հարցը նկատի պիտի առնուի երկու կողմերէն:
- 14.- Կողմերը յանձնառու կ'ըլլան ճանչնալ հանրային պարտքի իրենցմէ ամէն մէկուն ինկող բաժինը՝ ըստ իրենց տրուելիք հողատարածութեանց. կ'ընդունին նաեւ օտար պետութեանց արդէն կատարուած երկաթուղային թէ հանքային շահագործման իրաւունքները:
- 15.- Մեկնաբանութեան կամ դաշնագրէն դուրս հարցերու շուրջ որեւէ անհամաձայնութեան համար, զոյգ շահագրգռեալ կողմերը պարտին դիմել համաձայնաբար որոշուած իրաւարարութեան մը:
- 16.- Ներկայ դաշնագիրը կը պահուի գաղտնի: Եթէ կողմերէն մէկը անհրաժեշտ նկատէ զայն մասամբ կամ լրիւ հաղորդել երրորդ կողմի մը, երկրորդին կանխակալ համաձայնութիւնը պարտադիր է:
- 17.- Ներկայ դաշնագիրը պիտի վարէ երկու երկիրներու յարաբերութիւնները՝ մինչեւ հասարակաց պայքարի աւարտը իրենց ազատութեան ու անկախութեան համար: Որեւէ փոփոխում-յաւելում կրնայ կատարուիլ միայն երկու կողմերու համաձայնութեան վրայ:
- 18.- Ներկայ զինուորական-քաղաքական դաշնագիրը ի զօրու կը դառնայ՝ դաշնագիր կողմերէն ստորագրուելէն անմիջապէս ետք:
- 19.- Ներկայ դաշնագիրը խմբագրուած է ֆրանսերէն, 2 օրինակով:

Պէյրուս, 29-10-1927

1927-1981

Դաշնակցության գործունեությունը ծանրացած է գաղափարապաշտ եւ ազգասէր երիտասարդության եւ հասարակության կազմավորման վրայ, որովհետեւ տարբեր ուղղություններու եւ աշխարհագրական տարածքներու վրայ ատիկա կարելու է սփիւռքահայ գաղութներու կազմավորման ու կազմակերպման, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ հայության իրաւունքներու ձեռքբերման տեսակէտէ:

Խորհրդային վարչակարգի առկայութեամբ յատկանշուած այդ հանգրուանին է նաեւ, որ շատեր իրենց աչքը առայւէտ կը փակեն արքայազմերուն մէջ:

**ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ՝
ԸՆԴՅԱՏԱԿԵԱՅ
ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Բռուն ու յանդուգն պայքարի, բանտերի ու սառնամանիքների մէջ թրծուած, կոփուած ու բիրեղացած Հայաստանի երիտասարդութիւնը, թէեւ զուրկ Մայր կուսակցութեան նիւթական ու բարոյական օժանդակութիւնից, զուրկ՝ որեւէ փորձառու ընկերոջ աջակցութիւնից, անփորձ, նա բռնակալ պոլշեփզմի դէմ բարձր պահեց պայքարի դրօշը տամնամեակից աւելի:

Ինչպէ՞ս ծնաւ այդ գաղափարապաշտ երիտասարդութիւնը պոլշեփզմի յաղթական արշաւի օրերին: Պատասխանը պէտք է փնտռել Դաշնակցութեան անխօս պատգամների մէջ, որոնց մայրական կաթի ու օրօրի հետ ներարկուեցին ու սնուցին Դաշերիտի ոգին: Գաղափարի գերիները քայլեցին իրենց ընտրած ուղիով: Նրանք գիտակցաբար ընտրեցին արքայի, բանտի, մահու ճամբան, իրենց կազմակերպութեամբ, յանդուգն ու յամառ աշխատանքով ապշեցնելով թշնամիներին իսկ:

Դաշերիտ միութիւնը ունեցաւ իր զարգացման փուլերը:

Նախ՝ ՀՅԴ աշակերտական կազմակերպութեանը յաջողուեց կապ ստեղծել ուսանողների հետ: Վերջինները մատակարարում էին արտասահմանեան գրականութիւն՝

«Դրօշակ», «Հայրենիք», «Յուսաբեր», ինչպէս եւ կարդում դասախօսութիւններ՝ տասական խնդիրների շուրջ: Բայց երկար չտեսցին երանելի օրերը: Իրար յետեւից ձերբակալուեցին եւ արքայազմերու ուսանողները: Կազմակերպութիւնը մնաց որբ եւ անտէր: Կապը վերահաստատելու բոլոր փորձերն ապարդիւն անցան: Միւս կողմից՝ դպրոցը վերջացնելով ցիրուցան եղան փորձառու ընկերները: Յետոյ հրապարակը մնաց Ք.ին, որ փշրեց աշակերտական կազմակերպութեան պողպատէ պարիսպները եւ կազմակերպութիւնը տարածեց ողջ երիտասարդութեան մէջ, ներգրաւելով նախ գաւառի երիտասարդութիւնը, անգամ թափանցելով Կոմերիտական շարքերը...

Այսպիսով վերջ գտաւ ՀՅԴ աշակերտական կազմակերպութիւնը՝ ստեղծելով Դաշերիտ միութիւնը:

Ք.ին յաջողուեց ձեռք բերել նաեւ Խնորատիպ մեքենայ, եւ թռուցիկ կոչեր բաց թողնել մայիս 1-ի, մայիս 28-ի, դեկտեմբեր 2-ի եւ փետրուար 18-ի առթիւ:

Դաշերիտի զանգուածը զտուած, մաքրուած, գաղափարապաշտ աշակերտութիւնից չէր կազմուած միայն, այլ եւ գիւղի կիսագրագէտ ու տաքարին երիտասարդութիւնից, որին դժուար էր ղեկավարել ու խօսք հասկնել:

Ամառնային արձակուրդներից վերադարձան աշակերտական կազմակերպութեան հին ու փորձառու ընկերները: Խորհրդակցութիւններն ու ժողովներն իրար յաջորդեցին՝ ելք գտնելու եւ կազմակերպութիւնը ոտքի կանգնեցնելու համար: Անհնարին էր ծաւալուն կազմակերպութիւնը սնուցանել մի քանի թռուցիկ կոչերով: Մանաւանդ գիւղի երիտասարդութիւնը, որ գլուխ չունէր երկար գաղափարական պայքարի:

- Եղբայր, գաղափարական պայքարը ո՞րն է...: Ամբողջ ժողովուրդը մեզ հետ է: Թէ ուզենանք, վաղն իսկ պոլշեփզմների հետքը չի մնայ: Էլ ի՞նչ ենք սպասում,- ասում էին նրանք:

Դժուար էր համոզել նրանց, որ մեր նպատակը ապստամբութիւն բարձրացնելը չէ, այլ «ազգ» ու «հայրենիք» գաղափարները վառ պահելը ժողովուրդի, մանաւանդ երիտասարդութեան մէջ:

Ղեկավարութեան եւ արտասահմանեան գրականութեան բացակայութիւնը ստիպեց ինքնուրոյն մամուլի մասին մտածել:

Դա մի կերպ երազ էր պոլշեիկեան իրականութեան մէջ, լի վտանգներով ու հազար ու մէկ դժուարութիւններով:

Բայց անգամ կեանքերն ստոյգ վտանգի ենթարկելու գնով ձեռք բերին ապակետիպ տպարան եւ հիմնեցին «Յեղափոխական դարբնոց» օրգանը: Երիտասարդութիւնը պիտի դարբնէր ու դարբնուէր այդ ամսագրի միջոցով, դրա համար էլ նախընտրութիւնը շահեց «Յեղափոխական դարբնոց» անունը:

Դաշերիտ միութիւնը մտաւ իր ամենաբեղուն ու արդիւնաւէտ շրջանը, ուր լայն հնարատրութիւններ ունէր աշխատելու եւ ստեղծագործելու: Շնորհիւ անսահման զոհողութեան, նա այժմ ունէր եւ նիւթական միջոցներ:

Ձեռք բերուած նիւթական եւ տպագրական միջոցների շնորհիւ, Դաշերիտ միութիւնը դարձաւ ինքնուրոյն, ինքնաբաւ կազմակերպութիւն: Նա այլեւ կարիք չէր զգար ո՛չ դէկավարների եւ ո՛չ էլ արտասահմանեան գրականութեան՝ յագեցած անցեալի յուշերով: Անցեալի յուշերը պայքարի գէնք չէին կարող ծառայել նրա ձեռքին, երբ ազգ ու հայրենիք բառերը ծաղրի առարկայ էին: Դաշերիտները փնտռում էին գործնական կեանքին ու պայքարին համապատասխանող յօդուածներ եւ մարքսականութիւնը ժխտող գրուածքներ ու չէին գտնում դժբախտաբար: Այս տեսակէտից՝ Էս-Էռական պրոշիւրներն անելի արժէքատուր էին, քան արտասահմանեան թարմ գրականութիւնը...

Շնորհիւ սեփական մամուլի եւ իր կարիքների հոգացող նիւթական միջոցների, Դաշերիտ միութիւնը օր ըստ օրէ թռիչքներ էր կատարում: Կարճ ժամանակամիջոցում նա այնքան յառաջացաւ, որ ծրագրեց ունենալ իր շաբաթաթերթը, ինչպէս եւ առանձին գրքոյկների հրատարակութիւնը: Մի քայլ եւս՝ եւ

նա իր օրաթերթը պիտի ունենար...: Նոյնը՝ եւ կազմակերպչական ճակատում:

Բայց վրայ հասնող ձերբակալութիւնները թոյլ չտուին համարեա իրականութիւն դարձած ծրագիրները իրագործելու:

Քնած չէին Դաշերիտի թշնամիները՝ լրտեսները...

Իբրեւ հետեանք դաւադիրների ու լրտեսների գործունէութեան, Չեկան կարողացաւ մէկ գիշերուան մէջ ձերբակալել Դաշերիտի գործունէայ ու աչքի ընկնող գործիչներին:

Դաշերիտն իր բարձրութեան վրայ

մնաց նաեւ Չեկայում: Ո՛չ մէկ զոջում, ո՛չ մէկ մեղայագիր: «Եղել եմ, կամ ու պիտի մնամ այդպիսին»... ահա դաշերիտների պատասխանը:

Ահ ու դողի էր մատնուած Չեկան իր անսովոր «քնակիչներից» եւ աշխատում էր օր առաջ ազատուել նրանցից: Օր չէր լինում, որ ընդհարում կամ աղմուկ-աղաղակ տեղի չունենար Չեկայի նկուղներում:

Քննիչներն ու ռուս զինուորները մնացել էին շուարած: Բոլոր պատժական միջոցներն ու խստութիւնները օգուտ չունեցան: Ընդհակառակն, նրանք անելի բորբոքում էին ու սաստկացնում ըմբոստութիւնները:

Եկաւ արքայի օրը: Գոյժը կածակի արագութեամբ տարածուեց Հայաստանի մէկ ծայրից մինչեւ միւսը: Խուռներամ բազմութեամբ էր բռնուած ծանապարհը՝ բանտից մինչեւ հին կայարանը: Կայարանում տեղ-դադար չկար:

Ժողովուրդը լցուած էր նաեւ մօտակայ բարձրութիւնները: Ուտքի վրայ էին Չեկայի բոլոր գաղտնի ու յայտնի լրտեսները, Երեւանի ոստիկանութիւնը: «Կարգը» պահպանելու համար կայարան էր կանչուած նաեւ Երեւանում գտնուող ռուսական վաշտը: Մերկացրած ատրճանակների, հրացանների ու սրերի տակ տանում էին դաշերիտներին զուշացնելով՝ չերգել, չխօսել: Բայց ի զուր: Բոլոր ձեռք առնուած միջոցներն ու սպառնալիքները կարծես թէ դաշերիտներին չէին վերաբերում...: Ու յանկարծ թնդաց «Մեր հայրենիք»-ը, ռումբի տպաւորութիւն թողնելով շրջապատի վրայ...: Տնծաց ժողովուրդն ուրախութիւնից: Նրանց արցունքախառն աչքերը փայլում էին ոգեւորութիւնից...: Իսկ չեկիստներն ու զինուորները՝ մեռելի գոյն ստացած՝ ապշել էին, շուարել անակնկալ դէպքից:

«Մեր հայրենիք»-ին յաջորդեցին հրաշունչ ճառերը: Ծովի պէս ծփացող ժողովուրդը լսում էր կախարդուած ու հիանում իր զաւակների խիզախութեան վրայ: Որքան էին կարօտել «Մեր հայրենիք»-ն ու ազատ խօսքը...

Հասաւ հրաժեշտի ժամը մայր հողից: Երրորդ զանգը հնչեց թախճազին: Գնացքը շարժուեց, եւ հազարաւոր ձեռքեր օդը բարձրացան մէկ ակնթարթում, ու սկսեցին ձօճուել գոյնզգոյն թաշկինակները, գլխարկները՝ «Մեր հայրենիք»-ի սարսռեցուցիչ ալիքների տակ:

Արհամարհելով վտանգներն ու հետեանքները, Դաշերիտը լի ու

լի օգտագործեց անգամ իր վերջին վայրկեանները Հայաստանում եւ արքայի սեւ օրը տօնականի վերածեց: Նա անդրդուելի մնաց նաեւ կապանքների մէջ եւ լուսաւորող ջահ դարձաւ շրջապատի համար՝ շնորհիւ իր ուշիմութեան, համեստութեան, լրջութեան ու մանաւանդ անձնագրհուութեան ու յեղափոխական բնաւորութեան:

Ժողովուրդը զարմացած կրկնում էր յաճախ. «Մենք սրանց պէս երիտասարդներ առաջին անգամ ենք տեսնում»:

Այո՛, առաջին անգամն էին տեսնում: Դաշերիտը գիտակցաբար խեղդում էր իր մէջ մարդկային բոլոր կարիքները՝ ազգութեան եւ կուսակցութեան դրօշը բարձր ու անարատ պահելու համար:

*
**

1935-ի ձմրանը Մոսկուայի գործակալները յատուկ առաքելութեամբ արքայազայր ժամանեցին: Մէկ առ մէկ կանչեցին նաեւ դաշերիտներին եւ հրաժարականներ պահանջեցին, փոխարէնը գործ եւ ազատութիւն խոստանալով: Չնայած վեցերորդ տարին էր՝ տառապում էինք բանտերում եւ արքայազայրերում, «Ո՛չ» պատասխանեցին: Գերադասեցին կապանքների մէջ մնալ ու մեռնել քան ստորնութեամբ ազատութեան տիրանալ: Նոյն տարուայ մայիսին մասնակի ձերբակալութիւններն ու սպանալիքները՝ հրաժարական կորզելու եւ հաւատափոխ անելու մտքով՝ նոյնպէս ապարդիւն անցան:

Դաշերիտ միութիւնը Մայր կուսակցութեան արժանի զաւակն է: Նա ի ծնէ, բնագոյաբար, կարողացաւ հասկանալ Դաշնակցութեան արժանիքներն ու վեհութիւնը, եւ պահեց զանոնք իր աչքի լոյսին պէս, իր կեանքի գնով: Չնայած երկարատեւ բանտի եւ արքայի տաժանելի պայմաններին, չնայած սովի ու սառնամանիքի անողոր ճիրաններին, Դաշերիտը երբեք չընկճուեցաւ, չզղջաց, չստորնացաւ, ընդհակառակն՝ աւելի վճռական դարձաւ: Հպարտ իր կոչումով՝ նա լուռ ու մունջ տարաւ իրեն վիճակուած բոլոր դառնութիւնները:

Եթէ անտեսելու լինենք պայմանները, որոնց մէջ ծնաւ, զարգացաւ եւ աշխատեց Դաշերիտ միութիւնը, մեծ գործունէութիւն չունի ան: Երիտասարդութեան լաւագոյն տարրերը Դաշնակցութեան դրօշին շուրջ հաւաքել, մասնով ստեղծել,

գրաւոր ու մտաւոր քարոզչութիւն մղել, ինքնագարգացմամբ զբաղուել ու արքայուել, միշտ հաւատարիմ մնալով իր դաւանանքին, ահա Դաշերիտ միութեան գործունէութիւնն ընդհանուր գծերով:

Պոլշեիկեան իրականութիւնը ճաշակողները միայն կարող են հասկանալ Դաշերիտ միութեան արժէքը եւ նշանակութիւնը:

Դաշերիտ միութիւնը ուղի գծեց Հայաստանի մէջ, որով պիտի քայլէ երիտասարդութիւնը: Ճիշդ է, նա խոշոր հարուած կրեց 1929-ին, բայց չպարտուեց, չմեռաւ...: Եւ չի կարող նա մեռնել, քանի կայ հայ երիտասարդութիւնը: Նա սրբազան փարոսը դարձաւ Հայաստանի երիտասարդութեան եւ պիտի մնայ որպէս այդպիսին...

ՀՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ընկերներ.

ՀՅ Դաշնակցութիւնը բոլորեց արդէն իր գոյութեան քառասնամեակը:

Անխառն հպարտութիւն ենք զգում՝ վերյիշելով մեր կուսակցութեան անդու գործունէութիւնը այս փոթորկալի ժամանակաշրջանում:

Հպարտ ենք նրանով, որ Դաշնակցութիւնը Հայկական վերածնութեան ասանդներին հետեւելով՝ կենդանի գործով ազգային գիտակցութիւն ներշնչեց հայ ժողովրդին, որ պետական սահմաններով բաժան-բաժան եղած եւ յարանուանական տարբերութիւններով պառակտուած, կորցրել էր իր ազգային դիմագիծը եւ ազգային ամբողջականութեան զգացումը:

Հպարտ ենք, որ Դաշնակցութիւնը իր հերոսական ձեռնարկներով ոգեկոչեց հայ ժողովրդի ասանդական քաջասրտութիւնն ու մարտունակութիւնը, որոնք բազմադարեայ անազատ կեանքի հետեւանքով խամրել էին՝ տեղի տալով ստրկական մի համակերպութեան, որ թարգմանում էր իբրեւ վախկոտութիւն եւ մեր բոլոր հարեանների մէջ արգահատանք առաջ բերում դէպի հայ ժողովուրդը:

Հպարտ ենք, որ հայ յեղափոխութեան ամենաձանր բեռն իր թիկունքին առած Դաշնակցութիւնը ազնուագոյն անձնագրհուութեան օրինակով վարակեց հայ ժողովուրդը, որ չարչիի, գծծիի եւ շահամոլի համբաւ ունէր օտարների աչքում: Այսօր պարծանքով կարող

ենք պղնեյ, որ զոհաբերութեան պատրաստականութեամբ հայ ժողովուրդը ոչ մի ժողովրդից յետ չէ մնում:

Հպարտ ենք, որ օտար լուծի տակ ընդհանուր հայրենիքի գաղափարը մոռացած եւ անկախ պետական կեանքի ունակութիւնը կորցրած հայ ժողովուրդը, շնորհիւ Դաշնակցութեան անխնջ ջանքերի, քաղաքականապէս հասունացած է մինչ այն աստիճան, որ նա՝ չնայած իր այսօրուայ ողբերգական պայմաններին, չնայած ներքին եւ արտաքին բոլոր սադրանքներին՝ կառչած է մնում մեր ամբողջական հայրենիքն ու մեր պետական անկախութիւնը խորհրդանշող դրօշակին:

Հպարտ ենք, որ Դաշնակցութիւնը սերմնացան հանդիսացաւ ժամանակակից ռամկավարական եւ ընկերվարական գաղափարների ոչ միայն հայկական գանգուածների, այլեւ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների մէջ: Այդ գաղափարներով վերակենդանացած ապագայ մարդկութիւնը խորին երախտագիտութեամբ պէտք է յիշէ Դաշնակցութեան այս լուսաւորիչ դերը ասիական խաւարի մէջ խարխափող ազգերի կեանքում:

Եւ երիցս հպարտ ենք – մի կսկծալի, բայց արդար հպարտութիւն – որ Դաշնակցութիւնը, իր վեհ առաքելութիւնը իրականացնելու համար, կանգ չառաւ ոչ մի զոհաբերութեան առջեւ: Նրա քարոզը գործն էր: Գործը պահանջում էր, որ Դաշնակցութիւնը իր լաւագոյն անդամներին բարձրացնի զոհի սեղանը եւ Դաշնակցութիւնը մի վայրկեան անգամ չերերաց զոհի մեծութեան առջեւ...

Վերյիշենք մեր ռահվիրաներին, մեր բազմատեսակ գործիչներին, մեր բազմահազար մարտիկներին. նրանցից քանի՞սն են իրենց մահկանացուն կնքել փափուկ անկողնի մէջ: Շատ քչերը: Մնացած բոլորը ներկայացնում են մեզ այսօր նահատակի լուսապսակով՝ իբրեւ գնդակի, սրի, կախաղանի կամ ռումբի զոհեր... իսկ այն միա քիչերը, որոնք նգովելով իրենց ճակատագիրը, բնական մահով են մեռել, ինչ է եղել նրանց գրկալից, չարքաշ եւ վտանգներով պաշարուած կեանքը, եթէ ոչ յարատեւ նահատակութիւն...

Համարձակ կարող ենք ասել, որ աշխարհիս վրայ չի եղել եւ չկայ մի երկրորդ կուսակցութիւն, որ այնքան զոհաբերած լինի իր գաղափարների համար, որքան զոհաբերել է Դաշնակցութիւնը:

Այս անօրինակ, զարհուրելի զոհաբերութիւնը պարտաւորեցնում է մեզ, ընկերներ: Նա պարտաւորեցնում է ամէնքիս արկել մեր նետարդերը, սրել մեր միտքը, սեղմել մեր բռունցքները եւ առաջ ընթանալ դէպի այն նպատակը, որի ճանապարհին մեր ընկերներն ու հայ ժողովրդի լաւագոյն գաւակները վար դրին իրենց թանկագին գլուխները: Եւ մինչեւ որ այս նպատակը չիրականանայ, մինչեւ որ հայ ժողովուրդը իր հայրենի հողի վրայ ազատուած չլինի ամէն կարգի քաղաքական, ընկերային եւ տնտեսական ճնշումներից՝ Դաշնակցութիւնը չէ կարող ցած դնել իր գէնքերը: Կիսակատար ձգել երկու հոյակապ սերունդների արինով կերտուած գործը, կը նշանակէ ոչ միայն դաւաճանել հայ ժողովրդի արդար դատին, այլ եւ նորից մեռցնել մեր նուիրական մեռելներին:

Դաշնակցութեան քառասնամեակի առթիւ ձեզ հետ միասին անհուն երախտագիտութեամբ եւ անհուն երկիրդածութեամբ գլուխ խոնարհելով մեր մեծանուն եւ անանուն նահատակների առջեւ՝ մենք յանուն բոլոր դաշնակցականների կրկնում ենք նրանց հաննիբալեան ուխտը այն բոլոր թշնամիներին, որոնք ծառայած են հայ ժողովրդի արդար իրաւունքների եւ Դաշնակցութեան հիմնական նպատակի դէմ:

Այդ ուխտի ճանապարհին, մեզ այսօր առաջին հերթին ներկայանում են մեր այն հազարաւոր ընկերները, որոնք իբրեւ կենդանի զոհեր տառապում են թիրքական բանտերում, պոլշեիկեան զնդաններում, Սիպրիի սառնարաններում եւ այլուրեք: Մենք Դաշնակցութեան սրտագին ողջոյններն ենք ուղարկում այս ընկերներին՝ վստահ, որ նրանք իսկական յեղափոխականին վայել տոկունութեամբ կը կրեն իրենց խաչը, ինչպէս որ կրել են մինչեւ հիմա:

Այդ ուխտի ճանապարհին էք կանգնած եւ դուք, երկրի ու արտասահմանի գործիչ եւ շարքային ընկերներ: Ծանր, խիստ ծանր օրերում ձեզ է անցել Դաշնակցութեան արինաներկ դրօշը: Դուք պէտք է կրէք այդ դրօշը ոչ միայն պարծանքով, այլ եւ խոր գիտակցութեամբ, որ մեր յեղափոխական պայքարի ներկայ դժնդակ պայմանները նոր պարտականութիւններ են դնում ձեզ վրայ, որոնք շատ լուրջ եւ շատ անձնուէր աշխատանք են պահանջում:

Այդ պարտականութիւնների

ճանապարհին, իր ահաուր պայքարի հինգերորդ տասնամեակը թեակոխող Դաշնակցությունը պետք է Ձեզ միշտ պատրաստ գտնի: Պատրաստ ծառայելու հայ ժողովրդի ազատագրության գործին այն անվերապահ անձնագրոհությամբ, որ Դաշնակցության փառապանծ դրոշի հետ միասին, ձեզ ամենդ են ձգել Դաշնակցության քառասնամեակը պսակազարդող հերոսները:

ՀՅԴ ԲԻԻՐՕ

1982-2015

1932-էն շուրջ վեց տասնամեակ ետք՝ 1990-ին, Հայ յեղափոխական դաշնակցությունը դարձեալ բացայայտեց իր կազմակերպական ներկայությունը հայրենի հողին վրայ, համայնավարական ամբողջատիրական իշխանության հալածանքներուն պատճառով գործունէութեան պարտադիր կասեցումէն ետք: Դաշնակցութեան կազմակերպական վերընձիւղումը դիւրին չսկսաւ, որովհետեւ զուգահէյտեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան վերականգնման համար շարժումին, օրուան՝ ՀՀԸ-ական իշխանութիւններուն շղթայազերծած հակադաշնակցական բռուն պայքարին եւ արցախեան ազգային-ազատագրական պայքարին, որուն ընթացքին Դաշնակցութիւնը զոհեց իր լաւագոյն ուժերը:

ՀՀԸ-ական իշխանութիւններուն հետ զաղափարական եւ քաղաքական բռուն պայքարը եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարման համակարգին ժողովրդավարացման համար Դաշնակցութեան մղած մնայուն ճիգերը պատճառ դարձան, որ Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան երկրէն արտաքսէ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրայր Մարութեանը: Արտաքսման այս աննախադէպ որոշումը պատճառ դարձաւ, որ 1919-էն ետք առաջին անգամ ըլլալով երեսնի մէջ գումարուած ՀՅԴ ԻԵ. Ընդհանուր ժողովը ընդհատէ իր աշխատանքները՝ զանոնք շարունակելու համար աւելի ուշ՝ Փարիզի մէջ: Հակադաշնակցական պայքարը իր գագաթնակէտին հասաւ, երբ 28 դեկտեմբեր 1994-ին, համայնավարական հակադաշնակցական պայքարը յիշեցնող քայլով մը, յատուկ հրամանագիրով կասեցուց Դաշնակցութեան

գործունէութիւնը Հայաստանի մէջ, ձերբակալել տուաւ դաշնակցական գործիչներ, արգիլեց ուղեկից միութիւններու գործունէութիւնը եւ դաշնակցական թէ համակիր մամուլի հրատարակութիւնը:

Հալածանքի այս մթնոլորտը վերջ գտաւ 1998-ի իշխանափոխութեամբ, երբ դարձեալ արտօնուեցաւ Դաշնակցութեան բացայայտ գործունէութիւնը: Անկէ ետք խորհրդարանին մէջ իր քաղաքական ներկայութեան թէ կառավարական համաձայնական դաշինքներուն իր մասնակցութեան ճամբով ՀՅԴ-ն աշխատանք տարաւ երկրին մէջ ժողովրդավարութիւնը ամրապնդելու եւ տնտեսութեան ընկերային ուղղութիւն տալու: 2008 թուականին Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու ստորագրութենէն ետք Դաշնակցութիւնը գլխաւորեց այս արձանագրութիւններուն դէմ «Ռ՛ջ»-ի շարժումը եւ այս պատճառով ալ 2009 թուականին դադրեցուց իր մասնակցութիւնը համաձայնական կառավարութեան՝ դառնալով ընդդիմադիր կուսակցութիւն:

Անկախութեան վերականգնման առաջին օրերէն իսկ ՀՅ Դաշնակցութիւնը դէմ արտայայտուեցաւ Նախագահական համակարգին եւ պետութեան կառավարման լծակները մէկ հոգիի ձեռքին մէջ կեդրոնացնելու մօտեցումին: Անկէ մեկնելով Դաշնակցութեան մասնակցութեամբ ստեղծուած ընդդիմադիր ուժերու Ազգային համաձայնական դաշինքը առաջադրեց սահմանադրութեան միասնական Նախագիծ մը, որ ի տարբերութիւն ՀՀԸ-ի իշխանութիւններուն ներկայացուցած գերնախագահական համակարգով Նախագիծին, կ'առաջադրէր իշխանութեան լիազօրութիւններու ապակեդրոնացում: Անկէ ետք Դաշնակցութիւնը մնայուն կերպով ջատագով հանդիսացած է խորհրդարանական համակարգի որդեգրման: 2013 թուականի Նախագահական ընտրութիւններուն Նախօրեակին Դաշնակցութիւնը հրապարակեց Հայաստանի հետագայ ընթացքը ճշդորոշող իր պատկերացումը՝ 7 կէտնոց օրակարգը, որոնք գլխաւորաբար կը կեդրոնանան Հայաստանը խորհրդարանական հանրապետութեան վերածելու, 100 տոկոս համամասնական ընդրակարգը որդեգրելու եւ կառավարման համակարգին մէջ ընդդիմութեան լծակներ տալու առաջադրանքներուն շուրջ: Դաշնակցութիւնը ճիգ

չինայեց 7 կէտնոց այս օրակարգին շուրջ համախմբելու Հայաստանի Հանրապետութեան քաղաքական դաշտը: Քաղաքական այս ճիգին արդիւնքներէն էր, որ իշխանութիւնները մշակեցին սահմանադրական բարեփոխումներու նախագիծ, որ իր ընդհանուր գիծերուն մէջ նկատի առած է Դաշնակցութեան վերոյիշեալ պատկերացումները: Սահմանադրական փոփոխութիւններու նախագիծը հանրաքուի դրուած է 6 դեկտեմբեր 2015-ին եւ Դաշնակցութեան դիրքորոշումը անոր նկատմամբ «ՎՃՌԱԿԱՆ ԱՅՈՒՄ» է:

ՀԱՏՈՒԱԾ ՀՅԴ ԻՖ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒԱԾ ՀՅԴ ԾՐԱԳԻՐԷՆ

ՆՊԱՏԱԿ

ՀՅ Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւն, իր բոլոր միջոցներով ամէնուրեք կ'աշխատի պաշտպանել հայ ազգի բովանդակ շահերը: Առաջադրելով կերտել ամբողջական, անկախ, ազատ եւ ընկերվարական հայրենիք, եւ նկատի ունենալով մեր ազգային ներկայ իրականութիւնը, Դաշնակցութիւնը կը հետապնդէ հետեւեալ քաղաքական նպատակները.

Ա.- Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան:

Բ.- Հայաստանը պիտի ըլլայ ընկերվարական- ժողովրդավար անկախ հանրապետութիւն, որուն սահմաններուն մէջ պիտի մտնեն Սեւրի Դաշնագիրով նախատեսուած հայապատկան հողերը:

Գ.- Հայութեան դէմ գործադրուած եւ ցարդ անպատիժ մնացած ցեղասպանութեան ոճիրը պէտք է դարմանուի բռնագրաւուած հողերու վերադարձով եւ վնասուց արդար հատուցումով՝ հայ ազգին:

Դ.- Ամբողջական եւ անկախ Հայաստանի ընկերվարական-ժողովրդավար Հանրապետութեան հիմնական օրէնքները

պիտի որոշուին Հայաստանի սահմանադիր ժողովին կողմէ՝ ընտրուած ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ընտրութեան սկզբունքով:

Այդ հիմնական օրէնքները պէտք է ապահովեն.

- 1) Կատարեալ ազատութիւն մտածումի, խօսքի, մամուլի, հրատարակութեան, խղճի, ժողովներու, կազմակերպութիւններու, գործադուլներու եւ տեղափոխութեան:
- 2) Անբռնաբարելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան եւ հաղորդակցութեան այլ միջոցներու:
- 3) Եկեղեցիի բաժանումը պետութենէն: Կրօնը անհատական խղճի հարց է:
- 4) Ոչնչացում դասակարգային բոլոր առանձնաշնորհումներու:
- 5) Հաւասարութիւն ազգային բոլոր փոքրամասնութեանց եւ կրօնական համայնքներուն:
- 6) Ընդհանուր, պարտադիր եւ ձրի տարրական ու միջնակարգ ուսում: Նաեւ բարձրագոյն ձրի ուսման պատեհութիւն՝ բոլոր փափաքողներուն: Դասաւանդութիւն մայրենի լեզուով:
- 7) Հաւասարութիւն օրէնքին առջեւ բոլոր քաղաքացիներուն: Հրապարակային դատավարութիւն անկախ դատարաններու կողմէ: Երդուեալներով դատուելու իրաւունք: Ձրի դատավարութիւն:
- 8) Վարչական տեղական լայն ինքնավարութիւն:
- 9) Օրէնսդիր ժողովներուն օրէնքի նախագծեր առաջարկելու եւ, հարկ եղած պարագային, հանրաքուէի դիմելու իրաւունք բոլորին:
- 10) Ծերութեան, անգործութեան, արկածներու եւ հիւանդութեանց դէմ ապահովագրութիւն բոլոր քաղաքացիներու:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՍՔԱՆՉԵԼԻ ԶԱՐԹՕՆՔ

Պատմական դարձակէտ կ'ապրի Հայոց նորագոյն պատմութիւնը: Հայկական հարցը մտած է նոր եւ բախտորոշ փուլի մը մէջ: Ըստ էութեան, ցարդ ոչինչ փոխուած է

անշուշտ այն առանձնաշնորհեալ դիրքին՝ զոր Թուրքիան կը վայելէ Արեւմտեան եւ Արեւելեան զինակցութեանց միջեւ, եւ որ հիմնական խոչընդոտն է Հայ դատի բարենպաստ լուծման: Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու անոր դաշնակից պետութիւնները, շարունակելով Թուրքիան պատուար նկատել Խորհրդային Միութեան ծաւալման թէ անոր ազդեցութեան գոտիի ընդարձակման դէմ, թուրք պետութեան կ'ընծայեն տնտեսական, ռազմական եւ ընկերային լայն օժանդակութիւն: Իսկ Խորհրդային Միութիւնը, մղուած իր սեփական հաշիւներէն - որոնց մէջ կարելոր տեղ ունի իր տարածքի թրքօ - թաթար ժողովուրդներն ու Թուրքիան իրարու շահկապող համաթորանական յարաճուն տրամադրութիւններուն հաշուառումը - ոչ միայն բացայայտօրէն չի հակադրուի թուրք ցեղապաշտ պետութեան, այլեւ կը շարունակէ զայն պարբերաբար դարպասել: Հակադիր ուժերու այս բարդ հաւասարակշռութեան մէջ է, որ հայ ժողովուրդը պարտաւորուած է գործել ի խնդիր իր ազգային - քաղաքական առաջադրանքներու իրականացման:

Բայց եթէ Հայ դատի ամբողջական լուծման հիմնական դժուարութիւնները տակաւին վերացած չեն, այլ նոր կացութիւններ, միջազգային թէ ազգային գետնի վրայ, նոր յոյսեր կը ներշնչեն հայութեան՝ իր անժամանցելի իրաւունքներու բազմակողմանի հետապնդման եւ աւելի բարենպաստ արդիւնքներու կարելիութեան գծով:

Իրօք, վերջին տարիներուն, Արեւմտեան Զինակցութեան եւ Խորհրդային Միութեան միջեւ երբեմնի ծայրայեղ լարուածութիւնը որոշ մեղմացում կրեց, խորհրդային նոր ղեկավարութեան կողմէ ձեռնարկուած ներքին թէ արտաքին յեղաշրջող բարեփոխումներուն բերումով: Վերակառուցման (Փերեսթրոյքա)-հրապարակայնութեան (կլամնոսթ) եւ ժողովրդավարացման (դեմոկրատիզացիա) կորպաչեւեան ներքին կարգախօսները, տնտեսական որոշ ազատութիւններ, ինչպէս նաեւ՝ արտաքին ճակատի վրայ՝ աստիճանական զինաթափման ճիգերը, նոր եւ աւելի արժանավայել կեանքի մը խոստումը կու տան խորհրդային քաղաքացիներուն եւ ժողովուրդներուն: Նոր պայմանները Խորհրդային Հայաստանի եւ Անդրկովկասի չորսուկէս միլիոն հայութեան

համար եւս ստեղծեցին հաւաքական ինքնաշեշտման եւ աւելի ազատ զարգացման զգալի կարելիութիւններ:

Ուստի ՀՅ Դաշնակցութիւնը դրական մօտեցում միայն կրնայ ունենալ Խորհրդային Միութեան վերակառուցման, հրապարակայնութեան եւ ժողովրդավարացման քաղաքականութեան, ինչպէս նաեւ տնտեսական բացման եւ ազատութիւններուն նկատմամբ, եւ իր կարելիութեանց սահմաններուն մէջ զօրավիգ կը կանգնի անոնց:

Ներազգային ճակատի վրայ, մինչեւ տակաւին վերջերս՝ Հայաստանի ժողովուրդն ու պետութիւնը զրկուած ըլլալով քաղաքական ազատ արտայայտութեան ամէն կարելիութենէ, Հայ դատի հետապնդման միակ գործօնը արտախորհրդային Սփիւռքի հայութիւնն էր: Եւ հարկ է նշել՝ որ հակառակ միջազգային կաշկանդումներուն եւ յարակից բոլոր դժուարութիւններուն, վերջին 15-20 տարիներուն աւելի շեշտակի կերպով շղթայազերծուած Հայ դատի պայքարը, իր ցուցական, քարոզչական, յարաբերական եւ դիւանագիտական երեսներով, տուաւ շօշափելի արդիւնք՝ մեր ազգային իրաւունքները ընդհանրապէս եւ հայութեան կրած Յեղասպանութիւնը յատկապէս համաշխարհային հանրային կարծիքին ծանօթացնելու տեսակէտէն:

Բայց Լեռնային Ղարաբաղի հայութեան 1988 փետրուարի արդար ընդվզումը եւ Խորհրդային Հայաստանի ժողովուրդին ամբողջական զօրակցութիւնը Արցախեան շարժման՝ էապէս զօրացուցին Հայ դատի հետապնդման կարելիութիւնները, անոնց տալով բոլորովին նոր տարողութիւն: Հայրենի մեր ժողովուրդը փաստեց որ, հակառակ տասնամեակներու իր լռութեան՝ դաժան վարչակարգի մը ներքեւ, ինք լրիւ պահած է գիտակցութիւնը հայ ազգային իրաւունքներուն եւ ունի վճռական տրամադրութիւնը զանոնք հետապնդելու՝ ըստ ամենայնի առողջ գործելակերպով եւ միակամ կեցուածքով: Հայաստանի հայութեան խիզախ այդ վարմունքը, որ իր անկաշկանդ արտայայտութիւնը գտաւ խորհրդային ներքին նոր քաղաքականութեան ստեղծած պայմաններուն մէջ, էական կարեւորութիւն ներկայացնող դարձակէտ կը կազմէ մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան եւ Հայ դատի հետապնդման



մէջ: Ան կոչուած է իր պատմաքաղաքական բովանակ նշանակութիւնը պահելու՝ եթէ նոյնիսկ, Խորհրդային Միութեան ներքին բարեփոխութեանց մասնակի թէ ամբողջական վերացումով, այդպիսի կեցուածքներ այսուհետեւ բռնի ուժով արգիլուին հայրենի ժողովուրդին:

Հայաստանը, իր շուրջ երեքուկէս միլիոն գրեթէ միաձոյլ հայութեամբ, քաղաքական հիմնական գործօն է այլեւս, որուն խաղալիք դերը, Հայ դատի հետապնդման եւ ի մասնաւորի Անդրկովկասի հայապատկան հողամասերու պահանջատիրութեան գծով, պիտի ունենայ վճռական նշանակութիւն:

Միւս կողմէ սակայն, համաթուրանական վտանգը այսօր նոյնքան առկայ է որքան երէկ: Հարկ է բացայայտել այդ վտանգը կարելի բոլոր միջոցներով եւ բոլոր մակարդակներուն վրայ, եւ խարանել ըստ ամենայնի ժամանակավրէպ ցեղապաշտ այդ վարդապետութիւնը՝ Հայաստանի եւ հայ ժողովուրդին համար աղիտալի իր առաջադրանքներով հանդերձ: Հարկ է մանաւանդ ըլլալ աջալուրջ ու շրջահայեաց՝ Հայաստանի եւ Անդրկովկասի հոժ հայութիւնը զերծ պահելու համար նոր փորձանքներէ:

Բոլոր պարագաներուն մէջ, Հայկական Արցախի եւ հայրենի հայութեան ազգային պահանջատիրութեան սքանչելի զարթօնքը: ՀՅ Դաշնակցութիւնը կը դնէ վերանորոգուող ու միշտ աւելի շեշտուող պարտաւորութեանց դիմաց: Շարունակելով գործել Հայ դատի հետապնդման այլազան մարզերուն մէջ, միշտ պահանջատէր մնալով Թուրքիայէն, արեւմտեան պետութիւններէն եւ Խորհրդային Միութենէն՝ Արեւմտահայաստանի ազատագրութեամբ Հայաստանի եւ հայ ազգի վերամիաւորման գծով, ՀՅ Դաշնակցութիւնը կը վերահաստատէ իր անմիջական պարտաւորութիւնները՝ հայրենի ժողովուրդին նկատմամբ, - լրիւ զօրավիգ հանդիսանալ անոր տրամադրութիւններուն եւ ձգտումներուն, անոր ազգային ազատութիւններուն, ընկերային եւ քաղաքական պահանջներուն. ջանալ ամէն կերպով՝ որ առողջ եւ իրատես հունի մէջ մնայ հայրենի պահանջատիրութեան շարժումը, զայն ապաժամ ու վտանգաւոր նախաձեռնութիւններէ հեռու պահելու նախանձախնդրութեամբ. օժանդակել Հայաստանի եւ Հայկական Արցախի տնտեսութեան բարուքման ու ծաղկումին ու նպաստել վերջապէս, ազգային-

հաւաքական շահերը ամէն բանէ գերադասող հայրենի արժանատւոր ու բոլորանուէր իշխանութեան մը ստեղծման:

ՀՅ Դաշնակցութիւնը վստահ է, որ հայ ազգային իրաւունքներու հետապնդման եւ հայրենի ժողովուրդին զօրակցութեան ու օժանդակութեան իր ճիգերուն մէջ, ինք պիտի շարունակէ վայելել բովանդակ հայութեան անվերապահ գործակցութիւնը: Ղարաբաղի եւ Հայաստանի վերջին շարժումները անհերքելի փորձաքար մը եղան, ապացուցանելու համար թէ Սփիւռքի բոլոր գաղութներն ու բոլոր հոսանքները ինչպիսի՛ միաձոյլ ու վճռական զօրակցութիւն կրնան յայտնաբերել՝ ի պաշտպանութիւն Մայր Հայրենիքի ժողովուրդին հարազատ տրամադրութիւններուն եւ ազգային արդար իրաւունքներուն: Համահայկական այդ հոյակապ զօրակցութիւնը պէտք է վառ մնայ ու շարունակուի: Աւելի քան երբեք ի զօրու է այսօր համազգային հրամայական կարգախօսը՝ ՄԻԱՑԵԱԼ ԵՒ ՄԷԿ ՀԱՅՐԵՆԻՔ. ՄԻԱՑԵԱԼ ԵՒ ՄԷԿ ՀԱՅՈՒԹԻՒՆ:

*ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
24-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ
Օգոստոս 1988*

ՄԻԵՒՆՈՅՆ ՃԱԿԱՏԻՆ ՄԷՋ ՀԱՄԱԽՄԲՈՒԻԼ՝ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ

Հսկած է ժամը Արցախեան շարժումի հասունացման:

Փետրուար 1988-ի պատմական ու տարերային իր պոռթկումէն հանգրուան մը յառաջ անցնելով հայրենի հայութեան պահանջատիրական զարթօնքը կը դիմագրաւէ նոր դարձակէտ մը:

Արցախը Հայաստանին վերամիացնելու պահանջով ոտքի կանգնած ժողովրդային խմբաւորումները ոչ միայն ծաւալած ու ճիւղաւորուած են այսօր, այլեւ՝ ամբողջ հայութեան ազգային-քաղաքական անկատար տենչերուն դրօշն են պարզած:

Ինչպէս յեղափոխական եռեւեփումի մէջ գտնուող բոլոր ժողովրդային շարժումներու պարագային, այդպէս ալ ահա հայրենի մեր ժողովուրդին ծոցէն ծնունդ առած մարտունակ խմբաւորումները կը դիմագրաւեն գաղափարական իրենց ուղին ճշդորոշելու եւ կազմակերպական միեւնոյն ճակատին մէջ խմբուելու մարտահրաւերը:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, որ արցախեան պահանջատիրութեան առաջին իսկ օրերէն հայ ժողովուրդին հարազատ ծնունդը նկատեց այդ շարժումները եւ զօրակցեցաւ անոնց, այսօր կու գայ հրապարակաւ ողջունելու անոնց ցիրուցան ուժերը ի մի խմբելու բոլոր նախաձեռնութիւնները:

Եւ հայ ժողովուրդի յեղափոխական կամքն ու ոգորումները մարմնացնելու պատմական իր պատասխանատուութեամբ՝ մեր կուսակցութիւնը պարտք կը զգայ թէ՛ արցախեան շարժման տարամետ խմբաւորումներուն եւ թէ՛ ընդհանրապէս պահանջատէր հայութեան ուշադրութեան յանձնելու ռազմավարական այն սկզբունքները, որոնք ուղենշային արժէք ունին հայ ժողովուրդի ազգային-քաղաքական ինքնահաստատման պայքարը յաջողութեամբ պսակելու համար:

- Արցախը Խ. Հայաստանի հանրապետական կազմին միացնելու պայքարը իր առողջ ու իրատես հունին մէջ պահելու համար, հայրենի հայութիւնը ամէն բանէ վեր պէտք է ապաւինի իր սեփական ուժին եւ, առ այդ, պէտք ունի իր քաղաքական կամքը արտայայտող բոլոր կռուաններուն՝ ժողովրդային իր կազմակերպութեանց, մտաւորականութեան եւ պետական իշխանութեանց միակամ պահանջատիրութեան:

- Հայրենի հայութեան միակամ պահանջատիրութիւնը ձեռք բերելու եւ ամրապնդելու այդ հրամայականին կը նպաստէ խորհրդային կարգերու վերակառուցան փորձին յաջողութիւնը: Հայրենի մեր ժողովուրդը պէտք է ժողովրդավարական ազատութեանց եւ ընկերային արդարութեան ամրապնդումին, որպէսզի կարենայ իր ծայր լսելի դարձնել պետական իր կեանքի ղեկավարման բոլոր մակարդակներուն վրայ: Վերակառուցման ճիգերը պէտք է տարածել յատկապէս ազգային յարաբերութեանց մարզին վրայ, որպէսզի կարելի ըլլայ յաջողութեամբ պսակել ազգային խնդիրները արդարութեան հիմունքով լուծելու եւ ազգային ինքնորոշման իրաւունքին կիրարկման իրաւական թէ գործնական սահմանները ընդարձակելու ժողովրդավարական պայքարը: Միայն այդ պարագային կ'երաշխաւորուի սեփական

ճակատագիրը լիիրաւ եւ ինքնիշխան կերպով տնօրինելու հայ ժողովուրդին ազգային տարրական իրաւունքը:

- Հայրենի հայութեան հաւաքական կամքը քաղաքական ուժի վերածելու դիտանկիւնէն՝ Հայաստանի խորհրդային կարգերուն վերակառուցման եւ ժողովրդավարականացման վրայ դրուած գրաւը կրնայ յաջողիլ միայն այն պարագային, երբ թէ՛ հայրենի կառավարութիւնը պաշտօնական իր որոշումներով եւ թէ՛ ժողովրդային շարժումները իրեն պահանջատիրութեամբ Խորհրդային Միութիւնը կը դնեն հայ ժողովուրդին արդար դատին զօրավիգ կանգնելու պարտաւորութեան տակ՝ ներքին հողերու թէ Արեւմտահայաստանի վերատիրացման ճամբով հայութեան ազգահաւաքին իրականացումը երաշխաւորելով:

- Հայ ժողովուրդի հողահաւաք-ազգահաւաք առաջնահերթ նպատակին խոչընդոտ կանգնող եւ ընդհանրապէս հայութեան ազգային, քաղաքական վերականգնումին սպառնացող գլխաւոր վտանգը համաթուրանակութիւնն է, որ մինչեւ իսկ խորհրդային կարգերու տակ՝ անուղակի թէ ուղակի կապերով՝ հակահայ միեւնոյն ճակատին վրայ մեղսակից կը դարձնէ Ազրայէճանը եւ Թուրքիոյ իշխանութիւնները, հակառակ զիրենք բաժնող պաշտօնական գունաւորումներուն:

Ռազմավարական այս սկզբունքները խարսխուած են «Ամբողջական Հայաստանի եւ ամբողջական հայութեան» ի խնդիր մղուած երկարամեայ պայքարի կենսափորձին վրայ: Պահանջատէր հայութիւնը աւելի քան 68 տարի սպասեց, որպէսզի կարենայ ուղղակի իր հայրենիքին մէջ՝ ժողովրդային իր շարժումներով, մտաւորականութեամբ թէ պաշտօնական իշխանութեամբ, հաստատական ու անվեհեր կանգնիլ Հայ դատի պայքարին յառաջապահ դիրքերուն վրայ: Իսկ այսօր, երբ հնչած է ժամը համազգային միակամ պահանջատիրութեան՝ ոչ մէկ խուսափում արտօնելի է պատմական մոմենտի այդ պատասխանատուութենէն:

Հնչած է ժամը ազգային-քաղաքական հասունացման եւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, ողջունելով համահայկական պայքարի

միացեալ ճակատ կազմելու ճիգերը, կարեւորութեամբ կը շեշտէ հայ ժողովուրդն ու անոր Դատը իբրեւ մէկ ու անբաժանելի ամբողջութիւն տեսնելու, հայրենի ու տարագիր հայութեան բազմութիւնները իբրեւ միեւնոյն դատին պահանջատէր ընդունելու եւ Հայ դատի պայքարը իբրեւ ամբողջ հայութեան անկատար տեսչերուն խտացումը դաւանելու հրամայականը:

Արցախեան զարթօնքով հայ ժողովուրդը նուաճեց իր պայքարին միութիւնը:

Համազգային միութեան այդ կամքին նուիրագործումը մենք կը սպասենք բոլոր այն խմբաւորումներէն, որոնք այսօր լծուած են հայրենի հայութեան ժողովրդային շարժումը միակամ ճակատով կազմակերպելու ճիգին:

Կեցցէ՛ հայ ժողովուրդը,

Կեցցէ՛ հայ ժողովուրդին միակամ պայքարը՝ ի խնդիր ազգային-քաղաքական իր բոլոր իրաւունքներու նուաճումին:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
Յուլիս 1989

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԷ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ ԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ ընկերներ Հրայր Մարուխեան եւ Հրաչ Տասնապետեան 8 օգոստոսին հրապարակած են ՀՅԴ Բիւրոյի ստորեւ տրուած յայտարարութիւնը՝ ՀՅ Դաշնակցութեան իբրեւ կազմակերպութիւն Հայաստանի մէջ ներկայութեան եւ գործունէութեան մասին:

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետութեան ներկայ իրավիճակը, յատկապէս՝ Արցախի սպառնացող վտանգը եւ մեր ազգային ազատագրական շարունակուող պայքարի ներկայ փուլին թելադրանքները, ՀՅ Դաշնակցութիւնը կը բացայայտէ իր կազմակերպական ներկայութիւնը՝ Հայաստանի ամբողջ տարածքին եւ կը յայտնէ հայ ժողովուրդին, որ

Ա.- ՀՅ Դաշնակցութիւնը շուտով կ'ունենայ Հայաստանի իր կեդրոնական գրասենեակը, պաշտօնաթերթը եւ

մամլոյ տեղեկատուական կեդրոնը:

Բ.- Յառաջիկայ ամիսներուն, ՀՅ Դաշնակցութիւնը հայրենի հայրութեան կը ներկայացնէ գործունէութեան իր պաշտօնական փլաթֆորմը՝ քաղաքական, տնտեսական, հասարակական եւ ընկերային մարզերուն մէջ:

Գ.- Եւ վերջապէս, զինուած՝ ազգային ազատագրական պայքարի մեր հարիւրամեայ փորձառութեամբ, առաջնորդուելով ազգային պահանջատիրական պայքարի միասնութեան հրամայականով, ՀՅ Դաշնակցութիւնը իր բոլոր ուժերն ու կարողականութիւնը այսուհետեւ եւս ի սպաս կը դնէ հայ ժողովուրդի ազգային եւ մարդկային իրաւունքներու ձեռքբերման եւ հայրենիքի քաղաքական, հասարակական, տնտեսական, գիտա-թեքնիքական եւ մշակութային հզօրացման:

Հայաստանի ինքնիշխան իրավիճակի իրագործումէն մինչեւ միացեալ, ազատ եւ անկախ Հայաստանի կերտումը, մեր պայքարը երկարաշունչ է եւ դժուարին: Պէտք է տոկակ, պէտք է պայքարիլ եւ հանգրուանային նուաճումներով հասնիլ մեր ազգային տեսլականի իրագործման:

Յանձնառութեան եւ նուիրումի այս ճամբուն վրայ ՀՅ Դաշնակցութիւնը գիտակցօրէն կը ստանձնէ իրեն վիճակուած առաքելութիւնը:

*ՀՅԴ ԲԻՒՐՕ
8 օգոստոս 1990
Երեւան*

ԵՐԿԱՐԱՇՈՒՆՉ ՊԱՅՔԱՐԻՆ ԴԻՄԱՆԱԼՈՒ ՈՒՂԻՆ

Արցախեան շարժումը թեւակոխած է հանգրուան մը, ուր արտերկրի հայրութիւնը ստիպուած է մտածելու ոչ միայն անմիջական իր զօրակցութիւնը ուժեղացնելու հրամայականին, այլեւ երկար վազքի վրայ իր առջեւ բացուող հեռանկարներուն մասին:

Երբ խորհրդային ամբողջատիրութիւնը ամէն քայլափոխի դէմ յանդիման կը դրուի իր սահմանփակումներուն եւ մասնկութեան հայրենի հայրութիւնը հասկնալիօրէն պէտք ունի ազգային քաղաքական ուժի

իր բոլոր կռուաններուն առաւելագոյն լարումին, որպէսզի ի վիճակի ըլլայ տէր կանգնելու հաւաքական իր գալիքին:

Համազգային զօրաշարժի այդ հրամայականը բնականաբար իր տրամաբանութիւնը կը պարտադրէ նաեւ ու մանաւանդ արտերկրի հայրութեան: Եթէ մինչեւ նոյեմբեր 1989 եւ Արցախը վերստին Ազրպէյճանի քմայքին ենթարկելու քրեմլեան որոշումը արտերկրի հայրութիւնը իր կարգին կ'ապրէր ու կը գործէր օրը օրին զօրակցութեան հասնելու հետքով, այսօր արդէն հնչած է ժամը համայն հայ ժողովուրդին պարտադրուած ճգնաժամին մէջ սեփական տեղն ու ընելիքը որոշելու եւ ըստ այն շարժելու ստիպողութեան:

«Դէպի երկիր» զօրաշարժը արդէն նուաճած է իր յառաջխաղացքին առաջին փուլը եւ պարտաւոր է անցնիլ յաջորդ քայլին: Փետրուար 1988-էն ասդին՝ արտերկրի հայրութիւնը ոչ մէկ առիթ փախցուց, հաստատելու համար որ իր հայեացքը սեւեռած է Արարատին եւ անոր մարմնաւորած ազգային-քաղաքական բոլոր արժէքներուն ուղղութեամբ, որոնք մեր ժողովուրդի ազատագրական պայքարին անկորնչելի ասանդը կը կազմեն: Արցախին եւ Հայաստանին օգնութեան եւ զօրակցութեան ձեռք երկարեցին անխտիր բոլոր մեր գաղութները: Զօրաշարժէն հեռու չմնացին եւ, ընդհակառակն, որոշ պարագաներու նաեւ ուսանելի օրինակ հանդիսացան իրենց կարգին աղէտահար մեր շրջանները, ինչպէս Լիբանանն ու Իրանը:

Եւ հայ քաղաքական միտքը ամէն իրաւունք ունի հպարտութեամբ եւ ինքնավստահութեամբ հաստատելու, որ հակառակ մէկ կողմէ Թուրքիոյ գործադրած ցեղասպանական ոճիրին եւ մեր ժողովուրդի աշխարհասփռումին, իսկ միւս կողմէ՝ ստալինեան բռնակալութեան եւ ընդհանրապէս խորհրդային ամբողջատիրութեան պարտադրած կաշկանդումներուն ու հալածանքներուն, հայ ժողովուրդը մէկ ազգի եւ մէկ հայրենիքի պատկանելու գաղափարական իր ներշնչումէն բնաւ չէ խզուած, առաջին առիթով իսկ տալով ապացոյցը միասնութեան իր ձգտումին:

Բայց ահա՛ երկարաշունչ դիմադրութեան ու պայքարի հանգրուան մը կը թեւակոխենք ազգովին: Թէ՛ Արցախի եւ թէ՛ նոյնինքն Հայաստանի հաշուոյն կարճատես պէտք է

ըլլալ, չանդրադառնալու համար որ արագ եւ դիրին լուծումներ չկան հայութեան առջեւ՝ հակառակ անոր որ աշխարհի այդ գօտիին մէջ ժամանակը սրընթաց կը թաալի, ամէն օր անակնկալներ երեւան կը բերէ եւ չի սպասեր, որ մեր ժողովուրդը կարենայ ինքզինք վերագտնել, դէպքերուն հետեւողի իր տկար դիրքէն դուրս գալ եւ պատմութեան անիւր առաջ մղելու ուժականութիւն ձեռք ձգել:

Յատկապէս արտերկրի հայութիւնը ծանրակշիռ սխալ կը գործէ, եթէ երկար վազքի վրայ իր առջեւ դրուող խնդիրները լուծելու մարտահրաւերներին չկարենայ ընդառաջել արժանատրապէս: Իսկ այդ դիտանկիւնէն անհրաժեշտ է առաջին հերթին համազգային սկզբունք եւ ուղեգիծ դարձնել իբրեւ մէկ ու անբաժանելի ամբողջութիւն հարցերուն մօտենալու եւ գործելու առաջադրանքը:

Արտերկրի հայութիւնը սոսկ ուժի պահեստանոց մը չէ, որուն ըստ կարիքի եւ ի հարկին կրնայ դիմել հայրենի մեր ժողովուրդը: Ոչ ալ երկիրը սոսկ այն հողն է, որուն ի նպաստ արտասահմանէն եկող ամէն օգնութիւն կը վերածուի ապահով ներդրումի մը, որովհետեւ վաղը կրնայ բազմապատկուած բարիքով վերադարձուիլ եւ ծառայել արտերկրի հայութեան ծով կարիքներուն: Եւ արտերկրի հայութիւնը, եւ նոյնիսկ երկիրը անելին են, անբաժանելի մէկ ամբողջութիւն են եւ ըստ ամենայնի կոչուած են միասնաբար պայքարելու, որպէսզի կարենան այրել - Քրիստափորի բառերով - այս կամ այն բռնապետի ձեռքով գծուած եւ զիրենք բաժնող արուեստական ու անարդար սահմանները:

Արցախեան շարժումէն երկուքուկէ տարի ետք, ինչպէս որ Արցախն ու Հայաստանը ընտրած են իբրեւ մէկ ու միացեալ հանրապետութիւն գործելու եւ մտածելու ուղղութիւնը, այնպէս ալ արտերկրի հայութիւնը կը գտնուի թէ՛ իր տկարութիւնները եւ թէ՛ իր հնարատրութիւնները հայկական միացեալ այդ հանրապետութեան հետ միաձուլելու, իբրեւ այդպիսին իր գաղութներուն թէ՛ հայրենի հողին նայելու հարկին տակ:

Հարցը չի սահմանափակուի միայն գաղափարական միասնութիւն եւ կարելիութեանց համակարգեալ արդիւնատրում առաջացնելու եզրերով:

Հանգրուանը կը պարտադրէ այդ միասնութեան տալ թէ՛ քաղաքական-

ռազմավարական եւ թէ՛ պետական-կազմակերպական համապարփակ զօրաշարժի տարողութիւն:

Հայ քաղաքական մտքի ուսերուն կը ծանրանայ այդ զօրաշարժին առաջնորդող ուղիները գտնելու պատմական պատասխանատուութիւնը:

«ԴՐՕՇԱԿ»
Յունիս 1990

ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Փոխանցման հանգրուանը պաշտօնապէս նուիրագործուեցաւ հայրենի իրականութեան մէջ: Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութեան եւ երկրի վարչապետին ընտրութեամբ՝ հայրենի պետութիւնը քաղաքականօրէն վերջակէտ դրաւ իշխանութեան վրայ Կոմկուսի հայաստանեան կազմակերպութեան պարտադրած մենաշնորհին: Երբեմնի «Ղարաբաղ կոմիտէ»-ն եւ այժմու հայոց Համազգային Շարժման վարչութիւնը իր ձեռքը առաւ հայրենիքի օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանց ղեկը:

Հայրենի մեր ժողովուրդը այսպիսով կը թեւակոխէ փոխանցման շրջան մը, որովհետեւ մէկ կողմէ պետական ամբողջատիրութեան կապանքներէն, բայց միւս կողմէ դէմ յանդիման կը դրուի մեծ հարցականներու, որոնք կը վերաբերին Հայաստանի պետական իրավիճակին, հիմնական սահմանադրութեան, իշխանութեանց ժողովրդավարական կազմութեան ու գործընթացին եւ, վերջին հաշուով, երկրի քաղաքական ուժերու նոր պատկերի բիրտղացումին:

Փոխանցման հանգրուանին ազդանշանը տրուեցաւ այն պահէն, երբ վերաճնեալ Հայաստանի պետական, քաղաքական եւ կառավարական հիմերը ճշդող սահմանադրական հռչակագիրը որդեգրելէ առաջ, բայց անելի ճիշդ պատմական այդ քայլը նետելու փոխարէն՝ երկրի նորընտիր Գերագոյն Խորհուրդը փութաց նախ Կոմկուսը հեռացնելու պետութեան ղեկավարի դիրքէն: Տարբեր բան չեն ըսեր Լեոն Տէր Պետրոսեանի Գերագոյն Խորհուրդի նախագահ ընտրութեան դիմագրուած դժուարութիւնը եւ անելէն դուրս գալու համար պարզուած համախոհութիւնը՝ ՀՀԸ-ի եւ Կոմկուսի որոշ շրջանակներուն միջեւ:

Հասկնալի է, անշուշտ, հայրենի քաղաքական բեմին վրայ ստեղծուած նման իրավիճակ մը: Հակառակ իր վարկաբեկման՝ Կոմկուսի հայաստանեան կազմակերպութիւնը մինչեւ վերջին շունչ կառչած կը մնայ իշխանութեան իր առանձնաշնորհումին. մարտ 1989-էն մինչեւ մայիս 1990, հակառակ մեր ժողովուրդին պետական պատգամաւորները ազատօրէն ընտրելու պաշտօնական կանաչ լոյսին, Կոմկուսի հայաստանեան վարիչները ամէն ճիգ թափեցին որպէսզի խափանեն ամենայն հայոց պետութիւն ու կառավարութիւն ստեղծելու փորձերը: Ատիկա դժուարացուց նաեւ փոխարինող ուժի բիրտեղացման հոլովոյթը, մանաւանդ որ Լեւոն Տէր Պետրոսեան, Վազգէն Մանուկեան եւ իրենց գործակիցները չկրցան թէ՛ ազգային-քաղաքական ուղեգիծի իմաստով մեր ժողովուրդի վստահութեան արժանի փոխընտրութիւն մը հրամցնել, թէ՛ իրենց շուրջ մէկտեղել ու միացեալ ճակատի մը վերածել Արցախեան շրջադարձով պայքարի դաշտ նետուած նորայայտ ուժերը:

Հետեանքը ծանօթ է. Հայաստանի ինքնիշխանութեան եւ անկախացման, տնտեսական վերակազմակերպման ու հզօրացման, հպատակութեան նոր օրէնքի, երկիրը նախագահական իշխանութեամբ օժտելու եւ կուսակցութեանց ազատ գործունէութիւնը երաշխաւորելու օրէնքներուն մասին տակաւին գերիշխող կը մնայ ամբոխավարութիւնը, երբ շատոնց հնչած է քաղաքական հասունացման ժամը:

Վստահօրէն տարբեր պատկեր պիտի պարզէր հայրենի քաղաքական բեմը եւ ժողովրդային վստահութեան պակասի երեւոյթը յաղթահարուած պիտի ըլլար, եթէ մարտ 1989-ի ընտրութեանց գայթակղութենէն ասդին՝ քայլ առ քայլ ամբողջանար իրաւական պետութեան եւ ժողովրդավարական կարգերու հաստատման եղելոյթը:

Ամէն պարագայի, վերջապէս կարելոր ու վճռական քայլ մը նետուած է այդ ուղղութեամբ՝ Կոմկուսի առանձնաշնորհումին վերջ տալով: Կը մնայ փոխանցման այս հանգրուանը զերծ պահել ամէն գնով իշխանութեան հասնելու երէկի հեւքէն: Ընդհակառակն՝ ոչ մէկ ճիգ պէտք է խնայել, որպէսզի ժողովրդավարական վարքագիծը իր օրէնքները, տրամաբանութիւնը եւ համապատասխան յանձնառութիւնները հանրապարտադիր

դարձնէ եւ Գերագոյն Խորհուրդի նորընտիր պատգամաւորներուն, եւ անոնց վրայ հրապարակներէն ճնշում բանեցնող զինեալ տարրերուն, եւ ընդհանրապէս հայրենի քաղաքական ուժերուն համար:

Ժողովրդավարական այդ վարքագիծին հանդէպ ամբողջական ու անսակարկ յանձնառութիւն ունի մեր կուսակցութիւնը որ իր Բիւրոյի ներկայացուցիչներով պաշտօնապէս շնորհաւորեց հայրենի իշխանութեանց նորընտիր վարիչները, համազգային մեր հիմնահարցերուն բարուք լուծման ի խնդիր գործակցութեան իր պատրաստակամութիւնը փոխանցելով անոնց: Վերջին հաշուով փոխանցման զգայուն հանգրուանէ մը կ'անցնի հայրենիքը եւ գործակցութիւնը անհրաժեշտ պայման է, որպէսզի միասնական ուժերով կարենանք յաղթահարել մասնակացման մատնուած հայոց պետութեան դիմագրաւած դժուարութիւնները եւ վտանգները:

Ժողովրդավարական այդ վարքագիծն է միաժամանակ այն երաշխիքը, որուն միջոցաւ մեր ժողովուրդը եւ անոր տենչերը արտայայտող ուժերը ոչ միայն պիտի կարենան իրենց մասնակցութիւնը բերել իրաւական պետութիւն եւ ամենայն հայոց կառավարութիւն ստեղծելու փորձերուն, այլեւ ու մանաւանդ պիտի յաջողին առողջ հակակշռի տակ առնել մեր երկրի նորընտիր վարիչները՝ ազգային - պետական մեր պայծառ գալիքը մթազնող ամէն կարգի վրէպներէ հեռու պահելու համար զանոնք:

«ԴՐՕՇԱԿ»
Օգոստոս 1990

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ
ԲԱՅԱՍԱԿԱՆ
ԿԵՑՈՒԱԾՔԻՆ ԴԷՄ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Ի նկատի ունենալով վերջին շրջանում Խորհրդային Միութեան կենտրոնական իշխանութիւնների կողմից դրսևերուած վարչական ու քաղաքական տեսակէտից հակաժողովրդավարական կեցուածքները եւ քննելով այդ կեցուածքներին տուն տուող նպատակներն ու դրդապատճառները եւ ցաւով հաստատելով՝

1.- Որ վերակառուցում անունով հրապարակ նետուած քաղաքականութեան հոլովոյթը այսօր, անցեալի նկատմամբ,

ակնբախ նահանջ է ապրում եւ հակում ցոյց տալիս դէպի կարծրացում,

2.- Որ Խորհրդային Միության կենտրոնական իշխանությունները Միության ամբողջությունը պահպանելու մտահոգությամբ հակուած են նոյնիսկ բրտություններու դիմելու հանրապետությունների ամբողջական ինքնավարության ուղղությամբ ամէն շարժման կամ ներքին փոփոխության ծգտող արմատական ամէն կարգի բարեփոխությունների դէմ,

3.- Որ արցախեան շարժումի նկատմամբ կենտրոնական իշխանությունները ցուցաբերում են կողմնակալ եւ անարդար վերաբերմունք,

4.- Որ Կորպաչեւի նորագոյն յայտարարությունները՝ Թուրքիայից հողային պահանջներ չունենալու կապակցությամբ յիշեցնում են Ստալինից սկսեալ Խորհրդային Միության նախորդ վարիչների նմանօրինակ յայտարարությունները եւ կազմում են հայ ազգային իրաւունքների կոպիտ անտեսում,

ՀՅ Դաշնակցութիւնը որոշում է ներքին եւ արտաքին քարոզչական պայքար շղթայազերծել այս բոլոր երեւոյթների դէմ՝ մերկացնելով նրանց էութիւնը, եւ ամէն կերպ աշխատել ժողովրդավարության եւ ժողովուրդների ազատ ինքնորոշման նուիրական սկզբունքների պաշտպանութեան ուղղութեամբ:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
26 մարտի 1991
Ք. երեւան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարտունաշէնի, Գետաշէնի, ընդհանրապէս Արցախի, ինչպէս նաեւ Հայաստանի դէմ կենտրոնական եւ Ազրայէճանի իշխանությունների համատեղ ծրագրումով եւ նախաձեռնությամբ կատարուած նախայարձակումը նկատում ենք մարդկային իրաւունքների եւ ազգերի ինքնորոշման սկզբունքների ամենաբիրտ խախտում, հայ ժողովրդի հանդէպ յանցաւոր վերաբերմունք եւ ոճիր մարդկութեան դէմ: Դաւադրական եւ անարդար այսպիսի մի կեցուածք, ինչպիսին է ներկայիս բանակի ընթացքը Արցախ - Գետաշէնում, կանխատեսելի էր եւ ամէն կերպ պէտք է դիմագրաւուէր

ազգովին եւ պետականօրէն:

ՀՅ Դաշնակցութեան Բիւրոն կազմակերպական իր բոլոր կարելիութիւններով, Հայաստանի եւ արտերկրի Կենտրոնական կոմիտէների ու շարքերի ամբողջական հնարաւորութիւններով յարում է Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի 30 ապրիլի 1991 թուակիր յայտարարութեան տրամադրութիւններին՝ իր քաղաքական, մարդկային եւ կազմակերպական ուժերը դնում է Հայաստանի նախարարների խորհրդի տրամադրութեան տակ՝ համոզումով, որ Հայաստանի իշխանությունները պետականօրէն եւ անյապաղ պաշտպան կը կանգնին Արցախի ու Գետաշէն-Շահումեանի հայութեանը:

ՀՅԴ Հայաստանի մայր կազմակերպութեան Կենտրոնական կոմիտէի առաջարկով՝ 30 ապրիլի 1991 թուականի կէսօրուայ ժամերից սկսած արդէն իսկ շարժման մէջ են դրուել արտերկրի կազմակերպական մեր բոլոր շրջանները՝ միջազգային քաղաքական շրջանակներին մղելու, որ իրենց բոլոր ջանքերը ի գործ դնեն հայ ժողովրդի դէմ ուղղուած դաւադրական գործողութիւններին վերջ դնելու համար:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԷ

**ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԳՐԱՆՑՈՒԵՑ
ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ**

1991 թ. յուլիսի 11-ը նշանաւոր օր է Հայ յեղափոխական դաշնակցութեան տարեգրութեան մէջ. հարիւրամեայ հարուստ պատմութիւն ունեցող կուսակցութիւնը պաշտօնապէս ճանաչուեց հայրենիքում: Կուսակցութեան գրանցման արարողութեանը, որը տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութիւնում, ներկայ էին նախարար Վահէ Ստեփանեանը, նախարարի տեղակալներ Լեւոն Աւետիսեանը եւ Տիգրան Պետրոսեանը, Հայ յեղափոխական դաշնակցութեան Հայաստանի Կենտրոնական կոմիտէի քաղաքական դիւանի ներկայացուցիչներ

ընկերներ Ռուբէն Յովսէփեանը եւ Հրայր Կարապետեանը ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Խաժակ Տէր Գրիգորեանը, ՀՅԴ Մամլոյ եւ տեղեկատու գրասենեակի պատասխանատու Աբօ Պողիկեանը, կուսակցութեան գործիչներ Տիգրան Ճինպաշեանը եւ Շանթ Եագուպեանը, մամուլի եւ հեռուստատեսութեան աշխատակիցները:

Ընկ. Ռ. Յովսէփեանին յանձնելով կուսակցութեան գրանցման վկայականը, Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարար Վահէ Ստեփանեանն ասաց, որ հիմա Հայաստանի քաղաքական կեանքում կուսակցութիւնների դերը չափազանց մեծ է: Այն էլ անելի է մեծանում նոր պետականութեան հաստատման շրջանում: Չնայած յաճախ դժգոհում են, որ արագօրէն փոփոխուող իրադարձութիւնների պայմաններում միշտ չէ, երբ իշխանութիւնները ճիշդ որոշումներ են ընդունում, սակայն ներքին եւ արտաքին քաղաքականութեան ռազմավարութեան եւ մարտավարութեան մշակումը կուսակցութիւնների խնդիրն է: Եթէ այդ բոլոր հարցերը թողնուեն միայն իշխանութեանը, ապա մենք կ'ունենանք մի ծրագիր, մի քաղաքականութիւն եւ չի լինի այլընտրանք ու բազմակարծութիւն: Այս առումով, այսօր եւս մէկ քայլ է արում դէպի բազմակուսակցականութիւն, ինչը նպաստում է ժողովրդավարութեան հաստատմանը հանրապետութիւնում:

Պատասխան խօսքում ընկ. Յովսէփեանը շնորհատրեց ՀՅ Դաշնակցութեանը՝ աքսորի, բանտարկումների, հալածանքների, վտարանդիութեան տարիներից յետոյ Հայաստանում պաշտօնապէս գրանցուելու առիթով: Նա ասաց, որ շնորհատրում է նաեւ ողջ ժողովրդին՝ բազմաթիւ կուսակցութիւնների գրանցման համար, քանզի բազմակուսակցականութիւնը ժողովրդավարութեան անհրաժեշտ պայմաններից մէկն է:

ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Խաժակ Տէր Գրիգորեանը ասաց, որ այս պահը բացառիկ է Հայ յեղափոխական դաշնակցութեան համար, կազմակերպութիւնը մինչ այդ երբեք պետականօրէն չէր գրանցուած, իսկ այսօր պաշտօնական ճանաչում է ստանում իր հարազատ երկրում: Ընկ. Տէր Գրիգորեանը ՀՅԴ Բիւրոյի անունից հաւաստիացրեց, որ օրինական

պայմաններում կազմակերպութիւնը իր բոլոր կարելիութիւնները տրամադրելու է հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետութեան բարգաւաճման գործին:

ՀՅ Դաշնակցութեան գրանցման արարողութիւնից յետոյ արդարադատութեան նախարար Վ. Ստեփանեանը, ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտէի քաղաքական դիւանի ներկայացուցիչ ընկ. Ռ. Յովսէփեանը եւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Խ. Տէր Գրիգորեանը պատասխանեցին «Լրաբեր» եւ «Հորիզոն» հեռուստաձրագրերի թղթակիցների հարցերին:

«ԴՐՕՇԱԿ»
31 յուլիս 1991

ՀԱՅԱՍՏԱՆ ՇԱՀԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԸ ԲԱՅՑ ԿՈՐՄՆՑՈՒՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԻԹ ՄԸ

Հոկտեմբեր 16-ի նախագահական ընտրապայքարը անարտեցաւ այն արդիւնքով, որ ընտրութենէն առաջ արդէն կը նախատեսուէր խորհրդային պաշտօնական աղբիւրներու կողմէ հաղորդուած տուեալներով: Հայաստանի Գերագոյն խորհուրդի վարիչ շրջանակներուն կողմէ յայտարարուած է ԹԱՍՍ-ի հաղորդումներով արտասահման փոխանցուած ընտրական նախատեսութիւնները անելի քան հաստատուեցան հոկտեմբեր 16-ին, երբ Լեւոն Տէր Պետրոսեան Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ նախագահ ընտրուեցաւ քուէներու անելի քան 83 տոկոսով, միայն եօթը եւ չորս առ հարիւրի տոկոսային բաժին մը ձգելով յաջորդաբար Պարոյր Հայրիկեանի եւ Սօս Սարգսեանի:

Ընտրութեանց արդիւնքը հատու է եւ, իբրեւ այդպիսին, մանաւանդ իբրեւ նախօրօք իսկ վճռուած արդիւնք՝ ուսանելի շատ երեսներ կը բանայ Հայաստանի մէջ ժողովրդավարական կարգերու վերականգնման պայմանները եւ ուղղութիւնները քննելու իմաստով: Նման արդիւնք մը բազմաթիւ հարցականներ կը դնէ հայ քաղաքական մտքին առջեւ՝ թէ՛ մեր երկրի ընտրական ամբողջ համակարգին, թէ՛ ընտրութեանց գործնական կազմակերպման եւ թէ

ընդհանրապես հայրենի հայության քաղաքական տրամադրություններուն ու կողմնորոշումներուն մասին: Բայց ժամանակին ու դէպքերու հետագայ զարգացման վերապահելով այդ բոլորին յստակացումը, առաջին հերթին պէտք է շարունակել ժողովրդավարութեան ի խնդիր սկսած երթը, եւ, ամէն բանէ վեր, շնորհաւորել մեր հայրենիքին նորընտիր նախագահը:

Յանձին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի՝ Հայաստան փաստօրէն շահեցաւ պետական իր վարչախաւին եւ ժողովրդային նախասիրություններուն միասնական մարմին տուող ղեկավար անձնաւորութիւն մը: Կարելոր է այդ քայլը յատկապէս մեր երկրին համար, որ նախագահական իշխանութիւն հաստատելու որոշումը առաւ 70-ամեայ ամբողջատիրութենէն ժառանգուած վարչախաւին բեռը թօթափելու առաջադրութեամբ, բայց որ ահա նոյն այդ վարչախաւին եւ անոր դէմ պայքարի դրօշ պարզած ուժերուն զինակցութեան խորհրդանիշը կը գտնէ նորընտիր նախագահին տրուած քուէներուն տոկոսային արդիւնքին մէջ:

Ճիշդ է, վերակազմուող Խորհրդային Միութեան մէջ, գրեթէ բոլոր հանրապետութեանց պարագային, նախագահական ընտրապայքարները ընդհանրապէս յանգեցան տոկոսային նմանօրինակ արդիւնքներու: Բայց այս անգամ եւս Հայաստան հանդիսացաւ առաջին հանրապետութիւնը, որ պետական վարչախաւին ու անոր ծնունդ տուող Համայնավար կուսակցութենէն վերապրող տարրերուն հետ հատու ճակատումի մը իմաստը չտուաւ իր նախագահի ընտրութեան: Եթէ ընդհանրապէս միւս հանրապետութեանց մէջ դեմոկրատները պարտութեան մատնեցին Կոմկուսի կազմակերպութիւնները, իսկ Ազրպէյճանի օրինակով այլ հանրապետութեանց մէջ անուանափոխուած Կոմկուսները պարտութեան մատնեցին դեմոկրատները, Հայաստանի մէջ արձանագրուեցաւ հիմնովին տարբեր արդիւնք.- պետական վարչախաւը եւ դիմափոխուած համայնավարները միասնական ճակատ մը կազմեցին Հայոց համազգային շարժման հետ՝ ընտրական ծանր պարտութեան մը մատնելով հայրենի ժողովրդային շարժման մնացեալ նախագահական թեկնածուները:

Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է առաջին հերթին շնորհաւորել նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ընտրական յաղթանակը: Մանաւանդ ՀՅ Դաշնակցութիւնը յատուկ պատճառ ունի շնորհաւորելու մեր երկրին նորընտիր նախագահին իրագործած այս զինակցութիւնը, որովհետեւ փետրուար 1988-էն ասդին հայրենի քաղաքական բեմը շատ սուղ գին վճարեց պետական վարչախաւին տիրանալու համար վերոյիշեալ ուժերու միջեւ մղուած պայքարներուն: Հակառակ անոր որ գաղափարական մեր շարժումը շարունակ հանդէս եկաւ հայրենի պետական ղեկավարութիւնը միշտ միակամ պահելու եւ ուժեղացնելու առաջադրութեամբ, այսուհանդերձ՝ ՀՀԸ-ի եւ Կոմկուսէն ժառանգուած պետական վարչախաւին միջեւ ինքնանպատակ առձակատումները շարունակուեցան, իսկ Դաշնակցութիւնը անոպայ յարձակումներու թիրախ դարձաւ՝ իբրեւ ՀՀԸ-ի դէմ եւ Կոմկուսի կողքին դիրք ձեռնած կազմակերպութիւն: Թէ՛ նախագահական պաշտօնը հաստատելու իր հետեւողական ճիգերով եւ թէ՛ հոկտեմբեր 16-ի ընտրութեանց ընթացքին ՀՀԸ - պետական վարչախաւի ընտրական զինակցութիւնը իրագործելով՝ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան ի վերջոյ յաջողեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը դուրս բերել պետական վարչախաւի ներքին ու ցլատիչ մրցակցութիւններէն, ապահովելով չէզոքութիւնը եւ այդ ճամբով լուռ գործակցութիւնը մինչեւ անգամ նախորդ վարչապետ Վազգէն Մանուկեանի ու անոր համախոհներուն պէս դժգոհ ուժերու:

Կը մնայ մաղթել, որ ընտրական գետնի վրայ իր ձեռքբերած այդ զինակցութիւնը նախագահ Տէր Պետրոսեան յաջողի վերածել ազգային-քաղաքական համերաշխութեան մեկնակէտի՝ ի սպաս հայրենի հայության ազգային իրաւունքներուն եւ տենչերուն իրագործման: Մեր երկրի նորընտիր նախագահը իր ձեռքը ունի ժողովրդային քուէներու այնքան զօրաւոր տոկոս մը, որ այլեւս պէտք չունի քաղաքական տուրք վճարելու եւ աջ ու ահեակ խարխափելու՝ հայրենի պետութեան առջեւ դրուած ճակատագրական հարցերուն ու տագնապներուն բարուք լուծումներ գտնելու իր փորձերուն ընթացքին:

Գաղափարական մեր շարժումը սրտցաւութեամբ կը կատարէ այդ բարեմաղթութիւնը, որովհետեւ հոկտեմբեր

16-ի նախագահական ընտրապայքարը եկաւ հաստատելու, թէ Հայաստան շահեցաւ նախագահ մը, բայց կորսնցուց պատմական առիթ մը: Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան պարտաւորուեցաւ շատ ծանր գին վճարել Կոմկուսէն վերապրած պետական վարչախաւին ու մեր երկիրը շահագործման ազարակի վերածած ծանօթ ուժերուն, որպէսզի կարենայ ապահովել ընտրական այս արդիւնքը: Եւ այդ գինը ուրիշ բան չէ, եթէ ոչ արցախեան շարժման հետ կեանքի կոչուած ժողովրդային ուժերուն պարտադրուած ընտրական դառն պարտութիւնը:

Հայ յեղափոխական դաշնակցութեան Հայաստանի մայր կազմակերպութիւնը փաստօրէն կը բաժնէ հայրենի ժողովրդային շարժման բաժին հանուած այդ պարտութիւնը: Ժամանակը վստահաբար կը յստակացնէ, թէ գաղափարական ու քաղաքական մեր ասանդներուն ու առաջադրանքներուն՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի դաշնակցական հանգանակին այնքան ջերմեռանդութեամբ փարող հայրենի հայութիւնը, ինչն էլ ինչպէս դրուեցաւ հոկտեմբեր 16-ի արդիւնքը ստորագրողի վիճակին մէջ: Ժամանակը նոյնպէս կը յստակացնէ, թէ երկրի մեր կազմակերպութիւնը ինչն էլ ինչպէս չկրցաւ համնիլ մեր ժողովուրդին՝ անոր դուրս բերելու համար պետական վարչախաւին առջեւ անգամ մը եւս խոնարհելու վիճակէն: Բայց ժամանակի այդ յստակացման սպասելով եւ ինքնաքննադատութեամբ, ինքնասրբագրումով եւ յաւելեալ գօտեպրկումով քաղաքական մեր պայքարը շարունակելու դաշնակցական վճռականութիւնը վերանորոգելով հանդերձ՝ պարտաւոր ենք հայրենի մեր ժողովուրդին պարզել ծանրութիւնը արձանագրուած կորուստին:

70-ամեայ ամբողջականութեան ահաւոր լուծը թօթափելու իր պայքարին մէջ՝ հայրենի հայութիւնը կրնար պատմական դարձակէտի մը վերածել հոկտեմբեր 16-ի նախագահական ընտրապայքարը, եթէ ի վիճակի ըլլար այդ առթիւ բիրեղացում մտցնելու Հայաստանի քաղաքական ուժերու քարտէսին մէջ: Այն բիրեղացումը, որ նախապայմանը կը հանդիսանայ ժողովրդավարական որեւէ երկրի, ուր մինչեւ անգամ նախագահի մը ընտրութիւնը կը ծառայէ գործող քաղաքական ուժերուն

վայելած ժողովրդականութեան տոկոսին յստակցման: Մինչդեռ հոկտեմբեր 16-ի ընտրութիւնը ծառայեց անհատ գործիչի մը՝ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի վայելած ժողովրդականութեան նուիրագործումին, առանց որ անոր թեկնածութեան շուրջ զինակցած տարամէտ ուժերէն իւրաքանչիւրին քաղաքական կշիռը ստանայ անհրաժեշտ յստակացումը: Այդ պատճառով ալ Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ նախագահը, հետագայ իր քայլերուն մէջ, կրնայ որեւէ ատեն ճնշումի տակ առնուիլ իրեն զօրակցած ուժերուն կողմէ, որոնց ծիրը կը տարածուի ՀՀԸ-էն մինչեւ Սոցիալ-Դեմոկրատ վերանուանուած Կոմկուսի հատուածը...

Մենք վստահ ենք, որ ամէնէն առաջ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան ինք կը գիտակցի հանրապետութեան գերագոյն ղեկավարի գործունէութեան գլխուն կախուած դամոկլեան այդ սուրին: Նախագահելու կը կոչուի պետութեան մը մէջ, ուր ժողովրդավարական եզրերով ընդդիմադրութիւն փաստօրէն գոյութիւն չունի, որովհետեւ ժողովրդային շարժումը ներկայացնող ուժերը փաստօրէն դուրս ձգուած են պետական ղեկավարման օրինական խաղէն եւ դարձեալ միեւնոյն վարչախաւն է, որուն հետ հաշուի նստելու պարտաւորութեան տակ պիտի գտնուի Հայաստանի նախագահը՝ կարեւոր իր նախաձեռնութեանց պահուն:

Դժուարութեան իր այդ պահերուն՝ նորընտիր նախագահը ի հարկին իր կողքին պիտի գտնէ գաղափարական մեր շարժումը: Թէ՛ ՀՀԸ-ական իր անցեալի կուրսին եւ թէ՛ նախագահական իր թեկնածութեան դէմ Դաշնակցութեան որդեգրած ընդդիմադիր կեցուածքը կը թելադրուի հայ ազգային քաղաքականութեան արթուն պահակի եւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարական ասանդներուն դրօշակիրի մեր յանձնառութենէն: Իսկ նախագահ իր ընտրութենէն ետք՝ մեր առջեւ կը բացուի հայրենի պետութեան նախագահական իշխանութեան կռուանները ամրապնդելու կարեւոր հանգրուան մը, ուր առաջնահերթաբար դարձեալ կը ցցուի հայրենի քաղաքական ուժերը անխուսափելի բիրեղացման առաջնորդելու հրամայականը: Եւ այդ ճամբուն վրայ՝ բոլորէս առաջ նախագահ Տէր Պետրոսեան ինք կը գիտակցի, պէտք է գիտակցի, թէ Հայաստանի

Հանրապետության սահմանադրական հիմքերը ամբողջությամբ նորոգող եւ հաստատող Սահմանադիր ժողովէն աւելի առողջ եւ ժողովրդավար ելք գոյութիւն չունի:

Հայաստան նախագահ մը շահեցաւ հոկտեմբեր 16-ին: Կը մնայ մաղթել, որ նախագահ Տէր Պետրոսեան կարենայ կորսուած պատմական առիթը վերանուաճելու հունով առաջնորդել Հայաստանի Հանրապետութիւնը: Հայ յեղափոխական դաշնակցութիւնը պատրաստ է իր բոլոր ուժերը տրամադրելու ի սպաս այդ առաքելութեան:

«ԴՐՕՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
21 հոկտեմբեր 1991

**ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ Է**

**ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ
ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ**

ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի եւ Հայաստանի Կենտրոնական Կոմիտէի օգոստոսի 21-ի համատեղ նիստի ՈՐՈՇՈՒՄԸ

«Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւնների մասին» օրէնքի 5-րդ եւ 9-րդ յօդուածներին համապատասխան ՀՅԴ Բիւրոն եւ Հայաստանի Կենտրոնական Կոմիտէն որոշում են.

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն հասարակական-քաղաքական կազմակերպութեան կողմից Հայաստանի Հանրապետութեան նախագահի թեկնածու առաջադրել Սոս Արտաշէսի Սարգսեանին:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
ՀՅԴ Հայաստանի
Կենտրոնական Կոմիտէ

ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ

Հայ յեղափոխական դաշնակցութեան Հայաստանի Կեդրոնական կոմիտէն եւ ՀՅ Դաշնակցութեան կողմէ հանրապետութեան նախագահի թեկնածու առաջադրուած ընկ. Սոս Սարգսեանը հետեւեալ կոչերով դիմած են հայ ժողովուրդին՝ մէկ անգամ եւս շեշտելով սեպտեմբեր 21-ի Անկախութեան հանրաքուէին «Այո՛» պատասխանելու անհրաժեշտութիւնը:

Վճռական ընտրութիւն ենք կատարելու ամէնքս սեպտեմբերի 21-ին: Ուզո՞ւմ ենք անկախ ապրել, ուզո՞ւմ ենք ազատ ապրել, ուզո՞ւմ ենք ինքներս տնօրինել մեր ճակատագիրը, թէ ոչ: Հայ յեղափոխական դաշնակցութիւնը վստահ է, որ հայ ժողովրդի պատասխանը միանշանակ է լինելու՝ ԱՅՈ՛՛:

Անկախ քաղաքական իրավիճակի տարուբերումից, անկախ առկայ բազում դժուարութիւններից, հանրաքուէն մեր հաւաքական կամքը արտայայտելու բացառիկ հնարատրութիւն է: Հայոց վեցհարիրամեայ երազանքի իրականացման, 1918-1920 թթ. մեր պետականութեան վերականգնման հաստատուն հիմքն է դրուելու սեպտեմբերի 21-ին:

Հայ ժողովրդի ազատատենչ ոգին է Դաշնակցութեան շարժիչ ուժը, եւ ուրեմն մենք վայրկեան իսկ չենք կասկածում, որ այս արժանապատիւ ընտրութեամբ նոր քայլ ենք անելու մեր ազգային նպատակների իրագործման, իւրաքանչիւր հայի երջանկութեան ապահովման ճանապարհին:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը իր ազգային քաղաքականութեամբ, հայ ժողովրդի բոլոր ուժերի համախմբման մտասեւեռումով, ամբողջովին ընծայուած է Հայաստանի հզօր ապագայի կերտմանը: Այս նպատակին պէտք է ծառայենք ամէնքս:

Սեպտեմբերի 21-ի իւրաքանչիւրիս ԱՅՈ՛-ն մեր ընծայումն է հայրենիքին: Կատարենք մեր պարտքը: Վկայենք ազատ ապրելու մեր վճռականութիւնը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

**ԴԱԽԱԴԻՐ
ՀԱՐՈՒԱԾԻՆ ԴԷՄ**

Ազրպէյճան ի վերջոյ հասաւ իր նպատակին: Փաստօրէն յաջողեցաւ Քրեմլի ձեռքով իր հաշիւը «մաքրել» արցախեան շարժման հետ: Կարմիր բանակը իր ուղղաթիռներով եւ հրասայլերով ծանրօրէն խոցեց պահանջատէր հայութեան դիմադրականութիւնը, իսկ ազերի զօրաբաժինները «յանձն առին»... մնացեալը կատարել:

Աւելի քան երեք տարի ազերի փանթիւրքիստներու ջարդարար խուժանին,

ագրալեյձանեան «ժողովրդային» կոչուած ճակատի յելուզակներուն եւ Պաքուի կանոնաւոր զօրքերուն դէմ հերոսաբար դիմադրելէ եւ զանոնք միշտ նահանջի մատնելէ ետք՝ Արցախի եւ ընդհանրապէս Հայաստանի սահմանամերձ գօտիներու պահանջատէր հայութիւնը ուժաթափ ինկաւ, որովհետեւ դաւադրաբար դաշունահարուեցաւ աշխարհի երկրորդ զօրաւոր բանակին կողմէ:

Ապրիլ 1991-ի աւարտէն մինչեւ մայիսի կէսերը, Կարմիր բանակի զօրաբաժիններուն ձեռնարկած պատերազմական ուղղակի յարձակման հետեանքով, փաստօրէն կործանուեցան Գետաշէնն ու Մարտունաշէնը, Հայաստանի ու Արցախի սահմանային շէներէն շատերը: Սահմանային այդ գօտիին հայաթափումն ու զինաթափումը արցախեան պահանջատիրական շարժումին պարտադրեցին ժողովրդագրական ու ռազմա-քաղաքական նոր սահմանագծում մը՝ ի սպաս Պաքուի հաշիւներուն:

Համայն հայութեան համար անդարմանելի եղաւ կորուստը եւ իր շէներուն, եւ անոնց պաշտպանութեան կոփներու ընթացքին անձնուիրաբար զոհուած հայորդիներուն: Դաւադիր հարուածը ծանր եղաւ այն աստիճան, որ հայ ժողովուրդէն խլեց փետրուար 1988-էն ասդին իր ձեռք բերած նուաճումներէն շատ բան:

Նախ՝ Արցախի հայութեան պահանջատիրական պայքարը մխրճեց ազգամիջեան արինալի ընդհարումներու ոլորապտոյտին մէջ, որմէ խուսափելու այնքան հետեւողական ճիգ թափած էին ինքնորոշման տարրական իրաւունքի համար ոտքի կանգնած մեր արծուաբոյսի հեռատես զաւակները:

Ապա՝ ազերի փանթիւրքիստներու հայասպնական ոճիրներուն դէմ ինքնապաշտպանուելու նպատակով արցախցիներու այնքան դժուարութեամբ ձեռք ձգուած - եւ ամէն պարագայի՝ համեստ - զէնքերը ի վերջոյ ուղղել տուաւ Կարմիր բանակին դէմ:

Յետոյ՝ Հայաստանի եւ Արցախի միջեւ ամբողջ երեք տարի այնքան դժուարութեամբ ամրացուած սահմանամերձ մեր շէները, որոնք միացման նպատակին առաջնորդող անփոխարինելի կամուրջներն էին արցախեան շարժման, ահա քանդուած են եւ ԼՂԻՄ-ը լրիւ պատանդ է

դարձած Պաքուի վարիչներուն ձեռքը:

Վերջապէս՝ ամբողջ աշխարհի աչքին Խորհրդային Միութեան իրաւական ու ժողովրդավարական վերակառուցման ամէնէն արդար դատը եւ ուսանելի փորձաքարը հռչակուած Արցախի միացման պահանջը սկսաւ դիտուիլ իբրեւ քաղաքական աշխարհի մեծապետական Նոր կարգի հաստատման ու ամրապնդման սպառնացող ապակայունացման ազդակ մը:

Այս աստիճան ծանր եղաւ պահանջատէր հայութեան ստացած դաւադիր հարուածը:

Եւ ինչպէս որ կը պատահի պայքարի դաշտ նետուած բոլոր ժողովուրդներու պարագային, հայութիւնը եւս չի կրնար խուսափիլ՝ հարուածին դէմ յանդիման՝ ներքին իր մարտունակութիւնը վերահաստատելու մարտահրաւերէն:

Մէկ կողմէ իր նահատակները թաղելու եւ վերքերը խնամելու, իսկ միւս կողմէ իր տկար դիրքերը նոր թափով ամրացնելու հարկին տակ կը գտնուի պահանջատէր հայութիւնը:

Գետաշէնեան դաւադիր հարուածի տասը-տասնեւինգ օրերը եւ քաղաքական, եւ ռազմական ուղեցոյց դարձան արցախեան շարժման հետագայ քայլերուն:

Հայ քաղաքական միտքը սուղ գին վճարեց՝ անգամ մը եւս սորվելու համար, որ հայրենի հողի պաշտպանութեան ու ազատագրութեան պայքարէն դուրս չկայ ազգային միասնութեան առաջնորդող ապահով երաշխիք: Եւ այնքան ատեն որ հայ ժողովուրդի միասնականութեամբ պայմանաւորուած է ազգային-պետական մեր ուժին կերտումը՝ ոչ ոք իրաւունք ունի կամ շռայլանքի պիտի ունենայ բռնագրաւեալ մեր հողերու ազատագրութեան ու միացման պայքարին առաջնահերթութիւնը ստորադասելու ռազմավարական թէ մարտավարական որեւէ այլ առաջադրութեան:

Գետաշէնը, Մարտունաշէնը եւ ատերուած մեր բոլոր շէները վկայ որ հայրենիքի ազատագրութեան պայքարը ի վերջոյ դատապարտուած է սեփական զէնքով պաշտպանելու հայրենի հողն ու ազգային իրաւունքը: Քաղաքական միտքը որքան ալ երեակայութիւն եւ թռիչք ունենայ՝ մեծապետական քաղաքականութեան եւ փանթիւրքիստ ծաւալապաշտութեան անտառի օրէնքը ի վերջոյ կը պարտադրէ իր խաղը. ամէն ազգ պիտի կարենայ սեփական ուժով ետ վանել անարգ նախայարձակները՝ մինչեւ

որ քաղաքական ու դիւանագիտական աջակցութիւն կամ որեւէ միջամտութիւն կատարուի: Ստեփանակերտէն մինչեւ Երեւան եւ մինչեւ արտերկրի մեծ ու փոքր բոլոր մայրաքաղաքները՝ ինքնապաշտպանութեան սեփական միջոցները ստեղծելու, այս հրամայականէն ոչ ոք խուսափում ունի: Հայրենի պետութեան շուրջ բոլորուելու ամէն հրաւեր պէտք է խարսխուի այս յանձնառութեան վրայ:

Պաքուի եւ Մոսկուայի մեղսակցութեան ու անոնց դաւադիր հարուածին դէմ՝ այնքան մեկուսացեալ եւ անզօր դիրքերու վրայ յայտնուեցան հայրենի իշխանութիւնները. որոնց իրաւունքի եւ բողոքի ձայնը միայն արտերկրի հայութեան զօրաշարժով կրցաւ ձեղքել Արցախի եւ Հայաստանի շուրջ քաշուած միջազգային լռութեան եւ անտարբերութեան դաժան պատը: Արցախեան շարժման յաջորդ հանգրուաններուն անելի զօրաւոր դիրքերէ ներկայանալու իր գօտեպրկումին մէջ՝ հայ քաղաքական միտքը անյապաղ պէտք է ձեռնարկէ Հայաստանի Հանրապետութիւնը ամբողջ հայութեան կարելիութեանց տէր դարձնելու, հաւաքական մեր ուժին պետական ամրոցին վերածելու առաջնահերթ գործին:

Գետաշէն եւ Մարտունաշէնի հարուածը դաւադրօրէն անխնայ էր, բայց մեր ահաւոր կորուստով հանդերձ՝ պայքարը վերջ չէ գտած դեռ:

Պայքարը շարունակելու այդ վճռականութեամբ՝ ժամն է վերանայելու եւ ամրապնդելու մեր տկար դիրքերը:

«ԴՐՕՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
22 մայիս 1991

**ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ
ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ**

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ՄԱՀՐ

Արցախի ազգային - ազատագրական պայքարը նորանոր զոհեր է տանում: Անողորք կռուում զոհուում են մեր ժողովրդի ազատութեան ու անկախութեան գաղափարներին նուիրուած լաւագոյն մարտիկները, գաղափարի մարտիկները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նախագահ Արթուր Մկրտչեանը այդ մարտիկներից էր:

Զոհուում են տարբեր կերպ, տարբեր հանգամանքներում, բայց զոհուում են՝ նոյն նպատակով, նոյն անկոտորում հաւատով, որ վերջնական յաղթանակը հեռու չէ:

Արթուր Մկրտչեանը ազատամարտիկ էր, որն իր ողջ գիտակցական կեանքը նուիրեց հայրենիքի ազատագրութեանը, Արցախի անկախ հանրապետութեան ստեղծմանն ու հաստատմանը: Նա դարձաւ ժողովրդի կողմից ազատօրէն ընտրուած պետական իշխանութեան բարձրագոյն մարմնի՝ նորաստեղծ հանրապետութեան Գերագոյն խորհրդի առաջին նախագահը:

Այո, ընդամէնը 98 օր նա եղաւ իր ծանր, պատասխանատու պաշտօնում, եւ այդ ամբողջ ընթացքում Արցախի Հանրապետութիւնը, նրա զինուած ուժերը կենաց ու մահու կռիւ տուեցին մինչեւ ատամները զինուած թշնամու հրոսակների դէմ:

Ժխտուեց այն անհիմն, հիստերիկ մեղադրանքը, որ «Ազատութիւն կամ մահ» կարգախօսն անընդունելի է մի ողջ ազգի համար: Արթուր Մկրտչեանը կը մնայ խորհրդանիշ պայքարի, պետականօրէն կազմակերպուած պայքարի համար, երբ հարկ կայ նաեւ կեանքը չխնայես ազգային գործի յաղթանակի համար:

Սակայն քաղաքական գործչի եղերական մահն անգամ հազուադէպ է, որ առիթ չի դառնում զանազան քաղաքական շահարկումների ու եսամոլական նենգ հաշուարկների համար: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահի մահուան կապակցութեամբ ազրպէյճանական կողմը ցապաղեց մատնանշել, որ այն ներքաղաքական հակամարտութիւնների հետեւանք է, որ, իբր, Արթուր Մկրտչեանը կողմ էր Ազրպէյճանի հետ այսպէս ասած փոխզիջումային, բայց փաստօրէն անձնատուական անհեռաւտես բանակցութիւններին:

Այս միտքն արդէն ապրիլի 22-ին, անելի «հարստացուած ու փաստարկուած» ներկայացրեց «Մոսկովեան նորութիւններ» շաբաթաթերթը: Ըստ այս նոր մեկնաբանութեան՝ Արթուր Մկրտչեանը վարում էր քաղաքական մի գիծ, որը, իբր, չէր համապատասխանում ՀՅ Դաշնակցութեան որդեգրած կոշտ գծին: Նախ հարկ է իմանալ, որ Արցախի Հանրապետութեան անդրանիկ նախագահը ինքը դաշնակցական էր եւ, երկրորդ,

Նա մշտապես եղել է ազատության ու անկախության կռուի համոզուած կողմնակից: Երբ Հայաստանի ու Ազրայէժանի միջեւ լինում էին հերթական, ոչինչ չպարտադրող բանակցութիւններ, ապա Արթուր Մկրտչեանը շարունակում էր Արցախի կռիւը: Սա է իրողութիւնը, եւ զուր եւն մեր գաղափարական ու քաղաքական հակառակորդները փորձում սեպ խրել մարտնչող Արցախի ղեկավարութեան միջեւ:

Եթէ այդ ամէնը ինչ-որ տեղ, ինչ-որ առումով հասկանալի է, որովհետեւ վերաբերում է մեր թշնամուն, մեր հակառակորդին, ապա միանգամայն անհասկանալի է, աւելին, անընդունելի հայրենի որոշ քաղաքական շրջանակների ձգտումը՝ արհեստականօրէն սերմանելու երկիշխանութիւն: Այսինքն՝ Արցախի օրինական ճանապարհով ընտրուած իշխանութիւններին անխոհեմաբար հակադրել այն ուժերին, որոնց ժողովուրդը նախապատուութիւն չի տուել, բայց որոնք չեն հրաժարուել իշխանութեան հասնելու իրենց ձգտումներից: Հայաստանեան որոշ քաղաքական շրջանակների կողմից Արցախում իրենց համախոհներին առաջ մղելն է, որ ստեղծում է Հանրապետութեան օրինական իշխանութեանը հակադիր ուժ, հետեւաբար երկիշխանութեան վտանգ:

Զի՞ ստացում արդեօք այն անբարոյ վարքը, երբ ժողովրդի համար կազմակերպում են ցաւակցութեան ու սգի արտայայտութիւններ, բայց իրականում ձեռնարկում երկիշխանութիւն ստեղծելու ազգավնաս գործը: Ճակատագրական այս օրերին նորից ու նորից գլուխ է բարձրացնում քաղաքական մերժելի հաշուարկը՝ առիթը օգտագործելու սեփական, հատուածապաշտ նպատակներին հասնելու համար:

Սակայն դրանք զուր ջանքեր են: Արցախի բազմաչարքար հայութիւնը սեփական դառը փորձով համոզուել է, թէ ո՛վ է իր իսկական պաշտպանը, եւ ո՛վ քաղաքական խաղարկումների կողմնակիցը:

Արցախում քաղաքական անորոշութիւնը անընդունելի է, եւ հերոսական ազատամարտը շարունակում է: Այդ մարտում ՀՅ Դաշնակցութիւնը մասնակցում է անմնացորդ նւիրումով: Հայրենիքի փրկութիւնը պարապ խօսք չէ, այլ անձնուէր գործ է: «Դաշնակցութիւնը պաշտօն ու զբաղում չէ. նա մի որոշ մտայնութիւն է եւ բարոյական: Նա պահանջում է ոմանց

լիակատար անձնուիրութիւնը մեր գործի համար, միւսների պատրաստակամութիւնը զոհաբերելու երբ հարկը պահանջէ»:

ՇԻՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

«Դրօշակ»
6 մայիս 1992

**ՓԱՌ-Ք ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻՆ
ԱՐՅԱԽԻ ԱՌԱՋԻՆ
ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ԱՇՈՏ ԴՈՒԼԵԱՆ
ԿԸ ՊԱՏՄԷ ՇՈՒՇԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ**

Շուշիի գործողութեան ծրագիրը մտնում էր ընդհանուր հակայարձակման ծրագրի մէջ, որը մշակուել է պաշտպանութեան շտաբում: Այդ աշխատանքների մասնակցում էին նաեւ վաշտերի հրամանատարներն ու Շուշուայ ուղղութեան հրամանատար Արկադի Կարապետեանը: Ընդհանուր հակայարձակման ծրագրում՝ Զանհասան-Քէօսալար-Շուշի- Լիսագոր-Զառիսլուուղղութիւններով Շուշին առաջինն էր, որը ունէր երեք ճակատ, մէկը՝ Ղայբալուի կողմից, ճորի միջով միւսը՝ քաղաքի ճանապարհով եւ երրորդը՝ Շոշ գիւղի կողմից, դարձեալ ճորի միջով: Մեր վաշտի ճակատը այս ճորն էր: Ճակատի միւս ուժերն էին «հետախուզական յատուկ դասակը» Ռուսլանի հրամանատարութեամբ, 20 հոգիանոց՝ մի առանձին խումբ եւ Դաշուշէնի ջոկատը՝ երկու Վիլենների հրամանատարութեամբ: Նաեւ՝ երեք հարուածային յատուկ դասակներ:

Մայիսի 7-ի երեկոյեան, երբ ուղղութիւններն ու խնդիրները պարզուած էին, մենք զբաղեցրինք մեր նախնական դիրքերը՝ Շոշ գիւղի կողմից: Մութն ընկնելուն պէս իւրաքանչիւր խումբ ու դասակ, իր յանձնարարութիւնն ստացած՝ շարժուեց դէպի ճոր: Գիշերուայ 2:30 րոպէին սկսեց գործել մեր հրետանին, իսկ ժամը 3:00-ին մենք անցանք հակայարձակման: Մեր ձախ թեւում, գիւղի մօտ, Շոշի խումբն էր եւ Գրիգորի հետախուզական դասակը, որոնք շատ մեծ եւ դժուարին գործ կատարեցին: Լուսադէմին մենք հասանք բանտի մատոյցներին: Առաջին իսկ գրոհով չկարողացանք վերցնել

բանտը եւ հիմնական պատճառը, իմ կարծիքով, ռատիոկայի խաթարումն էր. կապը Գրիգորի եւ միւս խմբերի միջեւ կտրուեց: Գերեզմանոցի ուղղութեամբ գնացածներին չկարողացանք ժամանակին կասեցնել եւ ընկան ուժեղ կրակի տակ: Ստիպուած մի 15 հոգով հասանք բանտի պարիսպներին, բարձրացանք դրանց վրայ եւ մօտ 300 մետր տարածութիւն վերցրինք հսկողութեան տակ, որ ազերիները չկարողանան նռնակներով կասեցնել մերոնց ընթացքը: Այս դէպքերը կատարուած էին արդէն ցերեկը, մօտաւորապէս ժամը 11:00-ի մօտ: Ռատիոկայը որ աշխատէր, հէնց այդ պահին էլ կարող էինք մտնել բանտ: Բայց ստիպուած էինք յետ քաշուել եւ անցնել դիրքային կռուի: Տուեցինք 4-5 վիրաւոր բանտի պարիսպների վրայ, վիրաւորուեցի նաեւ ես: Թէեւ փամփուշտ շատ էինք վերցրել մեզ հետ, բայց պարիսպների վրայ շատ ծախսեցինք, որպէսզի թշնամուն հնարաւորութիւն չտանք գլուխ բարձրացնելու եւ մեր ընթացքը կասեցնելու: Այս իսկ պատճառով մեր փամփուշտներն արդէն սպառուելու վրայ էին: Ստիպուած էինք դադար առնել՝ մինչեւ նորից ռազմամթերք հասցնելը: Մինչեւ փամփուշտներն ու ականանետային արկերը տեղ հասան՝ օրը մթնեց: Մենք նորից բարձրացանք ձորով դէպի վեր եւ հասանք բանտի պարիսպներին: Առաւօտեան կողմ ականանետներով խփեցինք հակառակորդի դիրքերին: Մի խումբ գրոհեց բանտի ուղղութեամբ, իսկ միւսը՝ բանտի ձախ կողմից: Թուրքերը չդիմացան, եւ երբ առաւօտեան ժամը 8-ի մօտ մտանք քաղաք, նրանք արդէն փախել էին: Մեր ուղղութեամբ գործող ուժերը փաստօրէն քաղաք մտան առանց զոհեր տալու:

Ճիշդն ասած, հիմա էլ չեմ հասկանում, թէ նրանք ոնց թողեցին դիրքերն ու փախան, ու մտածում եմ, թէ գուցէ վախից էր, չդիմացան հոգեբանական ճնշմանը: Վախենում էին, որովհետեւ իրենք էլ չգիտէին, թէ ում են պաշտպանում, Շուշիում բնակչութիւն չկար: Եթէ մի կողմը չի վախենում, վախենում է միւսը: Այլապէս, եթէ չվախենային, մինչեւ վերջին փամփուշտը կարող էին պաշտպանել քաղաքը, քան որ դիրքերը շատ էին նպաստաւոր: Իսկ նրանք զինամթերք շատ ունէին, չափազանց շատ:

Կռիւն արդէն աւարտուել է, եւ պէտք է ասեմ, որ տղաները լաւ կռուեցին: Սակայն մի անգամ եւս համոզուեցի, որ հարկաւոր

է արհեստավարժ բանակ, ուր ամէն մարդ իր պարտականութիւնն ունի: Մենք թէկուզ պետական բանակ ենք կոչուած, բայց մեր հրամանատարները զբաղուած են ամէն տեսակի գործով՝ նիւթական միջոցների հայթայթումից մինչեւ կռիւ: Շատ հարցեր էլ լուծուած ենք անձնական կապերով: Այսպէս լուրջ բանակ չես ստեղծի: Բայց յուսանք, որ ամէն ինչ լաւ կը լինի, դեռ նոր ենք սկսել:

«ԴՐՕՇԱԿ»
20 մայիս 1992

**ՇՅԴ ԲԻՒՐՈՅԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԻԵԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՐՏԱՔՍՈՒՄ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

70 տարիների պոլշեփկեան բռնատիրութիւնից յետոյ, 1992 թ. յունիսի 29-ին ՀՅ Դաշնակցութեանը յաջողուեց նորից հայրենիքում կազմակերպել իր Ընդհանուր ժողովը: Վերահաստատուելով երկրում՝ ՀՅ Դաշնակցութիւնը, հայրենիքը եւ մեր ազգային իրաւունքները պաշտպանելու ճանապարհով, իր գործունէութեան բնական հունը մտաւ, պարզեց ազգային - ազատագրական պայքարի դրօշը, վերակերտեց գերագոյն զոհողութեան պատրաստ հայ ազատամարտիկի կերպարը Արցախում եւ Հայաստանում:

Հայրենի հողի վրայ իր կազմակերպութիւնը վերականգնած՝ ՀՅ Դաշնակցութիւնը Հայաստանում ժողովրդավարութեան ամրապնդման, անկախ պետականութեան հիմերն հզօրացնելու, հայոց ազգային կառավարութիւն ստեղծելու գործին լծուեց: Հայաստանում ու Արցախում օրըստօրէ աճեց ՀՅԴ հեղինակութիւնը: Այս հանգամանքը լուրջ մտահոգութիւն պատճառեց մեր ազգային իղձերի ու գաղափարների շահարկումով իշխանութեան հասած քաղաքական ուժերին, որոնք համայնավարներին յատուկ հակադաշնակցական վարքագիծ դրսեւորելով փորձում են ամէն գնով պահել իշխանութիւնը եւ Դաշնակցութիւնը ասպարէզից հեռացնելով ազատ գործելու հնարաւորութիւն ստանալ:

Համահայկական ուժերի

համախմբմանն ու ազգային միասնության ապահովմանն ուղղուած ՀՅԴ ջանքերն ամէն անգամ բախում են մեր երկրի ներկայ իշխանութիւնների, յատկապէս Հայաստանի Հանրապետութեան նախագահի՝ ազգավնաս կեցուածքին, որի բարձրակէտը նախագահի հեռուստատելոյթն էր յունիս 29-ին:

Անսպասելի չէր նախագահի այդօրինակ խուճապահար խօսքը, սակայն մեծ ցաւով հաստատում ենք, որ հանրապետութեան նախագահը՝ իջնելով իր պատասխանատու դիրքից՝ ողջ ելոյթը կառուցեց յերիւրանքների եւ բամբասանքների վրայ, փորձելով ամէն գնով ժողովրդի աչքերում նսեմացնել իր եւ իր համախոհների իշխանութեան հաւանական այլընտրանքը:

Դաշնակցութիւնը, սակայն, հաւատարիմ մնալով հանրապետութեան քաղաքական կայունութիւնը պահպանելու իր դիրքորոշմանը, այս պարագային եւս մերժում է ազգի պառակտմանն ուղղուած ամէն կարգի սադրանք: Նախագահի ելոյթը փաստօրէն իշխանութիւնների տնտեսական ու քաղաքական ձախողումները ընդդիմութեան վրայ բարդելու, Թուրքիային եւ այլ ուժերին խոստացուած զիջումների հետեւանքներից խուսափելու փորձ էր: Հայաստանի Հանրապետութեան նախագահը ամբողջ մէկուկէս ժամ ջանք թափեց մի կողմից Դաշնակցութեան իսկական ուժն ու ժողովրդայնութիւնը նսեմացնելու, միւս կողմից՝ ՀՅԴ կազմակերպական հզօրութիւնը ներքնապէս ջլատելու՝ Բիւրոյի եւ շարքերի միջեւ սեպ խրելու միամիտ եռանդով: ՀՅԴ-ն վարկաբեկելու մոլուցքն այնքան զօրաւոր էր, որ նախագահը չխորշեց վիրաւորել հանրապետութեան բազմահազար քաղաքացիներին, որոնք ոչ թէ վարձկաններ են, ինչպէս ջանում է ներկայացնել պարոն Լեւոն Տէր Պետրոսեանը, այլ՝ Դաշնակցութեան գաղափարի նուիրեալներ: Նախագահի հակադաշնակցական ելոյթը, ըստ էութեան, ուղղուած էր խորհրդարանում ձեւաւորուած «Ազգային դաշինքի» դէմ, որի օրըստօրէ աճող ճշունը խուճապի է մատնել իշխանութիւններին: Գերագոյն խորհուրդը ցրելու սպառնալիքը այլ բացատրութիւն չունի:

ՀՅԴ 25-րդ Ընդհանուր ժողովը գտնում է, որ Բիւրոյի ներկայացուցիչի դէմ Հայաստանի Հանրապետութեան նախագահի ամբաստանութիւնները եւ

նրան հայրենի հողից արտաքսելու որոշում-վերջնագիրը ժողովրդավարութեան բռնաբարում է: Հանրապետութեան նախագահը փաստօրէն բռնատիրական քայլերով փորձում է իր վարկաբեկուած իշխանութիւնը պարտադրել երկրին ու ժողովրդին: Այդ ընթացքով նա հարուածում ու ջլատում է արտաքին թշնամուն դիմակայող մեր պետութեանն ու ժողովրդին: Հայ յեղափոխական դաշնակցութիւնը յայտարարում է, որ ազգային մեր նպատակների իրականացման պայքարի ճանապարհին չի ընկրկելու: Հայաստանի Հանրապետութեան նախագահի հակադաշնակցական հիստերիայի պատասխանը տալով՝ ՀՅ Դաշնակցութիւնը վճռականօրէն շարունակում է հաւատարիմ մնալ ազգային քաղաքականութեանը, ըստ որի պետութիւնը պարտաւոր է չջեղուել ազգային շահերից:

*ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
25-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
30 յունիս 1992, Բ. Երեւան*

ՀՅԴ 25-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման այս փուլում, երբ Հայաստանի անկախ պետականութեան ամրապնդումը եւ Արցախի տարածքում զինուած ինքնապաշտպանութեան հզօրացումը ամենազլխաւոր խնդիրներն են, Հայ յեղափոխական դաշնակցութիւնը գումարեց իր 25-րդ Ընդհանուր ժողովը եւ հայ ազգի առջեւ ծառայեց հիմնահարցերի վերաբերեալ համապատասխան որոշումներ կայացրեց:

Անկախ Հայաստանի Հանրապետութեան գոյութեան բնական թելադրանքով ՀՅ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը տեղի էր ունենալու Երեւանում: Այս իմաստով բառացիօրէն կ'իրականանար նախորդ Ընդհանուր ժողովի «Դէպի երկիր» կարգախօսը, որը վերջին չորս տարիներին հայրենի հողի վրայ մեր կազմակերպական, քաղաքական եւ քարոզչական գործունէութեան հիմնական ներշնչման աղբիւրն էր: Երկու տարի շարունակ Հայաստանում գործում էին ՀՅ Դաշնակցութեան շարքային

անդամներն ու գործիչները. իսկ Արցախում, հայրենիքը ազատագրելու ուխտին հաւատարիմ, կռուում ու զոհուում էին մեր ազատամարտիկները: ՀՅ Դաշնակցութիւնը իր Ընդհանուր ժողովը գումարելու էր ազգային, քաղաքական, գաղափարական առաջընթացի այս մթնոլորտում: Պարզ էր, որ Դաշնակցութեան վերադարձը հայրենիք միանշանակ չէր ընդունուելու: Սակայն, հին ու նոր քաղաքական ուժերի ծաւալած հակադաշնակցական պայքարը այսօր անցել է ամէն սահման: Այդ պայքարն իր գազաթնակէտին հասաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահի յունիսի 29-ի հակադաշնակցական հեռուստատելոյթով, որի ստեղծած քաղաքական լարուած կացութիւնը ստիպեց դադարեցնել Ընդհանուր ժողովը՝ անելի բնականոն պայմաններում շարունակելու որոշումով: Վերջին չորս ամիսներին իշխանութիւնների կազմակերպած հակադաշնակցական քարոզչութեան հետեւանքով մթնոլորտը չխաղաղուեց. ուստի 25-րդ Ընդհանուր ժողովը հարկադրաբար շարունակուեց արտասահմանում:

Հանգամանօրէն քննարկելով համահայկական բովանդակութիւն ունեցող եւ սփիւռքահայութեանն առնչուող հարցերը, Ընդհանուր ժողովը ամրագրեց անկախ Հայաստանի Հանրապետութեան ինքնահաստատման գործընթացին աջակցելու եւ Արցախի ազատագրման պայքարը նոր ուժով շարունակելու որոշումները: Ժողովը քննութեան առաւ նաեւ Հայաստանի պետական վերնախաւի մի շարք բարձրաստիճան անձանց հակադաշնակցական հետեւողական կեցուածք եւ գտաւ, որ այդ վարքագիծը անյարիր է պետական մտածողութեանը եւ հիմնովին վնասում է նորաստեղծ պետականութեան ամրապնդման համահայկական ջանքերին, ազգային-ազատագրական պայքարի այս վճռական փուլում ժողովրդին այնքան անհրաժեշտ միասնականութեանը:

Ժողովը նշեց, որ Դաշնակցութեան շարքային անդամների եւ ղեկավար ընկերների հասցէին ու մարմինների գործունէութեանն ուղղուած հանրապետութեան նախագահի ամբաստանութիւնների հիմնական նպատակը Հայաստանի քաղաքական կեանքում ՀՅ Դաշնակցութեան հետզհետէ աճող հեղինակութիւնը նսեմացնելը, եւ ի

վերջոյ նրան քաղաքական թատերաբեմից հեռացնելն է: Այդ նպատակն ու ՀՅ Բիւրոյի ներկայացուցիչին հայրենիքից արտաքսելու հրամանագիրը Հայաստանում Դաշնակցութեան գործունէութիւնն արգելող համայնավարական որոշումների տառն ու ոգին են յիշեցնում: Ընդհանուր ժողովը խստիւ դատապարտեց հանրապետութեան նախագահի յունիսի 29-ի ելոյթը՝ նրանից պահանջելով սրբագրել այդ ազգաժնաս քայլը եւ դրա հետեւանքները՝ Դաշնակցութեան հետ գործակցութեան կարելիութիւններ ստեղծելու համար:

25-րդ Ընդհանուր ժողովը անվերապահ վստահութիւն յայտնեց ՀՅ Բիւրոյի գործունէութեանը եւ հաստատեց, որ Բիւրոյի ներկայացուցիչները միշտ առաջնորդուել են Ընդհանուր ժողովների որոշումներով:

Մեկնելով այն հաստատումից, որ հայկական պետականութեան հզօրացումը ՀՅ Դաշնակցութեան գերխնդիրն է եւ չի առնչում իշխանութեան գլուխ կանգնած մարդկանց անձնական վարքագծին, Ընդհանուր ժողովը վերահաստատեց, որ Դաշնակցութիւնն իր ողջ կարողականութեամբ շարունակելու է նուիրաբերուել իրապէս ազգային պետականութեան կառուցմանը, հայրենի ժողովրդի ազգային, քաղաքական, սոցիալ-տնտեսական իրաւունքների պաշտպանութեանը եւ Արցախի ազատագրութեան պայքարին: ՀՅ Դաշնակցութեան 25-րդ Ընդհանուր ժողովը նորընտիր Բիւրոյին եւ կազմակերպչական շրջաններին յանձնարարեց, հակառակ բոլոր դժուարութիւններին, այսուհետեւ եւս ծառայել հայ ժողովրդի ամբողջական շահերին, միասնականութեան ապահովմանը, ազգային ինքնագիտակցութեան զարթօնքին, ժողովրդավարութեան արմատաւորմանն ու համայն հայութեան նպատակների իրագործմանը:

ՀՅ Դ 25-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Փարիզ, 30 հոկտեմբեր 1992

**ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ
ԿԻԼԻՍՏԱՆԻ ԱՐԾԻԻՆ
ԸՆԿԱԻ. ԱՐԻԻՆ ԵՒ ՄՈՒԽԻՐ**

Վիուկային չգիտեմ որ գրասենեակից թունաւոր ու նենգ շշուկներ էին արտահոսում փողոցներ, տներ, պուրակներ,

ինձ ու մեզ համակրող եւ ոչ այնքան համակրող մարդիկ, պատահական եւ ոչ պատահական հանդիպումներում, հեռախօսով, նամակներով, զգուշաւոր կամ չարախինդ հարցումներ էին տեղում. «Ճի՞շդ է, որ... Լսել ենք, որ... Ասում են, որ...»: Ասեկոսների այդ տարափը բամբասկոտ մեր իրականութեան մէջ աննախադէպ էր, ամբոխային հոգեբանութեանը քաջատեղեակ վիուկային այդ գրասենեակը կանխատեսուած կամ կանխորոշուած իրադարձութիւններից ամիսներ առաջ հետետողականօրէն կերտում էր ապագայ մեղաւորի կերպարը: Եւ երբ կատարուեց կատարուելիքը, երբ դատարկուեց Շահումեանը, նախապատրաստուած ամբոխի մեղադրող ցուցամատը ուղղուեց Շահէն Մեղրեանի վրայ: Նրա միջոցով նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութեան վրայ: Վկաներ յայտնուեցին հեռուստաէկրաններին: Խղճուկ, դասը մի կարգին չսերտած վկաներ, որոնց թոյլ (գուցէ եւ մեղքի զգացման պատճառով) ծայնի տակ ատելի լսելի էր վիուկային գրասենեակի յուշարարի ծայնը:

Մարդկային կը լինէր Շահէն Մեղրեանի խռովքը, վիրաւորանքը՝ սրանցից բխող բոլոր հետեանքներով: Բայց նա այլ ճանապարհ ընտրեց: Նա վճռեց չարդարանալ, քանզի մեղք չունէր: Վճռեց չամփոփուել վիրաւորանքի պատեանի մէջ, չհեռանալ, քանզի հեռանալով իւր էր լցնելու վիուկների վալպուրգեան խարոյկի վրայ: Նա այդ խարոյկը վճռեց մարել իր արինով: Ոչ թէ իր անուան համար, եթէ կ'ուզէք՝ ոչ էլ Դաշնակցութեան անուան համար: Ազգի դիմադրականութիւնը կը թուլացնէր, եթէ տուրք տար վիրաւորանքին:

Ափսոս, հազար ափսոս, որ կեանքով լեցուն, առողջ մտածողութեամբ զտարին այդ հայ մարդուն Հայաստանում քչերն են ճանաչում: Խաղաղ օրերին, անշուշտ, նրա մասին յուշեր կը գրեն, գրողական մաքուր մենութեան մէջ կը փորձեն կերտել իսկական կերպարը, բայց նա այս երկրին, այս հանրապետութեանը, այս ազգին օդի պէս պէտք էր ողջ եւ առողջ: Մարդիկ պիտի տեսնէին, թէ ինչպէս է նա սիրում իր զաւակներին, մարդիկ պիտի տեսնէին նրա հպարտութիւնը՝ ընկերների, զինակիցների նկատմամբ, լսէին նրա համով-հոտով պատմութիւնները նոյնիսկ ամենադաժան մարտերի մասին: Մարդիկ պիտի զգային նրա իսկական, ամբողջական

հայրենասիրութիւնը, որ թէ՛ գործնական էր եւ թէ՛ բանաստեղծական: Միաժամանակ: Ես հիմա չեմ կարող պատմել այնպէս հրաշալի, ինչպէս ինքը պատմեց Երիցմանկանց եկեղեցու մասին, որ անակնկալ յայտնուել էր հայդուկների նահանջի ձիւնոտ, անտառոտ, կիրճ ու ձորոտ ճանապարհին: Բայց ես նրա նկարագրածով պարզորոշ տեսնում եմ մարդահասակ ձեան շերտով շրջապատուած այդ եկեղեցին, որի չորս բոլորը, գաւիթը, մաքուր եւ չոր էր սակայն, ինչպէս մաքուր եւ չոր է լինում գետինը գարնանը, ճնահալքից յետոյ: Եկեղեցու պատէրն էին ջերմութիւն արձակում, թէ՛ Աստուած էր մի կտոր գարուն իջեցրել երկիր՝ օգնելու տառապածներին: Իսկ մասրենիներից կախ-կախ ծանրացել էին ձեան բարուրից դուրս պրծած կարմիր ողկոյզները:

Եւ ուրիշ ոչինչ: Պատմեց ու արտասուեց: Այդ պատկերը կարճ էր հանգիստ տալ նրան: Այդ պատկերը կարճ էր թոյլ տալ, որ ամփոփուի վիրաւորանքի պատեանի մէջ ու հեռանայ:

Շատերն ասում են՝ կուսակցութիւնը, ընկերները չխնայեցին նրան, պէտք է պահէին այստեղ, այստեղ էլ շատ գործ կար: Եւ, իրօք, կար: Եւ, իրօք, մեծ էր նրա անելիքը նաեւ այստեղ: Բայց ցաւի, մեծ ցաւի գիտակցումով հանդերձ համոզուած եմ, որ կուսակցութիւնը, ընկերները, ընդհակառակը, խնայեցին նրան՝ թոյլ տալով անձամբ դեկավարել հայդուկների գործողութիւններն այնտեղ՝ Շահումեանում:

Ափսոս, հազար ափսոս մեր ընկերոջը, բայց եւ մի մխիթարանք ունենք. նրա արինը եւ մոխիրը խառնուեցին իր հարազատ հողին: Եւ եթէ կան մարդիկ, որ հին ու նենգ շշուկներից թունաւորուած դեռ կասկածներ են պահում իրենց հոգիներում, խնդրեմ, թող փորձեն վերլուծել նրա արինը եւ նրա մոխիրը: Ահա նրա արինը: Ահա նրա մոխիրը:

ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Երկիր» 20 ապրիլ 1993

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՅՒՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԳԻԼՈՒՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Չորեքշաբթի, 28 դեկտեմբերի երեկոյան, Հայաստանի Հանրապետության նախագահը, 1992 յունիս 29-ը շուքի մէջ ձգող հեռուստատեսային նոր ելոյթով մը, երեակայածին եւ շինծու մեղադրանքներով, օրէնքով նախատեսուած իր լիազօրութիւնները գերազանցող հակաօրինական հրամանագրով մը ՀՅ Դաշնակցութեան ու անոր ուղեկից կազմակերպութիւններուն գործունէութիւնը «ժամանակաւոր» կերպով արգիլեց Հայաստանի ամբողջ տարածքին: Ձերբակալուած են Հայաստանի մեր ղեկավար եւ շարքային ընկերներէն ոմանք, խուզարկուած՝ մեր կեդրոնները, ակումբներն ու խմբագրատունները, մեծ թիւով ընկերներու բնակարանները, բռնագրաւուած են կուսակցական գոյքերն ու գրասենեակները, փակուած են պաշտօնաթերթեր՝ «Ազատամարտ», «Երկիր»-ը եւ «Հայլուր» լրատուական գործակալութիւնը: Երկրին մէջ ստեղծուած է անհանգստութեան, անապահովութեան ու սարսափի շատ անհաճոյ մթնոլորտ մը:

Հայաստանի իշխող վարչախումբը, առաջին օրէն իսկ, հետեւողականութեամբ առաջ տարաւ հակադաշնակցական վարքագիծ մը, որուն հիմքը կը կազմէր ՀՅ Դաշնակցութեան գոյութեան իրաւունքին իսկ ժխտումը:

ՀՅ Դաշնակցութիւնը Հայաստանի մէջ ակամայ մղուեցաւ ընդդիմադիր դիրքերու, երբ անոր գործունէութիւնը խարխուլուած էր արցախեան ազատամարտի յաջողութեան եւ Հայաստանի ազգային պետականութեան, ժողովրդավար եւ արդար կարգերու ստեղծման առաջադրանքներուն վրայ: Ընդդիմադրութեան հետ երկխօսութիւն հաստատելու չկանութիւնը վարչախումբը առաջնորդեց նաեւ այլ ազգային կուսակցութիւններու դերակատարութիւնը ժխտելու, անոնց երկրի թէ արտերկրի մէջ գոյութեան իրաւունքը խնդրական դարձնելու դիրքորոշումներու, մենատիրական կարգեր հաստատելու յստակ ուղեգիծով:

Այսպէս, ՀՅ Դաշնակցութեան կառոյցները քայքայելու, անոր գործունէութեան ծաւալումը արգելակելու համար միջոցներու

մէջ ոչ մէկ խտրութիւն դրուեցաւ: Երբ Դաշնակցութիւնը արկածախնդրական արարքներու մղելու փորձերը ձախողեցան եւ ՀՅ Դ մարմինները զսպուածութիւն ցուցաբերեցին բացայայտ գրգռութիւններու առիթով, Հայաստանի պետական իշխանութեան տիրացած վարչախումբը, հանրապետութեան նախագահի անմիջական ղեկավարութեամբ, դիմեց մտացածին «փաստեր» հրապարակ նետելու վատ միջոցին:

Հակադաշնակցական պայքարը ունեցաւ մնայուն բնոյթ: Տարիներ շարունակ պետական քարոզչական մեքենան լծուեցաւ ՀՅ Դաշնակցութեան վարկաբեկման աշխատանքին: Հակադաշնակցական բնոյթի հին թէ նոր գրութիւններ կամ զրպարտանքներ առանց ստուգման տեղ գտան պաշտօնական մամուլի էջերուն եւ արձագանգուեցան հեռուստատեսութեամբ եւ ձայնասփիւռով: Գաղտնիք չէր, որ պետական հետախուզութեան ծիգերը ուղղուած էին անգոյ «ներքին թշնամի»-ի յայտնաբերման, երբ ամբողջ հայութիւնը լծուած էր Արցախի ազատագրական պայքարին, երբ Հայաստանը ենթակա էր արտաքին վտանգին եւ երկիրը կը վխտար հայրենաբնակ հայութեան ազգային կամքը ջլատելու միտող խայտաբղէտ գործակալներով:

Հակադաշնակցական մոլուցքի իւրաքանչիւր արտայայտութենէն ետք ՀՅ Դաշնակցութիւնը խուսափեցաւ ծայրայեղ դիրքորոշումներէ եւ կոչ ուղղեց երկխօսութեան՝ ի խնդիր ազգային միասնականութեան, Արցախի ազատագրական պայքարի յաջող ընթացքին եւ Հայաստանի պետականութեան ամրապնդման: Սակայն, նոր ու անախտընթաց թափով շարունակուեցան զրպարտութիւններն ու վարկաբեկման փորձերը: Ընդհանրապէս ընդդիմադրութեան եւ յատկապէս ՀՅ Դաշնակցութեան դէմ ծնւած միջոցները հետզհետէ զարգացման, երբ հայրենի ժողովուրդի տնտեսական եւ ընկերային ճգնաժամէն դուրս գալու միակ միջոցը հայութեան բոլոր ուժերու համաձայնութիւնն ու միատեղ աշխատանքն էր:

ՀՅ Դ Բիւրոն կտրականապէս կը մերժէ կուսակցութեան դէմ նիւթուած ուղղակի թէ անուղղակի ամբաստանութիւնները. ծանրակշիռ այս պահուն ՀՅ Դաշնակցութեան

ազգային դերակատարությունը արգելակելու և անելի քան հարիրամեայ մաքառումներով ստեղծուած վաստակը դրժելու ասպազգային այս քայլերուն դիմաց ՀՅ Դաշնակցութեան Բիւրոն՝

- Կը պահանջէ երկրի թէ արտերկրի մեր բոլոր ընկերներէն՝ ըլլալ ըստ ամենայնի սառնասիրտ, և չդիմել որեւէ քայլի, որ կրնայ վտանգել տնտեսական, ընկերային և կենցաղային արդէն իսկ ողբերգական պայմաններ ապրող հայրենի մեր ժողովուրդը:

- Կը վերանորոգէ ազգային նպատակներու իրագործման համար ոչ մէկ ճիգ խնայելու իր յանձնառութիւնը՝ ի խնդիր վաւերական ազգային պետականութեան ամրապնդման և հայ ժողովուրդի արդար իղձերու իրականացման:

- Վճռական կեպով կը վերահաստատէ, որ հայրենի հողին վրայ ՀՅ Դաշնակցութեան ազգանուէր գործունէութեան իրատունքն ու պարտաւորութիւնները չեն կրնար խափանուիլ նախագահական հրամանագրով կամ ճնշման այլ միջոցներով:

ՀՅԴ ԲԻՒՐՈ
29 դեկտեմբեր 1994

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԿՈՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՒ ՇԱՐՔԵՐԻՆ

Կատարուեց այն, ինչ սպասուում էր իշխանութեանց կողմից ծաւալուող հակադաշնակցական աննախընթաց քարոզչութեան, սադրանքների և անհիմն մեղադրանքներով ձերբակալութիւններից յետոյ: Կանգ չառնելով ոչ մի միջոցի առջեւ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները և առաջին հերթին Հայաստանի Հանրապետութեան նախագահը, օրինական և անհրաժեշտ դարձնելու նպատակով ՀՅԴ-ի գործունէութեան կասեցումը, կեղծ ու շինծու փաստաթուղթերով, իրենց ձեռքն ընկած իսկական փաստաթղթերի իրովի մեկնաբանութեամբ, ժողովրդի ու դաշնակցական ընկերների աչքին փորձում են վարկաբեկել կուսակցութեան ղեկավարութեանը, կուսակցութեանը և ազգին նուիրուած մարդկանց:

Օրուայ մէջ, պահի մէջ նրանց թերեւս յաջողուի սեւացնել, մրոտել շատերի

անունները, սակայն պատմութիւնը չի ամփոփում մէկ օրուայ, մէկ պահի մէջ: Առաջին անգամ չէ, որ Դաշնակցութիւնը նման հարուած է ստանում:

Նման հարուածներից յետոյ Դաշնակցութիւնը անելի զօրեղ է դառնում, անելի իմաստուն:

Վստահ ենք, որ դուք չէք մատնուի խուճապի, չէք ենթարկուի սադրանքների և օրինակի ճանապարհով կը վերականգնէք կազմակերպական կառոյցը: Միայն կառոյցի ամրութեամբ դուք կը հասնէք արդարութեան, միայն կառոյցի գոյութեամբ դուք կը կարողանաք մասնակցել յառաջիկայ ընտրութիւններին և մեր պետականութեան կայացմանը, ինչի համար ստեղծուել է Դաշնակցութիւնը:

Մեր անկախ պետականութիւնը շրջապատուած է վտանգներով, իր վերջնական արդար լուծմանը չի հասել Արցախի դատը: Անլուր գրկանքներից և անարդարութիւններից տառապող ժողովուրդը հասել է ծայրայեղ թշուառութեան: Կեղծ ժողովրդավարութեան քողի տակից, հետզհետէ ցցում է բռնատիրական իսկական դէմքը: Այս ամէնը և այն կասկածամտութիւնը՝ ներքին թշնամի որսալու հիւանդագին այն մոլոցուքը, որ դրսեւորում են մեր իշխանութիւնները, երկիրը կարող են վերածել դժոխքի՝ ծնելով սուր և սեւ վրէժխնդիր կրքեր:

Զգօն եղէք, յիշէք, որ Դաշնակցութիւնն ազգի կուսակցութիւնն է և պաշտպանում է միայն ազգի շահերը: Յիշէք, որ իշխանութիւնները, ՀՀԾ-ական կը լինեն թէ դաշնակցական, գալիս են ու գնում. երկիրը, հայրենիքը յաւերժական է:

29 դեկտեմբեր 1994

ԸՆԴԴԷՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վերջին տարիներուն Անկախութեան հռչակագրի ժողովրդավարական սկզբունքներից քայլ առ քայլ հեռանալով, պետական ողջ մեքենան, առանձնապէս նպատակաուղղուած կերպով ուռճացած

ուժային կառույցները ծառայեցնելով իշխանության ղեկը պահպանելու գերագոյն նպատակին, Հայաստանի Հանրապետության ՀՀԾ-ական վարչախումբը մեր երկիրը հասցրեց բռնապետության հաստատման եզրին:

Մատնանշելով այս վտանգալոր ընթացքի առանձին երեւոյթներն ու դրսեւորումները, Դաշնակցութիւնը բազմիցս ահազանգել է ծանր ու անդառնալի հետեւանքների մասին՝ մշտապէս պահելով զուսպ կեցուածք, թոյլ չտալով, որ հակադարձութեան ալիքը վտանգի հանրապետութեան ներքին կեանքի կայունութեանը՝ յատկապէս Արցախեան ազատամարտի ողջ ժամանակահատուածում, յոյս փայփայելով՝ որ ընդդիմադիր ուժերին ի վերջոյ կը յաջողուի կասեցնել բռնապետական միտումների զարգացումը, ինչը, ցաւօք չիրականացաւ:

1994 թուականի դեկտեմբեր 28-ին՝ ՀՅԴ գործունէութիւնը դադարեցնելու վերաբերեալ նախագահի անօրինական եւ կամայական հրամանագրով, իշխանութիւնները խախտեցին այն սահմանագիծը, որը բաժանում էր ժողովրդավարական ճանապարհով զարգանալու հնարաւորութիւն ունեցող հասարակարգը՝ բռնապետականից: Եւ այդ հրամանագրից յետոյ այլեւս անհնարին է դարձեալ պահպանել ժողովրդավարութեան նոյնիսկ արտաքին նշանները:

Իրադարձութիւնների հետագայ զարգացումը եւս մի անգամ հաստատեց մարդկութեան պատմութիւնից յայտնի այն իրողութիւնը, որ բռնապետական մեթոտներով առաջնորդուող իշխանութիւնը պարտադրուած է լինում ուժեղացնել ճնշումը հասարակութեան վրայ: Համատարած ահաբեկչութեան մթնոլորտի ստեղծումը նման իշխանութիւնների գոյատեւման համար պարտադիր պայման է: Հասարակութեան ահաբեկման մէջ պահելու համար են ամենաբռնի, դաժան, անօրինական միջոցներով փակուել ոչ միայն ՀՅԴ պաշտօնաթերթերն ու լրատուական կենտրոնը, այլեւ անկախ մամուլի մի շարք օրգաններ: Ահաբեկման գործողութիւնները շարունակուում են ընդդիմադիր մէկ-երկու լրագիրերի նկատմամբ, վերջ չունեն կամայական ձերբակալութիւնները, ՀՅԴ անդամների եւ նրանց համակիրների, դատապաշտպանների հետապնդումն ու

դաժան հաշուեյարդարը: Անվտանգութեան վարչութեան բանտերում խոշտանգման են ենթարկուում անհրաժեշտ ցուցմունքներ տալուց հրաժարուող կալանաւորները:

Հայաստանում իշխող ահաբեկչական ահա այս մթնոլորտում ընդունուած «Ընտրութիւնների մասին օրէնքը» եւ դրա կիրարկման հաւանական սցենարը, ակնյայտօրէն, ցոյց են տալիս, որ իշխանութիւններն իրենց անմիջական շահն ապահովելու համար, ցանկացած պահի, պատրաստ են մոռացութեան մատնել ժողովրդավարական սկզբունքների նոյնիսկ այն փշուրները, որ մեծագոյն ճիգերով կորզել է ընդդիմութիւնը:

Ընդունուած օրէնքն իր հիմնական առանձնայատկութիւններով հակասում է ոչ միայն ընդդիմադիր կուսակցութիւնների մօտեցումներին, այլ նաեւ Սահմանադրական յանձնաժողովի կողմից ներկայացուած Սահմանադրութեան նախագծի դրոյթներին: Այս օրէնքն ընդունուեց, որովհետեւ կոչուած է ապահովելու զալիք խորհրդարանի հնազանդութիւնն ու ստորադաս դերը գործադիր իշխանութեանը: Հայաստանի Հանրապետութեան վարչախմբի կողմից ի սկզբանէ որդեգրած խորհրդարանի նուաստացման քաղաքականութիւնը փոփոխութիւն չի կրել եւ հետապնդում է միայն մէկ նպատակ. անվերահսկելի դարձնել ղեկավար շրջանակի գործունէութիւնը եւ նրա ձեռքում կեդրոնացնել ողջ իշխանութիւնը:

Նոյնիսկ այս պայմաններում Դաշնակցութիւնը նպատակայարմար գտաւ եւս մէկ փորձ կատարել Հայաստանի քաղաքական կեանքը ժողովրդավարական հուն վերադարձնելու ուղղութեամբ. ս.թ. ապրիլի 18-ին ՀՅԴ ներկայացուցիչները ընտրութիւններին մասնակցելու յայտով դիմեցին Կեդրոնական ընտրական յանձնաժողովին եւ մերժուեցին: Յայտը նոյնիսկ չընդունուեց: Ստեղծուած իրավիճակում, զրկուած լինելով յուլիսի 5-ին նախատեսուած Ազգային ժողովի ընտրութիւններին մասնակցելու օրինական իրաւունքից, ՀՅԴ Բիւրոն յայտարարում է, որ Դաշնակցութիւնը որեւէ այլ կուսակցութեան կամ միաւորման կողմից համամասնական ընտրութիւնների համար ներկայացուող ցուցակների մաս չի կազմելու:

Այս կապակցութեամբ հարկ ենք համարում մէկ անգամ եւս շեշտել, որ

իրենց «Հայաստանի Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցություն» (Հ.Հ.Հ.Դ.Կ.) եւ «Հայ դաշնակցություն» անուանող եւ համամասնական ընտրություններում մասնակցելու յայտ ներկայացրած խմբաւորումները գաղափարական կամ կազմակերպական որեւէ առընչութիւն չունեն ՀՅԴ-ի հետ:

Միաժամանակ, ՀՅԴ Բիւրոն եւ ողջ կազմակերպութիւնը շնորհակալութիւն են յայտնում բոլոր այն կազմակերպութիւններին ու միաւորումներին, որոնք առաջարկել են ՀՅԴ անդամներին տեղ գրաւել իրենց ցանկերում: Ցատկապէս մեր շնորհակալական խօսքն ենք ուղղում «Ազգային դաշինք դաշնակցութիւն» միաւորման անդամ «Սահմանադրական իրաւունք միաւորում», «Արցախ-Հայաստան», «Մտաւորականների միութիւն» եւ «Ժառանգ» հասարակական-քաղաքական կազմակերպութիւններին, որոնք պատրաստ էին ՀՅԴ անդամներին տրամադրել իրենց համատեղ ցուցակի առաջին տեղերը:

ՀՅԴ Բիւրոն համոզուած է, որ ստեղծուած պայմաններում, երբ կոպտօրէն ոտնահարուել են մեր կուսակցութեան օրինական իրաւունքները եւ անհնարին է դարձել ժողովրդավարական ընտրութիւնների անցկացումը, ՀՅԴ մասնակցութիւնն այս ձեւական մոջոցառմանն աննպատակ է եւ անիմաստ:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
3 մայիսի 1995

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1995 թ. մայիս 3-ին ՀՅԴ Բիւրոն հանդէս եկաւ յայտարարութեամբ, որով կանխատեսում էր Ազգային ժողովի ընտրութիւնների եւ սահմանադրութեան հանրաքուէի հակաժողովրդավարական բնոյթը՝ անիմաստ եւ աննպատակ համարելով Դաշնակցութեան մասնակցութիւնը այդ ձեւական միջոցառմանը:

Նախընտրական արշափ ողջ ընթացքում ՀՀ-ական վարչախումբը առաջնորդում էր՝ ցանկացած գնով իր իշխանութիւնը պահպանելու նշանաբանով: Գործադրուեցին իշխանութեան բոլոր լծակները, զանգուածային լրատուութեան պետական միջոցները սանձարձակ պայքար ծաւալեցին ընդդիմութեան եւ նրա ղեկավարների դէմ՝ փորձելով

նրանց դուրս մղել քաղաքական կեանքից եւ հասարակական գիտակցութեան մէջ ներարկել այն միտքը, թէ իրենց իշխանութեանն այլընտրանք չկայ:

Ամէն կարգի ապօրինութիւններով ու ճնշումներով (ՀՅԴ գործունէութեան կասեցում, ընդդիմադիր կուսակցութիւնների, պլոքների եւ անհատ թեկնածուների ընտրութիւններին մասնակցելու իրաւունքի ոտնահարում, թերթերի փակում, ընտրութիւնների եւ հանրաքուէի ընթացքում ուժային կառոյցների, իշխանութեան տեղական մարմինների ու քրէական տարրերի օգտագործում) փորձ արուեց ապահովել սահմանադրութեան միանշանակ «ԱՅՈ»-ն եւ Ազգային ժողովի իրենց ձեռնտու կազմը:

Այս ամէնը արուում էր ժողովրդավարական քողածածկոյթի տակ եւ ուղեկցում ազգաբնակչութեանը քաղաքացիական պատերազմով ահաբեկելու քարոզչութեամբ, որին չխորշեց մասնակցել նոյնիսկ հանրապետութեան նախագահը: Որպէս հետեւանք՝ ընտրութիւնները եւ հանրաքուէն փաստօրէն վերածուեցին բիրտ, նենգ ուժի ակնյայտ ցուցադրութեան, արդիւնքների ամփոփման բացայայտ աճաբարութեան:

Արդէն իսկ ակնյայտ են վարչակազմի հոշակած «յաղթանակի» հետեւանքները մեր ժողովրդի եւ պետութեան համար: «Յաղթանակի» նմանակումը թելադրելու է նաեւ պետութեան կառավարման նմանակում՝ ներկայ իշխանութեանն ու ժողովրդին վերջնականօրէն հակադրելով միմեանց: Այսպիսի Ազգային ժողովի ձեւաւորմամբ իշխանութեան ռէալ լծակներին տիրանալու եւ ապազգային եւ հակաժողովրդավարական այն ուժերը, որոնք հետապնդելու են միմիայն անձնական ու խմբակային շահեր, եւ հետեւաբար լրջօրէն վտանգուելու է մեր պետականութիւնն ու ինքնիշխանութիւնը:

Նոյնիսկ այս պայմաններում ժողովուրդը «ՈՉ» ասաց նախագահական սահմանադրութեանը, բայց ոչ մի բանի առաջ կանգ չառնող վարչակազմը գնաց ամենաահաւոր քայլին՝ կեղծելով հանրաքուէին մասնակցած ազգաբնակչութեան ազատ կամքի արտայայտութիւնը:

Այսպիսով, ներկայ վարչակարգը թուացեալ «յաղթանակ» արձանագրեց, որը սակայն ազգային ուժերի եւ

ժողովրդի առաջ քաղաքական պայքարի յստակ ուղիներ է բացում:

ՀՅԴ Բիւրոն յայտարարում է, որ 1995թ. յուլիսի 5-ի ընտրութիւնների եւ հանրաքուէի արդիւնքները չեն արտացոլում մեր ժողովրդի կամքի ազատ դրսեւորումը եւ չեն համապատասխանում նրա պետական ու ազգային շահերին: Իրականութիւնը այն չէ, ինչը թուերով ու տոկոսներով ներկայացւում է մեզ եւ աշխարհին: Իրականութիւնը ժողովրդի «ՈՉ»-ն է եւ ազգային արժէքներով ապրելու նրա կամքը, որն էլ, համոզուած ենք, ի վերջոյ հասցնելու է իսկական լիարժէք յաղթանակի:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
14 յուլիս 1995

**ՊԱՅՔԱՐ՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ
ՇԱՐԺՈՒՄԸ ԲԻՏՈՒԹԵԱՄԲ
ՃՆՇԵԼՈՒ ՔԱՅԼԵՐՈՒՆ ԴԷՄ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Հայաստանի Հանրապետութեան նախագահական ընտրութիւններու առթիւ իշխանութիւններու ցուցաբերած քաղաքական վարքագիծը ոտնակոխ կ'ընէ մեր երկրի արդէն իսկ դիւրաբեկ ժողովրդավարական գործընթացը եւ ծանր հարուած կու տայ Հայաստանի միջազգային բարոյական վարկին: Սահմանադրական վարչաձեւի քողին տակ՝ քայլ առ քայլ կ'իրագործուի մեր ժողովուրդի շարունակական իրաւագրկումը իր իսկ իշխանութիւններուն ձեռքով:

Սեպտեմբեր 22-էն ի վեր դէպքերու արագ ընթացքը՝ նախագահական ընտրութիւններու նախօրէին իշխանութեան վերին օղակներուն մէջ ակնյայտ դարձած խուճապը, ընտրութիւններու արդիւնքը կեղծելու գծով անոնց կողմէ ձեռք առնուած միջոցները եւ այդ արդիւնքներու ստուգման համար ժողովրդային արդար պահանջքին հանդէպ ցուցաբերուած մերժողական կեցուածքը, այս բոլորը կասկած չեն թողուր, որ մեր հայրենիքի մէջ ժողովրդավարութիւնը լուծարքի կ'ենթարկուի:

Արդարեւ, այսօր մեր հանրապետութեան մէջ չեն գործեր ժողովրդավարութեան տարրական սկզբունքները, կը խախտուին մարդկային իրաւունքները եւ կը գործադուրս թողնուին: Երկրի ներքին կեանքին կը միջամտէ պետութիւնը իր

ուժային միջոցներով՝ փորձելով խափանել ժողովուրդի կամքի արտայայտութիւնը:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կը մերժէ մեր երկրին եւ մեր ժողովուրդին պարտադրուող այս պաշտօնական խաբէութիւնը եւ կը յայտարարէ, որ իր բոլոր մարմիններն ու ընկերները զօրավիգ կը կանգնին բողոքի համաժողովրդական ալիքին: Դաշնակցութիւնը չի կրնար ընդունիլ անկախ հայրենիքի հողին վրայ բռնի միջոցառումներով քաղաքական հարցեր լուծելու մօտեցումը եւ կը պահանջէ ընտրութեան իսկական արդիւնքի հրապարակումը եւ հաստատումը:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կը դատապարտէ Հայաստանի իշխանութիւններու ուժային քաղաքականութիւնը եւ զայն կը նկատէ բռնատիրութեան հաստատման բացայայտ քայլ:

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու սահմանադրական իրաւունքները չեն կրնար սակարկութեան նիւթ դառնալ որեւէ պատրուակով: Հետեւաբար, ՀՅ Դաշնակցութիւնը կը պահանջէ, որ անմիջապէս ազատ արձակուին կալանքի տակ գտնուող քաղաքական գործիչները եւ ապահովուի կատարուած բռնարարքներու իսկական մեղաւորներու եւ կազմակերպիչներու բացայայտումն ու դատապարտումը՝ ինչ պաշտօն ու հանգամանք ալ ունենան անոնք:

Այս դժուարին օրերուն, երբ մեր ժողովուրդը Արցախի ու Հայաստանի մէջ կը դիմագրաւէ տնտեսական եւ ռազմաքաղաքական չափազանց բարդ կացութիւն, Դաշնակցութիւնը կոչ կ'ընէ մեր ժողովուրդին ըլլալու զգաստ եւ թոյլ չտալու, որ որեւէ ձեռով աղաւաղուի իր արդար բողոքը:

Այսօր եւ ապագային, մեր ժողովուրդը նախանձախնդրօրէն տէր պիտի կանգնի իր մարդկային եւ ազգային իրաւունքներուն եւ անպայման ձախողութեան պիտի մատնէ իր հաւաքական գոյութեան սպառնացող ամէն վտանգ:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
27 սեպտեմբեր 1996

ՀՅ ԴԱՇՆԱԿԳՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐԱՄԻԱՆԱՅ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ

Ինչպե՞ս ընթացաւ ու իր լրումին հասաւ Ընկերվար միջազգայնականին վերանդամակցութեան ՀՅ

Դաշնակցութեան դիմումը:

ՀՅ Դաշնակցութիւնը Ընկերվար միջազգայնականի (Բ. Միջազգայնական) անդամ եղաւ 1907 թուականին եւ իր կարեւոր ներդրումն ունեցաւ ընկերվարական գաղափարախօսութեան ու գործի տարածման հողվոյթին, յատկապէս կովկասեան իրականութեան մէջ: Փաստօրէն, 1918-20 թուականներուն Հայաստանի Հանրապետութիւնը տարածաշրջանին մէջ եղաւ այն երկիրը, ուր ընկերվար-ժողովրդավար կուսակցութիւն մը իշխանութեան գլուխ հասաւ: Եւ իբրեւ այդպիսին՝ Դաշնակցութիւնը հիմնական դերակատարութիւն ունեցաւ նորաստեղծ հայկական պետականութեան օրէնսդրութեան մշակումին մէջ՝ տեղ տալով իր գաղափարախօսութեան հարազատ սկզբունքներու, յատկապէս ի խնդիր ժողովրդավարական կարգերու ամրապնդման ու ընկերային արդարութեան հետամուտ միջոցառումներու հաստատման, որոնք պիտի ապահովէին աշխատաւոր ընդհանրութեան իրաւունքներուն հանդէպ յարգանքը, կնոջական քուէն ու քաղաքացիական հաւասարութիւնը, մանուկներու պաշտպանութիւնը եւ այլն:

Իրաւամբ՝ այդ ժամանակաշրջանին Հայաստանի Հանրապետութիւնը ունեցաւ ընկերվարական նուաճումները իրականութիւն դարձնելու կարողականութեամբ օժտուած օրէնսդրութիւն եւ, իբրեւ այդպիսին, ընտրեց ընկերվարական երկիր դառնալու ուղին:

Այսուհանդերձ, վրայ հասաւ խորհրդայնացումը եւ Դաշնակցութիւնը համայնավարի վարչակարգին կողմէ հալածուեցաւ նաեւ իր ընկերվար սկզբունքներուն համար: Պէտք է շեշտել անգամ մը եւս, որ Դաշնակցութեան համար ընկերվարութիւնն ու ժողովրդավարութիւնը իրարու հետ սերտօրէն շաղկապուած են եւ անըմբռնելի ու անընդունելի է լենինեան «ժողովրդավարական կեդրոնացումի» սկզբունքը, որ կ'առաջնորդէ ամբողջատիրութեան:

Հետեւաբար Դաշնակցութիւնը սփիւռքի մէջ շարունակեց հաւատարիմ մնալ

գաղափարական իր սկզբունքներուն եւ, կարելիութեան սահմաններուն մէջ, առաջ տանիլ ընկերվարական գործը: Իբրեւ ընկերվարական կուսակցութիւն, Դաշնակցութիւնը շարունակեց լիիրաւ անդամ ըլլալ Ընկերվար միջազգայնականին, մինչեւ վաթսունական թուականներու սկիզբը, երբ Միջազգայնականի անդամ աքսորեալ – այսինքն՝ որոշ պետութեան մը սահմաններէն դուրս գործող – կուսակցութիւնները կորսնցուցին լիիրաւ անդամի իրենց իրաւունքները՝ կանոնադրային փոփոխութիւններու հետեւանքով:

Այդ որոշումին դէմ իբրեւ բողոքի արտայայտութիւն, Դաշնակցութիւնը քաշուեցաւ Ընկերվար միջազգայնականէն, առանց, անշուշտ, հեռանալու գաղափարախօսական իր սկզբունքներէն:

Ամէն պարագայի, կուսակցութեան առած այս քայլէն շատ կարճ ժամանակ յետոյ եւ ՀՅԴ Ընդհանուր ժողովներու որոշումներու հիման վրայ, եօթանասունական թուականներուն արդէն կրկին անդամակցութեան դիմում կատարուեցաւ եւ աշխատանքները սկսան՝ իրականացնելու համար վերանդամակցութիւնը:

Ճիգերը արդիւնաւորուիլ սկսան 1989-ին, երբ, Սթոքհոլմի համագումարին, այդ ժամանակ Ուիլլի Պրանտի գլխաւորած Միջազգայնականին մէջ Դաշնակցութիւնը ստացաւ մնայուն հրաւիրեալի կարգ, ինչ որ մեր կուսակցութեան յաւելեալ մասնակցութիւն եւ դերակատարութիւն կ'ապահովէր:

Խորհրդային Միութեան փլուզումով եւ Հայաստանի մէջ ժողովրդավար կարգերու հաստատումով գործելու լայն դաշտ մը կը բացուէր Դաշնակցութեան առջեւ, որպէսզի այդ ձեւով նոր մղում մը տար վերանդամակցութեան իր աշխատանքներուն: Նորովի այդ ճիգերուն իրենց մասնակցութիւնը բերին կազմակերպական մեր բոլոր շրջաններու մարմինները, Ընկերվար միջազգայնականի տարբեր կոմիտէներու եւ յանձնախումբերու մակարդակով:

Շնորհիւ այս աշխատանքներուն, 1992-ին Պերլինի համագումարին, Դաշնակցութեան ներկայութիւնը արդէն զգալի դարձած էր: Այդ թուականին Ընկերվար միջազգայնականի նախագահութիւնը անցաւ Ֆրանսայի նախկին վարչապետ Փիեռ Մորուայի, մինչ 1989-էն ի վեր ընդհանուր քարտուղարի

պաշտօնը կը զբաղեցնէր չիլեցի Լուիս Այալա: Այս երկու հեղինակաւոր դէմքերը ոչ միայն արգելք դրին մեր վերանդամակցութեան դիմումին դրական պատասխան ապահովելու ջանքերուն առջեւ, ընդհակառակն՝ առիթ ստեղծեցին, որ մենք լայնօրէն օգտագործենք ամէն պատեհութիւն, որոնք փափաքելի լրումին կրնային հասցնել դիմումը:

Այս բոլոր զարգացումներուն իբրեւ արդիւնք, 1996-ի յունիս 17-ին, Միջազգայնականի անդամակցութեան հարցերով զբաղուող յանձնախումբը (Սոշըլիստ Ինթըրնէշընըլ ֆայնէնս էստ էտմինիսթրաֆի Բոմիթի. ՍԻՖԱԲ) վաւերացուց մեր դիմումը: Առ այդ՝ մեր պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Բենօ Թոնդեանի եւ Հայաստանէն ընկ. Էդիկ Յարութիւնեանի ու իմ մասնակցութեամբ, այլեւս իբրեւ անդամ կը մասնակցի սեպտեմբեր 9-էն 11 Նիւ Եորքի ՄԱԿ-ի շէնքին մէջ գումարուող Միջազգայնականի համագումարին:

Հարուած՝ «Դրօշակ»-ի 22 օգոստոս - 4 սեպտեմբեր թիւին մէջ լոյս տեսած՝ ՀՅԴ Բիւրոյի նախկին անդամ Մարիօ Նալպանտեանի հարցազրոյցէն:

**ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԿԸ ՀՐԱԺԱՐԻ.
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ
ՎԵՐԱԹՈՅԼԱՏՐՈՒԵՑԱԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Քննարկելով Հայաստանում ստեղծուած իրավիճակը՝ ՀՅ Դաշնակցութիւնն արձանագրում է.
- Հանրապետութիւնում ներկայումս ստեղծուած իշխանութեան ակնյայտ ձգնաժամը Հայաստանի Հանրապետութեան նախագահի եւ իշխող կազմակերպութեան՝ տարիներ շարունակ իրականացրած քաղաքականութեան ամբողջական ծախողման արդիւնքն է,
- Ղարաբաղեան հիմնահարցը ներքաղաքական պայքարում օգտագործելու, հայկական երկու պետութիւնների եւ հայ ժողովրդի տարբեր հատուածների շահերը

միմեանց հակադրելու փորձերը խարխլում են մեր պետականութեան հիմքերը: Նման գործելաժող պետական ու ազգային խնդիրները խմբային-հատուածական նկրտումների ծառայեցնելու նպատակ է հետապնդում,
- Սոցիալ-տնտեսական

նախորդ տարիների անհեռատես քաղաքականութեան հետեւանքով կազմալուծուել է երկրի արդիւնաբերական համակարգը, աննախադէպ չափերի են հասել գործազրկութիւնը եւ արտագաղթը, տարէց-տարի վատթարանում են ազգի մրցունակութիւնը պայմանաւորող մտաւոր, կրթական, առողջական եւ մշակութային հնարաւորութիւնները, շուկայական բարեփոխումների անուան տակ հաստատուում է իշխանական կառոյցներին սերտաձաձ մի քանի խմբաւորումների գերիշխանութիւնը,

- Արցախեան ազատամարտի առաջին օրից ՀՅ Դաշնակցութիւնը շեշտել է հայ ժողովրդի հաւաքական կամքով հիմնախնդիրը լուծելու նախապայմանը: Հայաստանի Հանրապետութեան նախագահի որդեգրած դիրքորոշման հետեւանքով հիմնահարցի կարգաւորումը ներկայումս դժուարին փուլ է թեւակոխել, բայց վիճակը փակուղային չէ, եւ Հայաստան-ԼՂՀ-Սփիւռք համատեղ ջանքերով հնարաւոր է ազգային շահերից բխող հանգուցալուծում ապահովել:

Ստեղծուած իրավիճակում ՀՅ Դաշնակցութիւնը գտնում է, որ Հանրապետութեան հասարակական-քաղաքական բոլոր ուժերը պարտաւոր են վճռականութիւն հանդէս բերել եւ երկիրը վերադարձնել ժողովրդավարական զարգացման բնականոն հուն:

Ելնելով ստեղծուած քաղաքական կացութիւնից՝

ՀՅ Դաշնակցութիւնը յայտարարում է, որ հանրապետութեան նախագահը պարտաւոր է պատասխանատու ընտրութիւն կատարել եւ իր հրաժարականով աջակցել նախագահական խորհրդարանական արտահերթ ընտրութիւնների միջոցով երկրում օրէնքի, ժողովրդի իշխանութեան հաստատմանը:

*ՀՅԴ ԲԻՒՐՕ
ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
29 յունուարի 1998*

**ՀՅՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ
ՄԱՐՄՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Սոյն թուականի փետրուարի 9-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կոլեգիայի որոշմամբ, թոյլատրուեց Հայ յեղափոխական դաշնակցության գործունեությունը: Այնուհետև ազատ արձակուեցին քաղաքական դրդապատճառներով դատապարտուած ՀՅՒ յայտնի գործիչներ Հրանդ Մարգարեանը եւ Վահան Յովհաննիսեանը:

Փաստօրէն վերջ դրուեց Դաշնակցության եւ նրա անդամների դէմ 1994 թուականի դեկտեմբերի 28-ից սկիզբ առած անօրինական հետապնդումներին ու հալածանքներին: Սրանով կարելի էր քայլ կատարուեց երկրում օրինականության եւ ժողովրդավարության հաստատման, ներքաղաքական անհանդուրժողության մթնոլորտի վերացման ուղղությամբ:

Եթէ հանրապետության առաջատար կուսակցության դէմ Հայաստանի Հանրապետության իշխանությունների սանձազերծած պայքարը պայքար էր ժողովրդավարության, բազմակարծութեան, ազատ խօսքի, ինչպէս նաեւ ազգային մտածողութեան ու գաղափարախօսութեան, պատմական յիշողութեան ու պատմական դատի դէմ, ապա այսօր նախադրեալներ են ստեղծուել ազգային արժէքների հիմքի վրայ ազատ, ժողովրդավար, համայն հայրութեան հայրենիքը հանդիսացող եւ նրա նպատակներին ծառայող պետականութեան կերտման համար:

Տեղի ունեցող փոփոխությունները, սակայն, անհրաժեշտ գործընթացի սկիզբն են դեռեւս, ինչը պէտք է զարգացուի նոյն հետեւողականությամբ ու վճռականությամբ՝ մինչեւ Հայաստանում ժողովրդավար իշխանութեան լիակատար յաղթանակի օրը:

Հայ յեղափոխական դաշնակցությունը, հաւատարիմ իր կոչմանը, հայրենիքում վերընձիւղուելու օրից պայքարել է ազգային դիմագիծ ունեցող եւ ազգային նպատակներին ծառայող պետական-քաղաքական համակարգի ձեւաւորման համար. յանուն այն բանի, որ իշխանութեան ողջ գործունեությունը բխի ժողովրդի կամքից եւ ուղղուած լինի նրա ազատ, բարգաւաճ կեանքի կերտմանը:

Հայ յեղափոխական դաշնակցությունը, պատրաստ լինելով իր բոլոր

հնարաւորությունները ներդնել հայոց պետականութեան հզօրացման եւ ազգային հիմնահարցերի լուծման գործին, միաժամանակ շարունակելու է վճռականօրէն ընդդիմանալ, երբ կ'անտեսուեն ու կը վտանգուեն այդ նոյն ազգային եւ պետական շահերը:

13 փետրուարի 1998

**ԵՌԱԲԼՈՒՐԻ ՄԷՋ
ՍՕՍԷ ՄԱՅՐԻԿԻ ԱՃԻՒՆԸ
ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ
ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ**

28 մայիս 1998-ին յատուկ հանդիսութեամբ Եռաբլուրի մէջ հողին յանձնուեցաւ Սօսէ Մայրիկի աճիւնը:

Հերոսուհիին աճիւնը՝ սափորի մէջ, Հայ օգնութեան միութեան գրասենեակէն պատուոյ պահակախումբի ուղեկցությամբ փոխադրուեցաւ Ազգային բանակի տուն, ուր յարգանքի տուրք մատուցեցին պետական գործիչներ, Ազգային ժողովի պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, ՀՕՄ-ի ներկայացուցիչներ եւ հոգեւորականներ:

Այնուհետեւ աճիւնը տեղափոխուեցաւ Եռաբլուր: Խօսք առին պաշտպանութեան փոխնախարար Աստուածատուր Պետրոսեան եւ ՀՕՄ-ի ներկայացուցիչներ: Հոգեհանգստեան արարողութենէն ետք Սօսէ Մայրիկի աճիւնը հողին յանձնուեցաւ:

**ՀՅՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Գ. ԳԵՐԱԳՈՅՆ
ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

ՀՀ-ական իշխանությունը վերածուեց ատորիտար վարչակարգի:

Արցախեան ազատագրական պայքարի ալիքի վրայ Հայաստանում իշխանութեան եկած քաղաքական ուժը շատ շուտով սկսեց նահանջել իր ազգային, ժողովրդավարական սկզբունքներից՝ աստիճանաբար վերածուելով ատորիտար վարչակարգի:

Տստեսական, ընկերային սխալ քաղաքականութեան, խմբակային շահադիտութեամբ իրականացուած սեփականաշնորհման հետեանքով փլուզուեց եւ փոշիացուեց երկրի

տնտեսական ներուժը, ինչը
յանգեցրեց ընկերային բեռեռացման,
ժողովրդի ճնշող մեծամասնությունը
յայտնուեց աղքատության մէջ,
հարիւր հազարաւորները ստիպուած
եղան հեռանալ հայրենիքից:

Ամէն գնով սեփական իշխանութիւնը
պահպանելու ինքնանպատակ ձգտումը
ի վերջոյ մղեց նաեւ քաղաքական
բռնութիւնների, արգելուեց ՀՅԴ
գործունէութիւնը, հալածանքների
ենթարկուեցին քաղաքական
բազմաթիւ գործիչներ, փակուեցին
մի շարք պարբերականներ,
անցկացուեցին խորհրդարանական եւ
նախագահական կեղծ ընտրութիւններ եւ
Սահմանադրութեան անօրէն հանրաքուէ:

Հայաստանի կառավարիչները
բացառեցին ազգային
գաղափարախօսութիւնը, ետ
կանգնելով հայ ժողովրդի ազգային-
քաղաքական հիմնախնդիրներից,
որպէս տրամաբանական արդիւնք՝
Արցախեան հարցում հանդէս գալով
պարտուողական դիրքերից:

Այս քաղաքականութեան խոր
ձգնաժամը յանգեցրեց Լեւոն Տէր
Պետրոսեանի հրաժարականին:

Նախագահական ընտրութիւններում
ՀՅ Դաշնակցութիւնը պաշտպանեց
Ռուպերթ Քոչարեանի թեկնածութիւնը՝
յենուելով գաղափարական նոյնութիւնների,
Արցախեան խնդրում յստակ եւ ազգային
դիրքորոշումներով առաջնորդուելու,
նախընտրական ծրագրում
տնտեսական աճի, աշխատատեղերի
ստեղծման, ընկերային եւ քաղաքական
բեռեռացման վերացման, երկրի
թալանի եւ անօրինականութեան
հեղինակներին պատասխանատուութեան
կանչելու սկզբունքների վրայ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն ժողովը՝
արձանագրելով, որ թէեւ կարճ ժամանակում
քաղաքական եւ հասարակական
կեանքի շատ բնագաւառներում
վերափոխումների միտումը ակնյայտ
է, այսուհանդերձ փաստում է.

- Շարունակում է գործել 1995 թուականին
կեղծիքների հիմքի վրայ ստեղծուած
Ազգային ժողովը, որը խոչընդոտող
դեր է խաղում ժողովրդավարացման
ընթացքի նկատմամբ,

- Ընդհանուր առմամբ պահպանում
է նախկին քատրային սխալ

քաղաքականութեան սկզբունքը,

- Անցած ամիսներին պահպանուել
է գործազրկութեան ծայրայեղ ծանր
պատկերը, ընկերային բեռեռացումը,

- Գիւղացիութիւնը դեռեւս զրկուած է
գոյութիւն ունեցող թեքնիք, նիւթական,
ֆինանսական ներուժից ամբողջապէս
օգտուելու հնարաւորութիւնից,

- Աղէտի գօտու հարցում դրսեւորուող
դրական միտումների հետ մէկտեղ,
շարունակում են սուր կարիքի մէջ մնալ
անօթեան տամետակ հազարաւոր մարդիկ,

- Որեւէ էական տեղաշարժ չի
նկատում հասարակութեան անապահով
խաւերի նուազագոյն կենսամակարդակը
բարձրացնելու ուղղութեամբ,

- Առողջապահութեան ոլորտում
շարունակում է տիրել նախկին անմխիթար
վիճակը: Բնակչութեան մեծամասնութիւնը
զրկուած է բժշկական օգնութիւն
ստանալու հնարաւորութիւնից:

Ելնելով յիշեալ հաստատումներից
ՀՅԴ Հայաստանի Գերագոյն
ժողովը յայտարարում է.

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը
շարունակելու է հետապնդել
հասարակական կեանքի բոլոր ոլորտների
կառուցուածքային արմատական
փոփոխութիւնների իրականացման խնդիրը:

Պաշտպանելով Հայաստանի
նախագահի ազգանպաստ
ծրագրերը՝ ՀՅԴ անկաշկանդօրէն եւ
հետետողականօրէն կը շարունակի
պահանջել դրանց կենսագործումը:

ՀՅ Դաշնակցութիւնը
պաշտպանելով ժողովրդի շահերը՝
հանդէս կը գայ արատաւորուած
համակարգի դէմ, կը հակազդի
ապազգային, հակաժողովրդական,
անօրինական երեւոյթներին:

ՀՅ Դաշնակցութիւնը կը հետապնդի
երկրում օրինականութեան լիակատար
հաստատման, առկայ ընկերային-
տնտեսական իրավիճակի մեղաւորներին
իրաւական պատասխանատուութեան
ենթարկելու հարցերը:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ Գ. ԳԵՐԱԳՈՅՆ
ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ
ԵՐԵՎԱՆ
26 օգոստոս 1998


ԸՆԿԵՐ ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Երկուշաբթի, 21 դեկտեմբեր 1998-ի առաւօտեան վաղ ժամերուն, իր վերջին շունչը աւանդեց Հայ ժողովուրդի արժանատւոր գաւակը, Հայ դատի պայքարին անխոնջ նուիրեալը, իր ողջ էութեամբ Դաշնակցութեան գինուորագրուած գաղափարի մարտիկը եւ կազմակերպական ղեկավարի ուժական անհատականութեամբ օժտուած վաստակաւոր գործիչը՝ ընկեր Հրայր Մարութեան:

Աւելի քան 25 տարի ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը եղած էր ընկ. Հ. Մարութեան, երբ 1994-ի յուլիսի 17-ին, ուղեղային կաթուածի հետեւանքով, դառն ճակատագիրը զինք գամեց անկողնին՝ աչքերը յառած դէպի հեռուն, դէպի Երկիր, որուն ազատագրումը եւ վերանկախացման երթին դրօշը ամէնէն ավելի բարձր պահողներէն մէկը եղած էր. դէպի Երկիր, որուն պետական ղեկին տիրացած հակադաշնակցական վարչախումբին գլխաւոր թիրախը դարձաւ ինք անձնապէս, իբրեւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ, երբ 29 յունիս 1992-ին, Հայաստանի նախագահի անհիմն ամբաստանութիւններով ու հրամանագիրով, հեռացուեցաւ ի այնքան պաշտելի հայրենի հողէն՝ Հայաստանէն:

Թէեւ Հայաստանի մէջ 1998-ի տարեսկիզբին կատարուած իշխանափոխութենէն յետոյ, նորընտիր Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագիրով, յետս կոչուցեան ընդհանրապէս ՀՅ Դաշնակցութեան եւ որոշապէս ընկ. Հրայր Մարութեանի դէմ ատենին արձակուած Հայաստանի Հանրապետութեան նախագահի անարդար հրամանագիրները, այսուհանդերձ՝ առողջական իր անդարմանելի վիճակին բերումով, տարաբախտ մեր ընկերը ի վիճակի չեղաւ անդրադառնալու եւ անձամբ հաստատելու, որ զուր էր Դաշնակցութեան դէմ բացուած պայքարը եւ ի վերջոյ գաղափարականօրէն յաղթական դուրս եկաւ Դաշնակցութիւնը:

Իր կեանքի երազն էր հաստատուիլ Հայաստան ու իր առաւելագոյնը նուիրաբերել վերանկախացեալ մեր երկրի պետականութեան կայացման ու ամրապնդման սրբազան պայքարին: Բայց ճակատագիրը տնօրինեց այնպէս, որ ընկ. Հրայր միայն յետմահու



վերամիանայ իր պաշտելի հողին:

Սերունդներու յիշողութեան մէջ միշտ վառ պիտի մնայ ընկ. Հրայր Մարութեան անունը:

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՉՕՐԱՎԱՐ ԴՐՈՅԻ ԱՃԻՒՆՆԵՐԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՆ ԻՐ ՊԱՇՏԱԾ ՀԱՅՐԵՆԻ-ՔԻ ՀՈՂԻՆ

Ազգային հերոս Դրաստամատ Կանայեանի վերայուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ կիրակի, 28 մայիսին 2000-ին, Բաշ Ապարանի յուշարձանին մօտ:

Զօրավար Դրոյին իրենց վերջին հարժեշտը տալու համար Բաշ Ապարան եկած էին Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան, Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս, Ազգային ժողովի պատգամաւորներ, նախարարներ, պաշտօնատարներ, զինուորականներ եւ բազմահազար հայորդիներ:

Ապարանի Ս. Բագիլիկ եկեղեցոյ

մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւնը, հանդիսապետութեամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեանի:

Այնուհետեւ Դրոյի ածիւնը թնդանօթի վրայ փոխադրուեցաւ Բաշ Ապարանի յուշարձան:

Խօսք առին Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան, պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան, Դրոյի որդին՝ Մարտիրոս Կանայեան, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետեան եւ ուրիշներ:

Իր խօսքին մէջ, Ա. Խաչատրեան յայտնեց, որ Սօսէ Մայրիկէն եւ Անդրանիկէն ետք հայրենիք վերադարձաւ Դրոն, եւ անոնց ոգիները հայրենասիրութեան խորհրդանիշ պէտք է ըլլան մեր սերունդներուն համար:

Այնուհետեւ Դրոյի ածիւնը յուշարձանէն քիչ հեռու գտնուող բարձունքին վրայ յանձնուեցաւ հողին:

Իբրեւ յարգանքի տուրք ազգային հերոսի յիշատակին եւ միացեալ ու հզօր Հայաստան տեսնելու անոր տեսլականին, Դրոյի գերեզմանը լեցուեցաւ Շուշի եկեղեցոյ բակէն բերուած հողով:

Նշենք, որ շաբաթ օր, Ս. Էջմիածինի Մայր տաճարին մէջ, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն մը:

Հայրապետական իր խօսքին մէջ վեհափառը յայտնեց, որ «թող Դրաստամատ Կանայեանի եւ իր զինակիցներու անմար յիշատակը, հայրենեաց ծառայութեան բոցավառ ոգիով յաղթանակներու նոր հաւատք պարգեւէ հայրենաբնակ մեր ժողովուրդին եւ նորոգէ ազգային մեր միաբանութիւնը ի սփիւռս աշխարհի»:

Հոգեհանգստեան արարողութեան ներկայ գտնուեցան նախագահ Ռ.

Քոչարեան, Ա. Խաչատրեան, վարչապետ Ա. Մարգարեան, նախարարներ, զօրավարին ազգականները եւ բազմաթիւ հայորդիներ:

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՆԴՐԱԴԱՐՁԸ՝ 1 ՄԱՐՏ
2008-Ի ԴԷՊՔԵՐՈՒՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Յարգելի հայրենակիցներ,
2008 թուականի մարտի 1-ին եւ 2-

ին երեւանում իրադարձութիւններն ընթացան վատթարագոյն տարբերակով: Այդ վտանգը մենք նախագգում, այդ մասին պաշտօնապէս ահազանգում էինք եւ նախընտրական, եւ հետընտրական փուլերում: Ցաւօք, հետետութիւններ չարուեցին: Կատարուածը մեր ընդհանուր ողբերգութիւնն ու ամօթն է, ստեղծուած կացութիւնից հնարաւոր նուազագոյն կորուստներով ելք գտնելը՝ բոլորիս պարտքն ու պատասխանատուութիւնը:

Մի կողմից Լ. Տէր Պետրոսեանն ու նրա կողմնակիցները այս սցենարը հետետողականօրէն նախապատրաստում էին վերջին մի քանի ամիսների ընթացքում հասարակութիւնը պառակտելու, ատելութիւն ու թշնամանք սերմանելու, պետական հաստատութիւնները վարկաբեկելու ու կազմաքանդելու անթաքոյց նպատակադրումով, միւս կողմից՝ բնակչութեան մօտ առկայ առարկայական դժգոհութեան պատճառները չէին վերացում: Արդիւնքում՝ երկիրը ծանր կորուստ ունեցաւ, ամենասահաւորը՝ զոհուեցին Հայաստանի քաղաքացիներ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը իր խորին ցաւակցութիւնն է յայտնում զոհերի հարազատներին՝ շեշտելով, որ վիշտը իւրաքանչիւրիսն է: Միաժամանակ, մենք ընդգծում ենք, որ առաջին նախագահի ու նրա կողմնակիցների գործողութիւնների հիմքում ընկած էր բռնի ուժով իշխանութեան գալու նպատակը, իսկ մայրաքաղաքում արտակարգ դրութիւն յայտարարելու՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագիրն անհրաժեշտութիւն էր:

Ստեղծուած իրավիճակում մենք իշխանութիւնից հետետողական քայլեր ենք պահանջում երկու ուղղութեամբ՝ առաջին՝ բացայայտել բռնութիւններ, անկարգութիւններ հրահրողներին ու կազմակերպիչներին եւ, իրաւական բոլոր չափանիշների պահպանմամբ, պատժել օրէնքի ողջ խստութեամբ, երկրորդ՝ հետետողականօրէն, քայլ առ քայլ լուծել երկրում անվստահութիւն, անարդարութեան զգացում առաջացնող բոլոր պատճառները եւ Հայաստանը դուրս բերել որակական նոր՝ ժողովրդավարացման, մարդու իրաւունքների լիարժէք պաշտպանութեան ճանապարհ: Մեր նախորդ յայտարարութիւններում ձեւակերպել ենք այն հիմնական խնդիրները, որոնց լուծումը ջանքեր եւ համախոհութիւն է

պահանջում: Ամենագլխաւորը՝ օրէնքի առաջ հաւասար պէտք է լինեն անխտիր բոլորը՝ թէ՛ այսօր իւրային համարուողները, թէ՛ հակառակ ճամբարում գտնուողները: ՀՅ Դաշնակցութիւնը պատրաստ է իր բոլոր ուժերը ծառայեցնել այս նպատակին:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Մենք ուղղակի պարտաւոր ենք ողբերգութիւնից դասեր քաղել եւ ցաւը զսպելով, առաջ շարժուել՝ յանուն մեր հասարակութեան միասնականացման եւ մեր պետականութեան ամրապնդման:

*ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
Երեւան, 3 մարտ 2008*

**ՀՅԴ ԿԸ ԴԱԴՐԵՑՆԷ ԻՐ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

27 ապրիլ 2009-ին ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան մասնւոյ ասուլիսի մը ընթացքին ներկայացուց Գերագոյն մարմինի յայտարարութիւնը, որուն մէջ հիմնաւորուած է ՀՅԴ-ի որոշումը համաձայնական կառավարութեան իր մասնակցութիւնը դադարեցնելու մասին: Ստորեւ յայտարարութեան բովանդակութիւնը:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը յայտարարում է քաղաքական համաձայնական կառավարութեան իր մասնակցութիւնը դադարեցնելու մասին:

Նկատի ունենալով խնդրի քաղաքական նշանակութիւնը, հանրային հնչեղութիւնը եւ հետեւանքները՝ անհրաժեշտ ենք համարում պարզաբանել այս քայլի պատճառները:

Նախ՝ ՀՅԴ-ն համաձայնական կառավարութեան մաս կազմեց նախագահական ընտրութիւններից յետոյ երկրում ստեղծուած ճգնաժամը, հայկական երկու պետութիւնների անկախութեանն ու անվտանգութեանն ուղղուած ռազմաքաղաքական սպառնալիքները միասնական ուժերով յաղթահարելու եւ համակարգուած բարեփոխումներ իրականացնելու նպատակադրումով:

Այս ընթացքում որոշակի յաջողութիւններ արձանագրուեցին,

սակայն անյաղթահարելի սկզբունքային տարաձայնութիւն առաջացաւ արտաքին քաղաքականութեան ուղեգծի շուրջ:

Մենք մշտապէս համոզուած ենք եղել, որ պետութեան ազգային անվտանգութեան ռազմավարական ուղղութիւններից մէկը Հայոց ցեղասպանութեան համընդհանուր, մասնաւորապէս՝ Թուրքիայի կողմից ծանաչումն ու դատապարտումն է: Սա դիտարկուել է ոչ միայն պատմական արդարութեան վերականգնման, այլեւ տարաձաշրջանում փոխադարձ վստահութեան մթնոլորտի բարելաւման եւ ապագայում նման ոճիրների կանխարգելման համատեքստում: Այս առումով, ինչպէս արդէն յայտարարել ենք, մեզ համար անընդունելի ու դատապարտելի էր ապրիլի 24-ի անմիջական նախօրէին եւ Թուրքիայի ղեկավարների հակահայկական, նախապայմաններ թելադրող կեցուածքների համատեքստում Հայաստանի ու Թուրքիայի արտգործնախարարութիւնների համատեղ յայտարարութեան ընդունումը: Ունենք նաեւ սկզբունքային տարաձայնութիւններ Հայաստան-Թուրքիա բանակցութիւններում արծարծուող որոշ դրոյթների վերաբերեալ Հայաստանի իշխանութիւնների դիրքորոշման հարցում: Այդ դրոյթների վերաբերեալ ամբողջական տեսակէտները կ'արտայայտենք դրանց հրապարակային քննարկումների ժամանակ:

Յետայսու ՀՅ Դաշնակցութիւնը Հայաստանի քաղաքական դաշտում գործելու է նոր՝ ընդդիմադիր ուժի կարգավիճակով: Մեր հիմնական առաջնահերթութիւնները լինելու են.

Դառնալ իշխանութեան լիարժէք այլընտրանք՝ բոլոր հիմնահարցերի վերաբերեալ առաջարկելով սեփական ծրագրերն ու լուծումները:

Որպէս ընդդիմութիւն ստանձնել իշխանութիւններին արդիւնաւէտօրէն հակակշռելու եւ զսպելու դերակատարութիւն:

Իրականացնել անհրաժեշտ գործառոյթներ՝ քաղաքական դաշտի առողջացման եւ բիրեղացման, իշխանութիւն-ընդդիմութիւն քաղաքակիրթ յարաբերութիւնների ձեւաւորման, սոցիալական արդարութեան հաստատման եւ ժողովրդավարութեան ամրապնդման նպատակով:

Ծաւալել նախընտրական խոստումներից բխող ամբողջական գործունէութիւն, դրսեւորելով ՀՅ

Դաշնակցության գաղափարաքաղաքական հինքնատիպությունը:

Հայ-թուրքական յարաբերությունների, Ղարաբաղեան հակամարտության կարգաւորման գործընթացներում առաջնորդուել բացառապէս ազգային-պետական շահերի եւ նպատակների գերակայութեամբ:

Մենք գնահատելի ենք համարում կոալիցիոն գործընկերների հետ համատեղ գործունէութիւնը եւ յաջողութիւն ենք մաղթում նրանց աշխատանքներին՝ ի շահ մեր պետութեան եւ ժողովրդի:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
27 ապրիլ 2009

**ԵՕԹ-Ը ԿԷՏՆՈՅ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԻՄ-Ք՝ ԱԻԵԼԻ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՅՐԵՆԻ-ՔԻ ԿԵՐՏՄԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

2013 թ. փետրուարին կայանալիք Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւնը մեր անկախ պետականութեան անցած ճանապարհը վերաիմաստաւորելու, երկրի ու հասարակութեան խնդիրները ճիշդ ձեւակերպելու, ժողովրդի բարեկեցութիւնն ապահովող գործողութիւններ նախանշելու, արտաքին մարտահրաւէրները արժանապատուօրէն դիմակայելու բացառիկ հնարաւորութիւն է: Ակնյայտ է, որ միայն մրցակցային, բովանդակութեամբ ազատ, արդար, նոր որակի ընտրութիւնների դէպքում կը վերականգնուի հասարակութեան վստահութիւնը, կը բարելաւուի բարոյահոգեբանական մթնոլորտը, երկիրը բնականոն, անվտանգ եւ թռիչքաձեւ գարգացման հեռանկար կ'ունենայ:

Առ այդ՝ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, այս յայտարարութեամբ, քաղաքական օրակարգ է բերում այն հիմնախնդիրները, որոնց առաջադրմամբ եւ լուծմամբ կարող ենք դուրս գալ տեւական տեղապտոյտից.

1. Ստեղծել ժողովրդի ազատ կամարտայայտութեամբ իշխանութեան ձեւաւորումն ու փոփոխութիւնը երաշխաւորող ընտրական համակարգ.

բացառել ընտրակաշառքը, պետական-վարչական միջոցների օգտագործումը, անցում կատարել խորհրդարանի ընտրութեան 100 տոկոս համամասնական սկզբունքի:

2. Մինչեւ 2015 թ. աւարտը նախաձեռնել Սահմանադրական փոփոխութիւններ՝ կառավարման խորհրդարանական համակարգի անցնելու նպատակով:

3. Իշխանութիւններին վերահսկելու եւ հակակշռելու նպատակով՝ օրէնքով երաշխաւորուած գործուն լծակներ տրամադրել ընդդիմութեանը: Մասնաւորապէս՝ Քաղաքացիական ծառայութեան խորհրդի, Տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան եւ Հանրային ծառայութիւնը կարգաւորող յանձնաժողովների, ինչպէս նաեւ ստեղծուելիք հակակոռուպցիոն գործակալութեան ղեկավարումը վերապահել ընդդիմութեանը: Վերահսկիչ պալատի խորհրդում ընդդիմութեանը մասնաբաժին ամրագրել:

4. Յստակ տարանջատել պիզնեսն ու քաղաքականութիւնը, ապահովել դատական իշխանութեան լիարժէք անկախութիւնը: Արմատական փոփոխութեան ենթարկել տնտեսական քաղաքականութիւնը՝ նպատակ դարձնելով նոր աշխատատեղերի ստեղծումը, արժանապատիւ վարձատրութիւնը եւ աղքատութեան վերացումը:

5. Ամրագրել պետութեան կազմակերպիչ-կարգաւորիչ դերակատարութիւնը հաւասար հնարաւորութիւններով հասարակութեան կայացման, բարիքների ստեղծման ազատութիւնը եւ դրանց բաշխման արդարութիւնը ապահովելու գործում: Ընկերային քաղաքականութեան հիմքում դնել կենսապահովման նուազագոյն պիտոճէի մեծութիւնը:

6. Արտաքին քաղաքականութեան մէջ որդեգրել ազգային-պետական այնպիսի ուղեգիծ, որի գերխնդիրն է հայկական պետականութեան անկախութեան, անվտանգութեան եւ ինքնուրոյնութեան ապահովումը:

7. Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջեւ կնքել ռազմաքաղաքական դաշինք: Ամրագրել, որ հիմնախնդրի լուծման հիմքը Արցախի բնակչութեան համաժողովրդական հանրաքուէներով արդէն իսկ արտայայտուած

կամքն է: Բանակցություններում ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի եւ անվտանգության առաջնայնությունը:

Ետ կանչել Հայաստանի Հանրապետության ստորագրությունը հայ-թուրքական արձանագրություններից: Թուրքիայի հետ յարաբերությունները կարգավորել՝ մեկնելով ազգային անվտանգության ռազմավարությունից, չվտանգելով հայ ժողովրդի նպատակների իրականացման, պատմական արդարության վերականգնման հեռանկարը:

ՀՅ Դաշնակցությունը համոզուած է, որ այս խնդիրների լուծումն է մեր առաջնահերթությունը: Նախագահական ընտրություններից յետոյ, յաջորդ հինգ տարիներին, պետական կառավարման արդիւնաւէտութիւնը պայմանաւորուած է լինելու ընտրուելիք նախագահի՝ այս մարտահրաւէրները գիտակցելու, ստանձնելու եւ լուծելու յանձնառութեամբ:

Մեկնելով այս հաստատումներից՝ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը նախաձեռնում է քաղաքական քննարկումներ կուսակցությունների, հասարակության լայն շերտերի եւ մասնագիտական խմբերի հետ:

Այդ քննարկումների արդիւնքում Դաշնակցութիւնը կը յստակեցնի իր մասնակցութեան ձեւն ու տարողութիւնը նախագահական ընտրություններին:

Յարգելի՛ հայրենակիցներ,
Մենք վստահ ենք՝ առկա

հիմնախնդիրների ձիշղ ձեւակերպումը գործի կէսն է արդէն: Ակնկալում ենք, որ դերակատար ուժերն ու հասարակութեան աշխուժ հատուածը կը համախմբուեն քաղաքական այս պլատֆորմի շուրջ:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
8 նոյեմբեր 2012

ՀՅԴ-Ն ՀՐԱՊԱՐԱԿԵՑ «ԱՅՈ՛»-Ն ԲԱՑԱՏՐՈՂ ԳՐ-ՔՈՅԿԸ. ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ՍԿԻԶԲ

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը հրատարակած է Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան բարեփոխումներու հանրաքուէի իր «Այո՛»-ն բացատրող գրքոյկը, որուն մէջ ըսուած է.

«Հայաստանի մէջ չես գտներ ոեւէ մարդ (բացի քանի մը հոգիէն), որ փոփոխութիւն չի ցանկար ու չի պահանջեր: ՀՅ Դաշնակցութեան համոզումով, փոփոխութիւնը պէտք է ըլլայ խորքային ու համակարգային: Յատկապէս այդպիսին է կառավարման համակարգը արմատապէս փոխելը՝ կիսանախագահականէն անցում կատարելով խորհրդարանական համակարգի: Անձ մը միտով փոխարինելը ոչինչ կու տայ:

«Սիրելի՛ հայրենակից, այս քանի մը էջերուն մէջ կը փորձենք հանրամատչելի կերպով ներկայացնել այսօր գործող համակարգի բացերը եւ նոր սահմանադրութեան առաւելութիւնները:

«Կարելի է արձանագրել, որ 6 դեկտեմբեր 2015-ին հանրաքուէի դրուած սահմանադրական փոփոխութիւններու նախագիծին մէջ ամրագրուած են ՀՅ Դաշնակցութեան հիմնական բոլոր մօտեցումները:

«Ներկայացնելով սահմանադրական փոփոխութիւններու քանի մը հարցեր եւ լուծումներու առնչութեամբ մեր պատկերացումները՝ յոյս ունինք, որ անոնք կ'օգնեն քեզ, յարգելի՛ ընտրող, մասնակցելու 6 դեկտեմբեր 2015-ի հանրաքուէին եւ վճռական «Այո՛» ըսելու նոր սահմանադրութեան:

«Սիրելի՛ հայրենակից, «6 դեկտեմբերին տեղի ունենալիք հանրաքուէին ընթացքին դո՛ւն պիտի որոշես, թէ ինչպիսի՛ Հայաստանի մէջ կ'ուզես ապրիլ»:



ԱՊՐԻԼ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայ յեղափոխական դաշնակցության 125-ամեակը կը նշուի ոչ բնական, այլևս անսովոր ու համաշխարհային մակարդակի վրայ վտանգներով եւ աննախատեսելի անակնկալներով յղի պայմաններու մէջ:

Ոչ բնական ու վտանգներով լեցուն պայմաններու մէջ ծնունդ առած ՀՅ Դաշնակցութիւնը, 125 տարուան իր փորձառութեամբ, նոր հանգրուաններ նուաճելու ամրութեամբ կը դիմագրաւէ նաեւ այսօրուան պայմանները:

Եւ իր պատմութեան ընթացքին, էրբ պատահած էր, որ հայ ժողովուրդի խիզախութիւնն ու առնականութիւնը մարմնաւորող ՀՅ Դաշնակցութիւնը հանգիստ ու խաղաղ պայմաններու մէջ գործած է:

Արեան ու տառապանքի ծնունդ, մահով ազատութիւն կերտող, եարի փոխան զէնք գրկող, պաշտպանութեան առաջին գիծի վրայ մարտնչող, թշնամին պատուհասող, հայ մարդու արժանապատուութիւնը պաշտպանող, բանուորին քրտինքն ու մտաւորականին գրիչը պաշտող, Հայաստանի ու հայութեան անբռնաբարելիութիւնը ապահովող այս կուսակցութիւնը 125 տարուան իր պատմութեամբ անկրկնելի փաստը տուած է իրան կուսակցութեան մը, որ արդարօրէն ժողովուրդի ծնունդ է, ժողովուրդին համար ապրող ու գործող:

Փառաբանանք չէ սա, այլ իրականութիւն: Մերկ ու թափանցիկ իրականութիւն:

Իսկ թէ ինչո՞ւ այսպէս է Դաշնակցութիւնը:

Որովհետեւ,

Ան նոյն նպատակին շուրջ համախմբուած մարդոց հաւաքականութիւն չէ միայն,

Ո՛չ ալ նոյն գործին հաւատացող ու միասնաբար զայն գլուխ հանող մարդոց խմբակցութիւն,

Եւ ոչ ալ ժամանակաւոր ու անցողակի շահերու համար քով քովի եկած քաղաքացիներու համախմբում,

Ու ոչ միայն հայ ժողովուրդի ձգտումներուն հաւատացող ու անոնց իրականացման համար պայքարող հաւատաւորներու հաւաքական ուժ:

Եւ դեռ, ան զէնքով պատիւ կերտելու եւ ազատութիւն կոթողելու սրբազան խենթերու փաղանգ մը չէ միայն:

Այդ բոլորն է, ու պիտի մնան այդպէս վստահաբար:

Բայց այդ բոլորէն վեր ու այդ բոլորէն վեհ, ՀՅ Դաշնակցութիւնը հոգի է ու կամք,

Կեանք է, ամէնօրեայ ապրելակերպ:

Հոգի մը՝ անհասկնալի, հոգի մը՝ անշօշափելի ու անբացատրելի: Հոգի մը՝ հօգօր, որ ամբողջ 125 տարի կը շարունակէ սաւառնիլ՝ հակառակ զայն մարմնաւորող աննմաններուն հողեղէն մարդու տկարութեանց եւ կեանքէ հրաժարումին:

Կամք մը՝ աննկուն ու անխորտակ: Դաշնակցութեան ու դաշնակցականի՛ կամք, որ, հակառակ շրջապատող տկարութեանց եւ ընկրկումներու, հարուածներու եւ տապառահարումի, 125 տարի շարունակ քայլ պահեց Դաշնակցութեան հետ, հայութեան համար:

Կեանք է Դաշնակցութիւնը: Ու այդ կեանքը կ'ապրուի իրաւ դաշնակցականներու կողմէ, կուսակցական ըլլան անոնք թէ Դաշնակցութեան համակիր անհատներ: Կեանք է, ամէնօրեայ ապրելակերպ, յարատեւ կենցաղ եւ յարաճուն վերանորոգում:

125 տարին մեր ետին, յաղթանակները, պարտութիւնները, տառապանքներն ու նրուաճումները, տկարութիւններն ու սլացքները, խարխափումները, ընկրկուներն ու խոյանքները, ու մանաւանդ մեր ժողովուրդին հաւատքն ու վստահութիւնը Դաշնակցութեան հանդէպ, անտարակոյս մեզի կու տան 125-էն ետք նոր հանգրուան մը թեւակոխելու մարտահրաւերը:

Ու մինչ այդ, գաղափարական ուժգնութեամբ, անապական կազմակերպութեամբ, ժողովուրդին միշտ ծառայ մնալու վճռականութեամբ ու պատրաստութեամբ մենք պարտինք դիմաւորել նոր հանգրուանը:

125 տարուան քրտինքով, զոհաբերութեամբ ու արեամբ կերտուած ՀՅ Դաշնակցութիւնը մեզի սորվեցուց մէկ բան՝

Հասկնալու համար Դաշնակցութիւնը, պէտք է ապրիլ զայն:

Ապրիլ Դաշնակցութիւնը՝

Հայաստանի ու հայութեան համար,

Արդարութեան եւ իրաւունքներու ձեռքբերման համար,

Արժանապատիւ եւ ազատ կեանքի համար, Հայ մարդու անկախ ու ինքնուրոյն նկարագիրին համար,

Հայաստանի հայութեան եւ իւրաքանչիւր հայ մարդու յաւերժութեան համար:

Ապրիլ Դաշնակցութիւնը, ապրեցնելու համար հայութիւնը:

Յ. ԲԱԳԴՍԱՏՈՒՆԻ

ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՈՒ ԸՆԴԱՐՁԱԿԵՆՔ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Հայաստանի ու հայության դիմագրաւած նորօրեայ մարտահրաւերներուն դէմ յանդիման, հայրենիքի թէ սփիւռքի մէջ եւ տարբեր ցամաքամասերու վրայ, այս օրերուն կը նշուի Հայ յեղափոխական դաշնակցութեան հիմնադրութեան 125- ամեակը:

Կարելի է այս առիթով երկարօրէն անդրադառնալ Դաշնակցութեան կերտած համազգային նուաճումներուն, յաղթանակներուն եւ իրագործումներուն: Կարելի է համապարփակ քննարկումի ենթարկել այն ազգային հիմնախնդիրները, որոնք տագնապեցուցած են դաշնակցականը եւ ան նոյն այդ տագնապներուն լուծման ու մարտահրաւերներու դիմագրաւման գործընթացին մէջ չէ սակարկած ո՛չ ժամանակ, ո՛չ քրտինք, ո՛չ գործ եւ, աւելին, ո՛չ իսկ կեանք: Կարելի է նոյնիսկ քննարկել պատմութեան այն հանգրուանները, որոնք մինչեւ այսօր, հակառակ գոյութիւն ունեցող առարկայական փաստերուն ու տուեալներուն, կը շարունակեն մնալ որոշ չափով անյստակ եւ պարզաբանումի կարօտ: Հայրենիքի ու ազգի պաշտպանութեան սուրբ գործը, արդարութեան ու անկախութեան ի խնդիր Դաշնակցութեան մղած պայքարը եւ, վերջապէս, հայ ժողովուրդի մեծ իտեալներու նուիրականացման համար դաշնակցականին ունեցած հաւատամքն ու զոհաբերութեան բարձր գիտակցութիւնը եւ այս բոլորին կողքին գաղափարական այն բարձր պատուանդանը, որ յաջողած է կերտել ու պահպանել 125 տարուան կենսափորձ ունեցող այս կուսակցութիւնը իր եզակի դրոշմը ձգած է հայոց ժամանակակից պատմութեան վրայ:

Այո՛, հաշուետուութեան օր է Դաշնակցութեան 125-ամեակը: Հաշուետու զգալու ու իբրեւ այդպիսին գործելու դաշնակցական աւանդը արդէն իսկ վերածուած է նկարագիրի եւ դարձած ժողովուրդ - Դաշնակցութիւն անխորտակելի կապի մեծագոյն գաղտնիքը: Առանց այդ հաշուետուութեան բարձր գիտակցութեան՝ Դաշնակցութիւնը պիտի չյաջողէր իր ժողովուրդի համազգային տենչերուն հարազատ թարգմանը հանդիսանալ ու իբրեւ այդպիսին՝ անոր իրականացման համար միշտ մնալ ջահակիր հայութեան ազգային ազատագրական պայքարին, հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման ու հայ մարդու ար-

ժանապատութեան պաշտպանութեան: Ահաւասիկ այս իսկ պատճառով, շատ մը հարցադրումներ, որոնք Դաշնակցութեան վերաբերելով հանդերձ ուղղակիօրէն կ'առնչուին բովանաղակ հայ կեանքին, որովհետեւ հայ կեանքի մէջ արձանագրուած իւրաքանչիւր նուաճումի եւ անկիւնադարձային դէպքի պարագային Դաշնակցութիւնը եղած է ու կը շարունակէ մնալ մեծ ներկան եւ այս է պատճառը, որ ժողովուրդը միշտ ալ կ'ակնկալէ տեսնել Դաշնակցութեան կեցուածքը, ըսել անոր արժեւորումը եւ նաեւ իմանալ արեւելումը հայութիւնն ու Հայստանը տագնապեցնող խնդիրներու առնչութեամբ:

Վերեւ նշուած բոլոր դիտարկումները կարելի է եւ 125-ամեակը բնականաբար պատեհ առիթ է կատարելու այդ բոլորին արժեւորումն ու քննարկումը: Այսօր, սակայն, նոյնքան եւ աւելի կարելի է հանգամանք է անդրադառնալ այն հիմնական առաջադրանքներուն, դժուարութիւններուն եւ առաջնահերթութիւններուն, որոնք ներկայ ժամանակներու ծնունդ են եւ ժամանակակից մօտեցումով այդ հիմնախնդիրներու քննարկումը կենսական է ու անխուսափելի: Յաճախ կը խօսինք մեր ապրած կեանքի պայմաններու փոփոխութեան մասին եւ այդ փոփոխութիւններուն մէջ դաշնակցական անհատի դերակատարութեան մասին: Անկասկած որ մեր միջավայրին մէջ համահայկական խնդիրներու ու հարցերու իրագրումն ու քննարկումը նախապայման են այդ տուեալ նոր կացութիւնները դիմագրաւելու եւ ընկալելու առումով: Այս առիթով նպատակայարմար պիտի ըլլայ, քանի մը խորհրդածութիւններ կ'իսել ընթերցողին հետ, այն հաստատ համոզումով, որ յառաջիկայ հանգրուանին այս մտածումները կարելի է արժանացնել հաւաքական քննարկումի ու վերլուծման եւ հասնիլ բիրեղացման հանգրուանի մը, ուր այդ քննարկումներուն վրայ խարսխուած գործը մեր նորօրեայ երթին մէջ անվարանօրէն կրնայ ունենալ ներգործօն ու բարեբեր ազդեցութիւն:

ա- Դաշնակցական անհատը այսօր, 125-ամեակի սեմին, պարտաւոր է առաջին հերթին վերարժեւորելու եւ վերասահմանելու իր դերն ու տեղը կուսակցութեան ընդհանուր գործին մէջ: Պէտք է ըլլալ իրապաշտ եւ ընդունիլ, որ ոչ մէկ ատեն կարելի եղած է ապահովել ընդհանուր գործին մէջ

բոլոր դաշնակցականներու ներդրումը: Այս իրողութիւնը բնական պէտք է համարել: Ծրագիրները քննարկուած ու պատրաստուած են ժողովներու ընթացքին եւ անոնց գործադրութիւնը վստահուած է կուսակցական մարմիններուն: Ապա նոյն այդ մարմինները իրենց կատարած գործին համար միշտ ալ հաշուետու եղած են դաշնակցական բոլոր շարքերուն դիմաց: Այս բոլորը կը մնան Դաշնակցութեան գործին հիմնաքարը, սակայն ներկայ ժամանակներուն, գործի բնագաւառներու ընդարձակումով, առանցքային նշանակութիւն կը ստանայ իւրաքանչիւր ընկերոջ ներդրումը եւ մասնակցութիւնը ընդհանուր գործին: Այս մէկը աւելիով կը հարստացնէ գործը եւ զայն կ'օժտէ յաջողութեան աւելի մեծ գրաւականներով: Այսօրուան պայմաններուն մէջ ընդհանուր գործին կառչած անհատը յաւելեալ դերակատարութիւն կրնայ ստանձնել նաեւ հարցերու ու կացութիւններու քննարկման հոլովոյթին մէջ: 125-ամեակի առիթով արժէ, որ իւրաքանչիւր դաշնակցական անհատ մտածէ այս անհրաժեշտութեան մասին:

բ- Ժամանակակից համահայկական խնդիրներու եւ հարցերու քննարկման համար այսօր անհրաժեշտ է առաջին հերթին ամբողջական իրազեկումը: Այստեղ քարոզչութեան մասին չէ խօսքը, ոչ ալ՝ ընդհանուր վերնագիրներու ծանօթացման, այլ հարկ է շեշտը դնել հարցերու խորացման, անոնց տարողութիւնը տեսնելու արթնամտութեան եւ ամբողջական ու համապարբակ տեսակէտ կազմելու ընտրանքներուն վրայ: Այս պարագային դաշնակցական անհատի ցուցաբերած յանձնառութիւնը կենսական է: Չի բաւեր ապրիլ խանդավարութիւն եւ ունենալ ապրում միայն: Հարկ է հետամուտ ըլլալ հետեւելու, ամէնօրեայ դրութեամբ, իրադարձութիւններու եւ դէպքերու հոլովոյթին եւ այդ բոլորին մէջ յատուկ ուշադրութեան առանցք դարձնել դաշնակցական արժեւորումը, որպէսզի կարելի ըլլայ ապահովել նոր մտածումներու եւ նոր կարծիքներու յայտնաբերումը, քննարկումներու հարստացումը, աւելի բիւրեղացած ծրագիրներու կազմութիւնը եւ այս բոլորը անշուշտ՝ ի սպաս ընդհանուր գործի յաջողութեան: Ժողովական մասնակցութիւնը անհրաժեշտ է անտարակոյս, սակայն ակնկալուած ամէնօրեայ

իրազեկումը այդ ժողովական մասնակցութիւնը կը դարձնէ աւելի օգտակար ու աւելի արդիւնաւետ:

գ- Կառոյցներու երիտասարդացման երաշխաւորումը, զանոնք թարմ մարդուժով ու մասնագիտացած կարողականութեամբ օժտելու անհրաժեշտութիւնը անհրաժեշտ կը դարձնեն մնայուն կերպով երիտասարդութեան ներգրաւումը մեր ընդհանուր գործին մէջ: Դաշնակցութիւնը կը հաւատայ, որ երիտասարդութիւնը է՝ ու կը մնայ գործի շարունակականութեան ու Դաշնակցութեան մնայուն երիտասարդացման գործընթացի հիմնական ուժը, որ մնայուն կերպով նոր շարժում, նոր որակ եւ նոր եռանդ պիտի բերէ ընդհանուր երթին: Այսօրուան աշխարհաքաղաքական պայմաններն ու հաշիւները այդքան ալ ձեռնտու չեն եւ կը փորձեն երիտասարդութիւնը հեռու պահել ազգային, քաղաքական ոլորտներէն: Այս իմաստով առկայ է նաեւ կլանող քարոզչական մեծ մեքանիզմ, որ կ'արգելակէ երիտասարդութեան մտերմացումը ազգային հիմնախնդիրներու:

Կարելի չէ ակնկալել, որ երիտասարդութեան ջախջախիչ համեմատութիւնը կառչի կուսակցական կազմակերպական գործի եւ այս իմաստով ցուցաբերէ ամբողջական յանձնառութիւն: Սակայն անհրաժեշտ է ստեղծել այն գործադաշտը, ուր իւրաքանչիւր երիտասարդ անպայման գտնէ իր տեղը ու բերէ իր բաժին մասնակցութիւնը ընդհանուր գործին: Այլ խօսքով, պէտք է ձգտիլ երիտասարդութեան այդ խումբը գրաւելու մշակութային, մարզական, Հայ Դատի եւ բարեսիրական աշխատանքներու մէջ ու ջանալ առաջը առնել հայութենէն հեռանալու եւ օտարանալու այլեւս վտանգաւոր դարձած երեւոյթին:

դ- Հարկ է ընդունիլ, որ այսօր մտաւորական խօսքի եւ գրչի անբաւարարութիւնը ակնբեր է հայ կեանքին մէջ: Դժբախտաբար ազգային հիմնահարցերու զծով մտաւորականութեան արժեւորումներն ու վերլուծումները՝ մեր ներկան, մեր ժամանակակից ազգային նուաճումները յաւերժացնելու շատ յաճախ բացակայ են: Նորահաս սերունդներուն մօտ ազգային հպարտանքը դարբնելու մտաւորականութեան վստահուած պարտականութիւնը բաւարար չափով իր տեղը չի գտներ: Այս բոլորը սերունդներու դաստիարակութեան գործին մէջ կենարար

ազդեցություն ունին եւ փաստորէն օրէ օր կը պակսին: Կասկածէ վեր է, որ մտաւորականությունը ինքն է առաջին հերթին, որ պիտի փորձէ մտայուն շարժման մէջ պահել հայ կեանքը ու երաշխաւորել հայ անհատին ազգային ինքնակերտումը: Ահաւասիկ այստեղ դաշնակցական մտաւորականությունը անպայման որ ըսելիք խօսք եւ կատարելիք գործ ունի:

Ե- Հայ քաղաքական մտքին համար հայկական ամուր մարդուժի դրամագլուխի մը յառաջացումը գերակշիռ կարեւորութիւն կը ներկայացնէ, եւ այդ մէկը հայապահպանման հիմնական նախադրեալ է: Նորահաս սերունդներու դաստիարակութեան եւ կազմաւորման գործընթացին մէջ ազգային ինքնութեան խորացումը եւ արմատացումը եւ հայ կեանքի մէջ սերնդափոխութիւնը պէտք է արժանացնել յատուկ գուրգուրանքի ու ուշադրութեան: Այստեղ ժամանակակից պայմաններուն ու պահանջներուն հետ համահունչ ընթացող մտածելակերպի առկայութիւնը անհրաժեշտ է:

Քատրերու պատրաստութիւնը պէտք է դառնայ իւրաքանչիւր հանգրուանի ղեկավարութեան յաջողութեան հիմնական արժեքափոր: Այլապէս այդ հանգրուանի աշխատանքը պիտի դառնայ ինքնանպատակ եւ կարելի պիտի չըլլայ երաշխաւորել սկսուած գործի շարունակականութիւնը:

Գ- 125-ամեակի առիթով պէտք է մտածել նաեւ սփիւռքեան կեանքը դնելու նոր հարթակի վրայ: Սփիւռքի մէջ 100 տարիներու ընթացքին մեր ստեղծած հայապահպանման եւ հայեցի սերունդներու պատրաստութեան կառոյցները տարին շնորհակալ աշխատանք: Այսօր, սակայն, պարտաւոր ենք նոր պայմաններու եւ կացութիւններու լոյսին տակ այդ կառոյցներու գործն ու դերը վերատեսութեան ենթարկել, արդիական գործելաճի ընկալումը դարձնել ուշադրութեան կեդրոն եւ ի պահանջել հարկին ստեղծել նոր կառոյցներ՝ մեր կեանքը դարձնելու աւելի գրաւիչ ու համակող: Մեր կառոյցներուն մէջ Հայաստանն ու հայութեան իտէլիքները պէտք է վերածուին առօրեայ ներկայութեան եւ այս իմաստով անհրաժեշտ միջավայրի ստեղծումը ու մտայնութեան դարբնումը կարեւոր է:

Ե- Այսօր Հայ դատի հետապնդման աշխատանքները կը գտնուին նոր առաջնահերթութիւններու դիմաց ու նոր հար-

թութեան վրայ: Անհրաժեշտ է Հայ դատի հետապնդման աշխատանքներուն մէջ ներգրաւել աւելի մեծ թիւով մարդուժ: Ճանաչումէն դէպի հատուցում անցնող դարձակետային այս հանգրուանին մեր ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ պէտք է արմատացնել Հայ դատի անժամանցելիութեան խնդիրը: Հայ դատի հետապնդման աշխատանքներուն շուրջ հայութեան բովանաղակ շերտերու համախմբումը պիտի նպաստէ մեր կեանքի աշխուժացման եւ զայն հեռու պահէ տեղատուութենէ ու միապաղաղ ընթացքէ: Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի սեմին Ծիծեռնակաբերդի մէջ Հայոց ցեղասպանութեան հռչակագիրի յայտարարութիւնը, Հայ դատի հետապնդման յառաջիկայ հանգրուանի աշխատանքներուն համար ստեղծեց համահայկական ընդարձակ գործադաշտ: Մեզի կը մնայ արժեւորել ու կենսաւորել այդ գործադաշտը:

Եզրակացնելու համար՝ փոխուած են ժամանակներն ու պայմանները, սակայն այս հարցերու ճշգրիտ ընկալումը դաշնակցականն ու դաշնակցական գործը կը դնեն իրենց հարազատ պատուանդանին վրայ՝ օժտուած պատմական ամուր փորձառութեամբ ու ձեռք բերուած բարոյական բարձր արժանիքներով: Դաշնակցութեան 125-ամեակին առիթով կը գտնուինք մեր գործը ընդարձակելու հրամայականին դիմաց: Հաւաքական գործի գիտակցութեան ու պարտաւորութեան դարբնումը կոչուած է դառնալու մեր յաջողութեան հիմնական մղիչ ուժը եւ մեր երթին նշանակութիւն տուող հիմնական կռուաններէն մէկը: Ինչպէս ընկեր Հրաչ Տամնապետեան պիտի նշէր՝ «Արժանի ըլլալու համար լրիւ ու իրաւ դաշնակցական մարդու դժուար կոչումին, Դաշնակցութեան համար, անոր հետապնդած նպատակներուն համար, որոնց հաւանքը ունինք, ամէն օր քիչ մը աւելի պիտի ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԱՆԱՆՔ»:

Շատ ընելիքներ ունինք...

Պիտի շարունակենք ու ընդարձակենք Դաշնակցութեան գործը:

ՅԱԿՈՒ ՀԱԽԱԹԵԱՆ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ՝ 125-ԱՄԵԱԿԷՆ ԱՆԴԻՆ

Կրնայ առարկուիլ, որ 125 տարուան պատմութեան ուղի մը անցած Հայ յեղափոխական դաշնակցութիւնը տակաւին ինչ ընելիք կրնայ ունենալ: Բայց արդե՞օք քաղաքական ապրող, ներգործօն օրկանսիզմի մը, ինչպիսին է Դաշնակցութիւնը, գործունէութիւնը ինքնանպատակ է: Ո՛չ երբեք: Որեւէ քաղաքական միաւորի գործունէութիւնը պայմանաւորուած է անոր ծնունդ տուող հասարակութեան, ազգին ունեցած առարկայական եւ ենթակայական պայմաններով, առանց որոնց առկայութեան՝ քաղաքական կազմակերպութիւնը չի կրնար արդարացնել իր գոյութիւնը: Եւ ինչպէս որ 125 տարի առաջ հայ ազգին դիմագրուած առարկայական եւ ենթակայական պայմանները պարտադրեցին, որ յեղափոխական ցիր ու ցան ուժերը համախմբուին եւ դառնան մէկ «Յեղափոխականների դաշնակցութիւն», նոյնպէս ալ այսօր, մեկնելով արդէն նոր պայմաններուն մէջ հայութեան ապրած առարկայական եւ ենթակայական տուեալներէն, յանուն այս հաւաքականութեան համար ապագայատեսիլ առաքելութեան մը ուղենշումին, Դաշնակցութիւնը կոչուած է իր ռազմավարական եւ մարտավարական առաջնահերթութիւնները ճշդելու՝ մեկնելով 125-ամեայ փորձէն եւ ժամանակակից, մերօրեայ գաղափարական զարգացումներէն, որովհետեւ առօրեայէն գաղափարապէս կտրուիլը չի կրնար գրասական դառնալ ապագայ նպատակամղուած գործունէութեան:

Եւ որովհետեւ ժամանակ առ ժամանակ պղտոր ջուրերուն մէջ ճուկ որսացողներ կ'ելլեն ու դարձեալ շրջանառութեան մէջ կը դնեն «Դաշնակցութիւնը այլեւս անելիք չունի» քաջազունիական խօսքը, ապա աւելի քան որեւէ ժամանակ անհրաժեշտութիւնը կը զգացուի հիմնաւորելու Դաշնակցութեան գաղափարական գործին շարունակելիութեան կարեւորութիւնը, նախ եւ առաջ, ինչպէս վերը ըսինք, հայ ժողովուրդին ապագայ առաքելութիւնը ճշդորոշելու համար: Որովհետեւ, ինչպէս 19-րդ դարու վերջաւորութեան, նոյնպէս հիմա հայ ազգը պատմական եւ քաղաքակրթական առաքելութիւն մը ունի, զոր կոչուած է ստանձնելու կամայ թէ ակամայ: Այսօր ալ հայ ազգը իր ապրած միջավայրին մէջ շրջապատուած է բռնատիրական կարգերով, կրօնական

ծայրայեղականութեամբ, յետադիմական դրութիւններով, այս բոլորին դիմաց հայութիւնը եւ Հայաստանը կոչուած են շրջանին մէջ փարոսները ըլլալու ազատութիւններուն, յառաջդիմութեան, զարգացումին եւ հանդուրժողականութեան: Եւ այս քաղաքակրթական առաքելութեան ճշդորոշման աշխատանքին մէջ, մեր կարծիքով, կարեւոր դեր ունի կատարելիք Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, նախ եւ առաջ՝ մեկնելով իր ժողովրդավարական ընկերվարութեան իտեալէն, որ այսօր ալ իր յեղափոխիչ ներգործութիւնը կրնայ ունենալ մարդոց քաղաքական, ընկերային, մշակութային եւ քաղաքակրթական գիտակցութեան վրայ:

Դրամատիրութեան ժամանակակից դրսեւորումին՝ համաշխարհայնացումի ժամանակաշրջանին մէջ կ'ապրինք: Ճարտարարուեստականացումի եւ արհեստագիտութեան զարգացման զագաթնակէտ՝ իր բոլոր դրական եւ ժխտական կէտերով, տեղեկատուական ահաւոր հոսք, որ շատ յաճախ շահադիտական օգտագործումի կ'ենթարկուի մեծապետական նպատակներով, մարդիկը սպառողական էակներու վերածելու յաւելեալ ձգտում, որպէսզի աւելի դիւրին ըլլայ զանոնք վերահսկելի դարձնելը՝ պարպելով անոնցմէ ամէն տեսակի ստեղծագործական կիրք, բարիք արտադրողի եւ ստեղծողի ինքնեկ գոհունակութիւն, եւ աւելին. դրամագլուխի յաւելեալ կեդրոնացում՝ շատ քիչ թիւով մարդոց ձեռքերուն մէջ, մինչդեռ մարդոց մեծամասնութիւնը ենթակայ կը մնայ արտադրութեան արդիւնքի անարդար բաշխումին, ինչ որ կը ստեղծէ սակաւապետական դասակարգ մը, որ իր ձեռքերուն մէջ կ'առնէ քաղաքական եւ տնտեսական կառավարման լծակները: Այս երեւոյթներէն ոմանք շատ մեծ չափով գոյութիւն ունին նաեւ Հայաստանի մէջ: Անոնք գումարուելով արդէն անկախութեան առաջին օրերէն Հայաստանի եւ հայութեան վրայ պարտադրուած թորքեազրպէյճանական շրջափակումին՝ տնտեսական անհեռանկարայնութեան մղձաւանջը կը ստեղծեն, ինչ որ պատճառ կը դառնայ մեր հազարաւոր հայրենակիցներու անվերադարձ արտագաղթին:

Կ'ուզենք քայլ պահել ժամանակի ոգիին հետեւապահովելիայմարդուարժանապատիւ կեցութիւնը իր իսկ հայրենիքին մէջ, ուրեմն անոր առիթ պիտի ընծայենք, որ դառնայ

արտադրող եւ ոչ թէ սպառող, այս ընելու համար հիմնական է արտադրութեան, ճարտարարուեստին եւ ժամանակակից արհեստագիտութեան զարկ տալը, ինչպէս նաեւ՝ առիթ չփախցնելը, որ Հայաստան մաս կազմէ շրջանային տնտեսական մեծ ծրագիրներուն, ինչ որ առանձնայատուկ դեր կը վերապահէ Հայաստանին՝ շրջանային քաղաքականութեան խորապատկերին վրայ: Հոս է, որ կու գայ շեշտուելու Հայ յեղափոխական դաշնակցութեան գաղափարական դերակատարութիւնը, որ կոչուած է քաղաքական համապատասխան ծրագիրները մշակելու՝ վերոյիշեալները ծառայեցնելու համար նախ հայ մարդու օգտին՝ միաժամանակ փորձել սրբագրելով իրերայաջորդ կառավարութիւններուն որդեգրած նոր-ազատական քաղաքականութիւններուն թերութիւնները, որոնք դժբախտաբար շարունակուելու միտում ունին...

Ի զուր չէ, որ շեշտը դրինք, Դաշնակցութեան գործին մէջ, նախ հայոց հայրենիքի եւ հայ մարդու շահը ապահովելու կէտին վրայ, որովհետեւ իր գաղափարախօսութեամբ իսկ ՀՅ Դաշնակցութիւնը կու գայ ընդգծելու, որ՝ «իր բոլոր ուժերով կը նուիրուի բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային շահերու պաշտպանութեան՝ ի խնդիր ազատ հայու, ազատ քաղաքացիի եւ ազատ հայրենիքի կերտումին»: Եթէ երկիրը իրողապէս եւ իրաւականօրէն անկախ է, բայց անոր մէջ ապրող մարդը քաղաքականօրէն եւ տնտեսապէս ազատութեան որոշակի պակասէ կը տառապի, նաեւ առկայ է քաղաքական եւ տնտեսական մենաշնորհի կոչուած բանը, ուրեմն մարդ անհատը ազատ եւ ներդաշնակ կերպով զարգանալու նախապայմաններէն զրկուած կ'ըլլայ: Այս խախտումը սրբագրելու համար նաեւ Դաշնակցութեան պարտականութիւններէն մէկն է քաղաքացիի իրաւական գիտակցութիւնը զարգացնել իւրաքանչիւր հայ մարդու մէջ, որպէսզի այդ մարդը, գիտակից իր իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն, այլեւս անիրաւուած չզգայ ինքզինք իր իսկ սեփական հայրենիքին մէջ: Լուսանցքայնացած չզգայ ինքզինք: Չզգայ, որ իր ճակատագիրը այնպէս մը տնօրինուած է, որ պէտք է արտագաղթել իր սեփական հայրենիքէն: Միաժամանակ հայկական քաղաքացիական իրաւական գիտակցութիւնը պէտք է սերմանուի նաեւ սփիւռքահայուն մօտ, այն առումով, որ իւրաքանչիւր հայ պէտք է դիմէ ձեռք բերելու

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն եւ մաս կազմէ հայոց հայրենիքի ու հայութեան վերելքի մեծ աշխատանքին: Ասոնք անբաժանելի մասնիկները կը կազմեն Դաշնակցութեան ծրագրի եւ գաղափարախօսութեան էութեան:

Կու գանք կարեւոր հարցի մը, որ մեր կարծիքով, Դաշնակցութեան մտաւորական եւ քաղաքական գործունէութեան առանցքը պէտք է հանդիսանայ յառաջիկայ հանգրուանին: Ինչպիսի՞ քաղաքական, ընկերային եւ տնտեսական համակարգ՝ Հայաստանի եւ հայութեան համար: Ասիկա կ'անդրանցնի սահմանադրական փոփոխութիւններու այսրոպէական մտահոգութիւնը, որովհետեւ տասը, քսան տարուան համար չէ, որ կը ծշողի, այլ նկատի կ'առնէ աւելի երկար ժամանակահատուած եւ խորքային փոփոխութիւններ՝ մտածելակերպի եւ արժեքամակարգի մէջ: Ընկերային արդարութեան վրայ հիմնուած իրաւական պետութեան կերտման սոսկական հասկացողութենէն անդին՝ Դաշնակցութիւնը իր գաղափարախօսութեան ընդմէջէն ուղղակի յղում կը կատարէ ընկերվարութեան գաղափարական մեծ դպրոցին, որ կը բացառէ դրամատիրական մրցակցութիւնը եւ շեշտը կը դնէ կամաւոր հիմքերու վրայ համագործակցութեան գաղափարին վրայ: Բայց հիմա այս «ընկերվարութիւն»-ը ինչպէ՞ս պիտի շուկայադրես, այս է գլխաւոր հարցը, մանաւանդ որ գոյութիւն ունի իրական վախ խորհրդային «սոցիալիզմ»-ի ուրուականէն: Այս վախին պատճառով ալ անկախութեան ամբողջ ժամանակաշրջանին ընկերվարութիւնը ներկայացնելու իմաստով քիչ եւ ամէկոտ փորձեր տեղի ունեցած են: Ուրեմն նշեալ մտաւորական ու քաղաքական ճիգը, խուսափելու համար այդ ֆոպիայէն, պէտք է կեդրոնանայ հայկական առանձնայատուկ պայմաններուն մէջ կիրարկելի եւ այդ պայմաններուն համար մշակուած հայկական ընկերվարութեան ստեղծման աշխատանքին վրայ: Այս «հայկական ընկերվարութիւն»-ը երեւի իւրայատուկ համադրումը ըլլայ ճախակողմեան մտքի արտայայտած լաւագոյն մտքերուն, հայկական առողջ ազգայնութեան (հեռու՝ ամէն տեսակի ազգայնամոլական նկրտումէ) եւ քրիստոնէական ուսմունքի ընկերային սկզբունքներուն, որովհետեւ դարեր շարունակ նաեւ քրիստոնէութիւնը այն ուսմունքը հանդիսացած է, որ հայ կեանքին մէջ արմատաւորած է համայնական

կացութեամբ, որ ձեռով մը ապրելու եւ արտադրելու ընկերվարական հասկացողութիւն է: Ահա այս տիպի ընկերվարութեան տեսական մշակումն է ետք է, որ անիւր կը սկսի դառնալ այլեւս, կը սկսուի մտածուիլ լրջօրէն, թէ ինչպէ՛ս կարելի է ապահովել աշխատաւոր ընդհանրութեան բաժնեկցութիւնը ճարտարաւեստի եւ երկրագործութեան կազմակերպման աշխատանքին մէջ, այդ աշխատաւորութեան մասնակցութիւնը արտադրութեան կառավարման, տնտեսավարման ապակեղորոնացումը եւ արհեստակցական անկախ միութիւններու ստեղծումն ու գործունէութիւնը: Այս վերջինս բնագաւառ մըն է, ուր ահաւոր բաց մը կը տիրէ ներկայիս Հայաստանի Հանրապետութեան մէջ:

Այս բոլորէն ետք, անշուշտ, պիտի չմոռնանք ՀՅ Դաշնակցութեան բուն գործը, որուն համար սկզբունքով հիմնադրուեցաւ 125 տարի առաջ, եւ որ անկատար կը մնայ: Անկա Հայ դատի լուծումն է եւ ամբողջական հայութեամբ ամբողջական հայրենիքի մը ստեղծումը: Այսօր հայութեան հիմնական հարցը ոչ միայն չէ լուծուած, այլեւ նորանոր տուեալներ մէջտեղ եկած են անոր ընդմէջէն: Այսօր Հայ դատի հետապնդման մարզին մէջ այլեւս շեշտը կը դրուի ճանաչումի հանգրուանէն հատուցումի հանգրուանին անցնելու անհրաժեշտութեան վրայ: Այս մարզին մէջ ալ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կարելոր աշխատանք ունի եւ պէտք է ունենայ հետագային՝ հայութեան բոլոր հատուածները ներկայացնող հատուցման իրական թղթածրարը պատրաստելու մէջ իր

ունենալիք դերակատարութեան ընդմէջէն: Նոյն՝ Հայ դատի հասկացողութեան ծիրին մէջ նաեւ, օրէ օր աւելի եւս կը շեշտաւորուին Հայոց ցեղասպանութենէն ետք Արեւմտահայաստանի մէջ մնացած հայութեան բեկորներուն գործօնը, իսլամացուած եւ թաքուն հայերու պարագան, Պոլսոյ մէջ քաղաքացիական եւ մշակութային նոր զարթօնքը, քիւրտերու եւ յառաջդիմական թուրքերու երբեմն անչկոտ, երբեմն բացայայտ դրական վերաբերումը հայկական հարցերուն եւ այլն: Այս բոլորը կը պարտաւորեցնեն համապատասխան դիրքորոշում որդեգրել այս բոլորին նկատմամբ, մօտէն հետեւիլ, ի պահանջել հարկին՝ զօրակցիլ, բան մը, որ վերջին տարիներուն տեղի կ'ունենայ զանազան մակարդակներու վրայ: Ասոնք, գումարած՝ համընդհանրութեան վիճակը, այն նոր հարցերն են, որոնք կը գտնուին Սեւրի դաշնագրի հասկացողութեան ծիրին մէջ, եւ որ նաեւ Դաշնակցութեան ծրագրի քաղաքական բաժնի հիմնական կէտերը կը մնան:

Եւ եթէ այս բոլորին վրայ աւելցնենք աշխատանքը Արցախի Հանրապետութեան ճանաչման գծով, Զաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութիւնը եւ մայրոն աշխատանքը սփիւռքը կազմակերպելու ու անոր ներուժը ծառայեցնելու Հայաստանի Հանրապետութեան բարգաւաճման, ապա կը տեսնենք, որ ՀՅ Դաշնակցութիւնը ոչ թէ «անելիք չունի», այլ շատ ու շատ ընելիք գործ ունի իր հիմնադրութեան 125-ամեակէն անդին...

ԺԱՔ Յ. ՅԱԿՈԲԵԱՆ



ՍՈՒՐԲ ԳՈՐԾԻ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԸ (ՀՅԴ ՊԱՆԹԵՈՆԻՆ ՄԷՋ ՀԱՆԳՉՈՂ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ*)



Մեզմէ՛ ռ՛վ երկիւղը չէ ապրած Հայ յեղափոխական դաշնակցութեան պանթեոնին դիմաց կանգնած պահուն, Պուրծ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ:

Ո՛վ չէ խոնարհած շիրիմին դիմաց այն Մեծերուն, որոնք հայ ժողովուրդի զարթօնքին, ազատութեան եւ պետականութեան համար իրենց կեանքերը ընծայաբերեցին՝ 125 տարիներու Դաշնակցական Գործի պատկառելի ասանդ մը ձգելով իրենց ետին:

Մեծեր էին անոնք, որոնք ստեղծեցին նոր պատմութիւն, պայքարի, ազատութեան եւ անկախութեան նուիրուած պատմութիւն, որուն էջերը գրեցին մեծ զրկանքներով, անհուն զոհաբերութեամբ եւ հերոսական արարքներով: Ընորիւ իրենց՝ 125 տարիները դադրեցան դէպքերու սովորական արձանագրութիւն մը ըլլալէ, դարձան դիւցազներգութիւն, իսկ իրենք՝ դադրեցան սովորական մահկանացուներ ըլլալէ, դարձան անմահներ՝ մահուան ճամբաներու վրայ, յանուն ազատութեան եւ անկախութեան, յանուն հայրենիքի եւ հայ ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու:

Յիշողութիւնները թարմացնելու համար կ'արժէ Մեծերու այդ սերունդը ոգեկոչել ա-

նուն առ անուն:

Դաշնակցութեան առաջին երեսնամեակի արժանաւոր դէմքերէն՝ Արտաշէս Յովսէփեան՝ Մալխաս եւ կինը՝ Աննիկ Մալխաս, Վահան Փափազեան՝ Կոնս եւ կինը՝ Հեղուշ Փափազեան, հայ կամաւորական շարժումի եռանդուն մասնակիցներէն:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան լուսաւոր դէմքերէն՝ վարչապետ Սիմոն Վրրացեան, խորհրդարանի նախագահ Աւետիք Սահակեան եւ կինը՝ խորհրդարանի անդամ Վառվառէ Սահակեան, Շիրակի նահանգապետ Կարօ Սասունի եւ կինը՝ Լոյս Սասունի, առաջին հանրապետութեան Կարմիր խաչի հիմնադիրներէն:

Սփիւռքեան գոյամարտի նուիրեալներէն՝ Յակոբ Սիմոնի եւ Ղազար Չարբզ, յանձնառու մտաւորականներէն՝ եղուարդ Տարօնեան, Լեւոն Գարմէն եւ Մուշեղ Իշխան, հակադաշնակցական պայքարի զոհերէն՝ Վարդգէս Տէր Կարապետեան, Լեւոն Պէրպէրեան եւ Ներսէս Խիտավերտեան, Հայ դատի անխնջ պաշտպան՝ Շաւարշ Թորիկեան, ազգային-քաղաքական գործիչ՝ Մելքոն Էպիղաթեան եւ, վերջապէս, անմնացորդ ծառայութեան խորհրդանիշ՝ Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչներ եւ անդամներ՝ Ատուր Գապագեան, Բարգէն Փափազեան, Հրաչ Տասնապետեան, Երանդ Մոնֆարեան եւ Բենօ Թոնդեան:

Մեծանուն դէմքեր, բոլորն ալ՝ Դաշնակցութեան Սուրբ Գործի ուխտեալներ, որոնք անսակարկ զոհաբերութեան մէջ փնտռեցին կեանքի գերագոյն իմաստն ու երջանկութիւնը՝ խորապէս համոզուած, որ՝ «Յեղափոխական գործի մէջ չի կրնար իրատունքի եւ պահանջի խնդիր ըլլալ, այլ՝ միայն բարոյական պարտաւորութեան եւ բաւարարութեան խնդիր»:

Անոնք՝ պատմութեան «խենթ»-երը, պատմութիւն կերտեցին, հայրենիք եւ պետականութիւն ստեղծեցին, սփիւռք կազմակերպեցին, հայապահպանման կռուաններ հի վարեցին եւ ապագայ Միացեալ Հայաստանի հունտերը ցանեցին:

Անոնք պայքարի տարիներուն գործերով գաղափարներ ցանեցին, իսկ խաղաղութեան տարիներուն գաղափարներով գործեր ծաւլեցին:

Շատերը անոնցմէ ինկան դեռ նպատա-

կին չհասած: Իրենցմէ առաջ եւ իրենցմէ ետք ուրիշներ ինկան նոյն ճամբուն վրայ, յաճախ՝ կռուի դաշտերէն հեռու, սփիւռքեան անհարազատ երկինքներու տակ, նորերը սակայն շարունակեցին կռիւը, կրկնակի՝ դժուար կռիւը անտեսանելի թշնամիին դէմ:

Ինկան՝ հայրենի հողէն հեռու, հայրենիքի կարօտի թախիծը իրենց աչքերուն, բայց նոյն անխախտ հաւատքով՝ դէպի հայութեան ապագան:

Այսպէս, 125 տարի դադար չունեցաւ Դաշնակցութեան զոհաբերութիւնը հայութեան համար: Դադար չունեցաւ նաեւ հայուն զոհաբերութիւնը Դաշնակցութեան համար: Ու այս նուիրումը գաղտնիք մնաց բոլոր անոնց համար, որոնց սրտերը չկարողացան բաբախել հայօրէն:

Հազարաւոր դաշնակցականներ եկան ու անցան գրիչը, սուրն ու բահը միացնող զինանշանին տակէն: Բոլորն ալ սուրբեր չէին անշուշտ եւ այսօր ալ չեն: Բայց բոլորն ալ ջանացին իրենց անհատական եւ հանրային կեանքով բարոյականի տէր մարդ դառնալ եւ հասնիլ անոնց, որոնք իրենց ետը ժխտեցին, որոնք փառքէ եւ հարստութենէ հրաժարեցան, որոնք աշխարհիկ վայելքները արհամարհեցին՝ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու ձեռք բերման ի խնդիր:

125 տարի Դաշնակցութեան մէջ տեղ չգտան անձնական դիրք ու նպատակ հետապնդողները, նիւթապաշտներն ու բախտախնդիրները: Դաշնակցութիւնը ժամանակի ընթացքին իր ծոցէն դուրս նետեց պատահականօրէն իր շարքերէն ներս սպրդածները:

125 տարի Դաշնակցութիւնը իր անդամներուն անհաշի զոհաբերութիւն քարոզեց եւ իր բոլոր հաւատաւորները զոհաբերութեան դաշտեր առաջնորդեց:

125 տարի Դաշնակցութիւնը իր զաւակները զինեց ազգային եւ քաղաքական ինքնագիտակցութեամբ, սորվեցուց ըլլալ ուղղամիտ, պարկեշտ, արի ու պահանջատէր:

Այսպէս, կուսակցութեան գրաւոր կանոնագիրին կողքին ստեղծուեցաւ անգիր կանոնագիր մը, կուսակցական բարոյականութեան աւետարան մը, որուն յօդուածները գրուեցան արհնով:

Մեր ժողովուրդը սերտեց այդ աւետարանը եւ Դաշնակցութեան գործն ու բարոյականը հաւասարագոր նկատեց իրարու: Այդպէս ալ, ան Դաշնակցութեան նպատակին տուաւ Սուրբ Գործ անունը:

Մեր ժողովուրդը տեսաւ, որ իր հիմնադրութենէն մինչեւ այսօր Դաշնակցութիւնը

կ'ապրի ու կը գործէ անշահախնդրօրէն՝ իբրեւ արթուն պահակը հայութեան գերագոյն շահերուն:

Մեր ժողովուրդը տեսաւ ու վկայեց, որ Կոմսէն մինչեւ Վրացեան եւ քիչ անդին՝ Ֆրըն Շրպպեթի Ազգային գերեզմանատան մէջ հանգչող Նիկոլ Աղբալեանէն մինչեւ Արամ Սահակեան, Դաշնակցութիւնը ընթացք եւ ուղղութիւն կու տայ մեր կեանքին, դեր ու ղեկավարութիւն կը ստանձնէ՝ իբրեւ տեսական պաշտպանը հայրենիքի ազգային-քաղաքական ընդհանրական շահերուն:

Մեր ժողովուրդը տեսաւ ու հաստատեց, որ Դաշնակցութիւնը ունի ուժի աղբիւր մը, որմէ զուրկ են շատ մը այլ կուսակցութիւններ, այդ ալ իր կուսակցականներու մնայուն յարգանքն է բիրաւոր նահատակներու գործին եւ յիշատակին:

Արդարեւ, Դաշնակցութիւն այն չէ, ինչ որ է այսօր միայն: Դաշնակցութիւն մնայուն շարժում է, որ ստեղծուած է 125 տարի առաջ: Անընդհատ ան կը մեծնայ ու կը զարգանայ, կը ծաւալի ու կը խորանայ մեր ժողովուրդի կեանքին եւ գիտակցութեան մէջ:

Դաշնակցութեան անդամները անոնք չեն միայն, որոնք արձանագրուած են կուսակցութեան անուանացանկերուն մէջ, այլեւ անոնք են, որոնք որեւէ ժամանակ ապրած, գործած եւ նահատակուած են Դաշնակցութեան դրօշին տակ: Կուսակցութեան հետ են միշտ, կուսակցութեան մէջ են, անոր գաղափարական առաջնորդներն ու երդուեալներն են, հիմնադիր երրորդութենէն մինչեւ այսօր, բոլոր անոնք, որոնց մարմինը կը հանգչի ծանօթ թէ անծանօթ գերեզմաններու մէջ:

Այո՛, այս այսպէս է, որովհետեւ Դաշնակցութիւնը տարիք չունի, վախճան չունի: Ան ծնած է հայ ժողովուրդին հետ: Բազմադարեան երիտասարդ հայ ֆետային է ան, որ միշտ բարձրաձակատ ու բոլորանուէր կը քալէ անյաղթ՝ հայ ժողովուրդին հետ, կը քալէ հայ ժողովուրդին համար, բոլոր ժամանակներու բոլոր դժուարութիւններու ընդմէջէն:

Դաշնակցութիւնը կռիւ է, յարատեւ կռիւ, Քրիստափորեան կռիւ, ամէն ճակատի վրայ, հայութեան ազատութեան եւ Հայաստանի ազատագրութեան համար:

Դաշնակցութիւնը ազգային հաւատամք է, ազգային գաղափարախօսութիւն, հայրենիքի անկախութիւնը, անվտանգութիւնն ու յարատեւութիւնը այդ գաղափարախօսութեամբ երաշխաւորող ուժ:

Դաշնակցութիւնը մեծ կազմակերպութիւն

է: Մեծ է ոչ թէ իր համրանքով, այլ՝ իր ոգիով: Այդ ոգին կարելի չէ սահմանել բառերով: Կարելի է զգալ զայն, ներշնչուիլ անկէ, բայց կարելի չէ բացատրել:

Ինչ որ ոգի կը կոչենք մենք, իրականութիւն ըլլալով հանդերձ, երազ մըն է, եւ երազ մը ըլլալով հանդերձ, իրականութիւն մըն է: Մենք այս երկուքը խառնած ենք իրարու, որովհետեւ ձեռք գտած չենք զանոնք իրարմէ բաժնելու:

Միայն իրականութիւնը բաւարար չենք գտներ, որովհետեւ ուզելիք բան մը եւ հասնելիք տեղ մը ունինք միշտ:

Միայն երազն ալ բաւարար չենք գտներ, որովհետեւ չենք ուզեր միշտ տենչալ, միշտ ձգտիլ եւ երբեք չհասնիլ:

Դաշնակցութիւնը մեծ կազմակերպութիւն է, բայց միայն կազմակերպութիւն չէ. «աւելի» բան մըն է: Մենք այդ «աւելի»-ն կը կոչենք դաշնակցականութիւն, որ աւելի զօրաւոր է քան՝ Դաշնակցութիւնը, աւելի տեսական է, քան՝ Դաշնակցութիւնը, աւելի տիրական է, քան՝ Դաշնակցութիւնը:

Մենք դաշնակցականացած հայեր ենք: Կրնանք ըսել, որ Դաշնակցութիւնը ինքն իսկ հպատակ է դաշնակցականութեան՝ զայն ժառանգած ըլլալով իր հայրերէն, նախահայրերէն եւ նախնիներէն:

Դաշնակցութիւնը հայ ոգիի յաւերժական արտայայտութիւնն է, եւ անոր առընթեր մէկը միւսէն թանկարժէք յատկանիշներու ամբողջութիւնն է: Անոնց ներդաշնակ համադրութիւնը: Բազմատեսակ առաքինութիւններ՝ մարմնացած մէկ բնութեան մէջ, եւ՝ այլազան շնորհներ, որոնց տէրն է հոգեպէս կազմատրուած եւ բարոյապէս անաղարտ դաշնակցականը:

Դաշնակցութիւնը անձնուրաց նուիրում է եւ զոհաբերելու պատրաստակամութիւն: Յեղափոխականի վայել տոկոնութիւն եւ բարձունքները հասնելու խոյանք:

Այլեւ՝ քաղաքական իմաստութիւն եւ քաղաքական յանդգնութիւն:

Ղեկավարող ձեռք է եւ ի հարկին հարուածող բազուկ: Ժողովուրդի պահապան, թշնամիներու սարսափ:

Դաշնակցութիւնը անկաշառ խիղճ է եւ չմթաղող գիտակցութիւն:

Պողպատացած կամք է եւ ծառացած արիւնութիւն:

Այլեւ՝ սկզբունքներու, ըմբռնումներու եւ բարքերու հարուստ աւանդութիւն:

Դաշնակցութիւնը շունչ է, ոգի եւ նկարագիր: Պատասխանատուութիւն եւ պայքարը

շարունակելու անդառնալի երդում:

Ունի պաշտամունք հայրենիքի եւ սէր՝ ժողովուրդի հանդէպ: Երկուքն ալ՝ անսահման խորքով ու չափով:

Ունի պահանջը կայուն եւ ժողովրդավար պետականութեան, ձգտումը՝ քաղաքական լիարժէք համակարգի կայացման:

Ունի ընկերային արդար իրաւունքներու ըմբռնումը, ու մանաւանդ՝ անոնց տէր կանգնելու հաստատ վճռակամութիւնը:

Ունի իր պանծալի անցեալի հպարտութիւնը եւ վաղուան իրագործումներուն անսասան հաւատքը:

Ունի իր հաւատարիմ ուխտապահներու բանակը՝ նոր մարտահրաւերներ դիմաւորելու կարողութեամբ եւ կամեցողութեամբ:

Ունի տակաւին իր նահատակները, հոյը իր լուսապսակ զոհերուն, որոնց «գործը կէս մնաց», եւ որոնց հաւատարիմ կտակարարն է ինք:

Ու վերջապէս, ունի ներքին կարգապահութեան շեշտուած գիծ, գիտակցական պարտաճանաչութիւն եւ հաւատարմութիւն, ընկերական սէր ու յարգանք:

Գումարեցէք այս բոլորը՝ կ'ունենաք Դաշնակցութիւնը:

Ունեցէք այս բոլորը եւ կ'ըլլաք Դաշնակցական:

Նման՝ պանթոնին մէջ իրենց վերջին հանգիստը գտած մեր Մեծերուն՝ Կոմսին ու Մալխասին, Վրացեանին ու Փափագեանին, Գապագեանին ու Տասնապետեանին, որոնց «գործը կէս մնաց», սակայն անտէր չմնաց ու պիտի չմնայ, այնքան ատեն որ Դաշնակցութիւնը կայ ու կը մնայ՝ իբրեւ պատմական առաջնորդը մեր ժողովուրդի վերջնական յաղթանակին՝ ամբողջական, հզօր եւ բարգաւաճ Հայաստանի կերտումին:

Վ. ԱՒԱԳԵԱՆ

* Յանուն ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին խօսք՝ արտասանուած 29 նոյեմբեր 2015-ին, Պուրժ Համուրի Ազգային գերեզմանարան մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնէն ետք:

ՄԵՆՔ ՄԵՉ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԴՐԱՆՔԸ

«Դաշնակցությունը, իմ կարծիքով, ամենից առաջ ապրում է եւ գործ: Դաշնակցությունը կարելի է եւ պէտք է զգալ միայն: Զգալ, ապրել եւ հաւատալ»:

ՌՈՍՏՈՍ

Այս անգամ գրիչը նախընտրեցի համա-կարգիչի ստեղնաշարէն, որ հակառակ իր հսկայական առաւելութեան եւ կարելի-ութիւններու մեծղի տարողութեան, պահ մը չկրցաւ զիս ներշնչել աւելի ներամփոփ ըլլալու, մտածական տարածքին յաւելեալ ներուժ հայթայթելու, խոհական մտքի պար-տադրանքը ապրելու, որպէսզի տակաւ արձանագրուելիք եւ էապէս ընդգծուե-լիք անպաճոյճ մտորումներն ու ակնկալու-թիւնները ի սրտէ շաղախուէին մատնանշեալ խորհուրդին հետ:

Այո՛, Ռոստոմաւանդ խորհուրդին՝ ապրելու եւ զգալու:

Իսկ ինչ է այդ խորհուրդը, որ ունի 125 տարիներու վեհափառ ընկալչութիւն, մարդ-կային ապրումներու եւ զգացումներու տար-րական հասկացողութիւն, ազգային երազ-ներու զեղեցկութիւն, բայց մանաւանդ՝ գաղա-փարախօսական պարփակեալ արտայայտ-չականութիւն:

Հապա եթէ առանձնացնել ուզենք յիշեալ խորհուրդին բաղադրիչ տարրերու հոգե-հարազատութիւնը իւրաքանչիւր հայու ողջ կեանքին եւ փորձառութիւններուն, զգացում-ներուն, համոզումներուն, իտէալներուն, ա-պագայի երազներուն եւ հաւաքական կեանք վարելու գիտակցութեան հետ, հոսկէ մեկնած արդէն հասկնալի կը դառնայ իրողութիւն մը անստեղծեթ, թէ ՀՅ Դաշնակցութեան անցեալի ու ներկայի հսկայածաւալ պատմութեան շտեմարանը, գաղափարայնութիւնն ու հ-մայքը այլապէս շաղկապակցութիւն մըն է ինքնին, խորապէս ամբողջական, անբեկա-նելի անքակտելի եւ յախտենաշունչ:

Աւելին. հաւատացնողն ենք նաեւ, որ պէտք է մնայ իբրեւ այդպիսին:

Արդ, անմիջապէս տարբադարեւք նաեւ մեր մտքին ծագած այն հարցադրումները, որոնք կը վերաբերին նշեալ պատմութեան, հմայքին ու գաղափարայնութեան, որոնք պատուանդամն են հանդիսացած այն կու-սակցութեան, կազմակերպութեան եւ հաւա-քականութեան, որուն գոյութենական իմաս-տը բացառապէս խարսխուած է իր ժողո-վուրդին ու հայրենիքին ազատութեան եւ ան-կախութեան ալքերուն:

Այլ խօսքով, կենդանի պատմութիւն մը,



որուն հիմքը եղած է իրաւ աշխատանքի փայլքը, գաղափարայնութիւն մը, որ ծնուն-դն իսկ է ազգի մը տառապանքին եւ դարա-տոր երազանքին, եւ հմայք մը, որուն ուռճաց-ման եւ բոցավառումին համար անկրկնելի հեղինակութիւններ իրենց դրոշմը հաստա-տագրած են մտքի պայծառութեամբ, ան-կոտորում կամքի հնչեղութեամբ եւ բիւղեղ հո-գիի մեծութեամբ:

ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութեան 125-ամեակի առիթով ինչէր կարելի է գրել, վկայակոչել եւ հպարտանալ ատոնցնով:

Ինչէր կարելի է լոյսին բերել եւ հրապուր-ուիլ, ի պահանջեալ հարկին ընդելուզուիլ, մտածումներու յանձնուիլ՝ կատարուած ան-գին զոհողութիւններուն դիմաց, նոյն ատեն տխրիլ ու դառնանալ՝ ի տես շատ ան-գամ արձանագրուած բացթողումներու եւ թերութիւններու, լաւապէս չուսու կողմնորոշումներու եւ մարտավարութիւննե-րու, որոնց համար շատ սուղ է վճարած հայ յեղափոխութիւնը իր ծնունդի օրերուն եւ անկէ ետք:

Այդուամենայնիւ, Ո՛վ կը համարձակի դրժել եւ կամ ուրանալ սրբազան այս կուսակցութեան՝ ՀՅ Դաշնակ-ցութեան մեծադիր ու անկրկնելի նուիրումը իր ժողովուրդի դատին ու հայրենիքի կերտման աշխատանքին, որոնց խորքն ու ծաւալը կ'արտացոլան հայ կեանքին, տառապեալ հայու ճակատագիրին եւ սփիւռք դարձած սերունդներու մտքի ու հոգիի պաստառին վրայ:

Փաստօրէն, հազարումէկ տիտանական աշխատանքներու մասին դիւցազներգութիւններ կարելի է հիսել, այլապէս խոնարհելով անոնց դիմաց, բազմաբնագաւառ վսեմ նախաձեռնութիւններու փայլքով կարելի է ներշնչուիլ եւ հպարտանալ, բայց մանաւանդ գոհունակութեան զգացումով մեր աչքերը սեւեռել Արարատին, ընդմիջտ ամրակայելու այն համոզումը, թէ առանց յեղափոխականացման տրամադրութիւններուն եւ եռանդին, առանց զոհաբերութիւններու եւ նահատակութիւններու ընծայաբերումին, առանց քաղաքականացման վարքագիծի ու ազգային մտայնութեան առաւել ճառագայթումին, ինչպիսի՛ Հայաստանի եւ ժողովուրդի մասին պիտի խօսէինք այսօր մենք՝ բոլորս:

Սա յաւակնոտութիւն չէ, երբեք, այլ թափանցիկ ու անպեղելի ճշմարտութեան մը պատկերը:

Յայտնապէս դժուար էր անցալին, նաեւ այսօր, պատկերացնել հաւաքական կեանքի յաջողութիւններու ամբողջ տեսադաշտ մը, առանց միասնական ոգիի տիրական ներկայութեան եւ ներշնչման աղբիւր հանդիսանալու պայծառ գիտակցութեան:

Փաստօրէն, մարդկային յառաջդիմութեան եւ զարգացման բնածին յատկութեան երաշխիք են եղած համախումբ ապրելու եւ արարելու պայծառամտութիւնը, ազգային խոր գիտակցութիւնն ու հայրենիք կերտելու եւ պահպանելու դարաւոր իմաստութիւնը:

Եւ այս ազգակերտի հասկացողութիւններուն պահպան է եղած ՀՅ Դաշնակցութիւնը իր ողջ պատմութեան տեսողութեան: Աւելին. ան գործ ու քրտինք, հաւատք ու համոզում, անշահախնդիր մօտեցում եւ ժողովրդասիրութիւն է պատգամած յանուն ազգային ազատագրական պայքարի բորբոքումին եւ արժանահաւատի կեանք մը վարելու մեծ երազանքին:

Արդարեւ,

Շատերու առնչութիւն, նաեւ մենք հարց կրնանք տալ, թէ արդեօք ինչպիսի՛ թանկագին խորհուրդի եւ կամ արժէքի մասին է խօսքը, որ, այսպէս ըսած, լոյսին կը բերուի նոյնիսկ տասնամեակներ ետք, բայց մանաւանդ յատկանշական տարեդարձի մը պատեհ առիթով:

Այլ խօսքով, ժամանակներու եւ պայմաններու թաւալքին հետ, եւ առանձնապէս ստեղծուած կացութիւններու դէմ յանդիման, դաշնակցական դաւանանքի Ռոստոմաշունչ արժէքներ որքանով դիպուկ են եւ կ'առնչուին մեր առօրեային, հարազատ կը հնչեն մեր

տրամաբանութեան ու զգացական աշխարհին, նապատակակէտային խորք կ'ընդգրկեն, կ'ապրին ու կ'ապրեցնեն, ուժ ու կորով կը մնուցեն, հաւաքական կեանքի ղեկավարումը կ'ապահովեն, եւ մեզ կը համակեն ժողովրդասիրութեամբ եւ հայրենապաշտութեամբ:

Հաւանաբար ըսուի, թէ այս օրերու ժխորին մէջ, երբ երկրագունդ մը ամբողջ կը փորձուի մարդկայնագրկել, հոգեպէս պարպել եւ ընդմիջտ մեքենայացնել, ինչ բանի կը ծառայեն տուեալ գաղափարայնութեամբ ազգակերտի արժէքներու կառչած մնալ եւ սեփական հաւատամքի ատրուշանը վերակառուցել:

Այլապէս ալ ինչպիսի՛ ազգային հասկացողութիւններու մասին է խօսքը, երբ ամբողջ մարդկութիւն մը ժպտադէմ կ'ոստոստայ մարդակերի աշխարհի մը մէջ գործադրելով նոր ժամանակներու ամէնէն վայրագ գազանութիւնները՝ պարզապէս յագուրդ տալու համայնակուլ քաղաքական ու տնտեսական վարքագիծերու:

Ուրեմն, ո՛ր տեղադրել ազգային ու պետական մակարդակի ամէն հայեցակարգ, որուն ներքեւ պիտի մնանին գաղափարական թէ իմացական կողմնորոշումներ ունեցող կուսակցութիւններ:

Հաստատապէս մեր շրջապատին մէջ գոյութիւն ունեցող բազմաբնագաւառ մարտերը խորքին մէջ երկու ուղղութիւններու միջեւ են. մէկ կողմէ ազգային էութեամբ խարսխուած արժէքային համակարգի եւ միւս կողմէ՝ ապազգային եւ նիւթականացած հրէշային ծրագիրներու:

Առաջինը կը փորձէ պաշտպանուիլ ու գոյատեւել, միւսը՝ կը նկրտի ոչնչացնել ու յօշոտել դիմացինը՝ մղելով խօլ ու բարբարոս կոհիներու տեսականի:

Ի դէպ, ստեղծուած քառուսին մէջ եւ 125-ամեայ իր գոյութեամբ իսկ Դաշնակցութիւնը կրկին անգամ կը ներկայանայ մեզի անշար, առանց մեծամտութեան, առանց ինքնագոհ մտմտութիւններու, առանց եսակեդրոն վարքագիծի եւ ապազգային կողմնորոշումներու:

Ընդհակառակը, Դաշնակցութիւնը կուսակցութիւն մըն է, որ սպառազինուած է գաղափարայնութեամբ, կազմակերպութիւն մըն է, որ կը շնչէ կենդանի գործով, հաւաքական յիշողութեան եւ իտէալներու մարմնացում եղող դաւանանք մըն է, որով մնած ու կը շարունակեն սնանիլ սերունդներ՝ յանուն ազգային տեսչերու իրականացման եւ Արարատի վերատիրացման:

Եւ այս պարունակին մէջ, մեր մտքի պաստառին վրայ կ'որուագծուի հարցադրում մը անժամանցելի, թէ արդեօք Դաշնակցութիւնը իր փառաւոր անցեալով, սփիւռքացած իրավիճակով, վերանկախ Հայաստանի երկնականարին տակ իր քաղաքական փորձառութեամբ, ինչու չէ նաեւ՝ պատմական անցեալի գործած կարգ մը սխալներով, բացթողումներով եւ թերութիւններով ի վիճակի է շարունակելու իր երթը:

Ունի ինքնանորոգման կարելիութիւն, ինքնասրբագրման ներքին ուժականութիւն, այլապէս յարատեւելու եւ մերօրեայ վախազու հոսանքներուն դէմ թիավարելու կարողականութիւն, այլ խօսքով՝ ինքզինք գերազանցելու վճռականութիւն:

Հաստատապէս եւ առանց վերապահութեան կարելի է ըսել, թէ այո՛, այս կազմակերպութիւնը ունի այն բոլոր տուեալները, այն բոլոր գործօն տարրերը, ներքին շաղխան ու հոգեկերտուածքային եռանդը, վերանուաճելու ինքզինք եւ իր աչքերը յարելու դէպի ապագայ:

Նման համոզումի եւ հաւատամքի հիմքը նոյնինքն դաշնակցական դաւանանքի ու պատկանելիութեան զգացողութիւնն է, որուն կերտման ու առաւել բոցավառումին իրենց արեան շիթերն են մատուցեր հերոս սերունդներ, անկրկնելի հիմնադիրներ եւ յեղափոխութեան քուրային պաշտպանութիւնը ստանձնած ազնուասիրտ փաղանգներ:

Յայտնապէս, ՀՅ Դաշնակցութեան ողջ պատմութեան, էութեան եւ դաւանանքին քաջածանօթ իւրաքանչիւր անհատ ըմբռնած է իրականութիւն մը անստեղծութեթ, թէ այս կազմակերպութիւնը ծնունդն է իր ժողովուրդի տառապանքին, խաւարի եւ ստրկամտութեան մէջ հիւծած ազգին, բայց մանաւանդ՝ Արարատին երկրպագող յեղափոխական փաղանգներու, որոնց յստակատեսութեան շնորհիւ Հայաստան աշխարհ դարձաւ հայրենիք, իսկ հայութիւնը՝ քաղաքակիրթ, արժանի դասուելու ու ապրելու ինքնահաստատ ազգերու շարքին:

Ըսինք, թէ Դաշնակցութիւնը ծնունդն է պատմական թելադրանքի մը, ստեղծուած ահաւոր վիճակի մը, անխուսափելի իրականութեան մը: Եւ փաստօրէն, անոր գործունէութեան դաշտը ընդգրկեց ամբողջ ազգի մակարդակին հասանելիութիւնն ու անխափան գործելու կամքը, եռանդը, կորովն ու տրամադրուածութիւնը:

Այլապէս ալ, երբ կ'ընդգծենք Դաշնակցութեան քաղաքական, գաղափարական, ազգային եւ մշակութային դերն ու արժէքը հայ կեանքին մէջ, ապա յստակ կը դառնայ անոր հզօր ներկայութիւնը հայ մտքի ու հոգիի անդաստանին մէջ:

Իր Ծրագիրով, կանոնագիրով, դաւանանքով եւ աշխարհահայեացքով ՀՅԴ-ն դեռ կը շնչէ կատարելապէս: Այլ խօսքով, երբ ուշի ուշով վերատեսութեան ենթարկենք զանոնք եւ ըստ էութեան ազուցենք նոր ժամանակներու ոգիին ու թելադրականութեան, կը նկատենք անոնց ներքին ուժեղ կառուցուածքն ու տուկալու կարողութիւնը՝ հոսանքն ի վեր եւ բոլոր մակարդակներու վրայ:

Նման եզրայանգումներ սոսկ կարգախօսային բնոյթ չունին եւ չեն ալ կրնար ունենալ, անոնք ինքնագոհութեան արտայայտութիւններ չեն, պատրանքներու եւ ցանկութիւններու նշոյլներ չեն կրեր իրենք իրենց մէջ, եւ կամ ալ բարեսիրտ փափաքներու պատեանով մը չեն շղարշուած, այլեւ իրական, գիտականութեամբ, կեանքի փորձառութեամբ եւ արեամբ պարարտացած խոհական մտքի ու ազգային տեսլականի վսեմ ու անխաթար արտայայտութիւններ են ըստ ամենայնի:

Այո՛, շատ անգամ եւ տարբեր առիթներու, կեանքի թաւալքին ընդառաջ թէ ակնկալութիւններու թոհուբոհին մէջ ականատես ենք եղած ու տակաւին կ'ըլլանք անհատական թէ կուսակցական մակարդակի թուլութիւններու, տկարամիտ վերաբերումներու, անտարբերութիւններու եւ տկարութիւններու, ապիկար վարքագիծերու եւ մօտեցումներու, որոնց պատճառով եթէ երբեք մէկ կողմէ տուեալ անհատն է տուժած, միւս կողմէ ալ կազմակերպական աշխատանքն է վնասուած, փառքն ու հմայքը տակաւ հեղինակազրկուած եւ մասամբ նորին:

Տեղին է մէջբերել, ՀՅԴ Բիւրոյի 18 հոկտեմբեր 1965 թուականի յայտարարութենէն սա դիպուկ տողերը. «Կարելի է մեղադրել ՀՅԴաշնակցութիւնը այս կամ այն պարտութեան համար, այս կամ այն վրիպումին համար: Կարելի չէ սակայն, ամբաստանել զայն հայ ժողովուրդին համար զոհաբերելէ խուսափած ըլլալու մեղադրանքով»:

Իսկ ո՛ր է այս կազմակերպութեան յարատեւելու գաղտնիքը, ուժն ու վաւերականութիւնը, եթէ ոչ այն իրականութեան մէջ, թէ անոր շարքերուն եւ իւրաքանչիւր սերունդի հետ կը ծնին Ռոստոմաւանդ արժանիքներու տիրութիւն ընող խնկելի տղաներ, անոնք ըլլան համեստ շարքային, մտաւորական, Հայ

դատի նուիրեալ, ազգային իրաւ գործիչ թէ ուխտեալ յեղափոխական, որոնց ամէնօրեայ դաւանանքն է եղած ապրիլ եւ գործել, զգալ ու ներշնչել շրջապատ մը ամբողջ, յանուն իրենց կազմակերպութեան՝ ՀՅ Դաշնակցութեան առաւել հզօրանքին եւ պայծառացումին:

Եւ այս դաշնակցականակերտի համոզումներուն, ակնկալութեանց եւ հետագայի պատկերացումներուն հիմքն է հանդիսացած առաւել հզօրանքի գիտակցութիւնը, առաւել բիրտեղանալու հաւատամքը, առաւել կազմակերպուելու հրամայական պահանջը, առաւել թարմանալու եւ երիտասարդանալու պարտադրանքը, առաւել համախմբուելու եւ միաւորուելու հրաւերը, ինքնաքննադատութենէ չվախնալու եւ կեանքի պարտադրած փոփոխութիւններէն չխրտչելու մեծահոգութիւնը, բայց մանաւանդ եւ աներկբայօրէն՝ Ռոստոմաւանդ պատգամին տիրութիւն ընելու նախանձախնդիր ու ոգեկան մեծութիւնը:

Ուստի, ինչպիսի՜ տրամադրուածութեամբ եւ հոգեկան խոր ըմբռնումով հարկ է զգալ ու ապրիլ անհատականութիւններ կերտող մեր սրբալոյս հիմնադիրներուն եւ յեղափոխական տիտան գործիչներուն ազգակերտի պատգամն ու դաշնակցականակերտի թելադրանքը՝ ղեկավարութիւն ստանձնելու հասկացողութեան ընդմէջէն, եթէ ոչ այն բարոյական ըմբռնումներու շեշտուածութեամբ, յարատեւ գործելակերպի ջատագովանքով, փոխադարձ վստահութեան եւ յարգանքի ընկալումով, կազմակերպական կեանքի առաւել աշխուժացումով, նոր օրերու եւ ժամանակի շունչին ականջալոր մնալով, գաղափարական աշխուժ կեանքի եւ նորարար մտածու:

մատուցելով, եւ առհասարակ դաշնակցական կենսափորձի ու տեսակի նկատմամբ առաւել սէր, յարգանք ու պատկարանք մնուցելով:

Այլապէս ալ ինչպէ՛ս հասկնալ դաշնակցական մտաւորական ու ազգային գործիչի, ներհուն հրապարակագիրի, իւրայատուկ դիմագիծի ու կազմաւորումի, եզակի գրիչի ու ոճի տէր Շաարշ Միսաքեանի սա պարզ եւ սակայն իր էութեամբ ապառաժեայ մտածումը, թէ «Դաշնակցութիւնը կը մնայ անխոցելի, ցորչափ կը գործէ ինքնաքննութեան բնագոյր: Մեր կուսակցութեան հիմնական արժանիքներէն է ինքնավստահութիւնը,- տոկուն կեցուածք, սուր նայուածք եւ վճռականութիւն՝ խօսքի թէ գործի մէջ»:

Եւ բացառապէս այդ լեռնացած ինքնավստահութեան արդիւնք է Դաշնակցութեան

կենսափորձը, որուն այնքան կարիքն ունի հայ ժողովուրդը՝ հայրենիք պաշտպանելու եւ ազգային երազանքին յոյս ու կորով ներշնչելու:

Աւելին. դաշնակցական ընկերներու անկրկնելի զոհողութիւններու շնորհիւ է, որ իրերայաջորդ սերունդներ համեստ թէ ղեկավարի մակարդակին, քաջութիւնն ու յանդգնութիւնը ունեցած են իրենց կամքն ու հմայքը հաստատագրելու հայ կեանքի թէ կազմակերպական միջավայրի տեսադաշտին մէջ:

Այո՛, կազմակերպական միջավայր թէ գործադաշտ, որ իր կարգին կարիքն ունի վերանորոգման, խտացման, առաւել կենսունակութեան, կարգապահութեան խորացման, նորարարութեան, բայց մանաւանդ՝ հաստատութեան վարքագիծերու որդեգրման:

Որովհետեւ, ա՛յլ ընդմիշտ հասկնալի եւ հասանելի պէտք է ըլլայ այն իրականութիւնը, թէ 21-րդ դարուն նախաշեմին, եթէ երբեք որեւէ հաւաքականութիւն, կազմակերպութիւն թէ կուսակցութիւն պիտի ուզէ յարատեւութեան հրապոյրը այլապէս ալ ապրիլ, ապա պարտաւոր է անսալ տնտեսական հզօրանքի պարտադրանքին եւ կազմակերպական կեանքի բազմաբնագաւառ տարողութեան ընդլայնումին, զարգացումին եւ յառաջդիմութեան:

Արդ, որպէսզի մեր կարգին, յաջորդող սերունդներու ժառանգենք ՀՅ Դաշնակցութեան պատկառելի պատմութեան ու կենսափորձին վեհութիւնն ու գեղեցկութիւնը, ապա առաւել ինքնավստահութիւն ջամբող եւ պայծառամտութիւն սերմանող մտածական տարածքին ներուժ հայթայթենք յանուն

125-ամեակի խորհուրդի բոցավառումին:

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ

ՀՅԴ 125-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ ՀԵՔԻԱԹԻ ՈՒ ԱՌԱՍՊԵԼԻ ԵՂԱՐՇԷՆ ԱՆԴԻՆ...

Այսօր կը տօնենք ՀՅԴ հիմնադրութեան 125-ամեակը: Իսկապէս, ինչ կը տօնենք իրականութեան մէջ: Կը տօնենք հեքիաթը, կը տօնենք առասպելը: Ապահով կը զգանք մեր արժէքներով:

ՀՅԴ-ն հայկեանքին մէջ իր բազմակողմանի ու բազմահնար դերակատարութեամբ աներեւոյթ հեքիաթ մը, երեւելի առասպել մը հանդիսացաւ՝ շեշտակիօրէն ներգրաւելով ու մեր դիւցազնական ազատագրական պայքարին մղելով հազարաւոր անձնուրացներ, որոնք իրենց սեփական նուիրումի ու անձնազոհութեան օրինակով պանծացուցին անիրաւուած հայու իրաւունքի ու ազատութեան խիղճն ու գիտակցութիւնը՝ քաղաքական ու ռազմական կամք ստեղծելով ընկճուած մեր ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ:

Ժողովուրդներու հոգեւոր եւ մտաւոր վերելքը պայքարի համոզումով կ'ըլլայ, գաղափարներու նոյնացումով կ'ըլլայ: Ինքնութիւնը կը ճշդէ գաղափարը եւ գաղափարը՝ իր ինքնութեան խորքը:

Եւ այսպէս, մեր ժողովուրդը ծանչցաւ առասպելին եւ հեքիաթին արժէքը: Մանաւանդ՝ հիները: Եւ դեռ՝ աւելի հիները:

Բայց չենք կրնար իրապաշտ ախտաճանաչումը չընել այն իրականութեան, որ որքան ժամանակը կը սահի, մեր հեքիաթի ու առասպելի արժէքը կը տժգունի, դիւցազներգութիւնը կը զինաթափուի:

Պարտինք ծանչնալ, որ դիրահաղորդ հեքիաթներն ու առասպելներն ալ իրենց անադիութեան արուեստը կը կրեն հինէն եկող իրենց հայրենանուէր ժառանգականութեան բովով: Հաստատենք նաեւ, որ ազգերուն մէջ լաւ եւ գէշ հեքիաթներն են, զուսպ թէ չափազանցուած առասպելներն են, որոնք հերոսական շեշտ, նկարագիր ու համեմատութիւն կու տան երագին, սերունդներու ազգային կազմաւորումին, որոնք այդ երագին գոյնը զանազանել կը սորվին եւ Վարդանանցի, Վարդանի, Աւարայրի վկայակոչումը կատարելով՝ Վարդանանց պատերազմը «հերոսական» կը բնորոշեն, Վարդանը՝ «կարմիր» եւ Աւարայրը՝ համայնակույ:

Կը յիշենք, կը պատուենք, կը տօնենք մինչեւ այսօր:

Սարդարապատ, Ղարաքիլիսէ, Բաշ Ապա-

րան, Արցախ:

Կը յիշենք, կը պատուենք, կը տօնենք մինչեւ այսօր:

Սեբաստացի Մուրատ, Քեռի, Բարգէն Սինի, Անդրանիկ, մինչեւ Բեկոր, Թաթուլ Կրպէտան, Լիզալոնի հինգ հերոսներ:

Կը յիշնք, կը պատուենք, կը տօնենք մինչեւ այսօր, որովհետեւ պատմութիւնը, հերոսութիւնը, յաղթանակները թէ բարոյական յաղթանակները խորապէս ու անուրանալիօրէն դրոշմուած են մեր հոգւոյն ու ազգային անադիութիւնները միաւորող իմացական մարմնաւորումի մը մէջ, որ հայն է, որ իր ազգն է, որ իր ազատութիւնն է: Ազատութիւնը անփոխարինելի դրամագլուխ է:

Ուստի հարցումս կը կրկնեմ. պէտք է յստակ գիտնալ, յստակ հասկնալ, թէ ինչ կը տօնենք, կամ թէ՛ ինչ կը միտինք տօնել՝ արժանավայել կերպով ոգեկոչելով երէկին այսօրը եւ այսօրին երէկը:

Ատենօք յեղափոխութիւնները յեղափոխութիւն կ'անուանէինք: Հիմակուանները ինչպէ՞ս յեղափոխութիւն կոչել: Կը դժուարանանք անուն գտնելու, անուն տալու: Հիմա կազմաւորուող մարդն ու իր յեղափոխութիւնը յաւելեալ ուսումնասիրութեան ու հիմնաւոր վերլուծումի կը կարօտին:

Որեւէ կուսակցութիւն, որեւէ կուսակցական առանց ազգային յեղափոխութեան մը պորտալարին չծնաւ:

Ուղղակի կամ կողմնակի բաղդատականներ կատարելու նուազագոյն տրամադրութիւն կամ դիտաւորութիւն չկայ մտքիս մէջ, սակայն ազգային մտայուն ու գերադասող արժէքները ճիշդ գնահատելու, պատմական եղելութիւններու ախտաճանաչումները մանրազնին պատասխանատուութեամբ ժշգրիտ ու ուղղահայեաց հունի ու համեմատութիւններու մէջ տեսնելու պարկեշտութիւնը մեր բոլորիս դերն ու պարտքն է: Բայց խիղճի բնորոշումը ինչպէ՞ս կ'ըլլայ: Ներեցէք, շփոթութեան մատնեցի ձեզ:

ՀՅԴ-ի ծնունդը, յեղափոխական պայքարը, սփիւռքեան բազմաճիւղ հայրենանուէր դերակատարութիւնն ու գործունէութիւնը, անկախ հայրենիք ստեղծելու իրողութիւնը՝ անկախացումի առասպելային համեմատութիւններ՝ քանակական ու որակական առաւելութիւններ կը կրեն իրենց քաղաքափիլիսոփայական էութեան եւ առասպելականացած ժողովրդականութեան մէջ:

Չտեսնենք, չգնահատենք, որ իր ժամանակի հորիզոնին մեջ ՀՅԴ-ն տիեզերական գաղափարաբանություն մը ստեղծեց, իր տեսակին մեջ նոր նմուշ մը զարգացուց եւ զայն մարմնաւորեց ստեղծագործ յեղափոխութեամբ, ժողովրդավարութեամբ, ընկերվարութեամբ, հայ կեանքին մեջ արդարութեան ու իրաւունքի ներշնչող գաղափարախօսութիւն մը խորացնելով: Յաջորդ օրը միշտ կարեւոր եղած է:

Յատկապէս՝ մեր վերջին հարիւրամեակին հայ կեանքը ինքնամփոփուեցաւ լարուած պարանի մը վրայ՝ հաւասարակշռութիւններ պահպանելու հարկադրանքով: Դժուար բան մը:

Դաշնակցութիւնը գործեց յանձնապատան համեմատութիւններու առաւելութիւններով, մեր ազատագրական նորագոյն պայքարի հերոսապատումներն ալ առասպելականացնելով: Քաղաքական խօսքը միշտ իր արժէքը եւ կարեւորութիւնը ունի, թէկուզ երբեմն սուղ վճարած ենք մեր չմտածուած խօսքերու, մեր բռնկող ու բռնկեցնող ճառերուն պատճառով: Ամէն բան գին մը ունի. վճարենք թէ չվճարենք...

Հայ դասական, կամ ամառական կուսակցութիւններ, զիրենք այսպէս անուանող հանդիսատեսներ կը միտին համոզել թէ նորը իրենք են: Աւանդական կուսակցութիւնները կը ձգնին նոր ձեւով մտածել, դաստիարակել, գործել, մեր դիմագրաւած խնդիրները արմատապէս լուծել: Այս ձեւով տեղ մը չենք առաջնորդուիր: Քիչ մը լրջանանք:

Ժամանակակից կեանքի մեզի պարտադրող տաղտկալի ու երերող ընտրանքներուն դիմաց ինչպիսի՞ ծանապարհ կ'ընտրենք: Հին թէ նոր Պիղատոսներու ժամանակը անցած է, քաղաքականութեան ռազմավարութիւնն ալ փոխուած է:

Ճանչցած ենք, որ գաղափարները, գաղափարախօսութիւնները ՀՅԴ-ի համար անսակարկելի բաներ եղած են, իսկ դաշնակցական երդուեալը միշտ ու ամէն պարագայի, սոսկ իմաստով ոչ թէ կուսակցութեան, այլ կուսակցութեան ծամբով ազգի ու հայրենիքի զինուոր դաւանած է, որովհետեւ ազգի ազգակցութեան գաղափարը իրեն ներշնչած է իր իսկ կուսակցութեան տաղաչափուած գաղափարախօսութեան ամբողջութիւնը, ու իր կեանքն ու էութիւնը նոյնացուցած ու հաշտեցուցած է տուեալ գաղափարախօսութեան խիղճին ու ապրումներուն հետ, թէկուզ իր պատմութիւնը չարաշահողները յարձակած են իր վրայ պատմական ժճարտութիւնները

աղաւաղելու միտումով: Իսկ հիմա ինչո՞վ կը յուզուինք: Սխալներ կը գործենք, բայց չենք սորվիր:

Ո՞վ կրնայ հին թէ նոր ժամանակը փոխել: Ժամանակի իրական փոխարժէքը առկա մնաց ու կը մնայ ինքնագոյատեւման մեր բնագոյին դիմաց:

Անցեալին կ'ըսէինք. անորոշն ու թերահասը կը ներգրաւեն: Հիմա կ'ըսենք. անտարբերն ու թերագնահատուածը կը ներգրաւեն: Կ'երեւի ձախողեցանք մեր գնահատումներուն մեջ:

Ներկայիս այսպէս արժեչափուող բարեկարգուած քաղաքակրթութիւնը դանդաղած է, իսկ անդրոշմ քաղաքականութիւնը դարձած է աւելի քան անարժանահաւատ:

Մեր ժամանակներուն փոխուած է սփիւռքի-սփիւռքներու դերը: Դիւրին կանոններ չմնացին: Պէտք է ձեւը գտնել լաւ հասկնալու համար, թէ ինչ կ'անցնի - կը դառնայ մեր շուրջ:

Այսօր, հայ կեանքի դերն ալ փոխուած է. հեռու չէ մեր ներկայ իրականութենէն, բայց մասամբ հեռու է անցեալէն: Մեր պատմական ողբերգութեան կրկնութիւնը կ'ապրինք գիտակցաբար թէ ենթագիտակցաբար:

Շուրջերնիս երկաթեայ սերունդ կայ: Կուսակցութիւնները երկաթեայ սերունդ կը պատրաստեն: Կը թուի, թէ հարկադրաբար բաղդատական համեմատութիւններու օրեր կ'ապրինք: Պէտք կայ...

Պատրաստութեան թէ նախապատրաստութեան եռուզեռ կայ, եթէ բառն ու իմաստը մեծ չէ: Սփիւռքը շարժուն աւազի պէս բան մը եղած է. ըսել կ'ուզեմ, հին թէ նոր խախտող բառամթերքով: Անապատային Սահարա մը կ'երեւի հորիզոնի վերջալոյսին: Գուցէ՛ մտային ու հոգեկան աղօտ պլպլացումներով: Ձգեցէք, որ մարդիկ շնչեն:

Մեր ապրած կեանքի խուզարկու գնահատումը ճիշդ պիտի ընենք: Շատ խօսած ու գրած ենք Հայաստանի, արտերկրի ու այլ նման նիւթերու մասին, սակայն քիչ խօսած ենք կուսակցութիւններու ներկայ ու ապագայ դերին մասին: Կուսակցութիւնները այլեւս ո՞չ ամբոխային դեր ունին, ո՞չ ալ ամբոխային ընդդիմութիւն են: Ճեպընթացը չի հասնիր կանգառին: Կ'ըսենք՝ կու գայ ու կու գայ, բայց չ'երեւիր, չի յայտնուիր: Այս բաները կը հասկնայ պատմութեան նուազագոյն ճանաչում ունեցող մարդը:

Մարդիկ կան, մանաւանդ՝ Հայաստանի մեջ, որ կ'ըսեն, թէ միայն մենք կուսակցութիւնը առաջ չտանինք, կուսակցութիւնն ալ մեզ

առաջ թող տանի: Ոմանք անտեսուած կը գ-
գան կուսակցութիւններէն, պատմութենէն:

Կուսակցութիւնները կը հասուննան ներ-
շնչող ու վարակող գործով: Գործը կ'ինք-
նասնուցուի հասունացումով: Դաշնակցու-
թիւնը սկզբունքի կուսակցութիւն է, դաշնակ-
ցականը սկզբունքի մարդ է: Պատմական
վերիվարումներու արդիւնք՝ ըմբոստութիւն-
ներու յեղափոխութիւններու հունտէ սերած
մարդ է: Պատմութիւնը ոմանց տուաւ շատ
աւելին, քան կ'ակնկալէր: Ոմանց ալ ինչ
տուաւ...

Մեր նախահայրերը զէնքով կռուեցան,
նոր մարդը քուէով կը կռուի: Կը հասկնանք,
որ մեր տուեալները փոխուած են:

Իսկ յիշատակի պահեստները: Յիշատակը
կը շակեւս միշտ ուրիշի կեանքով: Յիշատակը
կ'օգտագործենք պէտք եղած ձեւով նոր սե-
րունդը դաստիարակելու համար:

Մեր յիշատակը հարիւր եւ աւելի տարիներ
դաշնակցեցաւ մեզի հետ: Հարիւր տարի վերջ
շատ մը բաներու հիմարկէքը չենք տօներ,
ժապաւէն կտրելու փափաք չունինք:

Կուսակցութիւնները դադրեցան դաստ-
իարակելէ, որովհետեւ իրենք դադրեցան
դաստիարակուելէ: Դաշնակցութիւնը փակ
ընկերութիւն մը չէ, բաց է եւ բաց եղած է
հայ կեանքին հանդէպ, բայց այսօր իր աշ-
խարհագրութիւնը պէտք է փոխէ, նաեւ՝ աշ-
խարհագրութեան առաջադրութիւնը: Երբ
պատմութիւն կը գրենք, պիտի մոռնանք կու-
սակցութիւնները, հոն միայն ազգը դերա-
կատար է:

Հեռու չեն այն ժամանակները, երբ ՀՅԴ-
ն ունէր սփիւռքեան կեանքի «ինքնիշխա-
նութիւնը»: Կարծեմ այսօր ալ ունի եւ ունէ
մէկը այս հարցով կասկած չի կրնար յայտնել:
19-րդ, 20-րդ եւ 21-րդ դարերու սփիւռքեան
հայ կեանքի ղեկավարը Դաշնակցութիւնն է:
Համոզուած եմ, որ համանման հաշուեփակ
կատարելու ժամը եկած չէ: Հաշուեփակի փո-
խարէն, սակայն, ապագայ ստեղծարար նոր
ժամանակացոյցի մը սկիզբը պէտք է դրուի:
Զանգակ մը, որ արթնցնէ ժողովուրդը:

Սիրելի՛ ընթերցող, գրութիւնս կը վերաբերի
այսօրուան ու վաղուան կշռոյթներու համա-
հունչութեան: Ինչ որ կը կարդաք ու կը հաս-
կնաք, այդ է. տակը ուրիշ բան չկայ. պէտք ալ
չէ:

Դաշնակցութիւնը թերեւս միակ կուսակ-
ցութիւնն է, որ միւսներէն, նաեւ հայրենի իշ-
խանութիւններէն, առանց վախի, քիչ մը աւելի
հրապարակաւ ու հաճոյական ինքնաքն-
նադատութիւն կատարած է:

Կ'ըսեմ. եթէ ՀՅԴ-ն չըլլար, հայոց նորագոյն
պատմութիւնը տարբեր պիտի ըլլար, տարբեր
պիտի գրուէր, տարբեր պիտի կարդացուէր,
մեր իրականութիւնն ալ տարբեր պիտի ըլլար:
Զեմ գիտեր, որ եթէ պատմութիւնը տարբեր
գրուէր, ճիշդ կամ սխալ պիտի ըլլար, բայց
վստահաբար այս մէկը պիտի չըլլար:

Ժամանակները եկան ու անցան եւ մեր
իտեալներու հետեանքները յաճախ թիրի-
մացութեան մատնուեցան: 70 տարիներ ՀՅԴ-
ն ինչո՞ւ չարտօնուեցաւ Հայաստանի մէջ, ու
խնայողութեամբ թոյլ տրուեցաւ միայն 20
տարի առաջ, այդ ալ՝ իշխանութիւններու ար-
կածախնդրութիւններու չարաբաստիկ հան-
գրումներով: 70 տարի ինչո՞ւ եռագոյն չկար,
«Մեր հայրենիք»-ը չկար, զինանշանը չկար:
70 տարիներ պիտի սպասէինք, որպէսզի մեր
ազգային խորհրդանիշները յաղթանակէին:

Հայրենիքը ստեղծուեցաւ իր պայմաննե-
րով,

ՀՅԴ-ն ալ սփիւռքի մէջ ստեղծեց իր նոր
գործունէութեան պայմանները՝ շակեւսով իր
վտարանդի իրականութեան մէջ հողին ցաւը,
այլեւ՝ հողին փառքը, հողին ասանդութիւնը:
Լրիւ կեանք մը ձեռնոց նետել, ձեռնոց վեր-
ցնել, վառօդ հոսուրտալ, մէջքէն վար հար-
ուածներ ստանալ:

Հիմա հեքիաթին ու առասպելին շղարշը
քաշուած է: Ամէն մարդ միայն արհեստավարժ
քաղաքացի դարձած է: Միակողմանի մարդը
ազատ պայմաններու մէջ ալ ստրուկ կ'ըլլայ:
Սորվեցանք ալ, թէ անկախ ու միահեծան ըլ-
լալը հարկադրաբար դժուար է, ստրուկ ըլլալէ
աւելի դժուար, երբ կը պակսին ծառայութեան
հաւատքն ու իտէալը:

Դաշնակցութեան դասերը արժմէական կը
մնան: Դասեր, որ շրջադարձ բերին հայութե-
ան: Վայ եկեր է անոր, որ եղունգ չունի իր
գլուխը քերելու համար:

Դաշնակցութիւնը պատմութեան մէջ ան-
ուն ձգելու համար չէ, որ յեղափոխութիւն
ըրաւ: Այդ յեղափոխականները այլեւս նահա-
տակ չեն: Մեր եկեղեցին սրբացուց նահա-
տակները, հայութիւնը պէտք է սրբացնէ իր
հերոսներն ալ:

Այսպէս կ'ըլլայ յեղափոխութեան բարոյա-
կան արժէքը, արարատահայեաց բարձունք-
ներու հեռանկարային տեսլականով: Մեր հե-
րոսները ներկայ չեն, բայց բացակայ ալ չեն.
մեր մշակոյթի ժառանգութիւնն են, մեր խոր-
հրդանիշներն են:

Դաշնակցութիւնը շարունակականութեան
վրայ հիմնուած է: Ձեւական բան չէ ըսածս:
Ազատութեան ու անկախութեան ընտրութիւ-

Նը զուտ ժողովրդավարության խնդիր է: Հայրենասիրությունը գործով յայտնի է՝ ո՛չ խօսքով, ո՛չ ճառով:

Ժամանակը ժամանակով կը վերաբերի մեզի հանդէպ: Ուշ է այլեւս նոր ճշմարտություններ հնարելու համար: Ինչ որ կ'ապրինք, արժէք է: Երբեմն նաեւ՝ ինչ որ կը պակսի: Հասունությունը իր ժամանակը կ'ուզէ:

ՀՅԴ-ն պատմական կուսակցություն է: Նոր սերունդը նախորդ սերունդներէն ստացած պատգամներու արտայայտությունն է եւ

պիտի ծառայէ այդ պատգամներու շարունակության, մինչեւ որ հեքիաթն ու առասպելը շղարշը վերցնելով՝ ձգողականօրէն վերակենդանանան ու վերակենդանացնեն տեսլապաշտ նոր սերունդներու երկար երթը:

Եկէք՝ համաձայնինք գաղափարներու շուրջ, հայրենիքին շուրջ: Մեր ժողովուրդը յոյսի իրաւունք ունի: Թարմ յոյսի: Յոյսի մկրտարանի:

Դաշնակցության պատմությունը ճամբորդություն մըն է, որ պէտք է հասնի իր վերջնական նաւահանգիստը: Այսօր եւ վաղը...

ՅՈՎԱԷՓ ՊԱՐԱԶԵԱՆ
Աթէնք



ԻՆՉՊԷՍ ԴԻՄԱԻՈՐԵԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՆ ԵՒ ԳԱԼԻՔ ՏԱՄՆԱՄԵԱԿՆԵՐԸ՝ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԸԼԼԱԼՈՒ ԿԱՄՔՈՎ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Ամենակները չեն սիրած, քանի որ անոնք քաղքենիական սովորություններ են: Բայց ՀՅ Դաշնակցության 125-ամեակը մեր ժողովուրդի անմիջական ներկայէն մեկնած մտածումներ թելադրեց:

Մտածումներ, որոնք ո՛չ պատմագիտական են, ո՛չ ալ ակադեմական: Թերեւս կը յաւակնին նաեւ կողմնապաշտական չըլլալ:

Ինչ չէ ըսուած ՀՅ Դաշնակցության մասին, որ ըսենք այսօր:

Մանաւանդ դաշնակցականը անձնատուր պիտի չըլլայ իր կուսակցութեան պատմութիւնը գովերգելու խոտորումին:

Ըլլալով շարունակութիւնը 125 տարի առաջ սկսած ոգեկան երթ-արկածախնդրութեան մը՝ դաշնակցականը հարց պիտի տայ ինքնիրեն, թէ այսօր կը գտնուի՞ այդ արկածախնդրութեան ուղիղ գծին վրայ, թէ՞ զիկզակած է: Այլ խօսքով, ՀՅ Դաշնակցութիւնը պահամբ է իր ծննդոցի ոգեշնչումը, կամ, աւելի ճիշդ, այդ ոգեշնչումը շարունակութիւնն է, թէ՞ պատմական հողվոյթը պարտադրած է պատշաճեցումներ, ինչպէս որ այդ եղած է աշխարհի բոլոր ազգերուն համար: Կամ ինչ է այսօր դիմագիծի եւ ուղիի վրայ ազդած պատշաճեցումներու հետքը եւ ինչ է ծննդոցի հարազատութեան տոկոսը ներկայի մէջ:

Նման հարցադրումներ կը նպաստեն մեր ներկան հասկնալու եւ ճիշդ ուղղութիւն որդեգրելու:

Հայ ժողովուրդը կղզի չէր եւ չէ: Հայ մտաւորականութիւնը, Եւրոպայի մէջ Ֆրանսական յեղափոխութեան բերած գաղափարներով տոգորուած, մեր ժողովուրդին մէջ տարածեց ազատութեան եւ ինքնութեան արժէքներու գիտակցութիւնը: Մեծ քաղաքներու համալսարաններու յառաջադէմ շրջանակներուն մէջ հայ մտաւորականութիւնը հասաւ քաղաքական-յեղափոխական գիտակցութեան, որ զարգացաւ երկու ուղղութիւններով: Առաջին՝ ազգային ինքնիշխանութենէ զրկուած եւ երկրորդ՝ կեղեքուող ժողովուրդ մը կար, ժամանակի կայսրութիւններուն միջեւ բաժան-բաժան եղած:

Միջազգային-համամարդկային ներշնչու իրաւագրկման դէմ պայքարին: Ճարտարարուեստականացող աշխարհի անարդա-

րութիւններուն դէմ պայքարը իր տեսական բանաձեւումները կը փնտռէր եւ կը գտնէր: Հայութիւնը, ինչպէս ըսի, կղզի չէր, եւ պայքարի ենթահող գաղափարները կը թափանցէին հայ ժողովուրդի յառաջադէմ եւ հայրենասէր մտաւորականութեան մէջ եւ անոր միջոցով՝ հայութեան:

Ծնունդ կ'առնէին հայ կուսակցութիւնները: Մեծ կայսրութիւններու մէջ ներառուած ազգեր կը ձգտէին ազգային ազատագրութեան, անոնք միաժամանակ կը ձգտէին ընկերային արդարութեան, որուն համար եղած էին եւ կային մեծ մտածողներ՝ Ֆրանսական յեղափոխութեան Պապեօֆէն սկսեալ մինչեւ Փրուտոն եւ ուրիշներ, մինչեւ Քարլ Մարքս եւ Էնկելս:

Հայ ժողովուրդը կը գտնուէր զոյգ կայսրութիւններու լուծին տակ, իր հայրենիքը աշխարհագրական բացատրութիւն էր միայն, հայ մարդիկ ստրկացուած էին, իրենց աշխատանքի արդիւնքը իրենց չէր պատկանէր: Իրենց յաջողութիւնը համակարգին մէջ հպատակողի յաջողութիւն էր: Հպատակեցուած ժողովուրդի վիճակի ամէնէն տեսանելի մասը իր դէմ եղած անմիջական եւ անպատիժ հալածանքներն էին, որոնց դէմ պարզ մարդիկ արդէն սկսած էին պայքարիլ: Մեծ տէրութիւնները Օսմանեան կայսրութենէն իրաւունքներ կորզելու համար ծնշուած հայ ժողովուրդին տէր կը կանգնէին:

Այս պայմաններուն մէջ հայ ազատագրական պայքարը հետզհետէ ծաւալ ստացաւ եւ յեղափոխական կազմակերպութիւնները բերին համադրումը եւ տեսութիւնը, մասնակին ընդհանրացուցին:

Այս մթնոլորտին ծնունդ է ՀՅ Դաշնակցութիւնը՝ գիտակցութեան, զոհողութեան եւ հեռանկարի տեսիլք տալով ծնշուած ժողովուրդին: Պատմութիւնը գրուած է: Անցած է ժամանակը այդ պատմութիւնը խճճելու: Օգտակար ալ չէ եւ ժամանակավրէպ է այդ պատմութեան էջերը բանալով՝ ներկայի մէջ յաւելեալ իրաւունք կամ հպարտութիւն փնտռելու բան չնշանակող ճիգը:

Անհրաժեշտ է գալ անմիջական ներկային եւ ունենալ գայիքի համապարփակ տեսիլքը՝ հարց տալով, թէ ինչ պէտք է ընել, ինչ պէտք է ընել եւ չենք ընել, ինչ ու-

նինք որպես ծրագիր մեր ժողովուրդին համար՝ Հայաստան եւ սփիւռքներ, ո՞ր կ'ուզենք առաջնորդել մեր ժողովուրդը վերականգնելու համար տարտղնուած ազգը, իր միութիւնը կորսնցուցած երկիրը եւ այլազան պատճառներով իր կատարեալ ինքնիշխանութեան հասնելու ձգտող պետութիւնը, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս: Ապա պէտք է խօսիլ միջոցներու, հանգրուաններու եւ ղեկավարումի մասին:

Մեր ժողովուրդի գոյութենական կարեւոր հանգրուանին կը գտնուինք:

Թերեւս հեռաւոր անցեալին աւելի դիրին էր դաշնակցական ըլլալ, զէնք առնել եւ լեռ բարձրանալ: Ժամանակակից համաշխարհային կացութիւնը այնքան բարդ է, տեսանելի եւ անտես ճշումները այնքան բազմաթիւ, մեր խոստովանուած եւ չխոստովանուած ղեղեղումները այնքան բազմաթիւ եւ բազմաշերտ, որ դաշնակցական ըլլալը խորապէս գիտակցուած յանձնառութիւն կը պահանջէ: Այս գիտակցուած յանձնառութիւնն է լծակը ծրագրումներու եւ նախաձեռնութիւններու, որ հարկատու պէտք չէ ըլլայ անհատապաշտական եւ տեղական-տեղայնական շահախնդրութիւններու, որոնք հետեւանք են քաղքենիացման: Միամիտ պէտք չէ ըլլայ, միամիտ չեն գիտակից գումարածները (խօսքը չի վերաբերիր գիտակցութեան պակասով նահանջականներուն):

Եօթանասուն տարիներու «խորհրդային բարոյականը», դրամատիրական երկիրներէ աւելի, զարգացուցած է եսապաշտութիւնը, դիրքապաշտութիւնը, պատեհապաշտութիւնը «խորհրդային» ժողովուրդներու մէջ: 2015-ի Գրականութեան նոպլէեան դափնեկիր Սվեթլանա Ալեքսիեւիչի գիրքերը կը ներկայացնեն «Կարմիր մարդուն վերջը եւ պատրանաթափութեան ժամանակը», ինչպէս կ'ըսէ գիրքին անունը: Թէեւ անցնող քառորդ դարը բաց գիրք է հասկնալու համար հոգեկան-բարոյական աւերը, որմէ զերծ չէ մնացած մեր ժողովուրդը:

Սփիւռքները, որպէս համրանք՝ ըլլալով մեր ժողովուրդի կէսէն աւելին, տարտղնուած, բարօրութեան հետամուտ, ազգին հետ իր կապերը թուլցուցած է, դարձած է, բախտատու պարագային, հայասէր կամ բարեսէր՝ յարգելով օրինակելի, բայց չնչին փոքրամասնութիւններու բացառութիւնը:

Այս կացութեան մէջ է, որ ՀՅ Դաշնակցութեան ներկային եւ գալիք տասնաւորուն մասին պէտք է խօսիլ, անցեալը գիտնալով հանդերձ, առանց զայն վերածելու

սառած յաւերժութեան, նայիլ ապագային, առանց խրելու Յեղասպանութեան ճանաչման կարգախօսային աղմկարարութեան մէջ, որ կ'արգելակէ ազգի գալիքի տեսիլքը:

ՀՅ Դաշնակցութիւնը կազմակերպութիւն ըլլալէ առաջ գաղափարական հոսանք էր, իր հիմնադիրներէն մինչեւ զինատար խումբերու համեստ եւ զոհաբերիլ գիտցող յանձնառուները: Ժամանակակից կուսակցութիւններուն պէս ընտրական-իշխանական համախմբում չէր: Եթէ այդպէս եղած ըլլար, Քրիստափոր չէր լքեր իր ղեկավարի պաշտօնը եւ չէր ըսեր՝ հիմա կ'երթամ սուլթանի դէմ, կը մտմտար իր ապահովութեամբ, կամ իր մեծահարուստ հայրը իր միակ որդիին՝ Վազգէսի երբ կը խոստանայ իր ծանրութեամբ ոսկի տալ յեղափոխութեան, կը թախանձէ, որ ան չերթայ իր ընտրած ճանապարհով, ան կը պատասխանէ, թէ յեղափոխութիւնը պէտք ունի այդ ոսկիին, բայց նաեւ՝ արեան: Այս իտէալիզմն է, որ հակառակ պատմութեան պարտադրած վերիվայրումներուն՝ կանգուն պահած էր եւ կը պահէ ՀՅ Դաշնակցութիւնը:

Չարենց բանաստեղծը մեր խօսած ծառերէն աւելի ճիշդ պատկերացում տուած է՝ Քրիստափորի ձայնը լսելի դարձնելով, որ կ'ըսէ, թէ արի այրելէ կազմեց մեծ բանակ մը... Բանաստեղծները քաղաքական մարդոցմէ աւելին գիտեն եւ կ'ըսեն, քանի որ կը թափանցեն անմիջականօրէն տեսանելիին սահմաններէն անդին:

Արի այրել՝ ոչ թէ յաւելեալ իրաւունքի համար, այլ՝ յաւելեալ պարտաւորութեան: Այդպէս չեն ամէն տեսակի ընտրական համախմբումները, որոնց անդամները սովորութիւն ունին ցատքելու ամէնէն արագ ընթացող գնացքին մէջ:

Պէտք է յիշել, որ Ֆրանսան միայն 1945-ին ընտրելու-ընտրուելու իրաւունք տուաւ կիներուն, Հայաստանի Ա. Հանրապետութեան առաջնորդները եւ դաշնակցական ղեկավարները այդ իրաւունքը տուած էին 1918-ին, Հայաստանէն հեռու ծնած Պերճոնի Բարսեղեանը դարձած էր խորհրդարանի անդամ, մեր օրերու ցաւցնող պատնէշները չէին եղած, ինչպէս նշուեցաւ հայրենաբնակի եւ ոչ հայրենաբնակի տարբերութիւնը: Պէտք էր ազգային ըմբռնում ունենալ անոնց նկատմամբ, որոնք չէին ընտրած սփիւռք ըլլալու տխրութիւնը:

Պատմութիւնը մեծ ուսուցիչ է: Անդրանիկ հանրապետութեան անկումը, հայ ժողովուրդի հայրենահանումը, որ յաճախ ստ-

ուերի մէջ կը մնայ Յեղասպանութեան կարգախօսային աղմուկին պատճառով, գաղթականութիւնները, Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումը եւ Դաշնակցութեամբ յատկանշուող ազգային ազատագրական պայքարին դէմ խորհրդային իշխանութիւններու հալածանքները դուռ կը բանային բազմատեսակ հակամարտութիւններու, նաեւ՝ Հայաստանէն դուրս, կը փոխադրուէին սփիւռք դարձած հայ զանգուածներուն մէջ՝ խոցելով արդէն խոցուած հայրենասիրականութիւնները: Այսպէս՝ եօթը տասնամեակ:

Այնքան խօսուած է Սեւրի դաշնագրին մասին, Լոզանի դաշնագրին մասին: Այնքան կը խօսուի վերանկախացման շրջանի եւ ծնունդ առած եւ տետող հակասութիւններու մասին, որոնք աստիճանաբար կը դարձանուին: Բայց այդ վերլուծական փորձերը, պատմութեան դատումը եւ ճիշդ գնահատումը կը գտնեն, երբ ժամանակը յաղթահարէ անհարթութիւնները:

Պէտք է խօսիլ ականայ սփիւռքացած կուսակցութիւններու վերանկախացած Հայաստանի մէջ վերընձիւղման մասին: Անոնք հայրենասիրութեան պատուանդան եղած էին սփիւռքի մէջ: Հայաստանի մէջ, խարխափումներու շրջանէ մը ետք, անոնց ներկայութիւնը վաւերացուեցաւ, եւ անոնք դարձան երկրի բազմաթիւ կուսակցութիւններու ցանկին վրայ կուսակցութիւն: Հանրութեան կողմէ այդպէս ալ ընդունուեցան:

Հայաստանի ժողովուրդը զգացական ճիշդ կամ անճիշդ ակնկալութիւններ ունէր ՀՅ Դաշնակցութեանէն, որ միշտ պահած էր իր պատմական անցեալի լուսապսակը: Սակայն երկրի դժուարութիւններուն պատճառով զարգացած ժողովուրդի անվստահութիւնը կուսակցութիւններուն հանդէպ՝ ընդգրկեց եւ կ'ընդգրկէ նաեւ ՀՅ Դաշնակցութիւնը, որմէ սպասած էին հրաշք լուծումներ: Այսօր ըլլալով մին Հայաստանի բազմատասնեակ կուսակցութիւններէն, որոնց ցանկը կը կարդանք ընտրութեան մը նախօրեակին եւ կը մոռնանք, ՀՅ Դաշնակցութիւնը անոնցմէ մին համարուելով, մասամբ կորսնցուցած է իր գաղափարական հոսանքի դիմագիծը՝ յաջս ժողովուրդին: Անքնական չէ, եւ ընդունուած իրողութիւն է, որ իշխանութիւնը, որուն այս կամ ձեւով մասնակցած է ՀՅ Դաշնակցութիւնը, կը մաշեցնէ:

Գաղափարական հոսանքի դիմագիծը կը տեւէ սփիւռքի մէջ, հակառակ հայկական հաւաքականութիւններու ազգային որակի

նուագման, որ կը բացատրուի լեզուի եւ հայեցի կրթութեան նահանջով: Սփիւռք(ներ) ի համար տրուած թուական կշիռի պատկերը, երբ նկատի կ'ունենանք ազգային որակի չափանիշի ընդգրկած հորիզոնը կը կծկուի հետզհետէ սեղմուող փոքրամասնութեան մը մէջ: Ճառերը իրականութիւնները չեն կրնար վարագործել:

Այսօր, ընդհանրապէս հայութիւնը, Հայաստան եւ սփիւռքներ, եւ մասնաւորաբար ՀՅ Դաշնակցութիւնը, նկատի ունենալով իր անցած ուղին, վերականգնումի անցագիրը պիտի նուաճեն իրենց ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ յանձնառութեամբ եւ ներդրումով, որոնք չեն վարագործուիր ո՛չ ճառով, ո՛չ ընտրական յաջողութեամբ, ո՛չ կարգախօսներով:

Այդ ռազմավարական յանձնառութիւնը եւ անոր յաջողութիւնը պիտի չափուին ազգապահպան հետեւեալ մարզերուն մէջ արձանագրուած յաջողութիւններով:

- Ա.-** Իւրաքանչիւր թիզ հողի բնակեցում եւ հայրենադարձութիւն,
- Բ.-** Երաշխատրել Հայաստանի-Արցախի գոյատեւումը անոնց իւրաքանչիւր թիզ հողի բնակեցումով:

Հայաստանը չի կրնար գոյատեւել միաբաղաքի վիճակով, քանի որ Հայաստան Մոնաքօ չէ, խաղատուններու իշխանապետութիւն չէ կամ պէտք չէ ըլլայ: Հայաստան-Արցախի բնակչութեան գերակշիռ տոկոսը կը բնակի Երեւան եւ Երեւանի շուրջ: Պետութիւնը եւ կուսակցութիւնները պէտք է գնահատել իւրաքանչիւր թիզ հողի բնակեցման իրենց բերած նպաստով եւ յաջողութեամբ: Ամենայն համարձակութեամբ պէտք է հրապարակել Հայաստան-Արցախի բնակեցման քարտէսը, թիւ-թուանշանով, որպէսզի հաւաքաբար գիտակցութիւն նուաճենք:

ՀՅ Դաշնակցութիւնը, վերաշխուժացնելով իր ԴԷՊԻ ԵՐԿԻՐ կարգախօսը, ստեղծելով պայմանները, ինքզինք պիտի ընդգրկէ անոր մէջ՝ դառնալով նոր ժամանակներու համար ապագայակերտ ուժականութիւն, որ աւելի կարեւոր է դիւանակալական դիրքերէ: Բնակեցման ռազմավարական ընթացքը տեղական բնոյթ չի կրնար ունենալ, այլ պիտի ըլլայ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ, իրաւութեան եւ վստահութեան ալիքի վրայ: Կարելի չէ հայրենասիրութիւն խաղալ եւ բեմադրել սփիւռքի ոստաններու մէջ բնակելով եւ խելքաբաշխութիւն ընելով: Փարիզը, Նիցցան, Լոս Անձելըսը Հայաստանի քաղաքներ չեն, ուր նստելով՝ կարելի ըլլայ ազգային քաղաքականութիւն վարել:

Առանց բառային ճապկումներու՝ Ազգային վերականգնումի համար ապագայատես պայման է ՀԱՅՐԵՆԱԴԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ, ոչ որպէս սոսկ փախուստ վտանգուած շրջաններէ, այլ՝ որպէս գիտակցուած ազգային ընտրանք եւ յանձնառութիւն: Այս ընտրանքը եւ յանձնառութիւնը ո՛չ ցուցական խորհրդածողով են, ո՛չ ցուցական բարեսիրութիւն, ո՛չ ալ ինքնագոհական զբօսաշրջութիւն:

Հայրենադարձութիւնը ազգային հիմնական եւ հիմնարար քաղաքականութիւն է, ազգային խորքով ղեկավարումի առանցք: Անով պէտք է չափել պետական քաղաքականութիւնը, նաեւ՝ կուսակցութիւնները, կազմակերպութիւնները եւ բազմագոյն միութիւնները:

Պատմութիւնը ժամանակակիցներս պիտի դատէ հայրենադարձութեան իրականացումով: Հաւանօրէն պատմութիւնը անելի մեծ երախտիքով պիտի յիշէ իր սփիւռքի ապարանքէն եւ զքօսանաւէն հրաժարած, Հայաստան վերադարձած եւ քաղաք կառուցած Վահագն Յովնանեանը, քան՝ բեմերէն յուզու ծափահարուողները:

ՀՅ Դաշնակցութիւնը իր գաղափարական հոսանքի առաքինութիւնը կը վերագտնէ Դէ-Պի ԵՐԿԻՐ կարգախօսը կենսագործելով, ինչ որ կը յստակացնէ իր դիմագիծը, զինք դուրս կը բերէ ընտրական համախմբումներու շրջանակէն: Այդպէս կ'իրագործուի ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ:

Այս ծիրէն ներս ըստ արժանւոյն պէտք է գնահատել հայրենադարձութեան տրամագծօրէն հակադրուող ԱՂԷՏ-ԱՐՏԱԳԱՂԹը, որ պարզ բառով հայրենալքում է: Այդ աղէտը հարկ է կանխել տեղւոյն վրայ, Դէ-Պի ԵՐԿԻՐը լրացնելով ՀԱՅՐԵՆԱՏԷՐ մնալու հնարաւորութիւններ ստեղծելով: Գաղափարական հոսանք ՀՅ Դաշնակցութիւնը համապարփակ գործունէութիւն պէտք է ունենայ այս գծով, բանիւ եւ գործով:

Հայրենադարձութիւն իրականացնելու եւ աղէտ-արտագաղթը կանխելու համար անհրաժեշտ է վերականգնել ԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԸ: Հայրենահանման յաջորդած դժուար տարիներուն, ՀՅ Դաշնակցութիւնը, ինչպէս ուրիշներ, բարձր գիտակցութեամբ կամ ինքնապաշտպանութեան բնագոյով (այն տարիներուն կառապաններ դպրոց կը հիմնէին), հայեցի կրթութեան գործը կազմակերպեցին, կառոյցներ ստեղծեցին, ԼԵԶՈՒ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՐՎԵՑՈՒՑԻՆ, ՈՐՊԷՄ-

ԶԻ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ՊԱՀՈՒԻ, թերթեր հրատարակեցին: Այսօր հայ ժողովուրդի համրանքի կէսէն անելին սփիւռքը անելի քան երբեք կարիք ունի իրաւ հայեցի բովանդակութեամբ հայկական դպրոցներու, նախկիններու կողքին նորերու, պայքար շղթայազերծելով անոնց փակման դէմ: Այս պարտականութիւնն է գաղափարական հոսանքին, որ կանգ չ'առնէր նպարավաճառի հաշիւներու առջեւ: Լեզու եւ պատմութիւն, որպէսզի անինքնութիւն չըլլանք, չայլաստինք՝ դառնալով օտարաբարբառ, չճոխացնենք օտարի գանձարանը, նոյնիսկ երբ կը փորձենք արդարանալ, որ կը գրենք եւ կը խօսինք ցեղապանութիւն-ժենոսայտի մասին: ՀՅ Դաշնակցութիւնը ազգային որակի պահպանման իր փորձը այսօր պէտք է գիտնայ աճեցնել, որպէսզի ամուր մնայ իր գաղափարական հոսանքի պատուանդանը:

Հայաստանի ժողովուրդը ակնկալութիւններ ունէր եւ ունի ՀՅ Դաշնակցութենէն: Կամ կը պատասխանէ այդ ակնկալութիւններուն, կամ կ'ըլլայ ընտրական համախմբում հարիւր կուսակցութիւններէն մին: Սփիւռքը ակնկալութիւններ ունի ՀՅ Դաշնակցութենէն, որպէսզի իրականացնէ միաւորումը ոչ միայն բանիւ, այլ գործով, համախմբելով մրրիկով զատուած հատուածները, մարդորսութեան ընթացք չտալով եւ ազգի ինքնութիւն պահելով:

Ազգային գաղափարական ալիքի վրայ մնալով՝ հարց պէտք է տալ, թէ մինչեւ ե՞րբ կրնայ տեսել համաշխարհայնացող ազգը: Պատմութեան ակնկալութիւնն է ընդդէմ համաշխարհայնացող ազգի՝ միաւորուած ազգը: Այս կրնայ ընել միայն իրաւ ազգային գաղափարական հոսանք մը՝ ծնունդ տալով հաւաքական կամքի մը, կրկնենք, ոչ թէ յաւելեալ իրաւունքի համար, այլ՝ յաւելեալ պարտաւորութեան...

Յ. ՊԱԼԵԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻԳԱԿԱՆ ՏԱՐԸ

125 տարի բոլորած Հայ յեղափոխական դաշնակցության ժամանակակից

մարտահրաւերներէն մէկը կուսակցական-քաղաքական բազմաոլորտ գործին մէջ իգական տարրի արդար, գործօն ու ազդեցիկ ներգրաւուածութեան ու ներկայացուցչութեան անբաւարարութիւնն է: Այսօր ՀՅԴ Բիւրոյի կազմը ամբողջութեամբ արական է, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի 11 անդամներէ բաղկացած կազմը միայն մէկ կին ունի, գրեթէ նոյնն է պարագան աշխարհասփիռ ՀՅԴ Կեդրոնական կոմիտէներու, մարզային ու մեկուսի կոմիտէներու կազմերուն: Հայաստանի Ազգային ժողովի Դաշնակցութեան ներկայ խմբակցութեան մէջ եւս կին պատգամաւոր չկայ: Արդար ըլլալու համար, սակայն, պէտք է յիշել, որ 2007-ի Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն Դաշնակցութեան 16 պատգամաւորներէն 3-ը կին էր, իսկ համամասնական ցուցակներու 5-էն մէկ թեկնածուն պարտադիր իգական պէտք էր ըլլար, ինչ որ գնահատելի երեւոյթ է: Այսօր եւս Դաշնակցութեան շարքերուն մէջ կան ու կը գործեն կին քաղաքական գործիչներ, սակայն յատկապէս կուսակցութեան ղեկավար մարմիններուն մէջ անոնց ներկայութիւնը բաւարար, գոհացուցիչ ու ազդեցիկ մակարդակի վրայ չէ:

Թէեւ Դաշնակցութեան կանոնադրութիւնը սեռային խտրականութեան դրսեւորումներ չունի, թէեւ իգական սեռը քաղաքական գործունէութիւն ծաւալելու և ղեկավար պաշտօններ ստանձնելու հեռու պահող օրինական եւ ուղղակի արգելքներ չկան, սակայն գործնականօրէն Դաշնակցութեան ժամանակակից գործունէութեան մէջ իգական տարրի ներգրաւուածութիւնը երբեմն լոկ ցուցական բնոյթ կը կրէ եւ կամ պարզապէս միջազգային մարդկային իրաւանց օրէնքներուն եւ սեռային հաւասարութեան միջազգային թելադրանքներուն հակազդելու համար կը կատարուի:

Ըստ երեւոյթին, Դաշնակցութեան մէջ, մինչ օրս խորքային ու լուրջ համոզում չկայ՝ կուսակցական, քաղաքական, հասարակական, ընտրական, պետական ու վարչակառավարական մարզերուն մէջ իգական տարրին ունեցած կամ ունենալիք էական ու անհրաժեշտ դերակատարութեան մասին: Եթէ ըլլար այս համոզումը, սեռային հաւասարակշռութեան իմաստով կուսակ-

ցութեան ղեկավար օղակները այլ պատկեր կ'ունենային: Այս ծիրին մէջ ոմանք կը քննարկեն, թէ կուսակցութեան ղեկավար մարմիններուն մէջ պարզապէս եւ անպայման կին ներկայացուցիչ ունենալու սիրոյն ընկերուիներ ընտրելը կամ նշանակելը ճիշդ չէ, որովհետեւ անոնք կրնան ատակ չըլլալ վստահուելիք գործին: Հետեւաբար պէտք չէ սեռային հաւասարութեան խնդիրը առջեւ քաշել եւ այդ մէկը պէտք է ձգել օրուան պայմաններուն: Այս քննարկումը ինքնին անհիմն ու վիրաւորական է: Ինչո՞ւ նման մօտեցումներով կը թերագնահատենք իգական ներուժին տաղանդն ու կարողականութիւնը: Ո՞վ ըսաւ, որ բոլոր արական ներկայացուցիչները ատակ ու կարող կրնան ըլլալ իրենց վստահուած պաշտօնին, ո՞վ ըսաւ, որ դաշնակցական բազմախարիւր կիներուն մէջ չկան կամ կարելի չէ պատրաստել կուսակցական-քաղաքական գործունէութիւն ծաւալելու ատակ, մասնագէտ եւ աշխուժ կիներ: Պարզապէս իգական սեռին քաղաքական-կուսակցական դաշտ տրամադրելու մշակոյթ չկայ մեր մօտ:

Երկրորդ քննարկում մըն ալ կայ, ըստ որուն, ՀՅ Դաշնակցութեան ուղեկից միութիւններէն Հայ օգնութեան միութիւնը իգական կառոյց է, եւ այս կառոյցին ճամբով իգական տարրը բաւական գործ կը տանի, հետեւաբար այդքան ալ անհրաժեշտ չէ կիներու ներգրաւումը քաղաքական-կուսակցական գործունէութեան յատկապէս ազդեցիկ եւ որոշումներ գոյացնող մարմիններուն մէջ: Նախ պէտք է հաստատել, որ ՀՕՄ-ը քաղաքական կառոյց չէ, այլ մարդասիրական-ընկերային կազմակերպութիւն է եւ ճիշդ չէ միայն ՀՕՄ-ի եւ այլ ուղեկից միութիւններու ղեկավար մարմիններու մէջ սահմանափակել իգական տարրի ներգրաւուածութիւնը. իսկ ՀՕՄ-ի գործը միայն կիներու վստահիլը քննարկելի այլ թեմա է, որուն կարելի է յառաջիկային անդրադառնալ:

Այս գծով, երբեմն կը պատահի նաեւ, որ կարգ մը շարքային ընկերուիներ, փոխանակ պայքար մղելու աւելի ազդեցիկ եւ գործօն դառնալու, իրենք կը սրտնեղին կամ վիրաւորուած կը զգան, երբ սեռային հաւասարակշռութեան նիւթը կ'արծարծուի, այն մեկնաբանութեամբ, որ իրենք պէտք չունին միջոցներու կամ այլոց «ողորմութեան», որպէսզի քաղաքական գործունէութիւն ծաւալեն: Սակայն կուսակցութեան

մէջ տիրող իսկական պատկերին վրայ հիմնուած, ընդունելու ենք, որ սեռային հասարակչութեան խնդիր կը դիմագրաւենք, եւ այդ խնդրի արդիւնաւէտ լուծումը անկասկած կրնայ նպաստել կուսակցութեան առաւել վերելքին:

Վերջաւորութեան, կուսակցական-քաղաքական կեանքին մէջ իգական սեռին ազդեցիկ ու գործօն մասնակցութիւնը ինքնանպատակ չէ: Վերջին տասնամեակներուն կատարուած գիտական ուսումնասիրութիւններու համաձայն, կուսակցութեան մը ղեկավար եւ ազդեցիկ մարմիններուն մէջ իգական տարրի ներառումը հետեւեալ դրական անդրադարձներն ու հետեւանքները կ'ունենան կուսակցութեան վրայ.

Ա.- Կը բարելաւէ կուսակցութեան հանրային դիմագիծն ու վարկանիշը՝ անոր տալով ժամանակակից, ժողովրդավար ու միջազգային չափանիշերը յարգող կուսակցութեան դիմագիծ:

Բ.- Առաւել կը զարգացնէ կուսակցութեան քաղաքական ծրագիրն ու գործունէութիւնը: Այստեղ կանացի փորձառութիւնը, աշխարհահայեացքը, տարբեր հարցերու շուրջ կանացի կարծիքն ու համոզումը իրենց էական դերակատարութիւնը կ'ունենան կուսակցութեան քաղաքական ծրագիրներու մշակման եւ գործունէութեան ծաւալման մէջ:

Գ.- Կը զօրացնէ կուսակցութեան ընտրապայքարն ու ընտրական ծրագիրները, ինչպէս նաեւ կը նպաստէ նոր ընտրողներ ներգրաւելու եւ ընտրական յաղթանակներ տանելու:

Դ.- Կը հակազդէ կուսակցութեան թիւի եւ որակի նահանջին, կը նպաստէ ժամանակակից երիտասարդութեան ու քաղաքացիական հասարակութեան կուսակցութեան հանդէպ ունեցած հետաքրքրութիւնը բազմապատկելու:

Այս դրական անդրադարձներն ու հետեւանքները Դաշնակցութեան ներքին ու հանրային կեանքին մէջ ակներեւ դարձնելու համար շարք մը բարեփոխումներ կը պահանջուին: Ակնկալուած բարեփոխումներէն կարելի է նկատել՝

Ա.- Կուսակցութեան շարքերուն մէջ իգական ներգրաւուածութեան անհրաժեշտութեան շուրջ համախոհութիւն ստեղծելու դաստիարակչական աշխատանք տանիլը,

Բ.- Կուսակցութեան կազմակերպական կառոյցին մէջ սեռային հաւասարութեան

սկզբունքը օրինականացնելը եւ անցումային ժամանակաշրջանի մը համար կուսակցական ներքին ու արտաքին բոլոր պատասխանատու մարմիններուն մէջ իգական տարրի յատուկ բաժին յատկացնելը. նուազագոյնը՝ 30 առ հարիւր համեմատութեամբ: Այս առումով, ոմանք բաժին յատկացնելը հակաժողովրդավարական կը նկատեն, սակայն այլ երկիրներու եւ կազմակերպութիւններու պատմական փորձը կը հաստատէ, որ բաժին յատկացնելը արդիւնաւէտ միջոց է իսկական ժողովրդավարական եւ հաւասարութեան առաջնորդող: Այլապէս, շատ դժուար կը թուի իգական ազդեցիկ ներկայացուցչութիւն ապահովելը:

Գ.- Իգական քաղաքական գործիչներու պատրաստութեան ձեռնարկելը, անոնց առիթներ ընծայելը ու պաշտօններ վստահիլը,

Դ.- Իգական ներկայացուցչութիւնը ցուցական-մակերեսային մակարդակէն բարձրացնելը խորքային ու անխուսափելի նշանակութիւն ունեցող երեսոյթի,

Ե.- Դաշնակցութեան ընտրապայքարներուն մէջ սեռային հաւասարակշռութեան սկզբունքը ռազմավարութեան վերածելը,

Զ.- Հայաստանի ու Արցախի պետական-հասարակական կառոյցներուն մէջ սեռային հաւասարութեան ջատագով հանդիսանալը:

Դաշնակցութեան պատմութիւնը հարուստ է կին գործիչներու վարած մարտական, գաղափարական, ծառայողական ու մարդասիրական օրինակներով, կը մնայ այս շարքին վրայ կին քաղաքական գործիչներու եւ ղեկավարներու օրինակները բազմացնել:

125 տարիներու կենսափորձէ ու վճռորոշ մարտահրաւերներէ անցնող ՀՅ Դաշնակցութիւնը հայկական ու միջազգային իրականութեան մէջ հեղինակաւոր ու առաջատար կուսակցութիւն մնալու համար, այլ մարտահրաւերներու կողքին, անյապաղ լուծելու է իգական ներգրաւուածութեան խնդիրը:

ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲՃԵԱՆ

ԵՐԳԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ «ԱՆՄԱՐ ՄՆԱՅ» ԵՐԳԻՆ ԱՌԻԹՈՎ (ԿՈՐՈՒՍՏԷ ՓՐԿԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՈՎ)

Արուեստը մարդուն անհատական զգացուցիչ խղճմտորէն ուրիշներու փոխանցումն է, որպէսզի իր նմանները հաղորդակից դառնան իր զգացումներուն ու վերակենդանացնեն զանոնք:

Արուեստի գործ մը որքան ալ գեղեցիկ եւ ուշագրաւ եղած ըլլայ, չի կրնար նկատուիլ գեղարուեստական գործ, եթէ մեր մէջ չարթնցնէ մասնաւոր յուզում, ուրախութիւն, հպարտութիւն կամ պոռթկում:

Խորհրդային Միութեան ժամանակաշրջանին հրատարակուած հայրենի մեր երգարաններուն մէջ աչքէ անցընելու պատեհութիւնը ունեցող մարդիկ յաճախ կը հանդիպին խորհրդային գրականութեան, նուիրուած բազմաթիւ գրութիւններու, որոնք որպէս երգեր մեզի կը ներկայանան շռայլօրէն փառաբանելով Խորհրդային Միութեան ամէն տեսակի հնարք:

Համայնավար մթնոլորտին մէջ մարդիկ այս տիպի երգեր որքան արտադրեցին եւ այդքան աւին ու ժամանակ արժած այդ թխուածքներուն ինչ պսակներ հիւսեցին:

Հակառակ հանրայայտ հարկադրանքներուն՝ խորհրդային կարգերու հպատակ խոնարհները շարունակ ձեւացուցին, որ տէրն են եղբայրութեան մը՝ հակադրաբար աւելի վաղ շրջաններու, երբ դաշնակցականներն ու մուսաւաթականները «թշնամանք էին սերմանում անդրկովկասեան ժողովուրդների միջեւ»:

Հանրայայտ ասոյթը, թէ կոմունիստական կառավարութիւնը «մեր դարի միտքը, պատիւը եւ խիղճն է», 70 տարի շարունակ բոլոր դահիճներու ճակատներէ, բոլոր մայրուղիներու վրայ կախուած պաստառներէ հնչող այդ ասոյթը յատկապէս վերջին «խիղճ» բառով ամէնէն աւելի հայ ժողովուրդի բախտն ու ճակատագիրը հեգնած է:

Իբրեւ փառք խորհրդայինի հիւսուած գովերգներէն՝ այս տեսակէտէն, իբրեւ ցայտուն օրինակ, ուշադրութիւն կը գրաւէ «ԱՆՄԱՐ ՄՆԱՅ»* խորագրեալ երգը, որուն առաջին երկու տողերն են՝ «Անմար մնայ մեր գլխին խորհրդային արեւը», որ լայն տարածում գտած էր ոչ միայն Խորհրդային Հայաստանի կամ Խորհրդային Միութեան մէջ, այլ՝ սփիւռքի տարածքին խորհրդային կարգերը

փառաբանողներու մօտ նաեւ:

Այս երգին մէջ հեղինակը, որ հետազօտական մեր ընդարձակ աշխատանքին որպէս արդիւնք՝ կը մնայ անյայտ, ջերմ շունչով երգած է բիւրաւոր ջահերով լուսաւորուած, ջահել ու իկիտ Խորհրդային Միութիւնը: Հեղինակը կը գովերգէ սոցիալիստական միութիւնը, կը փառաբանէ անոր «խիղճ»-ը: Խորհրդային Միութիւնը իր վառ արտայայտութիւնը գտած է այս երգին մէջ:

1970-ականներէն ի վեր Հայ յեղափոխական դաշնակցութեան երգարուեստի պատմութեան մէջ իր արժանաւոր տեղը կը գրաւէ «Անմար մնայ մեր գլխէն ՀՅԴ-ի արեւը» երգը, որ այդ վիճակին մէջ աւելի ճանչցուած է ընթերցողին: Ճիշդ է, որ այս երգն ալ ուրիշ երգերու նման, որպէս բառ եւ երաժշտութիւն ներմուծուած է, սակայն հոս բառերուն իմաստը կը համապատասխանէ Դաշնակցութեան, իրապաշտ ձեւով ներկայացուած, եւ ոչ մէկ ունկնդիրը երկմտանքի կը մատնէ, որովհետեւ բառերը Դաշնակցութեան գործունէութեան միտք բանին կը ներկայացնեն, աւելի ճիշդը՝ ԳՈՐԾ եւ ոչ թէ խօսք:

Այս բարեփոխուած երգին մէջ յաջորդ հեղինակը, որ նոյնպէս մեր կողմէ անյայտ կը մնայ (յոյսով ենք, որ այս յօդուածէն ետք կը յայտնաբերուի), իր կարգին կարգ մը փոփոխութիւններ ընելով՝ կրցած է դաշնակցական երգարուեստի հոյակապ կոթողի մը վերածել եւ ներկայացնել համոզիչ գոյներով Դաշնակցութեան գործելաձեւին ողջ էութիւնը՝ նկարագրելով Դաշնակցութեան իրապաշտ գաղափարախօսութիւնը եւ ուղին ու դժուար կեանքը, միաժամանակ ցոյց տուած է ՀՅԴ-ի քալած հաստատ ու անսասան լուսաշող ճանապարհը:

Դաշնակցականացած երգին վերջին համարը ընթերցողը քիչ մը շփոթի կը մատնէ այն պատճառով, որ փառաբանանքը երբ կ'ողողուի ՀՅԴ-ին, յանկարծ որպէս դրօշակ կը յիշատակուի «Կարմիր, կապոյտ, նարնջագոյն», պատճառը այն է, որ Խորհրդային Միութեան ժամանակաշրջանին, երբ դաշնակցականներն ու անոր համակիրներն էին միայն պահպանողները հայոց Սուրբ Եռագոյն դրօշը, հեղինակը շատ բնական է տեղ մը միտքեր խանգարած էր, թէ Դաշնակցութեան

դրօշակն է կարմիր, կապոյտ, նարնջագոյնը: Հետեւաբար հոս եւս հեղինակը այս շփոթին մատնուած է:

Անյայտ հեղինակին ճամբով երգը դաշնակցականանալէ ետք կեանք առաւ, նոր աիւն եւ շունչ տրուեցաւ անոր: Մեր կարծիքով, երգին առաջին հեղինակը իսկապէս պիտի չկարենար մէկ կողմէ ըմբռնել եղածը, իսկ միւս կողմէ՝ արդեօք երախտապարտ պիտի մտնար Դաշնակցութեան, որ իր արուեստը փրկուէր կորուստէ:

Այսպէս, ուրեմն, կը տեսնենք, որ խորհրդահայ գրողները իրենց ստեղծագործութիւններուն մէջ արտացոլած են խորհրդային, համայնավարական եւ «եղբայրական» ժողովուրդներու բազմադարեան համագործակցութիւնն ու պանծացումը, անոնց համատեղ պայքարը սոցիալիզմի կառուցման գործին մէջ: Նման ձրի հաստատումներու դէմ բնաւ հարկ չկայ այսօր վէճ յարուցելու: Յիշեցման կարգով, վերլուծելէ ետք, կ'եզրակացնենք, թէ վերոնշեալ երգը կերպարանափոխուելէ ետք՝ «Անմար մնայ մեր գլխէն, ՀՅԴ-ի արեւը»-ի, այսօր աւելի խօսուն ու դրոշմուած է, քան՝ այդ օրուան իր կերպարով, այսօր աւելի ընդգծուած եւ անսասանօրէն սրտի ու խղճի խօսուն է, քան՝ անցեալին: Այսօր «Խորհրդային արեւը» որ բոլորս միասին ականատես եղանք, գնայունն էր, նոյնիսկ երեւան հանեց երկերեսանի անձերը, որոնք փարած էին համայնավարութեան, իրենց ինչ շահադիտական տեսանկիւնէ մղուած: Իսկ համայն աշխարհը հասկցաւ, որ «ՀՅԴ-ի արեւը» ինչպէս անցեալին, այսօր եւս մնայունն է: Փաստը՝ երեք դարերու վրայ երկարող իր հեղինակութիւնն ու վարդապետութիւնը:

Հուսկ, Հայ յեղափոխական դաշնակցութիւնը իր հիմնադրութենէն մինչեւ այսօր, յատկապէս՝ իր ծննդեան 125-ամեակի առիթով, անոր արեւը թող աւելի ճառագայթէ ու ջերմացնէ մեր հոգիները, թող անոր արեւը իր բարիքներով եւ ուժով համայն հայութեան եւ անոր պատկանող հողատարածքներուն աւելի յաջողութիւններ պարգեւէ: ՀՅԴ-ի ջահը միշտ ԱՆՄԱՐ ՄՆԱՅ:

Ստորեւ կը ներկայացնենք երգին երկու տարբերակները.

ԱՆՄԱՐ ՄՆԱ

Անմար մնայ մեր գլխին
Խորհրդային արեւը, (կրկ.)
Թող փայլին նրա լուսից
Մեր դաշտերն ու սարերը: (կրկ.)

Մեր գիւղերը կեղեքուած՝
Սովետն եկաւ ազատեց, (կրկ.)
Մեր արտերին չորացած՝
Սովետն եկաւ ջուր տրեց: (կրկ.)

Զրանցքների մեր երկրում
Թող սովետը բոյ քաշի, (կրկ.)
Նըրա կարմիր ծոցի մէջ
Կոմսոմոլը կանաչի: (կրկ.)

Կարմիր աստղը ճակատին՝
Անխախտ մնա սովետը, (կրկ.)
Նըրա կարմիր կըրակը
Մեր սրտերում յաւէտ է: (կրկ.)

ԱՆՄԱՐ ՄՆԱՅ

Անմար մնայ մեր գլխէն
ՀՅԴ-ին արեւը.
Թող բացուի նրա լուսին
Մեր դաշտերն ու ձորերը:

Մեր գեղերը կեղեքուան
Դաշնակցութիւն ազատեց.
Մեր դաշտերը չորացան
Դաշնակցութիւն ջուր տրեց:

Կարմիր Կապոյտ Նարնջագոյն
Թող միշտ ապրի Դաշնակցութիւն
Նրա անուշ եռագոյնը
Մեր բոլորին յոյս տուեց:

ԱԽՕ ԳԱԹՐՃԵԱՆ

«Ժողովրդային եւ նոր երգեր», հրատարակութիւն «Ժողովուրդի ծայն»-ի Հալէպի գրասենեակին, Հալէպ 1947, էջ 20:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ԱՊԱԿԻՆԵՐԻ ՏԱԿ ԵՒ ԱՐԿՂԵՐՈՒՄ. ԸՅԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է



Երեւանում ՀՅԴ Բիւրոյի շէնքի գետնայարկ տանող աստիճաններով իջնում ենք ՀՅԴ պատմութեան թանգարան: Թանգարանի տարածքը նախկինում եղել է ճաշասրահ:

2006 թ.-ին Փարիզից Երեւան են բերուել Դաշնակցութեան պատմութեան արժէքատուր ցուցանմուշներ: Մէկ տարի անց Երեւանում բացուել է կուսակցութեան պատմութեան թանգարանը, որի համար էլ ժամանակաւորապէս տրամադրուել է Բիւրոյի ճաշասրահը: Թանգարան-հիմնադրամի տնօրէնը Անյոյ Ամսէյեանն է: Նա մասնագիտութեամբ պատմաբան է, նեղ մասնագիտացմամբ՝ հնագէտ: Ասում է՝ 4000-ից աւելի ցուցանմուշներ ունեն, որոնք ցուցադրելու համար անհրաժեշտ է եռայարկ շէնք: Իսկ ներկայ սրահում իրենք ցուցադրել են Հայաստանի Ա. Հանրապետութեան պատմութիւնը: Ցուցադրուած նմուշները կազմում են ունեցած նիւթի 10 տոկոսը:

Թանգարանի ապակեայ դուռը բացելով՝ տնօրէնը ներս է հրաւիրում: Ասում է, երբ 2008-ին Ա. Հանրապետութեան 90-ամեակին էր նշում, որոշեցին, որ թանգարանի ցուցադրութիւն կազմակերպեն այդ թեմայով: Դա կուսակցութեան պատմութեան միակ թեման է, որն ունի սկիզբ եւ, ըստ Ա. Ամսէյեանի, ցաւալիօրէն նաեւ՝ ւաւարտ:

«Եթէ կուսակցութեան պատմութիւնն սկսէինք միանգամից Ադրբիւր Սերոբից, Սօսէ մայրիկից, այս փոքր տարածքում չէինք կարող

տեղաւորել ամբողջ նիւթը: Ինչպէ՛ս կարող էի այս փոքր տարածքում 125 տարուայ նիւթը ներկայացնել: Ցուցադրութիւնը, սակայն, կիսատ կը մնար, եւ պէտք էր ասէինք, յարգելի՛ այցելուներ, կը ներէք, բայց այսքանն ենք կարողացել ներկայացնել այս փոքր տարածքում: Առաջին հանրապետութեան թեման, ըստ էութեան, մեր գոյութեան նպատակն է՝ հասնել ազգի անկախութեան, երկրի ազատագրման եւ պետականութեան վերականգնման», - նկատում է թանգարանի տնօրէնը:

ԱՆՑԵԱԼԸ՝ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ՏԱԿ

Ցուցասրահը լուսառատ է: Այնտեղ լուծութիւնը խորհրդաւոր է: Թանգարանը հիմնադրուել է 1915 թ. ժնեւում: Զրուցակցիս խօսքով, ժընեւում գտնուում էր «Դրօշակ»-ի խմբագրութիւնը, եւ այդ տարիներին այն միակ տեղն էր, որտեղ կարող էին սկսել այդ գործը: «Հենց խմբագրութիւնում պիտի սկսէին գործը, Դաշնակցութեան գաղափարական կենտրոնում, որովհետեւ ուրիշ տեղ չկար», նկատում է նա:

1915-ին սեղանին դնելով երեք իր՝ ազգարարել են թանգարանի հիմնադրումը: «ՀՅԴ մուզէի իրերու ցանկի» տակ տեղ են գտել Քրիստափորի թղթապնակը, Վասպուրականի ձեռագործը եւ ալպում՝ բաց նամակների համար: Այդ մասին վկայող փաստաթուղթը տնօրէնը պատահաբար է գտել:

Թանգարանի առաջին տնօրէնը եղել է Արտաշէս Վանարեանը (Հացագործեան): Վերջինս Վանի յայտնի տոհմերից էր, որ մտաւորական գործունէութեամբ աչքի էր ընկել: Հացագործեանը փոխել էր իր ազգանունը՝ դարձնելով Վանարեան, որպէսզի Վանը միշտ իր հետ լինէր: Այդ մասին յայտնել է Երեւանում թանգարան այցելած Վանարեանի եղբոր թոռը:

1920-ականների վերջին եւ 1930-ականների սկզբին թանգարանը տեղափոխել են Փարիզ: Այդտեղ էլ կենտրոնացրել են կուսակցութեան պատմութեան նիւթերը: Թանգարանի տնօրէն էր դարձել Լեւոն Թադեւոսեանը:

Ա. Ամսէյեանն ասում է՝ թանգարանում արժէքաւոր են բոլոր ցուցանմուշները, դժուար է տարբերակում դնել: Երկուսով շրջում ենք ցուցափեղկերի կողքով:

ԴՐՈՅԻ ՆԱՐԴՈՒ, ԵՐԵՒԱՆԻ ԲԱՆՏՈՒՄ ՀԱՅԻ ԽՄՈՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՔԱՐԵՐԻ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՏՈՒՑԱՆՄՈՒԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զրուցակիցս մատնացոյց է անում Դրոյի Դրաստամատ Կանայեանի նարդին: Հարցական նայում է դէմքիս՝ որպէս իմ հարցի պատասխան, թէ որն է համարում թանգարանի այցեքարտային ցուցանմուշը: Նարդու վրայ գրուել է՝ Դ.Կ., 1943 թ., փետրուարի 2, Հայտելպերկ:

Մենք մօտենում ենք մի ցուցափեղկի, որտեղ ներկայացուել են շախմատի խաղաքարեր: Դրանք պատրաստուել են Երեւանի բանտում Համազասպ Օհանջանեանի եւ նրա ընկերների կողմից: Խաղաքարերը բանտում տրուած օրաբաժին հացից են պատրաստել:

«Երբ պոլշեիկները դրժեցին իրենց խստումը՝ դաշնակցականներին բանտ նետելով, Երեւանի բանտում Համօ Օհանջանեանն ու նրա ընկերներն իրենց տրուող հացի խմորից շախմատի խաղաքարեր էին պատրաստել: Հէնց այնպէս խաղալու համար չէին: Օհանջանեանը, բոլորն են յիշում, շատ լաւ շախմատ է խաղացել: Այդ քարերը փրկութեան օղակ էին իրենց համար, որպէսզի իրենց ուշադրութիւնը կենտրոնանար շախմատի խաղի վրայ, եւ չզգային, թէ ինչ է կատարում շրջապատում: Այս քարերը դրանով էին շատ անելի կարեւոր, յուզիչ, թէ ինչ պայմաններում ինչ պահեր, օրեր են ապրել գործիչները Երեւանի բանտում, քանի որ այդ ժամանակ 2000-ից անելի մարդ նետուել էր բանտ (դէտենքերի 6-ից մինչեւ փետրուար): Նրանք չգիտէին, թէ ինչ կը գայ իրենց գլխին, ամէն պահ մի ընկերոջ տանում էին: Եւ սա իրենց պիտի փրկէր», - նշում է Ա. Ամսէյեանը:

Դիմացի ցուցափեղկում հասարակական-քաղաքական գործիչ Աւետիս Ահարոնեանի գրիչն ու կնիքն են: Դրանցով Ահարոնեանը ստորագրել է Սեւրի պայմանագիրը, որից յետոյ նամակ է գրել Հայաստանի կառա-





վարութեանը՝ յայտնելով, որ պայմանագիրը ստորագրած գրիչն ու կնիքն նուիրում է կառավարութեանը:

Մէկ այլ ցուցափեղկում ներկայացուել է Սողոմոն Թեհլիրեանի անցագիրը, որով էլ նա հասել էր Պերլին:

«Կամ խօսել առաջին կին պատգամաւորների մասին, երբ Երրօրեան եւ Ամերիկան 20-30 տարի անց թոյլ տուեցին կանանց պատգամաւոր դառնալ», նշում է Ա. Ամսէյեանը՝ մատնացոյց անելով Հայաստանի Ա. Հանրապետութեան 3 կին պատգամաւորների լուսանկարները:

ԱՐԿՂԵՐՈՎ ԼԻ ՍԵՆԵԱԿՈՒՄ

Թէեւ թանգարանի տարածքը փոքր է, բայց այն յագեցած է արժէքաւոր նիւթերով: Իրաքանչիւր ցուցանմուշի համար ժամանակ է հարկաւոր՝ մանրամասն կարդալու, ընկալելու: Թանգարանում յաճախ կազմակերպում են առաջին հանրապետութեանը նուիրուած դասեր, դպրոցներից աշակերտ-

ներ են տանում այնտեղ: Թանգարանի տնօրէնն ասում է, որ, ցաւօք, պատմութեան դասագրքերում առաջին հանրապետութեան մասին մի քանի տող է գրուած, մինչդէռ երբ աշակերտներին բերում են թանգարան, նրանք մանրամասն իմանում են առաջին հանրապետութեան պատմութեան մասին:

Այնուհետ մենք բարձրանում ենք Ա. Ամսէյեանի աշխատասենեակ: Այնտեղ միայն մի սեղանի եւ երկու աթոռի տեղ կայ, մնացած տեղերում խիտ-խիտ շարուել են արկղերը՝ պահարաններում, գետնին: Այդտեղ է գտնուում ՀՅԴ պատմութեան մասին վկայող ցուցանմուշների մեծ մասը: Դա ցուցադրելու համար Ա. Ամսէյեանը կրկին շեշտում է, որ առանձին շէնք է հարկաւոր: Երբ այն ունենան, ապա, քեանվառցիների ասած՝ ճիւղ առ ճիւղ կը ներկայացնեն կուսակցութեան ամբողջ պատմութիւնը:

Յապուկ «Ազդակ»-ին

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ» ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԳՐԱԽԱԿԱՆ

Հայ յեղափոխական դաշնակցությունը արդեն իսկ կը նշէ իր սպեղծման 125-ամեակը: Երիտասարդության ուժերով ծնունդ առած կուսակցությունը անպայման պէտք է շարունակէ վստահիլ իր երիտասարդության, մանաւանդ անոնց այժմեական գաղափարներուն՝ կազմակերպության գործունէութիւնը յանուն ժողովուրդին նորօրեայ ակնկալութիւններուն եւ յստակարեւ սպազայի մը ծառայեցնելու համար:

Դաշնակցությունը, առանց խորականութեան, եղած է բոլորին կուսակցությունը, սակայն մանաւանդ երիտասարդության կուսակցությունը: Իրաքանչիւր երիտասարդ դաշնակցական այս կառոյցին մէջ ը-

նելիք ու փալիք աշխատանք ունեցած է եւ ունի, կը մնայ միայն հաւատարմ այդ ուժին կարեւորութեան եւ ազդուութեան:

Դաշնակցութեան 125-ամեակի նշումին առիթով երիտասարդ-ուսանող սերունդի ներկայացուցիչներ, «Ազդակ»-ի հետ զրոյցի մը ընթացքին իրենց փեսակէտները յայտնեցին Դաշնակցութեան ծրագիրին, երիտասարդներէն սպասուած ակնկալութիւններուն, երիտասարդներուն ունեցած սպասելիքներուն եւ ժամանակներու փոփոխութեամբ ծագած նորանոր մարտահրաւերներուն մասին:

Սրորեւ կու փանք իւրաքանչիւրին փեսակէտը:



Արագ Գոճայեան. Կուսակցությունը, ըստ ինձի, կը բաղկանայ երկու կորիզներէ՝ ղեկավարութիւն եւ երիտասարդութիւն, իսկ իմ ակնկալիքներս կուսակցութեան երիտասարդութենէն են, որուն վրայ պէտք է կեդրոնանանք, պէտք է շեշտը դնենք անոր կատարելիքներուն վրայ, որպէսզի կուսակցությունը 125-ամեակ մը եւս գոյատեւէ: Այս ուղղութեամբ մտածելով՝ կը սպասեմ, որ շարքերը չկազմուին միօրինակ միտքեր ունեցողներէ միայն, չընենք այնպէս, որ երիտասարդական-ուսանողական միատրոններուն մէջ անպայման միատար-

րութիւն ըլլայ, այլ սկսինք ներառել տարբեր մտածումներու տէր եւ տարբեր մասնագիտութիւններով զբաղող անձեր, որովհետեւ այժմ ունինք զանազան մակարդակներու աշխատանքային մարտահրաւերներ եւ գործելադաշտեր, զորս դիմագրաւելու համար հարկ է նաեւ ունենալ իւրաքանչիւրին յարմար մարդուժը:

Իսկ կուսակցութեան մէջ տիրող ցեղապաշտութեան մտայնութիւնն ու սեռային խտրականութիւնը նշմարելով՝ կը յուսամ, որ եկող սերունդը կարծրատիպերէ հեռու մնայ եւ շրջանցէ այս հանգոյցները, որովհետեւ խորքին մէջ կան իրականութիւններ, համոզումներ, որոնք այդքան ալ յարիր չեն Դաշնակցութեան գաղափարաբանութեան: Կան համոզումներ, որոնք հինէն կու գան, ունին իրենց պատճառները, սակայն այսօր այդ պատճառներուն մէկ մասը փոխուած է, ուստի կարելի է նաեւ, անշուշտ զգուշաւոր կերպով, դիմել նոր, աւելի բաց քաղաքականութեան եւ գործելաոճի: Երիտասարդությունը հիմնական կռուան է, որուն վրայ հիմնուելով կարելի է փոփոխութիւններ յառաջացնել, նորութիւններ բերել, ուստի մեծ բան կ'ակնկալուի անկէ:

Զիս նաեւ կը հետաքրքրէ Պուրժ Համուրը, որ շատ մեծ ներուժ ունի, անիկա փոքր քաղաք մըն է, հոն կայ ամէն ինչ, ուստի պէտք է անոր ուժականութիւնը արժեւորել եւ լիովն օգտագործել՝ նոր ծրագիրներ մշակելով,

յաւելեալ ուշադրութիւն դարձնելով անոր եւ մանաւանդ հոն բնակող հայութեան, որովհետեւ անոնք են հայկական նկարագիրը պահպանողները:



Շանթ Յարութիւնեան.– Հիմնական ակնկալիքներու մասին եթէ պիտի խօսինք, պէտք է նկատի ունենանք այն, որ այս կուսակցութիւնը համահայկական է եւ այս հիման վրայ ծրագրած է իր բոլոր աշխատանքները: Հեռանկարային առումով վստահաբար կ'ուզենք տեսնել Դաշնակցութեան ծրագիրներու յաջողութիւնը եւ հիմնական նպատակին ապահովումը, որն է՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի կերտումը եւ ամբողջական Հայաստանի մէջ հայութեան գոյութիւնը, բայց եւ այնպէս ներկայ դրութեամբ երբ այդ մէկը իրագործելը քիչ սը դժուար է, սփիւռքի մէջ Դաշնակցութեան գործունէութիւնը յաւելեալ կարեւորութիւն կը ստանայ ու կը ծառայէ ի սպաս այդ գերագոյն նպատակին:

Այս իրականութենէն մեկնած կարեւոր է խօսիլ սփիւռքին եւ հոն տարուելիք աշխատանքներուն մասին: Նկատի ունենալով, որ սփիւռքը Ցեղասպանութենէն վերապրող սերունդին եւ Արեւմտահայաստանի միջեւ հիմնական կապն է, պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնել անոր, ամէն ջանք ի գործ դնել պահպանելու անոր գոյատեւումը: Իրականութիւն է, որ այսօր տարբեր գաղութներ զանազան հարցերու եւ դժուարութիւններու դէմ յանդիման են, օրինակ լիբանանահայութիւնը այսօր կանգնած է տնտեսական եւ ընկերային դժուարութիւններու դէմ յանդիման, հարկ է, որ Դաշնակցու-

թիւնը այս բոլորը դիմագրաւելու եւ շրջանցելու ուղիներ գտնէ:

Անձնապէս կարեւոր կը նկատեմ Միջին Արեւելքի մէջ սփիւռքի գոյութեան շարունակականութիւնը, բայց զարմանալի կը գտնեմ մեր անկազմակերպուածութիւնը պատերազմական իրավիճակներու մէջ, որոնց լաւագոյն օրինակն ալ Սուրիոյ եւ Իրաքի վերջին իրադարձութիւններն են, երբ ժողովուրդը ակամայ ձգեց իր քաղաքը, գնաց տարբեր ուղղութիւններով, եւ մենք յստակ կերպով չուղղորդեցինք: Պէտք էր ունենալինք ծրագիր, որ ժողովուրդը ուղղէր դէպի հայրենիք՝ Հայաստան, ապագային նման կացութիւններ կրնան կրկնուիլ, ուստի պէտք է այդ մասին լրջօրէն մտածել, ծրագրել, որպէսզի արտակարգ պարագաներուն կիրարկուի ատիկա:

Պուրճ Համուտի պարագան եւս մտահոգիչ է, որոշ ծրագիրներ արդէն սկսան գործադրուիլ, սակայն պէտք է յաւելեալ թափ տալ անոնց, արագացնել անոնց գործադրութիւնը, որպէսզի շրջանի հայեցի դիմագիծի պահպանման առումով պայքարին մէջ կարենանք յաջողութիւններու հասնիլ, մեր ունեցածը չկորսնցնել:

Կայ նաեւ նոր կազմուած գաղութներու պարագան, որոնք ծնունդ առին Ծոցի երկիրներու կամ Եւրոպայի մէջ, հոն պէտք է մեր կուսակցութիւնը ընելիք ունենայ, որովհետեւ հոն, ուր հայութիւն կայ, այդտեղ նաեւ Դաշնակցութիւն պէտք է ըլլայ: Կայացած գաղութներու մէջ պէտք է հայապահպանման վրայ դնել շեշտը, մանաւանդ որ հոն լեզուի պահպանման խնդիր ունինք, ուստի պէտք է ձիգերը բազմապատկուիլ՝ հայոց լեզուի, մշակութի պահպանման գծով:

Այս բոլորին կողքին տեղին է նշել քանի սը կազմակերպական հարցեր:

ա- Քաջ գիտակցելով, որ մեր կուսակցութիւնը հեռանկարային ծրագրաւորումներու պակաս ունի, պէտք է կուսակցութեան երիտասարդացման մասին մտածել, յատկապէս ապագայի իմաստով որդեգրել արիեստագիտութեամբ գործելու դրութիւնը, որ երիտասարդ ուժերով կարելի է կիրարկել: Ճիշդ չէ միայն ներկայով սահմանափակուիլ, որովհետեւ յառաջիկային մասին մտածելու եւ այդ գծով ծրագրելու անհրաժեշտութեան դէմ յանդիման կը գտնուինք: Լաւ է, որ երիտասարդութեան նկատմամբ վստահութիւն ցուցաբերուի, որովհետեւ հաստատ կան երիտասարդներ, որոնք ատակ են գործ

- ստանձնելու եւ զայն լիովի կատարելու:
- բ-** Ապահովել մասնագիտացած ընկերներու մասին տեղեկութիւններու շտեմարան մը:
- գ-** Գործիչային դրութիւնը կիրարկուի թէ՛ Հայաստանի, թէ՛ այլ գաղութներու մէջ՝ նկատի ունենալով Դաշնակցութեան պատմութեան մէջ գործիչային դրութեան արդիւնաւետութիւնը:
- դ-** Հայաստանի պարագային հետամուտ ըլլալ ժողովրդավարութեան եւ արդարութեան հաստատման: Դաշնակցութիւնը համահայկական իմաստով պէտք է յաւելեալ ջանք թափէ, որպէսզի Հայաստան դառնայ ապահով երկիր մը՝ ըլլայ իշխանութեան կամ ընդդիմութեան մէջ գտնուելու պարագային: Սահմանադրութիւններու փոփոխութիւնը կարեւոր է՝ իբրեւ ապագայի ժողովրդավարական հիմնական գործոն:
- ե-** Մեր կազմակերպական ցանցի ընդարձակում՝ ներառելով Հայաստանի բոլոր գիւղերն ու մարզերը, որոնց մէջ այսօր, Դաշնակցութեան ներկայութիւնը բաւարար չէ:
- զ-** Երիտասարդական, պատանեկան եւ ուսանողական միութիւնները մեզի մօտեցնելու տրամադրութիւն ստեղծենք, ինչ որ այսօր միշտ ալ առկայ չէ: Պէտք է այդ միատրոններուն մաս կազմողները լաւ հասկնան մեր կուսակցութիւնը եւ անոր մէջ չտեսնեն միայն քաղաքական որոշումներ տուող կազմակերպութիւն:
- է-** Պատրաստել Արեւմտահայաստանի ազատագրման հեռակայ ծրագիր մը, ինչպէս նաեւ շարունակել գործուղումները՝ կեդրոնանալով տարբեր շրջաններու վրայ, որպէսզի պետութեամբ, բանակով եւ տնտեսութեամբ հզօր հայրենիք մը ունենանք:
- ը-** Հայ դատի մէջ հատուցման աշխատանքը գործնականացնենք: Մեր հողային պահանջներն ու Սիսի կաթողիկոսարանի ծրարները ամբողջացնենք՝ իբրեւ պահանջատիրութեան գործնական քայլ:
- թ-** Զաւախքի ժողովուրդին կարիքները հոգալ: Ճիշդ է, որ հոն կայ պետութիւն, բայց մեր ժողովուրդը չենք կրնար լքել:
- ժ-** Ի վերջոյ, կը կարծեմ, թէ Համազգայինը Հայաստանի մէջ իր դպրոցը պէտք է ունենայ:



կերպական, յարաբերական կեանքին մէջ, այլ խօսքով՝ գետնի վրայ տեսնել այն, զոր մենք սորված ենք Դաշնակցութեան գիրքերուն մէջ: «Ժողովուրդէն ծնած ժողովուրդին համար» կուսակցութիւնը չի կրնար ժողովուրդէն հեռու մնալ, այլ պէտք է լսէ ժողովուրդը, ականջ դնէ անոր հարցերուն եւ դժուարութիւններուն: Միշտ կանոնագիրը պէտք է ըլլայ մեր սկզբունքը, օրէնքը եւ մեր քայլերը ասոր հիման վրայ առնուին՝ յարգելով եւ գործադրելով զայն ո՛չ միայն բառացի կերպով, այլ նաեւ ոգիով: Դաշնակցութիւնը, իբրեւ համահայկական կուսակցութիւն իր աշխատելակերպին մէջ ունի ապակեդրոնացեալ դրութեան գաղտնիքը: Ուրեմն շրջաններուն մէջ կուսակցութեան աշխատելաձեւը պէտք չէ նոյնանայ, այլ՝ գործերը շարունակուին ապակեդրոնացեալ դրութեան սկզբունքով: Ինչպէս նաեւ, կանոնագիրէն մեկնած, կ'ուզեմ շեշտը դնել ընկերվարական եւ ժողովրդավարական սկզբունքներուն վրայ, օրինակ՝ կիներու իրաւունքները պաշտպանելով կուսակցութեան մէջ պէտք է ստեղծել առիթներ՝ ունենալու համար իգական ղեկավարներ, իսկ Հայաստանի պարագային հարկ է ընդլայնել մեր աշխատանքի դաշտերը՝ հասնելով գիւղեր եւ կեդրոնանալ հոն ապրող երիտասարդութեան վրայ, որպէսզի հոն տարուած աշխատանքը աւելի ուշ ընդարձակուի եւ հասնի քաղաք:

Հրակ Աւետանեան. - Այսօր պէտք է վերադառնանք անցեալի արժէքներուն եւ բարոյական սկզբունքներուն, ինչ որ մեզի Դաշնակցութիւնը սորվեցուց 125 տարիներու պատմութեան ընթացքին՝ առօրեայ, կազմա-

Սփիւռքի մէջ հայ աշակերտը հայկական դպրոցին մէջ պահելը կը նկատեմ Դաշնակցութեան պարտականութիւններէն մէկը, հայ աշակերտը պէտք է ունենայ ամէն տեսակ կարելիութիւն հայ վարժարանին մէջ մնալու եւ հայեցի դաստիարակութիւն ստանալու:

Հարկ է, որ Դաշնակցութիւնը հայութիւնը միացնելու համահայկական պարտականութիւնը զգայ առանց իր գաղափարական սկզբունքերէն զիջելու, նաեւ բանտորներուն գործ հայթայթելու նախաձեռնութիւններու դիմէ: Ուսանողութեան պարագային պէտք է մենք արեւելում տանք դպրոցը աւարտած աշակերտին, օժանդակենք անոր, որպէսզի մասնագիտանայ իրական, օսմանագիտութեան կամ ցեղասպանագիտութեան մէջ, որպէսզի ունենանք պատրաստուած եւ մասնագիտացած մարդուժ, որովհետեւ Հայ դատի պայքարը այսօր այդ մակարդակին վրայ պէտք է մղել: Պէտք է համոզուիլ, որ միայն հայկական շրջանակի մէջ սահմանափակուելով կարելի չէ մեր նպատակին հասնիլ, այլ պէտք է ընդունիլ, որ մեզմէ հեռու երդողները եւս ներգրաւելու աշխատանք ունինք կատարելիք, որովհետեւ այլապէս անոնք ամբողջովին պիտի հեռանան հայութենէն:

Ի վերջոյ Դաշնակցութենէն կ'ակնկալեմ, Հայ դատի եւ ամբողջական Հայաստանի մեր տեսլականին իմաստով յստակ սահմանում ունենալ, որովհետեւ ժամանակի թաւալումին հետ նաեւ մեր պահանջները տարբեր ձեւով պէտք է շեշտելի դառնան: Արեւմտահայաստանի եւ ընդհանրապէս Թուրքիոյ հայութեան հանդէպ տարիներու ընթացքին որդեգրուած է մերժողական կեցուածք: Այդ մասին պէտք է լքօրէն մտածուի եւ համապատասխան աշխատանք տարուի, որովհետեւ կը կարծեմ, թէ մենք հոն եւս ընելիքներ ունինք՝ թէ՛ բարոյական, եւ թէ քաղաքական զօրակցութեան իմաստով:

Կարեւոր է երիտասարդական եւ ուսանողական խաւին նկատմամբ վստահութիւն ունենալ եւ յարմար առիթներ ստեղծել անոր համար: Ի վերջոյ Դաշնակցութիւնը պէտք է համահայկական պարտականութիւնը շարունակէ՝ հայութիւնը միացնելու, հիմնական նպատակներուն շուրջ համախմբելու՝ միշտ պահելով իր սկզբունքներն ու գաղափարները:

Տօնդ շնորհաւոր՝ ՀՅ Դաշնակցութիւն:

Իւստակ Գրաճեան. - Կ'ուզեմ երկու բաժինով անդրադառնալ ակնկալիքներու: Նախ խօսիմ ներքին կուսակցական կառոյցին վերաբերող բաժինին մասին, քանի որ հոնկէ կը սկսին մեր յառաջիկայի աշխատանքները, որովհետեւ կուսակցութեան հիմքը կազմակերպական բաժինն է: Շատ կարեւոր կը նկատեմ արժէքներուն վերադարձը, նոյնքան՝ կուսակցութեան գաղափարականին ու



գործնականին միացումը, որպէսզի կարենանք ժողովուրդին վստահութիւնը մնայուն կերպով ունենալ: Գաղափարներ առաջադրելէ անդին պէտք է անցնիլ միշտ եւ լծուիլ գործնական աշխատանքի:

Կուսակցական ներքին կեանքին մէջ կրնան ըլլալ որոշ հակասութիւններ՝ տարբեր պատճառներով եւ նպատակներով, նման երեւոյթներ որեւէ կուսակցութեան մէջ բնական են, բայց կարեւոր է, որ չկորսնցնենք իրարու նկատմամբ մեր ունեցած ընկերասիրութիւնը, որպէսզի բոլորին վստահութեամբ բաժանումներ չունենանք եւ չհեռանանք մեր ժողովուրդէն, որովհետեւ առանց ժողովուրդին կուսակցութիւնը գործ չ'ունենար: Մենք պէտք չէ հայ ըլլալու բնորոշումներ տանք եւ ըստ այնմ մեր շարքերուն, մանաւանդ երիտասարդական, ներգրաւենք անձեր, օրինակ՝ եթէ անձ մը հայերէնին տիրապետող չէ, սակայն օժտուած է հայկական ոգիով, մենք պէտք է մօտեցնենք զայն մեր ընկերութեան:

Դաշնակցութիւնը իր տարբեր տեսակի ծրագիրներուն եւ առաջադրանքներուն կողքին միշտ պէտք է շեշտը դնէ ժողովուրդին եւ անոր կարիքներուն վրայ, որովհետեւ այդ ժողովուրդն է մեր գոյատեւման երաշխիքներէն հիմնականը, ինք է տէրն ու ծառան: Այս պէտք է ըլլայ մօտիկ ապագայի մեր գործնական աշխատանքը՝ ժողովուրդին վիճակի բարելաման ձեւեր եւ միջոցներ գտնել, մանաւանդ սփիւռքի տարածքին:

Կը փափաքէի տեսնել, որ կուսակցութեան շարքերուն միացած են նաեւ ճուլումի պատճառով իրենց մայրենի լեզուն չգիտցող, սակայն ազգային պատկանելութիւն ունեցող եւ ՀՅԴ կանոնագիրին հաւատացող անձեր:

Իսկ երկարամեայ ծրագիրներուն գծով ըսեմ, թէ սփիւռքի մէջ պէտք է ամրապնդենք հայեցի դաստիարակութիւնը, սակայն՝ ոչ միայն Միջին Արեւելքի մէջ, այլ նաեւ Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ, ուր պէտք է շեշտուին հայոց լեզուն եւ մշակոյթը: Նոյնքան կարեւոր կը նկատեմ Հայաստանի հզօրացումը, մանաւանդ անոր տնտեսական ծրագիրներու բարելաւումը՝ քաջալերելով տնտեսական անհատական կամ ընկերութիւններու միջոցով կատարուած ծրագիրները:

Իսկ Արեւմտահայաստանի պարագային, կարեւոր կը նկատեմ պոլսահայութեան հետ յարաբերութիւններու մշակումը, բայց միշտ նկատի առնելով որոշ երեւոյթներ եւ մանրամասնութիւններ՝ խուսափելու համար երկուստեք վնասներէ: Տեղին է նշել, որ «Դէպի Երկիր» ծրագիրը մնայուն կերպով զարգացումի եւ աշխուժացման կարիք ունի, ինչպէս նաեւ ժամանակն է, որ Դաշնակցութիւնը որոշ ծրագիրներու շուրջ ունենայ համահայկական համաձայնութիւն: Նախքան դէպի Հայաստան մեծաթիւ հոսքը քաջալերելը, պէտք է համապատասխան կռուանները ստեղծել, որպէսզի ներգաղթած հայը կարենայ հայրենիքի մէջ գոյատեւել:

Նազարէթ Գէորգեան. - Դաշնակցութիւնը իր նպատակները իրագործելու համար նախ եւ առաջ պէտք է ունենայ իր աշխատանքին եւ անոր միջոցներուն առարկայական բնորոշումը, պէտք է տայ, գործը բնութագրէ, ապա ունենայ յստակ, երկարաժամկէտ կամ կարճաժամկէտ ծրագիրներ, որոնց առնչութեամբ պէտք է կազմակերպուի եւ անոնց շուրջ համախմբուի կուսակցութիւնը:

Հայաստանի Հանրապետութիւնը, ըստ ինձի, գտնուելով մեր երկարաժամկէտ ծրագիրներուն մէջ, մեր հիմնական դրամագլուխներէն մէկն է, որուն համար հարկ է մեր ներուժը օգտագործել անոր պահպանման եւ զարգացման համար: Այդ ծրագիրը կրնանք իրագործել տարբեր ձեւերով՝

ա- Սփիւռքի մէջ երիտասարդ ուսանող սերունդին հասնիլ, ներգրաւել զայն եւ նիւթական յատկացումներ կատարել անոր, որովհետեւ անոնցմով է, որ պիտի ապրի ու գոյատեւէ կուսակցութիւնը: Պէտք է հաւատալ երիտասարդութեան, գիտակցիլ, որ ան է, որ պիտի ստանձնէ ապագայի աշխատանքները: Մեր կարելիութեան եւ կարողականութեան քննութիւն եւ արժեւորում կատարել, որպէսզի կուսակցութիւնը գիտնայ, թէ ինչ տեսակի



տուեալներ ունի սփիւռքին մէջ: Աւելին. կատարել ուսումնասիրութիւններ այլ, ոչ հայկական, յաջող սփիւռքներու մասին, որոնցմէ կրնանք յաջող օրինակներ քաղել, պէտք է ընդունինք, որ շատ բան ունինք սորվելիք:

Այս բոլորը պէտք չէ ըլլան սփիւռքակեդրոնացման համար, այլ այս ուժերը ծառայեցնել Հայաստանի հզօրացման ու զարգացման համար:

բ- Հայաստանի մէջ մեր գաղափարներուն միջոցով քաղաքական հասունացում եւ որակական բարձրացում ապահովել, յատկապէս ժողովրդավարութեան եւ ընկերվարութեան առումով: Աշխատանք տանինք մենաշնորհները վերացնելու եւ նոր օրէնքներ որդեգրել տալու:

գ- Դաշնակցութիւնը՝ իբրեւ աշխարհասփիւռ եւ տարբեր երկիրներու մէջ կառույցներ ունեցող կուսակցութիւն կրնայ ներդրում ունենալ հայկական արտադրութիւններու բարելաւման մէջ, որ անպայման պիտի օգնէ Հայաստանի տնտեսական վիճակի բարելաւման:

դ- «Սոֆթուէր տեվելոփմընթ»-ի եւ արդիական այլ ծրագիրներու մշակում Հայաստանի մէջ, քաջալերել այդ հոսքը՝ համաշխարհային հաստատութիւնները ներգրաւելու եւ կամ Հայաստանի մէջ նման կարողականութիւն զարգացնելու:

ե- Թւուրքիա թափանցել նկատի ունենալով երեք տարբեր խմբաւորումներ՝ հայեր, թուրքեր եւ քիւրտեր: Պէտք է հասկնալ Թւուրքիան իր ներքին քաղաքականութեամբ՝ աշխատելով ներսէն, ծանօթանալու համար ներքին կեանքին եւ անոր իրաքանչիւր շերտին: Աշխատիլը անպայման

բան մը փոխելու համար չէ, այլ կարելու է տուեալներ ապահովել, ծանօթութիւններ հաստատել: Ոչ ոք կրնայ գիտնալ, թէ ապագան ինչ պայմաններ կը բերէ, ուստի պէտք է պատրաստ ըլլալ հակազդելու եւ յարմար առիթին խաղին մէջ մտնելու, մեր բաժինը ունենալու, մեր դատին օգտին քայլերու դիմելու:

Գ-Ունենալ համաշխարհային «բանակ» մը՝ թէ՛ մամուլ նախագիծով, թէ՛ ալ դաստիարակչական առումով: Ներքին իրակա՞նութեամբ եւ միայն մեր ներուժով չսահմանափակուիլ, այլ ներառել նաեւ արտաքին օգտաշատ ազդակներ:

Այս բոլորին զուգահեռ պէտք է կուսակցութիւնը իր առաջնահերթութիւնները ճշդէ, յատկապէս երկարաժամկէտ ծրագիրներու մէջ:



Ռուբինա Խայաթ. - Դաշնակցութեան հիմնումի տարիներուն բնականաբար կացութիւնն ու պայմանները տարբեր էին: Կուսակցութիւնը տարիներու ընթացքին տարբեր բեռեր շակած ըլլալուն պատճառով, դիմագրաւեց առաջնահերթութիւններու խնդիր, ստանձնեց բազում պատասխանատուութիւններ եւ դարձաւ առաւելաբար քաղաքական կուսակցութիւն մը՝ երբեմն ստեղծելով այն տպատրոփներ, որ կը զիջի ազգային, ժողովրդային եւ ընկերվարական ըլլալէ: Մեր հիմնական աշխատանքը ժողովուրդին հետ է, պէտք է միշտ անոր հետ ըլլալ, անոր պայմանները հասկնալ, որպէսզի վերսկսինք ժողովուրդին ակնկալութիւնները յագեցնելու:

Աւելին. կուսակցութիւնը ինքը պէտք է ըլլայ որեւէ տեսակի ծրագիրի մը առաջին մշակողը, նախաձեռնողը՝ ազգային թէ արտաքին գետնի վրայ:

Իսկ դաստիարակչական գետնին վրայ պէտք չէ միայն դասական ոճով կատարենք այդ աշխատանքը, այլ պէտք է համակարգային փոփոխութիւն յառաջացնել կրթական բնագաւառին մէջ, որպէսզի կարենանք ազդեցիկ ըլլալ առաւելագոյն չափով, եւ համապատասխան պատրաստութիւն ունեցող երիտասարդը իրեն ուղղուած հարցումներուն յստակ եւ վճռական պատասխաններ ունենայ՝ տեղական թէ օտար միջավայրերու մէջ: Ինչպէս նաեւ կուսակցութիւնը հրահանգ պարտադրելէ առաջ պէտք է յարգանք պարտադրէ՝ ներառելով բոլոր խաւերը, մանաւանդ՝ ուսեալ խաւը: Շատ կարելու է արժեւորում եւ ինքնաքննարկում կատարելը, որպէսզի այդ հիման վրայ նախ դէպի ապագայ: Մէկ խօսքով, կուսակցութիւնը իր հին արժէքներուն եւ անցեալի պատմութեան կառչելով հարկ է վերամշակուի:

Նախարարնին մէջ նշած էինք, թէ Դաշնակցութիւնը ժողովուրդի բոլոր խաւերուն կուսակցութիւնը ըլլալու կողքին, յարկապէս երիտասարդութեան կուսակցութիւնն է: «Երիտասարդութեան կուսակցութեան», անոր կարարելիքներուն եւ անկէ եղած ակնկալութիւններուն մասին իրենց փեսակէտները յայտնեցին այդ կազմակերպութենէն երիտասարդ անդամներ: Գիրակցելով հանդերձ կուսակցութեան 125-ամեայ պատմական արժէք ներկայացնող, ազգային, համամարդկային, յեղափոխական եւ յանդուգն գործունէութեան, անհերքելի փաստ է այն, որ այսօր կուսակցութեան գործունէութեան վերաբերեալ կան որոշ մարտանշումներ: Ուրախալին կը մնայ այն, որ մարտանշումները կու գան «սեփականարհրոջ»՝ երիտասարդութեան կողմէ, ինչ որ կը նշանակէ, թէ 125-ամեայ կազմակերպութիւնը ապագայէն սպասելիքներ ունի, երիտասարդ ուժը այդ կարարուելիք աշխատանքները իրագործելու կարելուութեան մասին կը մտածէ, կը փառնապի, կը քննադատէ, աւելին կը պահանջէ: Մէկ խօսքով, «Երիտասարդութեան կուսակցութիւնը» փակալին իսկապէս երիտասարդ է եւ ընդմիջօր երիտասարդ ապրելու ձգտումներ ցոյց կու տայ:

በኮቦሌ፣ 4 ጥርጣጫ 2015

الجمعة، 4 كانون الأول 2015

ሲታግ ቀበሌ

عدد خاص

أزتاك جريدة يومية سياسية وأدبية - المديرية المسؤولة أيضا درويشيان

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE, TEL.: (01) 258526 - Email: aztag@inco.com.lb


Խմբագրական կազմ ժառ 3. Յակոբեան

Նորա Բարսեղեան

Տօնիկ Տօնապետեան

Կողքի ձեւաւորում եւ էջադրում` Ռոստոմ Գոյունճեան

Գրաշարութիւն` Շողիկ Պոյաճեան-Մենկիշեան



Տպագրութիւն` Համագգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան

«Կ'երդնում պատուոյս
եւ հայրենիքիս վրայ՝
միշտ հաւատարիմ մնալ
Հայ Յեղափոխական
Դաշնակցութեան
Ծրագիրին, Կանոնագիրին
ու որոշումներուն եւ
բոլոր ուժերովս - իսկ
եթէ հարկ ըլլայ՝ նաեւ
կեանքիս գնով - ծառայել
Հայաստանի եւ հայութեան
ազատագրութեան
դատին»: